7-18

2004

# ՀՈՄԵՐՈՍԻ

## ՈԴԻՍԱԿԱՆ



[illegible]
[illegible]
Եր. 310

# ՅՈՄԵՐՈՍԻ
## ԻԼԻԱԿԱՆ
### Հ. Ա.



ՎԵՆԵՏԻԿ
ի Սուրբն Ղազար
— 1843 —

2517 88-13 935-ՀԿՀ
Հ-78 Կդ.

# ՀՈՄԵՐՈՍԻ

## ՈԴԻՍԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՀԵԼԼԵՆԱԿԱՆԷ

Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՄԱՃԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՏՈՐ Ա.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄՂԶ. 1848

ՑԺԷԶ-57
7

88

ԱՌ

ՄԵԾԱՓԱՌ ԱՄԻՐԱՅ

# ՅՈՎՀԱՆՆԷՍ

## ՏԱՏԵԱՆ

ԱՐՔՈՒՆԻ ՎԱՌՕԴԱՊԵՏ

ՈՒՂԵՐՁ

*Ի խորախոյս մշտաբարբառ բա-*
*նաւէր Հայրերոյն,*
*Ի՞նչ տխպար առաքինի հնչես-*
*ցէ ով Ամիրայ,*
*Յոգւանկեալ որ 'ի Մասիս քեր-*
*թողացն ըղձեհագոյն*
*Յոգնեալն ըզգաստ մրմունջ*
*հայախօս եղեալ ահա ։*

Սիրայնոյ Հարազատիդ հօրա-
մոյն Սիմէոնի
Յիշատակ գալուց անեղծ կանգ-
նեցեր , ոչ սին արձան ։
Սա կըրկին 'ի տիպ չըքնաղ
հանճարեղ սիրոյդ ձօնի ,
Բարոյից իմաստասէր համազ-
գեաց կացցէ մատեան ։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Օ՛ ՀՐԱՇԱԳԻՆ Քերթուածոյ Ոդիսականին մեծին Հոմերի չունիմք ինչ երկայն կանխաբանել, շատ համարելով զոր ինչ միանգամ ասացաք ՚ի Յառաջաբանի առաջին մատենին նորա յԻլիականն :

Յուշ միայն առնեմք ընթերցանելեացն, եթէ որպէս Իլիականն Հոմերի հրաշագիւտ դասու ՚ի բարոյական Քաղաքականին, առաւելապէս ՚ի Զինուորական մասին, նոյնպէս և Ոդիսականն նորա ՚ի բարոյականն մարզիչ է առաւելապէս ՚ի Տնտեսական մասին : Եւ որպէս առաջնոյն Դիւցազն է կայ Աքիլլէս քաջն, նոյնպէս և երկրորդին Դիւցազն՝ է Ոդիսևս խորագէտն :

Նկարագիրք մանրամասնինք և յոյժ կեն-
դանիք առաւել գտանին յերկրորդումն
քան յառաջնումն ։ Նա եթէ ուրեք ուրեք
գտանիցի առաջինն ձանձրոյթ ընթերցողին
արկանել երկայն զրուցատրութեամբքն ,
երկրորդս այս Ոգխասական այնչափ իմն
զանազանեալ և բազմադիմակ և այնչափ
զարմանազան յերիւրեալ է , մինչև միշտ
քաղցեալ և ծարաւի թողուլ զանձինս ։

Որպէս զուամբիկ օրէարն , այդ անուս և
Թանձրամիտ , նոյնպէս և զաւագօրէարն՝
զարծաթատէրսն , զխառատէրսն , զհեշ-
տատէրսն , ոչ դիւրաւ ոք յաջողեսցի ար-
գելուլ մարդել և հրաժանգել 'ի բարոյա-
կանն՝ մերկ խրատարանութեամբքն . զի
առաջինքդ ոչինչ ընդմնանեցեն 'ի նորու-
Թեան խմսատիցն . և երկրորդքն՝ յոնչաց
քերթեցեն ։ Վասն որոյ և բուն յառաջա-
գիր նպատակ ողջամիտ և խմատուն Վ. եր-
Թողացն և Բանաստեղծիցն այն եղև , այ-
լաբանական միտիւքն և բազմազանդակ
օրինակօքն վարժել զանձինս՝ ոչ ըով , այլ

զուարճացուցանել միանդամայն և վար-
ժել, միմեանց զմիմեանս առաջնորդելով և
սատարելով. ընկերութեանն խրատել, և
խրատատուութեանն ընկերեցուցանել:
Քանզի և յունականքն՝ և որոց ըստ նոցա-
նէն, չէն, որպէս առաջ Քերթողահայրն
Մեր, փոյթ [illegible] և անձանց [illegible], կամ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]: Որպէս Սիրենայցն, և
Կիրկեայքն և Լուսաստակերացն, և Սա-
րիքն Հեփեստեայ, և Տիկին Իսողեան, և
Կիկղօպայքն, և որ զկնի:
Յորում մասին գերազանցեալ քան
զայլս 'ի բանաստեղծից Երկրիս միայն
զատանելի, 'ի Դիւցազնական քերթուածն
Հոմերոս, և յՈդիսեականն Եւրիպիդէս:
Ըստ որում և այս Ոդիսականն Հոմերի
ըն է և խիտ և հոծ բարոյական հրահան-
գօք ընդ այլաբանական միտքն և ընդ բաղ-

մաղէմ օրինակըն ։ Քանզի և մի մի 'ի Համներգութեանց Ոդիսականիս պատա-բերիչ է ուշիմ ընթերցողին 'ի հրահանգս բարոյականին ։

Որպէս յորժամ 'ի ԺԱ. Համներգութեանն 'ի դժոխս իջեալ Ոդիսէս, անդ-տայ բարբառել խրատանշիւր հոգւոյն . և որպէս զպատուհաս յանցաւորացն 'ի դէմս ածէ, նոյնպէս և զհատուցումն բարի զառաքինագործ մարդկանն' 'ի խը-րատ լսելեացն ։

Որպէս յորժամ և յայլում Համներ-գութեան, 'ի Տնտեսականն կրթէ զորս, եթէ չէ պարտ առն' զամենայն զխուր զմխու-ոյն 'ի վեր հանել կնոջ իւրում, այլ կէս մի ասել նմա, և զկէս մի պահել վասն ան-ձին ։ Եւ թէ արանց չէք բոլորովին վստահ լինել 'ի կանայս . և թէ կանանց պարտ է միշտ այլապէս լինել և ողջախոհ ։

Նա որում և 'ի Ի Համներգութեանն իմաստութեամբ այդ ասէ տանու-տէարցն, զխո՞րհ նոցա պարտ է միշտ ար-

թուն լինել 'ի անաչութեան տանն . յոր-
ժամ 'ի քուն կեղծէ Հոմերոս լինել զՍի-
գիփոս , և այնպէս 'ի քնանելըն գիտել մի-
անգամայն ծածկաբար զեղելոցն 'ի տան :

Նոյնպէս և 'ի ԺԲ. Հագներգութեանն քաջայայտ է խորատարանութիւնն Հոմերի առ ամենայն մարդ , եթէ զիարդ ժուժ-կալել կամ րնդու. խել փախչել պարտ է 'ի ճեշտալեացն հրապուրից . յորժամ զՍի-րենացն՝ զորս Դումայինս կոչեմք և Յուշ-կապարիկս՝ յանդիմանն երևեցուցանէ , և զքաղցրանուագ և զճեշտալուր ձայնս նո-ցա տայ լսել 'ի հրապոյրս լսելեացն : Զոր 'ի խորս 'ի ներքս բերեն և մատեանք մեր :

Սոյնպէս և 'ի ԺԴ. Հագներգութեանն , և յայլս ևս , և գուցես յամենայն առիթս յոյժ պանծալի է և պատուական բարոյա-կանն Հոմերի յազգասիրութեան հրա-հանգն . զի զազգասա և զպանդուխտս և զհիւրս կոչէ [illegible] , և [illegible] [illegible] , առէ զնոսա . ուստի և

զանց չէ պարտ, ապա, երբէք առնել զնո-
րա, այլ բարեգործել միշտ:

Եւ այսպէս ապա մի ըստ միոջէ ծաղկաւէտ է Ոդիսականն Հոմերի 'ի վարժս Անձնական և Տնտեսական առաքինութեանց:

Որում և զարդիս փափաքեալ սիրով, աւանդել և 'ի մեզ զայս Մատեան աշխարհաբարով՝ հայերէնախօս չափաբանութեամբ, Ազգասէր և իմաստասէր բարեպաշտպան ՅՈՎՀԱՆՆԷՍ Ամիրայ Տատեան, հոգացաւ 'ի յիշատակ անմոռաց մեծարգոյ Հարազատին իւրոյ Սիմէոնի Ամիրայի Տատեան Արքունի Վառօդապետի, 'ի լոյս ընծայել զսա 'ի վայելս հասարակաց:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ա.

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կոչումն քերթողական, և առաջար-կութիւն ոգւոյն քերթուածոյն 'ի բազ-մամեայ թափառականութիւն Ոդիս-սեայ։ Ատեան աստուածոց, յորում հաս-տատեն զդարձն բազմաչարչարին Ոդիս-սեայ 'ի հայրենիս իւր յԻթակէ, 'ի միջ-նորդութենէն Աթենասայ։ Աթենաս ի-ջանէ յԻթակէ կերպարանափոխ, և քա-ջալերէ զՏելեմաք գնալ 'ի Պիւղոս և 'ի Սպարտա, հետախոյզ գիտել ինչ զհօրէն իւրմէ զՈդիսեայ։ Խրախճանն հարս-նեացն, որ 'ի բացակայութեան Ոդիս-սեայ խնդրէին իւրաքանչիւր ածել 'ի հար-սն զՊենելոպէ զամուսին նորա։ Փե-միոս երգակ երգէ 'ի խրախճանին զդառնա-լի դարձ Յունացն 'ի Տրովադայ. Պենելոպէ խռովի 'ի լսել երգոյն, յուշ ածեալ զթա-փառական զայր իւր։ Տելեմաք արգ ա-նէ հանդերձեալ ժողովել 'ի վաղուեան օր, և մեկնի 'ի ննջել։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ա.

ԻՆՁ զայրն ասա, դու ով Մուսա, զայր
խորագէտ բազմահնար,
Որ զԻլիոնն ըզսուրբ քանդեալ թափա-
ռեցաւ ընդ երկար 1.
Քաղաքս եւես բազմաժողովս, այր խե-
լամուտ հրաշացաւ,
Եւ յերաշխեաց բազմարկածեան նա 'ի
ծովու տանջեցաւ:
Անձին հոգ ած և ընկերացն, այլ ոչ
դարձոյց ողջանդամ,
Թէպէտ անձկայր. զի 'ի կորուստ անմը-
տութեամբ վարեցան:

Ա՜յ խոլամիտք, որ ըղպաճարս զՆափուոյն
կերան ըմպէհին,

Սրտմտեցաւ և ըմբոցայն անհետացոյց
զօր դարձին 2 ։

Բարդ, դիցուհի, զուարթը մանդեղն ամա
խուռն մի՝ նաև մեզ.

Զի՞ է զի այլք յօրահասէն ճողոպրեցան
քաջաղէս.

Ողջք ՚ի մարտէն և ՚ի ծովէն ՚ի տուն
դարձան ընակատուն,

Իսկ սա միայն բաղձանթափառ անձկայր
դարձին ամուսնոյն ։

Արգելական յաւերժ հարսնէն ՚ի դիցու-
հւոյն Կալիփսեայ

Կայր հեծացեալն ՚ի խոր անձաւս, երբու-
ռնող իւր փեսայ.

Բայց և տարեաց ՚ի բոլորել բազմահո-
լով շրջանին,

Յորում ՚ի տուն իւր յԻթակէ ըղձարձն
աստուածք կընքեցին,

Ո՛չ և յայնժամ առ տաժանելեաց նա զերծ
զըտաւ ՚ի վշտաց.

Թէպէտ և այլքն ողորմէին, կայր Պոսի-
դոն զխմադարձ ։

Սա ընդ դիւցազն ըն Ոդիսեւս անդուլ
խէթայր ցասմամբ լի,

Մինչև նորա եր ողջանդամ յերկիրն հա-
սեալ հայրենի ։

Բայց Պոմպէոսին չոքաւ 'ի տար Եթովպա-
ցւոց յայց աշխին,
(Եթովպացիք կրկնատաճանք բնակեն
'ի ծագ 'ի վերջին,
Կէսք 'ի նոցունց ընդ արևմուտս, կէսք
յարևելս առին վայր.)
Զի կայր նորա ցըլուց, գառանց հարիւր
եզնեան զոհ պայծառ։
Անդ Պոմպէոսին ըմբոշխնելով վայելս ա-
նոյր 'ի խրախճան,
Երբ անմահից պարքն յՈղիմպեան տա-
ճար Դիոսի խմբեցան։
Ամպրոպայինն յուշ ած զեղեալն յոր
մոլեցաւ Եգիսթէս,
Զոր հոյակապն Ագամեմնոնեան 'ի մահ
վարեաց Որեստէս 3.
Զայն յուշ ածեալ ձայն ետ յանմահս
հայրն Աստուծոց և մարդկան,
« Բարէ, առ ի՞նչ կանացածինք կան զԱս-
տուծոց ամբաստան.
Ըզմեզ պատճառս ասեն չարեաց, ինք-
եանք անձինքն հիրապէս,
Եւ խոլանան, որպէս և արդ անմըտացաւ
Եգիսթէս։
ՅԱգամեմնոնեայն կնին շամբուշեցաւ, և զայրն
ըսպան 'ի դարձին,
Թէպէտ գիտակ էր աղէտիցն, զի ազդե-
ցաք մեք նըմին։

Զարթուն հերմեան արձակեցաք մերոյն
 բանբեր պատգամի,
Մի՛ զայլն 'ի մահ վարեալ, 'ի կեանս յայ-
 րատատես մի՛ լիցի.
Ա՛յ՝ եթէ ոչ, քաջն Ոդիսեւս անձուկ
 բերեալ խրատմ տան,
Յարբունս հասեալ յառաջ կայցէ հօր
 իւր արեան քինահան:
Աղջկաց հերմես. այլ Եգիսթես քաջ
 խորհրդոյն ոչ անսաց.
Անմտացաւ. և արդ եղյծ ողջոյն ըղ-
 ձելեժ յանցանաց ":
" Նու կարի քաջ, մեծ Զրուանեանդ,
 կրկնեաց խամաժակն Աթենաս,
Մեռցի շամբուշն, և նմանիքն ըղնոյն
 առցեն պատուհաս:
Բայց ես 'ի սիրտ և 'ի յոգի վասն Ոդիս-
 սեայ հարեալ եմ,
Վա՜հ, հեռացեալն յերկար տանջի 'ի սի-
 րելեաց տարադէմ.
Անդ 'ի կղզին կայ ջրապարփակ 'ի ծովա-
 մէջն յայն անհուն,
Կղզի է նա անտառախիտ, անդ է կայան
 Դիցուհւոյն.
Սա այս դուստր է բազմանենգհուն հըս-
 կայազօրն Ատղասայ,
Որ զխորութիւն գիտէ ծովուն, և սիւնս
 բարձեալ կրէ նա,

Սիւնք յաղթք, երկայնք, որ և զերկիր
նոյն և զերկինն բարձ առնուն,
Ու այս է դուստրն, որ յարդելոց ունի
զուշիմն ողբարկուն,
Շաղաւաշուրթըն գըրգուանօք, զի մոռա-
ցի զԻթակէ.
Բայց նա երկրին և յելեալ ծուխն ան-
ձուկ բերեալ, մահ խնդրէ ։
Տէ՛ր, Ողիմպեանդ, ոչ գորովիս. ո՞չ
Ոդիսևան յիշխն
Առ նաւս Յունաց ձօնիւք յաշախիւք պա-
տուաւորէր 'ի պաշտօն.
Ընդէ՞ այդչափ ցասումն 'ի նա յուղեալ
է քո, ո՛վ հայր մեր ».
« Զի՞նչ են, ո՛վ դուստր, Ամպրոպայինն
ձայն յԱթենաս արձակեր.
Զի՞նչ բանք քո այդ, որ անց յափոյ 'ի
քոյ թըռեան 'ի շըթանց.
Զխա՞րդ երբէք զայն բարեփառն ես զՈ-
դիւսէս մոռացայց.
Դա հանճարով վեհ մահացուաց, դա
տուաւ է և 'ի ձօն
Դից անմահից երկնաբնակաց. այլ ընդ-
դէմ կայ Պոսիդոն.
Յանդ արտմեալ վէտս Կիկղոպայն Պո-
ղիւփեմին 'ի յարկած,
Զոր կուրացոյց, որ նա ուժով վեհ է
բնաւից Կիկղոպեանց ։

Զոր յաւերժհարսն առ Պօսփորն մնեալ
ծընաւ յանձաւէն
Փորկինոսի դուստրն Թոօսա անդրոյս ծո_
վուն իշխանին .
Բայց Պօսիդոն երկրասասանն 'ի մահ
զՈդիւս ոչ վարեաց ,
Սակայն թափառ տանի ըներէ ըզնա 'ի
տար հայրենեաց :
Այլ աղէ մեք միաբանեալք խորհուրդ
առցուք ըզդարձին ,
Եւ Պօսիդոն ըզհուր ցասմանըն շիջուսցէ
'ի յոգին .
Զի և երբէք ոչ ժըտեսցի ընաւից կըրիւ
հակառակ ,
Եւ անմահից դասուցն ընդդէմ 'ի մէջ
խաղալ միայնակ ” :
“ Այո՛, հայր մեր , կրկնեաց Պալլաս ,
այո՛ ո՛վ վեհդ արքայից .
Այդ է անշուշտ ձիր հեշտընկալ սրտի
դասուցն անմահից .
Դարձցի 'ի տուն իւր ողջանդամ բազ_
մահանճարն Ոդիւսէս .
Բայց արդ մեք ըզնուիրակն ուղղոյ տա_
ցուք ըզՀերմէս .
Առ վարսագեղն յաւերժահարսն յՈվ_
գիւգ գնասցէ 'ի կղզին ,
Ըզ մեծանձինըն զՈդիւսեայ պատգամ
տարցի ըզդարձին :

Բայց եւ յԻթակ ուղւոյ եղէց, որդւոյն
 նորա տալ յորդոր,
Կորով 'ի սիրտ հեղեց նորա խմբել ըզ-
 Յոյնս գլխաւոր.
Սանձել եւ սաստ տալ հրամանի մարդկա-
 պարացն համանեաց,
Որ միշտ ոչխս շատ փողոտեն եւ թաւթա-
 հերձըս յանդեայց 5 ։
Ի Սպարտա յղել զորդին եւ յաւա-
 գուածն 'ի Պիւղէ,
Լուր ինչ գտանի առնուլ ըզհօրն, եթէ
 ուստեք լուիցէ.
Եւ զի նա ինքն առցէ անձին շուք մեծա-
 փառ 'ի մարդիկ ».
Ասաց Պալլաս, կապեաց 'ի յոտսն ըզգե-
 ղեցիկըն կօշիկ,
Օ անմահ, զոսկին, որ զնա բարձեալ
 ընդ ծով բերին աշէկոծ,
Եւ ընդ ցամաքն ընդ անսահման 'ի շունչ
 թեւոյըն հողմոյ.
Տեգ ծանր եւ յաղթ առ հաստատեալ
 պղընձասայր անբեկուն,
Որով ճնշէ զխումբ դիւցազանց սրտնեալ
 այս դուստր հօրանոյն ։
Արագաւ ծայրիցն յՈղիմպոսին 'ի ժողո-
 վովուրդն Իթակայ,
Եկաց տիգաւն 'ի նախադրունս սեմոց
 դաւթին Ոդիսեայ.

Յարմարեցաւ նա երբեմն հիւր զերթ պէս
Տափեանցն ըզՄեհնակէ ,
Եւ անդ գտող հայկազնեայց զխումբ
համանեայց գրաւնէ .
Նոքա առ դուրս խնդամեալք բազմոց
ունին մերթ զեղանց ,
Զորս յաղեցին , և շուրջ նոցա կան քա-
րոզք ժիրք պաշտօնեայց .
Կեալք ջուր , գինի , խառնեն 'ի սկահս , և
կեալք 'ի սպունգս ծածկեալ են
Սրբեն սեղանս և սպաս հարուն և միս
բազում բաժանեն ։
Նախ Տեղեմոք եսեւ դիւցազն 'ի մէջ
բազմեալ համանեայց .
Նաեր թախծեալ և զբաղձանսն իւր
յուշ ածեր անձկայրեաց .
Ո՞վ թէ եկեալ նա ըզհայրուշանս գիր և
տար ցրուեսցէ ,
Եւ ինքն անձին կալցի ըզշուքն և իւր գոյ-
ից տէր կայցէ .
Թախծեալ այնպէս նստէր խորհէր . տես
զԱթենաս , եկ առաջս ,
Չըհանդուրժեաց եթէ առ դուրս հիւ-
րըն կայցէ ընդ ձիգ ժամս .
Մատեաւ առ նա կալաւ զաջոյն , առ
ըզնիզակն 'ի ձեռաց ,
Եւ հիւրասէր արագաթեւ բարբառ առ
նա զայս կարգաց .

« Ո՛չ էկեր, հիւրդ, և մեծարանս գըտ-
ցես 'ի մէնջ դու զամէն,
Ա՛ռ նախ զընթրիսդ, ապա խօսեաց, զինչ
քեզ իրաց պէտք իցեն »։
Ասաց, 'ի նոյն և յառաջեաց. ըղձեա
Պաղլաս ընթանայր,
Մինչև էկին մըտին նոքա 'ի բարձրայարկն
'ի տաճար.
Առ սեան մեծի յեցոյց ըղանէգն 'ի գե-
ղեցիկ գարանին,
Ուր և կային նիզակք բազումք անդ Ոդիս-
սեայ դիւցազին.
Աւեալ ըղնա նստոյց յաթոռ, գորգք 'ի
'ի ներքոյ պարզեցան
Գորգք գեղեցիկք արուեստագործք, եդ
ընդ ոտիւք պատուանդան.
Մերձ եդ և իւր բազմոց ձևաւոր 'ի հո-
մանեաց մեկուսի,
Զի մի շըշուկ հայկատակացն հիւրոյն
տաղտուկ լինիցի.
Եւ զի հարցմունք ըղբայականն հօրէն լիցի
իրազգած,
Մինչ բեր նաժիշտն յանկի ամանն 'ի կոնք
արծաթ ջուր ձեռաց.
Եդաւ սեղանն. կինըն անօրէն բեր զա-
ռաջեաւ եդ ըղհաց,
Եւ ժիրաժիր մատուցանէր յառաձեռն ա-
ռատ 'ի խորտկաց.

Անդուստ և մեծ բազմահանդերձ տայր
խախամանքն 'ի սկահակ,
Եւ առաջի դընէր նոցա և զոսկեղէնն ըղ
բաժակ։
Գինւոյն Բաքոսըն էր մատըռուակ. մըտին
գոռոզքն հանմանիք,
Առին բազմոցս, առին աթոռս, 'ի կարգ
անցին գեղեցիկ.
Ջուր տան 'ի ձեռս, և յաղախնեայց
հացին ըղնոյն տակառք,
Նոքա 'ի խաչս աղ կարկառեն, մատըռ
ուակեն սպասանիք.
Յագուցին 'ի կեր ըմպելք կշտացինդք,
անձնուկ բերեն յայլ ինչ իրս.
Ի չէր առեմ և 'ի կոչուս. զի այս են զարդք
խնջոյից.
Քարոզն առեալ կիթառ չքնաղ, Փեմիո
սին ետ ձեռաց.
Նա ընկալեալ և բանադաս երգէր 'ի մէջ
համանեաց.
Մինչ նա զգործին ներդաշնակէր, չէր
նըւագել կարգ 'ի կարգ,
Կըքեալ ըզգլուխն, ասելոյ յայլոց հարց
զՊալլաս Տելեմաք.
Յանդուգն ընդ բանս, մի՛ հեբըրդ քաջ.
երգք են և քնարք գործք սոցին.
Եւ կարի քաջ. զի անպատիժ խորտիկ
ծախեն զառարին.

Որոյ ասխտակ ոսկեղէն ուրեք, ա՜հ, փը-
տեալ կան յանձրևաց
Ցեցակեր տապաստ, կամ թէ 'ի ծով յու-
զեալք ծըփան 'ի յալեաց.
Թէ՛ նա յանկարծ դառնայր յԻթակէ,
դոքա ողջոյն ցանկային
Արագոտնիք յաւէտ լինել քան պերճք
'ի ձորձ և յոսկին.
Ո՛հ, կորեաւ նա չար օրհասիւ, և յոյս-
ըն մեր հատեալ է.
Նա ոչ դարձցի, թէպէտ և մեզ ոք յերկ-
րածնաց ասէ:
Բայց դու ասա՛, ո՞վ ես, ուստի՞, և ո՞ր ծնօղ-
քո, ո՞ր քաղաք,
Յո՞ր նաւ եկիր, զի՞արդ նաւաստիք ածին ըզ-
քեզ աստ յԻթակէ.
Ոչ էին նոքա. զի և անշուշտ դու ոչ հա-
սեր աստ հետի.
Ասա և զայն, այն՞ ինչ եկիր. կամ՝ հիւր
իցես հայրենի.
Զի նա զմարդիկ յանկուցանէր, և շատք
գային 'ի յարկ յայս ».
Երաւ ողջոյն և անդրադարձ կրկնեաց
խաժակն Աթենաս.
« Ճշգրիտ ասեմ, ես իմք Մենտէս քաջն
Անքիալոսի որդի եմ.
Այլ ծովային Տափիացւոց նաւաստեացն
իշխան եմ.

Էջս ընկերօք եկի աստէն հասեալ ըղձով յազգ օտար ,
Եւ 'ի Տեմէս ալըղինձ բերեմ, երկաթ առնում 'ի վաճառ .
Նաւս 'ի բացէ կայ խարսխեալ 'ի քաղաքէն մեկուսի ,
Ի նաւահանգիստ 'ի Հրեթրոնեան յանտառախիտ Նէյէսի .
Հիւր հայրենի եմ 'ի վաղուց , հօրդ ծերունւոյդ Լայերտեայ 6 ,
Զորմէ ասեն՝ թէ նա ոչ եւս 'ի քաղաքի օթեանայ .
Կայ նա յանդի անդ վշտահար ընդ աղախնոյն առաւրգի ,
Որ սպաս հարեալ արբուցնէ եւ կեր դընէ նորա առաջի ,
Յորժամ հաշեալ նա անդամօք դառնայ յիւրոց վաստակոց ,
Զոր վաստակէ յանդ արգաւանդ 'ի յայգեստանըս որթոց :
Արդ եւ եկի լուեալ ըզհօրդ ըզդարձն յերկիր հայրենի .
Այլ խոչ կան դէք . բայց դու քաջ լեր , դեռ կայ Ոդիսս կենդանի .
Ի ծով անդորր արգելեալ կայ 'ի կըղզին ջըրապարփակ ,
Եւ արք վայրագք ունին ըզնա խիր յարգելոց դժկամակ .

Թուեալ չեմ ես այր որ գուշակ և ոչ քա-
քջիկ հաւահարց ,
Գուշակեցից ազդեալ 'ի դից , և բանս
առցէ կատարած .
Ոչ շատ կացցէ նա տարադէմ . Թէպէտ
կապեալ նա յերկաթ ,
Յանդ. նիւթեսցէ ըղդարձն 'ի տուն , զի է
հնարիւք այր առատ :
Բայց ասէ դու ասա զիրաւն , քաջորդին
ես Ոդիսեայ .
Զի աչագեղ , նման 'ի գլուխ յայժ հա-
մանման ես նմա .
Մեք կենակից էաք միմեանց մինչև լեալ
էր նաւագնաց
Ի Տրովիա , ուր և այլք ճոխք չքնաղ հա-
րուստ Հելլենաց .
Այլ յայնմ օրէ ոչ ես զՈդիսս տեսի եր-
բէք , ոչ նա զիս » :
Բարբառ ուշիմն ետ Տելեմաք . « Ես քեզ
զիրաւն ասացից .
Մայրն իմ ասէ , եթէ այն այր , ես ոչ
գիտեմ , զիս ծնաւ .
Զի ո՞ որ է 'ի մարդկանէ , որ ինքն ըզ-
ծնողն իւր ծանեաւ .
Այլ երանի թէ առն երջանկի ծընունդ
ինքնին իմ լեալ էր ,
Որ յուրում տան կենօք անդորր 'ի յա-
լեւոյթ հասանէր .

Բայց արդ որ յոյժ վտանգաւորիկ է 'ի
յազգի մահացուաց,
Զխս 'ի նմանէն առեն ծընեալ, որպէս
հարցեր, հիւրըդ քաջ »:
« Բնաւ ոչ անկած, կրկնեաց խաժամքն,
այդ դիք եառնքեղ յայսպայն,
Յաւուր յորում Պենելոպէ ըղձեղ եած
յերեսն:
Բայց մղէ դու, զինչ պէտք են քո, զինչ
այս խնդել, զինչ խորախճան.
Կոչմնք իցեն, թէ հարսանիք. այս պար-
կեշտից չէ սեղան.
Խեռացելոց շըփացելոց թուի ինձ այս
հացկերոյթ,
Արտաքնեացի, զայս խեռութիւնս տե-
սեալ որ այր խելամիտ ».
« Գիտեմ, ով հիւրդ, որ հարցանես,
եւ Տեղեմաք պատասխանի.
Այս տուն երբեմն էր ճոխ եւ մեծ, ցոր-
չափ այրն այն էր 'ի տան.
Այլ արդ աստուածք յայլ միտս եղեալ
արկած նորա կորուսեցին,
Նա 'ի մարդկեկ անյայտացեալ ըղձեալ յա-
չաց ծածկեցին.
Որ չէր այնչափ, թէ ընդ համհարզս էր
նա մեռեալ յԻլիոն,
Կամ թէ 'ի ձեռս բարեկամաց մարմին
տարեալ ըղպաշտոն.

Զի Յոյնք շիրիմ՛ տային ՚նըմա, և ինքն իւր
շուք զաւակին ,
Շուք մեծ յաղթոյս . բայց արդ Արպիեանք
ըզնա անշուք կապտեցին .
Աւա՜ղ կորեաւ անտես, անլուր . ինձ թող
լալիս և կսկիծ .
Եւ այս չէ շատ . աստուածքն անդուստ
ինձ ՚նիւթեցին այլ թախիծ .
Զի որք կղզեաց տեարք են աստաք, Դու-
լիքիոնին և Սամեայ ,
՚Նոյն անտառաւ Զակինթոսին և տա-
պարին Իթակայ ,
Մ՛այրն իմ՛ տարփածն , ըզտունս քանդեն ,
և հարսանիս զայն գժնին
՚Նա ոչ մերժէ ևոչ յանձն առնու . ՚նոքա
ծախեն ըզտունն իմ՛.
՚Նոքա և զիս փոյթ ծախեսցեն ,, . ըզեաւ
Պալլաս աղեկեզ .
« Բա՜բէ , ասէր , քաջն Ոդիսեայ քեզ
արդ պէտք էն մեծապէս .
՚Նա զէն ըրաշեալ ՚ի բուռն առեալ կաց-
ցէ ՚ի սեամս իւր յարկին
Սաղաւարտաւն և ասպարաւն և երկ նիզ-
կին ՚ի ըռնին ,
Որպէս էս ՚նախ տեսի ըզնա ՚ի խրախճա-
նի ՚ի մեր տան ,
Երբ յէփիւրեայ ՚նա դարձ առնէր ՚ի յԻ-
լոսա Մերմերեան .

Քանզի յնչփիւր երթեալ Ոգիս արա_
գապէս նաւագնաց,
Թոյն մանկացու խնդրէր անդուստ մխել_
ըղձայրըս փրկչաց.
Սակայն խղոս ոչ եա նըման գիտն աճն ա_
ծեալ յաւերժից.
Այլ զի հայրն խմորէր զՈգիւս, եա նը_
ման զայն ըստ ըղձիցն:
Արդ եթէ տառ գայր նա այնպէս 'ի զէն
վառեալ գեղեցիկ,
Արագամանհ առնէր զատա, յոյր գառ_
նայքն հարսանիք:
Բայց թէ 'ի տուն գառնայ, թէ ոչ, թող
զայն աստուածք կնքեսցեն.
Դու այժմ ուշիմ լեր 'ի վանել ըղհօսմա_
նիագ 'ի տանէն:
Ծուր զոր առեալ. վարգիս յառեանն խնճեան
զաւագս Արքայեանց.
Խոսեաց, վճկայք լիցին Աստուածք, ձայն
տուր ցըրուել հանմնեաց:
Իսկ թէ Ճչգրիտ մայրն հարսանեաց ան_
ձուկ բերէ 'ի յոգին,
Թող նա գարձցի առ հայրն 'ի տուն Ճոխ
և աստ. ծընողին.
Տացեն նըման ըղհարսանիսն, տացեն օժիտ
առ 'ի նոյն,
Օժիտ շըբեղ, որչափ 'ի Ճահ իցէ գատեր
սիրայնոյն:

Բայց դու հնազանդ, լուր խորհրդոյս,
 առ Թխավարս քաջ քրման,
Եւր նաւազնաց, յանձեանց խնդրել լուր
 ինչ ըղձորդ բազական.
Տացէ Թերեա մարդ որ, կամ Ջեա գաղա-
 նեաց մարդկան մակացուն
Այլ նախ ՚ի Պիւղ երթ առ Նեստոր,
 հարց զիւցազին ծերունւոյն:
Անդուստ խարտեաշն առ Մենելաւ երթ
 ՚ի Սպարտա տարադէմ,
Այն որ վերջին դարձաւ ՚ի տուն յԱ-
 քայեցւոց ՚ի մարտէն:
Թէ կենաս և դարձ լսես ըղձորդ, ցա-
 ւով ժուժեան տարի մի,
Ապ՝ եթէ զմահ լսես նորա, դարձիր
 յերկիրդ հայրենի.
Շիրիմ գանգրան կանգնեա նմա, և զխա-
 հանս զեղեցիկ
Տացես նմա բառ արժանւոյն, և մօր
 քում տուր հարսանիք.
Ջայս արարեալ խորհեաց ապա և ուշիմ
 լեր ՚ի յոգի.
Զխա՞րդ ՚ի տանդ, մահ հոմանեաց տա-
 ցես զաւուռ կամ յայտնի.
Ըղձեա սնոտեաց մի կրթեալցիս, տիք
 արդ դու չես տղայ.
Ըզլուր փառացն որ յընդհանուրս ո՞չ
 լուար դու զՈրեստեայ.

Որ զցաւաձայնըն զնզգխմոս տապատ էարկ անվէհեր
Զարեանաբբուն հօր իւր քաջի. արդոյդ յաւէտ դու քա՛ջ լեր.
Զի փառս յապայս տայցէն և քեզ. բայց ես 'ի նաւս արդ փութամ,
Գըտից զընկերս որ անդ թերևս դժկամակեալք ինձ մընան.
Այլ դու զիմ բանս յուշի կալցես ":
Լուաւ ուշիմն եւ բարբառ.
« Քա՛ջ խօսիս, հիւրդ, Ճշգրիտ որպէս ընդ իւր զաւակ խօսի հայր.
Ո՛չ մոռացայց. այլ կա՛ց վայր մի, թէպէտ փութաս, ջուր տաց քեզ.
Լուացիս զըւարթ և խրախացեալ ձօն մի 'ի նաւըդ տարցես.
Ձօն պատուական և հօյակապ քեզ առյինէն յիշատակ,
Որպէս հիւրոյթ հիւրըբըն հիւրոց պատուասիրեն փոխանակ ":
« Մի՛, որ փութամս, կրկնեաց Պալլաս, մի արգելցես 'ի յուղւոյն.
Ձօն, զոր կամիս, 'ի դարձն այսրէն տու՛ր ինձ տանել 'ի յիմ տուն.
Թէպէտ և ձօն տաս հօյակապ, ես տաց արժան փոխադարձ ":
Ասաց խաժակն և սրաթեւեալ իբրև զարծուի անց գընաց։

Տեղեմնաբեկայ աղդեալ 'ի սերտ կորովա-
խոյժ գերուձակ .
Եւ զեւրոյ հօրն , քան զոր յառաջին , յոր-
դեաց 'նըմա յիշատակ ։
Ի միտս եկեալ յայսուշ հայրու , խիթայր
եթէ Աստուած է .
Յարեաւ արագ վէհ պատանին առ հօ-
մանիս մըտանէ ։
Երգեր երգիչն ըղ դարձն Յունաց , նոքա
ըռոփիկ ըռանէին ,
Դարձ զըմնդակ 'ի Տրովիոյ , զոր Աթէ-
նասն եւ նոցին ։
Ի վերնատան յիւր սենեկին երգ դիւ-
ցազնեան կիթառին
Յունկըն հայրու Պենելոպեայ ուշիմ դըս-
տերն Իկարին .
Սանդուղըն ընդ բարձր էջ , չէր միայն ,
կըկին կայծին աղախնեայք ,
Մինչև եհաս առ հոմանիս տիկնայց ափ-
կին գերայարդ .
Արձանացաւ եկաց առ սեամս 'ի դեղա-
չէն սաճարին ,
Առեալ զկրկին զայտոլն քօղէր 'ի դիմա-
չուքն 'ի չարին .
Նաժիշտքն անդէն պարկեշտացեալք կա-
յին յաջմէ յահեկէ ,
Ինքն արտասուօք առ վէհ երգիչն այս-
պէս բարբառ արձակէ .

« Շատ այլ նըւագ գիտես, փեմէ, երգ հեշտընկալ լըսելեաց,
Մրցանք մարդկան և Աստուածոց նիւթք պանծալիք քընարաց.
Դու զմի նոյուն առ 'ի նըւագ, դոքա բաժակ տացեն լուռ.
Վայր մի Թող զերգդ, երգ սրտատանջ է դա ունկանս դառնալուր.
Դու զիս անչափ գրաւես ցաւով, անձուկ բերեմ ես քաջին,
Ձայն յուշ ածեալ համբաւաւոնից բոլոր Յունաց աշխարհին »:
Մա՜յր իմ, առ ի՞նչ, ձայն Տելեմաքն ուշիմ կարգաց քաջապէս.
Դա հրաշացեալ երգէ զուարթ, դու աշխուժից սա՛նձ զընես.
Բա՛ սկզբնութիւնք չեն ինչ Երգիչք, Դիոս ինքնին է պատճառ,
Որ ճարտարաց, որպէս կամի, իւրաքանչիւր տայ հանճար.
Դըրմա չէք մեղ, որ զչարաբաղդն երգէ ըզ դէպս Աքայեանց.
Գովեն մարդիկ զնուագ երգոյն նորոգալուր լըսելեաց.
Լե՛ր դու 'ի լուրդ համբերատար. Ոդիսս միայն չէ անդարձ.
Ի Տրոյիա բազումք և այլք տապաստ անկան դիւցազանց.

Դարձիր 'ի տուն, դարձ դու 'ի սպաս 'ի
յաղէկատ և յոստայն,
Ժրացո՛ ըղձանն և զաղախնեայց. Թո՛ղ
մեզ արանցս ասել բան.
Թո՛ղ ինձ յաւէտ որ տէր եմ տանս ». Ըն-
կալաւ զայն մայրն, հիանայր.
Դարձաւ 'ի տուն և զհանճարեղ բանն զա-
ւակին որոճայր.
Ի վերնատունն ել ընդ կանանց, լայր
զիւր Ոդիւսն անձկալեան,
Մինչև Պալլաս յարտեւանունս քուն մի
եհեղ քաղցրութեան:
Նոյն հոմանիք ընդ մութ յարկին խըռով
հարեալք հառաչանք,
Անձուկ բերին 'ի յանկողին, մինչև ձայն
ետ Տելեմաք.
« Վէպք տարփածուք դուք մօրն իմոյ,
լուռ խրախացուք 'ի կոչնոց,
Լուռ ունկն հարցուք քաջ հանդերձուքն.
սաւոյն է ձայն Աստուծոյ:
Վաղիւ ընդ այգն յատեան խմբեալք ձեզ
բան ազդոյ խօսեցայց,
Թողէք զիմ տուն, կերայք ըղձերն, հայց
խնդրեցէք ըղմիմեանց:
Ա՛յ եթէ ձեզ լաւ այն թուի զպարէնս
ծախել ըղմիոյն,
Նկանք վատնել. այլ ես բողոք դիցն յա-
ւերժից տամ պարուն.

Վեհն Արամազդ տացէ անուշուշ ըղձեալ
    ձերոց խնդութեանց ,
Եւ դուք անվրէժք տապաստ արկջիք 'ի
    մէջ յարկիս պատուարաց ":
Յապուշ հարան ամի 'ի բերան հիա-
    ցեալք ընդ բան առաքութեան ,
Մինչև անդուստ ձայն արձակեաց Անահ-
    նոսս Նաւփիթեան .
« Անուշուշ ըղձերդ , ո՜ Տեղեմոյք , արդ հրա-
    շացոյց վեհն Աստուած ,
Եւ եդ ըղձերդ բարձրաբարբառ իբրև աշ-
    խոյժ բեմբասաց .
Գուցէ կղզւոյն մեր Իթակայ քեզ Արա-
    մազդ Զբրուանեան
Թագ կապեսցէ , իբրու ձեռնի ժառանգ
    ես դու հայրական ":
Կրկնեաց ուշիմն . « Ո՞ Անտինէ , թէ և
    սրտնիս , ասացից .
Քաջ իսկ և զայդ , թէ Արամազդ տացէ
    յիմ ձեռս , յանձն առից .
Կարծե՞ս անարդ զայդ 'ի մարդիկ . բա՛ց չէ
    յոռի թագ կապել .
Ընչիւք զեղուն է յարկ նորա , և շուք առ-
    նու անարգել .
Բայց են և շատք աւագք Յունաց , ծերք ,
    պատանիք յԻթակէ ,
Թո՛ղ մի՛ նոցուն թագ կապեսցէ , զի Ո-
    դիսևս մեռեալ է .

Այլ ես, զոր ինձ հայրն իմ եթող, և
ծառայից և մեր տան
կացից իշխան »: Լըսաւ կրկնեաց Նուրի-
մանոս Պողիկրեան.
«Թողցն Իթակայ, ո՞ Տելեմաք, ՚ի կամս
յանձն է աստուածեան.
Բայց դու ըզքոյդ կալ ստանձին և ՚ի
տան քում կաց իշխան.
Այր քեզ ո՛չ ոք բուռն արասցէ ցորչափ
բնակիս յԻթակէ.
Բայց կամիմ հարցումն առնել ես ըզհիւ-
րոյն զայնմանէ.
Ուստի՞ է այրն, յո՞րմէ երկրէ, ո՞ւր նորա
ազգն և աշխարհ.
Լո՞ւր ըզհօրէդ բերէ՞ր կամ ասա պա՞րտ պա-
հանջել գործ արար.
Զիա՞րդ յանկարծ աներեւութացաւ, զան-
խուլ եկաց հիւրն առաջ,
Բա՛ն կերպարան պերճ էր նորա »: Լըսաւ
կրկնեաց Տելեմաք.
« Լո՛ւր ըզհօրէս, ո՞ Եւրիմաք, չառ ից ան-
շուշտ, անդարձ է.
Գուշակութեան արդ չեն ինչ պէտք, իղձ
մայրս ՚ի տան ոչ կոչէ.
Իսկ հիւրն է հօրս հիւր ՚ի Տափեայ Մեն-
տէս որդի Անքեալոյ,
Եւ ինքն այժմիկ Տափիացւոց նաւավա-
րացն իշխան կայ »:

Ասաց այսպէս, բայց նա զխաւէր զալըուստ
  զանձնման գիցուհւոյն.
Նորա 'ի սպառ և յերգ անոյշ հրճուեալք
  մնային ցերեկոյն։
Նա մութ խաւարն, այր այր 'ի նինջ
  չոքան 'ի տուն յանկողին,
Եւ Տելեմաք 'ի բարձրայարկ սերըճ յա-
  ռագաստն 'ի գաւթին.
Վայր յերեկան. անդ եւ ննջել. չառ ինչ
  լինէր մտախորհ.
Էր ընդ նմա Եւրիկղէա ծերագ բար-
  ձեալ ջահաւոր.
Պիսէնորեան սա Ոպեայ դուստր ըղձուն
  պարկեշտ 'ի կանանց,
Զոր Լայերտէս գընեաց առոյգ, գինըն
  քսանից էր եզանց.
Շուք ըղպարկեշտ զեւր ամուսնոյն տայր
  և սրմա հաւասար,
Բայց և երբէք չեմուտ առ նա, զի լըծակ-
  ցին պատկառ կայր.
Սա ծրագ 'ի ձեռն էր ընդ նմա, զի քան
  ամէն աղախնեայք
Գրգայր ըզնա, և ինք սընոյց մինչ մանուկ
  էր Տելեմաք.
Սա յառաջեալ երաց ըզդուրս առագա-
  ստին գեղաշուք,
Նա 'ի մահճին նստեալ հանէր ըզ պատ-
  մուճան զեւր փափուկ.

Եդ զայն 'ի ձեռս ժիր ատաղձին, նա
զայն յարեաց և ծալեաց,
Կախեաց ընդ սեպն առ պերճ մահճին,
յառագաստէն ել գնաց.
Առարկանքն ձգեալ ըղձուրս 'ի յար-
ծաթին 'ի մանեակ,
Եւ խընամով ըղձուշացեալ պնդեաց փո-
կով փականակ։
Զողջոյն գիշերն անդ նա ծածկեալ 'ի
գիրգ ատուքին ծաղկազգեաց,
Կայր մըտախորհ յաղագս ուղւոյն, զոր
Աթենաս պատուիրեաց։



# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Բ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ատեան ժողովոյ յԻթակէ ։ Տելեմաք բողոք հարկանէ զհամանեաց մօր իւրոյ առ ժողովուրդն ։ Անտինոոս պարագլուխըն համանեաց , գանգատէ զնենգութէ մօրն . և տայ առնուլ մօրն 'ի հարսնանալ . Տելեմաք ընդդէմ կերի բանին ։ Արամազդ արծուիս երկուս առաքէ յԻթակէ . Ալիթերսիոս ծերունին գուշակէ զմօտալուտ դարձ Ոդիսեայ 'ի տուն ։ Տելեմաք պատրաստի 'ի նաւագնացութիւն 'ի Պիւղոս առ Նեստոր ծերունին , և 'ի Սպարտա առ Մենելաոս արքայ ։ Մենտոր գրգռէ զժողովուրդն ընդդէմ համանեացն Պենելոպեայ ։ Նաւակից Տելեմաքեայ լինի Աթենաս ընդ կերպարանաւ Մենտորի ։ Տելեմաք պարենաւորի 'ի դայեկէն իւրմէ յԵւրիկլեայ . Նաւէ ընդ Մենտորի , որ կերպարանեալ է Աթենաս ։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Բ.

ԵՐԲ վարդամատն առաւօտուն գայր 'ի
յաշխարհն յերկնուն ,
Եւ յանկողնոյն մեծն Ոդիսեայ յառնէր
որդին անդրանն .
Արկաւ հանդերձ և ըղսուսերն յուսոյն
իւրմէ առ կախեաց ,
Եւ ըղկօշիկսըն գեղեցիկ 'ի գիրգ 'ի յոտ-
սըն կապեաց .
Յառաջապատէն ել դիւցաբար արագ ա-
րագ տայր հրաման
Քաջաձայնիցըն Քարոզից խմբել ըզ Յոյնս
'ի յատեան :

Սորա ձայնէն, նոքա խմբեալք 'ի մի եկին
հասարակ,
Եւ Տելեմաք 'ի ձեռն աշտէն խաղայր և
չէր միայնակ.
Բարակք երկուք ընդհետ գային. և շուք
'ի նա դիւցազնեան
Հեղ Աթենաս, և ընդ քայլէն ողջոյն
յանկձիւս կայր խուժան:
Յաթոռ նստաւ 'ի հայրենին, տեղի ե-
տուն ծերունիք,
Յարեաւ դիւցազն Եգիպտացին, բան խօ-
սեցաւ գեղեցիկ.
Սա ծերութեամբ քամակարեկ, և էր նա
յոյժ բազմագէտ.
Ընդ Ոդիսեայ նորա որդին երթ յԻղիոն
ձիաւէտ.
Էր Անտիփոն արի մարտիկ զոր կեր Կիկ-
լոպսն վայրագ,
Պահեալ 'ի խոր քարանձաւին վերջին
ընթրեաց իւր ճաշակ:
Երեք և այլք. մին Եւրինոմ էր համա-
նեայն յերախան,
Իսկ միւս որդիք խնամակալուք կային գոյ-
իցն հայրական:
Այլ զԱնտիփոն ոչ մոռացաւ լայր հա-
նապազ ողբացեալ.
Այս ծերունի ձայն ետ յայնժամ աչքն
թացեալ յարտասուաց:

« Ո՛հ ունկըն դիք Իթակացիք, երբէք
մեք ոչ խմբեցաք
Յորմէ հետէ նաւագնացիկ եղև Ոդիսեան
այն աւագ.
Ո՞րդ խմբեաց, և զի՞նչ էր հարկ, թէ
պատանի թէ ծեր այր.
Արդեօք նա գո՞յժ լըւաւ զօրաց գրոհեալ
'ի մեզ հինարար.
Զոր մեզ յառաջանս 'ի վեր բերցէ ինքըն
լըւեալ առաջին.
Կամ թէ ինչ մի հասարակաց յօգուտ յայտ-
նել քաղաքին.
Որ զի՞նչ և է, այր մարդասէր առաքինի
թուի դա,
Եւ միայք գործս յի՞նչ և խոկան, բարիս
տացէ 'ի Դիայ »:
Օ այս ծերունին. և ցնծացաւ Ոդիսեւ-
սին պերճ որդի.
Ո՛չ այլ ժուժեաց. խօսախոյս առեալ
կաց նա 'ի մէջ ատենի.
Ի ձեռս նորա եդ գաւազան Պիսենոր քա-
րոզն այն ուշիմ.
Իսկ Տելեմաք նախաձայնէր ուղղեալ առ
այն ծերունին.
« Ոչ հեռի այրն, ո՛վ ծերունիդ, որ
զայս ատեանըս խմբեաց,
Քեզ 'ի մօտ կայ. այլ անտահման արդ
ըզնա ցաւ պարտանեաց

Հրաման զօրու ոչ գումեաց մեզ, զի յայտ-
նեցից առաջին ,

Ոչ և ինչ մի հասարակաց ունիմ առել ա-
մենին .

Այլ զիմ կրկին ազէտին լամ, որ գու-
մեցաւ յիմ առաջար .

Նախ ալերծ ըզ հայրն իմ կորուսի զար-
քայն ձեր հեզ իբրու հայր .

Իսկ և երկրորդն յոյժ դառնագոյն , զի
իմ մարդակերս արդ քանդին ,

Արագ արագ և դըժք , պարէնքս ողջոյն 'ի
չեք լուծանին .

Մօրս զժկամակ կան տարփածուք որդիք
կղզւոյս աւազաց .

Խուան երթալ տուն յԻկարին , տալ
ձիր դառերին հարսանեաց .

Օժտել ըզնա և տալ ըզդուստրն ում և
հաճի միանգամ

Վասն այն յիմ տուն այս տարփածուք
խնծղեք պարեալ թափեցան .

Անդերայս , օդիս , և յոլըս այծեաց զըր
ամենայն փողոտեն ,

Խրախճան կազմեն , շատ ինչ վատնեալ
'ի գինեբրուս շուայտեն .

Չէք առ Ոդիսս անձող ժանտիցդ , և
եա անկած 'ի յուժի

Չեմ արութեանց փորձ 'ի բազուկ , որ 'ի
յարկէս վարէի :

Ո՛վ թէ մարթ էր. մեծ են աղուէսք. զի
առանձին իմ կայ 'ի կործան.
Յիս, անձարք իմ, յիս. դուք անկն անծէք
այս որերայս, որ շուրջ կան.
Դիցըն ցասման պատերազմ կայցէք. մի
զխնամութեան վրէժ առնցեն.
Մաղթեմ 'ի Զևս, և 'ի Թեմիս, 8 որ
զմեզ խոկեն և քակեն:
Թող, բարեկամք, տուք ինձ ցաւել յա-
ղէս հօրն իմ միայնակ.
Եւ թէ Թերսա հայրն իմ Ոդիսս զօր-
ծեաց Յունաց զմկամանակ,
Եւ արդ 'ի վրէժ դրդեալ զդատ, զիս
ինքն առանձին չարչարէք,
Առաւել է ինձ, դուք զկարասին դուք
ըղձան իմ ծախեցէք.
Թէ դուք ուտէք, բա՛ հատուցէք յոր-
ժամ 'ի ձէնջ մրանեցից,
Ցանդ գեգերեալ առ դուռբս ձեր մինչև
ողջոյն դարձուցից.
Բայց արդ զոգին իմ հարկանէք յան-
բուժելին 'ի վիրաց ».
Ասաց ցասմամբ, արկ զգաւազան, վիտակս
հոսէր արտասուաց:
Ի գութ հարան անդ ժողովուրդք.
այլքն հասարակ լռեցին,
Ժրանեաց ոչ ոք 'ի Տելեմաք պատասխել բա-
նիւք յանեղին:

Անմխիթար ձայն եմ միայն. « Բարձրս բարբառոդ Տելեմաք,
Անսանձդ 'ի Թափ, զի՞նչ խօսեցար, ե-դիր ըզմեզ 'նշաւակ.
Կամիս բարուր մեզ կըցկըցել. չէք մեզ Ցուծոյս հոմաննեայ.
Մայր քո սիրուն դա է պատճառք, կին խորագէտ հնարիմաց.
Երրորդ ամ է և հաս չորրորդն, ըզՅոյնս դաւէ վայր 'ի վեր,
Յոյս տայ ընաւից, յոյր այր բան տայ յղեալ 'նոյս ըզբանբեր:
Բայց խիղճ յայլ միտս նենգ նոր նիւ-Թեալ, ոստայն նիւսայ գիրդ և լայն,
'Նստեալ 'ի տան յայն վաստակէ և բար-բառի մեզ զայս բան.
« Ո՞ն, պատանիք իմ տարփածուք, մե-ռաւ Ոդիւսն իմ այր.
Ա՛ղէ ժամ տուք իմ հարսանեաց, մինչև ոստայնն կատարի.
Մի՛ Թելքս 'ի զուր ինձ վատնեսցին, եւ Լայերտեայ ձորձ նիւսամ,
Պատան ծերոյն, երբ մահ 'նենգէ զերկայ-նաքունն 'ի տապան,
Այնպէս դիւցազն ըն հանդիցէ. մի ինձ յոյն կին դիցէ մեղ,
Թէ ահա զուրկ 'ի պատանէ անկեալ կայ ծերն այն ընչեղ:

Ասաց, խաբեաց. և ինքն ըղձու-նուաճեալ
Նիստայր զմեծ տաճարն,
Իսկ ըղձիչերն անդրէն քակեր, ըղձրադն
առեալ օգնականն 9:
Այսպէս զերեալ նենգեաց Յունաց,
մինչ ժամքն հասին չորրորդին,
Եւ մեզ յայտնեաց ոմն 'ի կանանց, որ
քաջ գիտակ էր դաւին:
Գտաք ըղձա, քակեր զատայն զայն
հոյակապն և արձակ,
Եւ հարկեցաւ 'ի գլուխ առնել Թէզէա
ինքն էր գժկամակ.
Զայս դու գիտես 'ի հոմանեաց և Յոյնք
գիտունք լինիցին.
Հան դու ըղձայրդ. տուր հարմանեալ
բառ հօր կանանց և անձին:
Իսկ Թէ առնջէ դեռ չառ ըղՅոյնս 'ի միտս
եղեալ խորադրած
Որչափ Պալլաս ուշ, դամն, հանճար եա
նրմա գործս Ճարտարաց,
(Որ և նրմանն և ոչ առ հինս յոյն գեղա-
վարս բամբըշաց,
Ոչ վէհ Տիւրոնէ, ոչ պերճ Միւկէնն և
ոչ դարձեալ Աղկմենաս,
Ոչ որ սոցուն 'ի գիտ Հնարից Պենդելի-
պայն գայր կըշիռ),
Նա զայս նուագ ոչ լուացաւ, մինքե-
նայեաց 'ի նաւիր:

Զի դուք, պարէնք քո արդ ծախին, ցոր-
չափ դա՛ նոյն կայ մնայ
Ի նոյն խորհուրդ, զոր այժմ աստուածք
արկին ՚ի սիրտ ՚ի նորա ։
Ա՛նշուշտ շուք մեծ տայրէ անձին, այլ
զքեզ թողու՛ նա անպատ .
Եւ մեք ՚ի գործ չերթամք այլուր, կամք
՚ի խորհուրդ մեր հաստատ .
Մինչև փեսայ տայցէ զընտրեալն ». ըղ-
ձաւ կրկնեաց Տելեմաք .
« Չէք, Անտինէ, քան չէք ըղձմայր վարել
տանէն զժկամակ .
Նա զիս ծընաւ, նա զիս սընոյց . և հայրն
իմ կեա՞յ, ոչ գիտեմ .
Եւ դառն է ինձ թէ զօժտագանձ մայրն
իմ առ հայրն արձակեմ .
Անշուշտ զանեծս առից ըղհօրս . անշուշտ
ցասումն և աստուած ,
Զի մայրս վարեալ ինձ զուժեսցէ խու-
ժան զահեղ Ճիւաղաց 10 .
Նաև մարդիկ զիս զզուեսցեն . քան ինձ
բանդ այդ, քան յինէն .
Իսկ թէ ընդ բանս իմ սրտմտիք, ո՛ն դուք
ելէք ՚ի տանէն ։
Ո՛վ գառնութեանս . ձեզ միանգամ
ձեզ բան ազդոյ խօսեցայց .
Դըրաէք այլ հաց . կերայք ըղձերն , և
դուք մինեանց ելէք յայց .

Ապ՛ եթէ ձեզ այն լաւ թուի, զպարէն
ծափել ըղձիցն,
Բա՛ց ծափեցէք. այլ եւ բողք դիցն յա-
ւերժից տամ պարուն.
Վեհն Արամազդ անշուշտ ըղձլէժն տա-
ցէ զծերոց խնդութեանց,
Եւ դուք ՚ի վէժ անկջիք տապաստ ՚ի
մէջ յարկիս պատուարաց ։
Այն ինչ ասաց, Ամպրոպայինն յար-
ձանանէն ՚ի լերին
Արծուիս կրկին յղեաց ՚ի նըմն. թեւապար-
եալս ճախրելին.
Մօտ առ միմեանս հոլաթեւեանք ՚ի թեւս
հողմոց սաւառնէին,
Մինչեւ եկեալ ՚ի յադնախումբ մէջ ա-
տենին ժամանէին.
Անդ ճախր առեալք թոթափեցին զխա-
բաղաթեան անհնի,
Խեթիւ յայր այր ըղձոց դուժեալ՝ ակ-
նարկէին կշռակի.
Մագլցք ապա զայտոցն ցեռեալ եւ պա-
րանոցս ըղձիմեանց,
Թըռեան յաջմէ ՚ի քաղաքին ՚ի բարձրա-
յարկս տաճարաց ։
Յապուշ հարեալք ընդ ինէթ անսլեան
խոճոճէին ըղձշան,
Մինչեւ զխցայդն յարեաւ ձայն եւ ծերն
Ալիթերս Մաստորեան.

Սա գոյժ կարդայ, 'ի հաւահմնայս հա-
մատիոց վեհագոյն,
Ուշիմն եւ ձայն. « Լուարուք, ասէր, Ի-
թակացիք ինձ ողջոյն.
Ի հոմանիսն յանկչին հրմայքս, նոցա ա-
ղէտ մեծ գուժայ,
Եւ չէ Ոդիւս երկայն աւուրքք 'ի սիրե-
լեաց բացակայ.
Աւանէք յանկարծ նա երևեալ ընաւից
օրհաս առթեւացէ,
Նաև շատից որ աստ ընակեմք լուսաստահ-
մանն յԻթակէ.
Ջատաջս ադցուք ասնձել զգոսա, ըզգօ-
նացյին և ինքնին.
Լաւ է նոցա. չեմ զուր գուշակ, ներհուն
հմայից եմ յազգին.
Ահա ըզցաւ առ այլն ողջոյն գուշակու-
թեանց իմ հանդէս,
Երբ յԻղիոն ընդ Արգոսեանց եւ և ուշիմն
Ոդիւսէս,
Թէ փչտացի և անծանօթ զուրկ յըն-
կերաց առանձին
Քսանամեայ դարձցի 'ի տուն. բանքս
իմ ահա կատարին »:
« Մղէ, դու ծեր, ձայն Պողիւբեան Եւ-
րիմաքոսն արձակեաց.
Երթ լեր գուշակ դու որդւոց տանդ, մի
ինչ կրեսցեն չար յապայս.

Ի յայս հըմայս ես քան ըզքեզ յոյժ գե-
 րազանց եմ գուշակ,
Հատք ընդ արփւով շողան թուչունք, այլ
 չեն ամենք չարահմայք։
Կորեաւ Ոգիս տարաշխարհիկ, յան-
 կարծ և դու ընդ նմա,
Զի ոչ այժմիկ այդչափ հըմայս բարբան-
 ջէիր, ով ռամկայ․
Եւ ոչ ցասմամբ մեզ գրգռէիր ըզ Տէրև-
 մեզ պատուհասին,
Թեւրեա ձըրից դու 'ի նմանէն ապաստեալ 'ի
 քամ 'ի յարկէն․
Այլ քեզ ասեմ որ և լըցի, թէ դու զերթ
 ծեր բազմագէտ
Խորհեալ ըզգա բրդեալ ցասմամբ ձըգես
 ընդ մեզ առ 'ի խէթ,
Զեան առաջին գործես նըմա, յայլ ինչ
 չիցես բաւական,
Նա մեք, ով ծեր, քեզ խիտ առ խիտ այժմ
 բարդեցուք անտաշման․
Զոր վըճարել գըժուարեսցիս ցաւոք
 տանջեալ 'ի յոգի․
Այլ պատմութիւն ես տաց յըղել ըզմայրն
 'ի տուն հայրենի․
Տացեն նըմա ըզհարսանիս, տացեն օժիտ
 առ 'ի նոյն,
Օժիտ շըքեղ որչափ 'ի Ճահ իցէ գամեր
 սիրայնոյն․

«Բաւ եթէ Յոյնք դիւցազին երբէք յայս
հարսանեաց դըժնդակ,
Զի մեզ աչ որ ոչ արկանէ, և ոչ բազմա-
բանն Տէլէմաք.
Գուշակութեանդ մեք ունկնս ունեմք,
զոր ծերդ ընդ օդ բարբառի.
Դու ասեսցես, և պատանեացդ շատ վատ-
նեսցին կարասի.
Ցորչափ ժամ տայ կինն հարսանեաց,
մեք ցանդ մընամք պայքարել
Վասն լաւին. չըգիտեմք առ այլս՝ զոր մեզ
'ի ձան է ածել »։
«Լուր, Եւրիմաքոս, և դուք սեղեխք,
կրկնեաց ուշիմն, արդ շատ է.
Բաց խակ արդէն գիտեն զայս դիքն և
յոյն ամէն քաջ գիտէ։
Գէթ նաւ տուք ինձ և ծովագէտ քըսան
թուով թիավար,
Ի Սպարտա և յաւազուտն 'ի Պիւղ առ-
նել ճանապարհ.
Հարցից գիտել ըղտարադէմ հօրն իմ
ըզդարձ և զողջոյն,
Թերևս պատմէ մարդ որ կամ Զևս գաղտ-
նեաց մարդկան մակացուն.
Թէ զկեանս և դարձ լըսեմ ըղհօրս, ժու-
ժամ ցաւով տարի մի.
Այլ եթէ զմահ լըսեմ նորա, դառնամ
յերկիրս հայրենի.

Շիրիմ գամբռան կանգնեմ նըմա, և գիւ-
հանեմ գեղեցիկ
Տաց ես նըմա բառ արժանւոյն, և մերձ
իմ տաց հարստանիք ":
Ասաց, նստաւ. յարեաւ Մենտոր ու-
շիմն ընկեր Ոդիւսեայ,
Որ 'ի չուելն ողջոյն ըզտունն 'ի ձեռս
յանձնեալ էր սորա,
Անուալ ծերոյն և պահապան ամենայնին
գոլ անդրուն.
Արդ աս ձայն ետ. " Լուարուք, ասէ
Իթակացիք ինձ ողջոյն.
Ձեր որ, չէք այլ, չէք հեզ արքայ և բա-
րերար մարդասէր,
Այլ ցանդ դժնի և դըժնդակ իցէ՞ ար-
դեամբք զխստարէր.
Քաղց ամէ դուք, զի՞ յիշատակ չառնէ ոք
քաջն Ոդիւսեայ
Որ իբրև հայր առ հասարակ նոյա հրաշա-
ցաւ հեզ արքայ.
Արդ բուռն ըզկիրս ես ուսադիկ ըսեալ
զժամանից ապրիածուաց,
Որք մահու չար տուն զՈդիւսեայ առնեն
աւեր և այրեայ,
Իբրու ըզնա անդարձ ասեն. ես ժողո-
վուրդք ձեզ ցասեայց,
Զի՞ ոչ բուռ կայք, զի՞ սանձ բազումք
ոչ սակք նուազունց հոմանեաց ":

Ո՞ւր ժամն խնլար, զի՞նչ խօսեցար,
Հայնեաց Լոկրիտ Եւնորեան.
Գլուխս, Մենտոր, մեզ սանձարկու դրդել
ընդդէմ ըղխուժան.
Դըժնդակ է, Թէպէտ բազում սակրս
կոչնոց ընդդէմ մեզ
Ի վէգ ելցեն, Թէպէտ և ինքն Իթակա-
ցին Ոդիսեւս.
Թէ նա ըզվեստ զայս կոչնականս վարել
տանէն ժըտեսցի,
Կինն անձկայրեաց զալոյն նորա ոչ խըն-
դասցէ 'ի յոգի.
Զի ընդ բազումս կըռուեալ անկցի. ու-
տի դու զուր խօսեցար:
Համայս արիք, դուք ժողովուրդք, գնա-
ցէք 'ի գործ, 'ի վաճառ:
Թո՛ղ ասա Մենտոր և Ալիթերս իւր բա-
րեկամքն հայրենիք
Ուղւոյ դիցեն ըզ Տելեմաք 'ի ճանապարհ
տարաձիգ.
Այլ ես կարծեմ, սա յԻթակէ նստեալ
անդորր յիւրում տան,
Առցէ ըզլուրն և վայրապար լիցի նորայն
արշաւան ":
Ասաց, անդէն եղոյծ զատեանն 'ի տուն
չոքան առանձին.
Սեղեխք գընան յարկն Ոդիսեայ, իսկ
էջ 'ի ծով պատանին.

Լուացեալ ըղձեռս առ ծովափանն ձայն
    յԱթենաս արձակէր.
« Լո՛ւր ինձ խաժամէն, որ դու երէկ է-
    կիր, աստուած, 'ի տան մեր.
Հրաման եատուր գիտել զհօրէս ընդ ծով
    նաւեալ կապուտակ,
Արդ Յոյնք բանիւք, յաւէտ սեղեխք վէս-
    քըն ըմբին խոչընդակ »:
Այն ինչ մաղթեալ, մատեաւ Պալլաս
    ըզդիմայն առեալ Մենտորի,
Ցիրանն, 'ի ձայնն համանմանեալ ձայն
    արձակեաց խրախուսի.
« Մի՛ վատ, մի յոյժ լինիր երբէք. զու-
    գին զզեցիր հայրականն,
Լե՛ր Տելեմաք իբրու զՈդիսեւս 'ի գործ
    մարթութն և 'ի բան.
Ի զուր չելցէ քոյդ արշաւանն. իսկ թէ
    նորա չես զաւակ,
Եւ չէ մայր քո Պենելոպէ, խիթամ զուր
    է քո վաստակ:
Նուազունք յորդւոց են հօր նմանք, և
    բազումք են բասրինք.
Իսկ քան ըզհայրն գերազանցեալք դար-
    ձեալ նուազունք 'ի մարդիկ.
Այլ զի դու չես վատ սրտաբեկ, և զերթ
    Ոդիսեւ ուշիմ ես,
Քաջալերեաց զի զայդ մըցանես 'ի գլուխ
    հանցես քաջապէս.

Ըղձամանեայն յընչայց քերթեա՛ զնիւ-
թեալ խորհուրդն անհանձնար.

Եա՛ չեն նոքա ոչ մըտացիք, և ոչ մար-
դիկ են արդար.

Ոչ մահ զխաւեն, ոչ զառն օրհասս որ կայ
նոցա մնայուն.

Ողջ կորիցեն յաւուր միում. դու ան-
դանդաղ լե՛ր ուղղորդ.

Լա հայրենի եմ քեզ համհարզ. քեզ նուա-
կահեմ ձեռընթաց.

Դամ ուղեկից, բայց դու 'ի տուն երթ
երևելոյ համանեաց.

Թոշակ կազմեա և ամանեա հեղ 'ի սա-
փորս ըղցինի.

Առ և ալիւր, կեանք է մարդոյ, կոխեա
'ի ափկս թաւարծի.

Եւ ժիր ընկերս խմբեմ առափ. և նուաք
շատք են յինթակէ.

Նուաք նուրբ և հէնք, 'ի նոցանէն ընտրեմ
քեզ զայն որ լաւն է.

Մեք զայն կահեսցուք արտադատես 'ի ծով
արկցուք ծիրանին ".

Ըղձայն լուաւ ըղձիցուհւոյն, ոչ եա յա-
մեալ սպասանին:

Ճեպեալ 'ի տուն, թախծեալ յոգի
գիտ ըղձեղեխան 'ի յարկի.

Այծըս մարթեն և խորտիկս խողից կազ-
մեն 'ի գաւթի:

Եւ Սիովնու ծիծաղ 'ի դէմս Տէլէմա-
քեայ ընդ առաջ.
« Բարձրաբարբառ ընդ Տէլէմաք, եւ ձեռն
'ի ձեռն, եւ ասաց.
Անտանձգ 'ի թափ, հան 'ի սրտէդ հոգ
դառնութեան զամենայն,
Քաջ լեր, ժրացիր, բարգմեաց, կե՛ր, ա՛րբ
որպէս յառաջ միանգամ.
Քեզ թիավարս ընտիրս եւ նաւ քեզ
Յոյնք ողջոյն հոգասցին,
Հասցես արագ 'ի մեծըն Պիւղ հօրդ 'ի
համբաւ դիւցազին ։
« Լո՛ւր, Սիովնէ, կրկնեաց ուշիմն, ինձ
ընդ գոռոզս չէք բաժին,
Ընդ ձեզ յանդգնոյր ոչ խրախանամ, ըղ-
հայց չարանում ըզգրունեին.
Չէ՞ շատ, զի իմ ալրդւոյ գոլով զիմ շատ
եւ լաւ կարասի
Դուք հատանիք դուք ծախեցէք. արդ
յարբունս եմ հասակի.
Խորասեալ յայլոց, ժրացեալ ոգւով մահ
նիւթեցից ձեզ զարդիս,
Եթէ 'ի Պիւղ 'ի չու անկեալ եթէ յայս
իմ հայրենիս.
Բայց զուր չեկցէ իմ արշաւանս, ահա եւ
առու վարձ նաւի.
Չէք իմ ոչ նաւ ոչ թիավար. այս ձեզ
անձանց ոչ թուի ։

Նայաց, անդէն 'ի ձեռանէն եհան ըզձեռն
    իւր յուշիկ,
Մինչդեռ անդուստ խնձոյս կազմեալ
    շուայտէին հոմանիք.
Ոմն 'ի գունդ 'ի պատանեաց և Անշուշտ,
    ասէր, Տելեմաք
Մեզ մահ նիւթէ. գնացեալ 'ի Պիւղ ան-
    դուստ ածէ օժանդակ.
Կամ 'ի Սպարտա վառեալ չուէ կամ
    յարգաւանդն յԵփիւռէ,
Ածել ըզթոյն բաժակ խառնել, և մեզ
    ըզմահ արբուսցէ ։։
Անդուստ և ձայն այլ ոք կարդայր շփա-
    ցելոց պատանեաց,
« Ա՜յլ ո՞ գիտէ, թէ ծով հասեալ և Տե-
    լեմաք նաւագնաց,
Ի տար աշխարհ անկեալ մեռցի թափառ
    իբրև Ոդիւսէս,
Եւ մեզ յայնժամ հոգ և վաստակ յա-
    ւելուցու մեծապէս.
Բաշխել ըզգոյս, տալ մօրն ըզտունն և
    իւր ածեալ փեսային ։։
Զայս զրուցէին. էջ Տելեմաք 'ի շտեմա-
    րան հայրենին,
Յարկ լայն և բարձր ուր գանձէին մը-
    թերք ոսկւոյ, պղնձոյ,
Զգեստ, պատմուճանք կուտեալք յար-
    կեղս, վայր խընկենեաց և իւղոյ.

Ընդ հին և անոյշ գինւոյն թակոյկք, ուստի
անուշակ դիւցազնեայ,
Յորմէն կազդեալք ապաւէն դարձին չար-
չարագդեալն Ոդիսեայ.
Դրանդեաց դըրանց աղխք քաջակուռք
կրկնափականք դղուշայան.
Եւ կին անդէն ըղջայդ ցերեկ կայր ա-
շալուրջ պահապան.
Սա Պիսենորեան էր դուստր Ոպեայ այն
ժըրադրութին Եւրիկլէ,
Ի վեր ըղղանն հան Տելեմաք ձայն եւ
սրտիւ 'ի սանէ։
«Մայր, դայեակ, ինձ 'ի սափորս հեղ-
ցես զանոյշ ըղջինին,
Ոչ զառաջինն. զայն դու 'ի դարձ հօրն
իմ պահեա դիւցազին.
Ո՛վ թէ դառնայր զերծ յորհանէն մեր
հնարագեալն Ոդիսեւս.
Բայց դու սափորս լից երկոտասան և խու-
փըս դիր ապնդապէս.
Նաև ալիւր կոխեա 'ի տիկըս քաջամուրս
'ի կարան,
Եւ այնքին պատրաստեսցես լիցի [illegible]
չափ ալըրան.
Դու միայն գիտես. կա՛լ կազմ ամբոյն.
առնում ես զայն գիշերի,
Երբ մայրս ելցէ 'ի վերնատունն հանգիստ
առնուլ 'ի մահճի.

Ի Գիւղ գընամ և 'ի Սապարտա լուր ինչ
առնուլ ըղհօրէ ։ :

Լըսաւ, յարտօսր հարաւ անդէն վայեայ
գայեակն Նուրիկըէ .

« Քեզ այդ խորհուրդ, որդեակ սիրուն,
ուստի՞ անկաւ 'ի սրտի .

Ո՞ւր դու ելցես տարադնացիկ, դու միա-
ծին, անձկալի .

Ոգիս կորեաւ տարաշխարհիկ. և քեզ
դորա մահ նիւթեն .

Ողջոյն ըղձորդ սատ հարցեն. եկ դու,
որդեակ, կաց տանէն .

Կաց, և ըղմեզ և ըղքոյ տան պահպանեա-
ցես զաղխամախ .

Չի՞ քեզ թափառ գող վշտատես, ծով
հատանել մարդածախ ։ .

« Բամբ լեր, դայեակ, կրկնեաց ուշիմն,
տառապած խորհուրդ զայս ազդեաց,

Այլ դու երդուիր մի ինչ կանուխ առ-
նել զիմ մայրն իրազգած ,

Մինչ մեռատան յոր երկատատան. կամ
երբ հարցցէ քեզ ինքնին

Եւ գիտասցէ. զի մի լալեաք եղծցէ զառ-
ւոյդ զիւր մարմին ։ :

Զերդումն անխար երդուեալ առաւօրդն,
հեզ 'ի սափորս ըղձիցն ,

Կախեաց զաղխուրն 'ի տեղիս նորա, կող-
մեաց պաշար 'ի յուղին :

Բայց Տելեմաք դարձաւ կրկին առ հո-
մանիս մուտ 'ի տուն,
Մինչդեռ անդուստ մեծն Աթենաս այլ-
ինչ հնարեաց 'ի ժամուն.
Ըզ տիպն առեալ զՏելեմաքեայ շուրջ
ընդ քաղաքն ընթացաւ,
Հրաւէր և ձայն տայր արերայն խմբել յե-
րեկս անդ 'ի նաւ.
Նա 'ի փրոնեան Նոեմոնէն խնդրէր ըզ-
նաւ զեւր զարագ.
Նա մըտադրէր. եմուտ արեգն և մըթա-
ցան պողոտայք.
Յայնժամ ըզնաւն արկ նա 'ի ծով, եդ և
կազմած զամենայն,
Զարդ կուռ նաւուց, և առ կայոյց նաւա-
կայիցն 'ի բերան.
Խմբին ընկերք քաջք խուռնընթաց, հոր-
դան կարգայր դիցուհին.
Ուր և այլ ինչ նիւթէր ձեռնեաց առն
յՈդիսեայ դիցազին.
Անդ հոմանեաց քուն քաղցր հեղեալ,
ըզգինարբուս խաթարեաց,
Զակամբ եկեալ զգինոյն, բաժակք ան-
կանէին 'ի ձեռաց.
Ըրհանդուրժելաք այր այր 'ի տուն հան-
գիստ առնուլ փութացան,
Քունըն ծանրեաց զարտեւանունան, թո-
ղին անդէն բազմականն.

Բայց 'ի տանէն ըղ Տելեմաք կոչեաց ա-
  րտաքս Աթենաս,
Եւ զինքն 'ի ձայն 'ի Մենտորին և 'ի պատ-
  կեր ճշգրտեալ:
«Տելեմաքէ, քաջակք 'ի ձեռս ընկերք
  մնան զալոյն քոյ ·
Արդ գնասցուք մեք անդանդաղ » · տանց
  զընթացս յառաջոյ ·
Եւ Տելեմաք ըղձեաւ նորա մինչև 'ի ծովն
  և 'ի նաւ,
Գտանեալ առ ափն ըզքաջ ընկերսն ան-
  դէն բան զայս խօսեցաւ:
« Ո՛ն բարեկամք, ածցուք պաշարս ·
  կազմ՛ է պատրաստ կան 'ի տան ·
Ո՛չ մայր գիտէ ոչ աղախնեայք · ըստ
  ըղբանն մին միայն » ·
Ասաց, յարեաւ, խաղաց ըղձեալ, առին
  անդուստ զամենայն,
Ածին 'ի նաւն 'ի քաջանիստ, որպէս հրա-
  մանն ընկալան:
Եւ նա 'ի նաւն, յառաջ Պալլաս նստաւ
  'ի խելս նաւուն ·
Մատեաւ անդէն և Տելեմաք նստաւ ըն-
  թեր դիցուհւոյն ·
Անդ ժիրաժիր լուծին նաւաստք ըզպա-
  րանս լարանին,
Ելին 'ի վեր և 'ի նստոցս խոբարանցեալ
  կալոգ առին:

Անդէն տապա մեծն Աթենաս հողմ ա_
    ռաքէր յաջողակ,
Շնչեաց զեփիւռ, ընդ մըկանունան հըն_
    չէր 'ի ծով կապուտակ.
Զայն Տելեմաք տայր ընկերոյն, հրամա
    կազմածք 'ի ձեռին.
Վերայն, ու 'ի գոգն 'ի խարըխխին ըզ
    կայմն ածէն զեզեքին,
Առեալ կանգնեն ուղղորդ կըշխռ ամրա_
    պնդեալ պարանօք,
Եւ զառագաստըն զըսպիտակ 'ի վեր
    քաշեն կուռ փոկովք.
Հողմն ուռուցին էջից ըզմէջն, ալիքն հըն_
    չեն ծիրանիք
Հարեալք ընդ գոգն, և ալերախ նաւըն
    սուրայր գեղեցիկ.
Առին զըպաշխա կապեալք ընդ նաւ, ըս_
    ցին զինեաւ ըզբաժակ,
Եւ անմահից դիցն յաւերժից ձօն նըւի_
    րեն անապակ.
Յաւէտ 'ի ձօն դասէր մայրեղն Աթէ_
    նասայ սան նաւէր,
Եւ կատարեն մինչ ցարշալոյս զուղին ող_
    ջոյն ըզգիշեր։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Գ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հասանէ Տելեմաք ՚ի Պիւղ, հիւրընկալ ՚ի Նեստորէ ծերունւոյն, որ ՚ի ժամուն զոհ զոհէր Պոսիդոնի։ Ծանօթս զանձնէն տայ Տելեմաք, և հարցանէ վասն հօրն Ոդիսեայ լուր ՚ի Նեստորէ։ Նա զդարձ զայլոցն պատմեալ ՚նմա, և ճոխագոյնս զԱգամեմնոնեայ, ոչինչ գիտել, ասէ, զՈդիսեայ. և խորհուրդ տայ Տելեմաքեայ երթալ ՚ի Սպարտա առ Մենեղաւոս և խնդրել ինչ զհօրէն։ Աթենաս կերպարանեալն ՚ի Մենտոր, աներևութանայ։ Նեստոր ծանուցեալ զԱթենաս, զոհ մատուցանէ ՚նմա. և հրամայէ Պիսիստրատեայ որդւոյ իւրում ուղեկից լինել Տելեմաքեայ ՚ի Սպարտա։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Գ.

Արփին ծագեաց յերկին հարուստ ,
    Թողեալ ըզլիճ գեղեցիկ ,
Տիւ անմահից և մահացուաց ածեալ յեր-
    կիր բացաձիգ .
Հասին 'ի Պիւղ 'ի շէն Նելեայ . յաշտ
    Պիւղացիք յաղէին
Ցուլս արջնաթոյր Պոսիդոնի ծիրանա-
    վարս արքային .
Ինն երամանք , յիսունք 'ի մին , նստին
    յաղէն ինն եզինս ,
Զան աստուածոյն ըզբարձս այրեն , ճաշա-
    կելով զախանդիս :

Զամբըն կալան 'ի նաւակայս և զառա-
գաստս ամփոփեն ,
Ելին 'ի դուրս , Պօղոս յառաջ , եւ Տե-
լեմաք 'ի նաւէն ։
«Տելեմաքէ , ասէր խաժակն , ողջոյն
զամօթ բարձ 'ի քէն ․
Ո՞չ դու վասն այն ըղձով հասեր լուր
մի առնուլ ըզհօրէն ,
Ո՞ւր էցէ նա , զի՞նչ բախտ նորա ․ Երթ
առ Նեստոր ուղղակի ․
Տեսցուք զի՞նչ բան և զի՞նչ խորհուրդ նո-
րա կայցէ 'ի սրտի ․
Լուր ճշմարիտ հարցդ 'ի նմանէ աղերսե-
լով զծերունին ․
Նա ոչ խօսի ըզստութիւն , քանզի այր
է քաջուշիմ » ։
« Մենտոր , զիարդ , կրկնեաց ուշիմն ,
առ նա մօտեալ տաց ողջոյն ․
Կենակցութեան ընդ աւագաց չեմ տա-
կաւին ես ներհուն ․
Ընդ այր աւագ հարցումն առնել զիարդ
կրտսեր յառաջեմ » ։
Կրկնեաց Պալլաս և խրախուսէր ․ « Լո՛ւր ,
Տելեմաք , զոր ասեմ ․
Դու զոմն խորհիս , և զոմն դարձեալ
տացէ Աստուած 'ի բերան ,
Զի ոչ առանց դու Աստուծոյ ծընար սը-
նար 'ի քում տան » ։

Նաւոյ Պալլաս և յառաջէր, ընդհետ գը-
նայր պատանին.
Մինչև եկին առ Պիւղացիս 'ի զոհ նոցայն
ակըմբին.
Անդ ընդ որդւոյ նստէր Նեստոր, և զը-
հակիցքն 'ի շուրջ կան,
Միս խորովէն հարեալք շամփուրս և
պատրաստեն ըղանդան:
Տեսեալք ըզհիւրան յարեան անդէն և
ըզձեռայն առնուին.
Բազմոց հրամեն, էր Նեստորեան Պիսիս-
տրատոսն առաջին.
Կալեալ զձեռայն, և ընդ աւազն ըզմորթ
փափուկ տարածէր
Եւ տայր բազմոց, Թրասիւմեդեայ և հօր
իւրում առընթեր.
Բաշխ զընդերաց մատոյց նոցա, յանկի
բաժակ արկ գինի,
Զայն մատուցանէ եւ Պալլասայ դստեր
մեծին Դիոսի.
« Աղերս արկ, հիւրդ, Պոսիդոնի յորոյ
խնճոյան աստ հասեր,
Զօրինաւոր զաղօթան արա, տուր ար-
քային ըմպուէր.
Զանոյշ բաժակդ տուր և դըմա, ձօն
ձօնեսցէ գեղեցիկ.
Կարծեմ և դա է աղօթկեր, զի դից կա-
րօտ են մարդիկ.

Կրակը է դա զոյգ հաւասար խնոց ափոց
հասակի,
Եւ քեզ վասն այն վերընծայեմ նախ ըղ-
բաժակ զայս ամի 12 ։։
Առայց, և եդ 'ի ձեռս նորա բաժակ զա-
նոյշ զգինւոյ.
Եւ ցնծացաւ մեծն Աթենաս ընդ հան-
ճար առն արդարոյ.
Զի քաջուշինն յառաջ նըմա ետ ըզբա-
ժակ զայն ամին,
Անդէն և ինքն յաղօթս եկաց Պոսիդոնի
արքային.
“Լուր, Պոսիդոն, լից զուխտն մեր.
տուր Նեստորի և որդւոց
Տուր շուք և փառս. տացես արխաւր և
զարժանին Պիւղացւոց.
Որպէս զոհ պերճ քեզ յաղեցին. և պա-
տանւոյս և ինձ տուր
Դարձ երջանիկ, որ վասն եկաք, մի ար-
շաւանս եղցէ զուր ։։
Ինքն աղօթեաց և ինքն էլից. ետ ըզբա-
ժակն պատանւոյն.
Ըզնոյն աղօթս և Ոդիսեայ արար զա-
ւակն հօրանոյն ։
Նոքա 'ի ձահ միս խորովեալք և 'ի շամ-
փրոցին զերծին,
Բաժինս հանին յամանս և 'ի կեր, մինչ
զահամանից զխըճն հարին ։

Հաւէտ խօսել Նեստոր ասպետն,
« Երդ հարցանել մեզ հիւրոց
Գեղեցիկ է, յորժամ նոքա վայելս առին
կերակրոց.
Ո՞յք էք ո՞ հիւրք, ուստի՞ նաւէք. Թերեւս
'ի պէտս վաճառոյ.
Կամ լայն յուղին դուք թափառիք իբ-
րու ընչէնս ծովագնաց,
Հէնք, որ զոգիս 'ի բաժին կալեալ այլոց
ածեն օրահաս ».
Լուաւ ուշիմն Տելեմաք եւ խրախուսեալ
ձայն կրկնեաց.
Խրախոյս յոգին արկ Աթենաս, զի լուր
հարցցէ ընդ հօրէ,
Եւ զի անձին շուք մեծաշուք առցի յամ-
բաւ մարդկանէ.
« Ուստի՞ խնդրէք, մեզ հարցանես, Նես-
տոր, փառք մեծ Նելեայ.
Ես քեզ պատմեմ. գամք յԻթակայ, որ
'ի ստորոտն Նէյեայ.
Գործս առանձին է զոր ասեմ. խնդրեմ
զհօրէս եւ զարդիս,
Լուր ինչ առնուլ զհամբաւատանէնչ զիմ
Ոդիսեայ դիւցազին.
Ասեն ընդ քեզ մարտակից քանդել
Տրոյեանց պարհաստան,
Նաեւ լուայ զայլոց քաջաց որ յԱրգին
կորուեցան.

Դառն օրհասիւ անձնիւր նոքա առա անդ-
անկան գլխապատառ,
Այլ զօրահաս զինն Ոգիւսեայ զանխուլ
եթող Արամազդ.
Զեք որ պատմէ, 'ի թշնամեաց կորեա-
յերկիր 'ի ցամաք,
Կամ թէ արդեօք նա ծովակոյր եղև յան-
դունդս անյատակ.
Հասեալ կամ արդ առ տունս քո լուեալ
ըղ գոյժ օրհասին,
Եթէ գիտես ականատես կամ հանդիպելոյ
յօտարին.
Ասա՛ց, զիմ հայրն յոյժ վշտատես թա-
փառական ծընաւ մայր.
Մի պատ 'ի պատ ինչ խօսեսցիս, մի ակն
ածեր, մի գըթար.
Մ՚եկին պատմեա զոր ինչ անսեր, թէ
քեզ հայրն իմ Ոգիւսէս
Ստոյգ գըտաւ յիր և 'ի բան, զխոստումն
եղից մեծապէս.
Քեզ աջակից եր յԻլիոն, ուր շատ կրե-
ցեք ո՜ Հելլենք.
Արդ, հայր, 'ի յուշ ած զայնոսիկ, և
պատմեսցես ինձ աննենգ »:
«Յուշ ինձ ածես, կրկնեաց Նեստոր,
լու՛ր ինձ արդ ո՜ բարեկամ,
Յուշ ինձ զաղէտս, զոր անդ կրեցաք մեք
քաջագունդքս Աքայեան.

Թէ նուագմունքն ընդ դաշն կարգօք ուր
և ածէր Աքիլլէս
Յառ և յարդուն, թէ յԻլիոն ուր կըռուեցաք քաջապէս.
Անդ մեր առաջքն անկան տապաստ անդ
Աքիլլէս, անդ Այաս,
Անդ Պատրոկղէս աստուածանմանն, անդ
և որդիս գիւցազնեայ
Իմն Անտիղոք սիրունն և քաջն արագավազն և մարտիկ.
Նա այսոսիկ նաև այլ շատ մըթերեցան
մեզ չարիք 15.
Մա՞րդ զամենայն ո՞ պատմեսցէ, թէպէտ
հինգ ամ կամ վեցեակ
Դու աստ կացեալ հարցցես յինէն, զոր
Յոյնք կրեցին դըժնդակ.
Մինչև լուեալ դու տաղտկացիս դարձցիս յերկիրդ 'ի յԻթակէ.
Զի ինն ամեայ բազմաճարտար նոցա աղէտ նիւթեցաք.
Հազիւ աւարտն ընձայողն մեր մեզ պըսակեաց Զրուանեանն,
Այլ 'ի հանճարն հօրդ հաւասար չեկաց
ոք յայն արշաւանն.
Վէհ էր բնաւից գիւցազն Ոդիսս անմնարուեստ 'ի գիւտս.
Անշուշտ նորա զաւակն ես դու, զիս հիացումն արդ ունի.

Հայիմ ՚ի քեզ և հանդուրժակ կշռեմ ըզ-
բան քոյն լեզուի.
Գայցէ՞ երբէք ՚նըմանախօս այր որ այդչափ
պատմանի ։
Ես և Ողբիւս զնոյն խօսեսք ՚ի հրապա-
րակ և յատեան,
Մ՝աղթեաց. կոծ եառ. և դիցուհին պա-
զատանաց ըն լուաւ,
Մինչդեռ խռնարհ անդ ՚ի յարկին զան
հաճանկք զաղմկաւ։
Ասէր ինձ զնք որ պատանի անդ ՚ի խե-
ւացն յերամին.
« Արդ հարսնիս հանդերձեալ մեզ
տարփացեալ թագուհին.
Վա՛հ, ո՛չ գիտէ զի՛նչ հաղբք մահու իւր
մանչ՚նին լարեցան ».
Բայց խոչանկայն ո՛չ գիտէին, անդուստ
զի՛նչ իրք գիտեցան։

Բարբառեցաւ Անտինոոս. « Ա՜յ յետսա-
մուտք, ընք ուշիմ.
Մէ որ զարզմնեաց զուշակ լեցի. չափ և
կշիռ զեբ լեզուին.
Լուռ մեք ըղձմանն 'ի գլուխ հանդերձ զոր
կնքեցաք միաբան ».
Նայոց, ընտրեաց խուր գործակից 'ի կորս-
վեաց այր քրման։
Երթեալ 'ի նաւ և 'ի ծովափն ըղձանն 'ի
ծով արկանեն,
Գտնեն ըղկայեմն և զառազատ և ըղձաշաւիս
պատարատանեն.
Փակեալ փառթոյթս կապեն 'ի Թիւս, պար-
զեն առկղանկ զառազատ,
Բառնան բերեն և զէն և զարդ այն պա-
տանքըն անուսաւ.
Գաղզար նաւուն եառն 'ի խորս, մը-
տեալ ընթրիս առնուին,
Ընդ խրախուսեալք սպասեալ մինան մին-
չև ցցեալ երեկին։
Բայց վերելեալ 'ի վերնատանն կայր
Պենելոպէ ծամաքան,
Զուտեր, չոմեր, յուզեր խորհուրդ
վասըն որդւոյն սիրական,
Արդեօք լիցի՞ Տելեմաքոս յորահանէն
անձնապուր.
Շատ ինչ խեղթայր, մի՛ հոմանեաց ժա-
նեաց լիցի կերակուր։

Որչափ առիւծըն անկասկած 'ի շատալ
մըստոյ տապ՛նալի,
Երբ գիեցիկ համգերձ կորեամբք հաղբ
յորսորդայ Թակարթի,
Այնչափ ծըփայր, մինչ ըմբռնեալ յա-
նուշարար 'ի քընոյն
Անկեալ ննջեաց, և ողջ անդամք լու-
ծեալ էին նուաղելոյն ։
Հնարեաց յայնժամ մեծ Աթենաս, 'ի
դոյ էած ուրուական,
Մարմնով 'ի սփող համանմանեալ էր Իփ-
Թիմեայ Իկարեան.
Ըզսա Եւմելոս բնակիչ Փերեայ 'ի յամու-
սին իւր առար,
Նա զաս յայնժամ յղեաց Պաղլաս Պենե-
լոպեայ մխիթար.
Սա գնած բառնալ ջնջել նորա ըղձերար-
տասուն 'ի յաչաց,
Յարկն Ոդիսեայ 'ի յառագաստն եմուտ
ընդ փոկ փականաց.
Կայ 'ի ննարից. և «Ննջե՞ս, ասէր, Պենե-
լոպէ վշտահար.
Այլ չառնուն յանձն աստուածքըն ան-
մահք Թէ կոծ գիցես և աշխար.
Դարձցի որդիդ դարձցի ողջամբ, նա ոչ
յանցեաւ աստուածոց ».
Կրկնեաց տիկինն որ քուն յանոյշ ննջէր
առ դուրս երազոց.

« Հի՜մ եկիր, քոյր, որ աստ առ մեզ չէր երթեւեկ քո յառաջ,
Իբրեւ 'ի տուն յոյժ բազմական բնակիս 'ի մէնջ տարագնաց.
Գիտե՞ս դու ցաւոցս որ բխեցուցի տանջեն զիմ միտս եւ զոգին,
Որ նախ ըզքաջն իմ կորուսի ըզհոյակապն ամուսին.
Էր նա կարգօք առաքինի 'ի մէջ Յունաց բարգաւաճ,
Ընդ Ելլադա եւ ընդ Արգոս համբաւն եւ շուք գերապանծ.
Արդ նաւազնաց եղեւ որդիս, գործառնութեանց չէ ներհուն.
Քան զնա յաւէտ ըզսա ողբամ, եւ կամ եմ յահ 'ի դողուն.
Մի ծովակուր նա լինիցի կամ տար յաշխարհ վտանգիր.
Զի մահ նըման նիւթեն ստոյգ մինչեւ հասանել յիւր երկիր »:
« Քաջալերեաց, կրկնեաց առ նա խաւարայինն ուրուական,
Մի սրտաթափ վասըն որդւոյդ. ընկեր ունի անձըման.
Մեծ զօրավիգն համբաւաւոր այն է Պաղլասն Աթենաս,
'Նա քեզ գութ ած եւ զիս յղեաց հրեշտակութիւն բերել զայս ».

Կրկնեաց տիկինն . « Թէ աստուած ես ,
 կամ ձայն լուսոյ զաստուածոյն ,
Ասէ սա , իմ հրեշտակացն դեռ տեսա_
 նէ լոյս զարփւոյն .
Թերեւս ուրեք կեայ յաշխարհի , կամ դը-
 ժոխոցն 'ի յարկին ».
« Չէք իմ ասել , ձայն զայս կրկնեաց խօլն
 ուրուատիպ խաւարին ,
Արդեօք մեռեալ , թէ կենդանի . ընդ օդ
 խօսել չէ արժան ».
Ասաց , անդէն դրօք փակելովք 'ի շունչ_
 լուծաւ հողմական :
Ըմթափեցաւ դուստրն Իկարեան , խըն_
 դայր ցնծայր 'ի սրտի ,
Քանզի երազ ետես անխալ 'ի հասարակ
 գիշերի :
Իսկ հոմանիք նուագնացիկք հատանէին
 լոյծ զուղին ,
Գաղանորդայթ Տելեմաքեայ հաղբ լա_
 րելով զօրհասին .
Անդ ժայռալից Ասարիս անուն կղզի ծո_
 վուն 'ի մէջ կայ ,
Եւ չէ ինչ մեծ , ընդ մէջ Սամեայ և ա_
 ռապարն Իթակայ .
Նաւահանգիստս ունի անդրոյթ ուր նաւք
 մնանեն խաղաղիկ
Երկմուտ դըրանիք . անդ նստէին դարա_
 նամուտքն Աքեցիք :

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ե·

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ․

Նոր առեալ խորհրդոյ աստուածոց։ Աթենաս բողոք հարկանէ, զի Ոդիսևս արգելեալ կայ 'ի կղզին Կալիփսեայ յաւերժահարսին. և զի՝ մահ նիւթեն հոմանիքն գարշանակալք Տեղեմաքեայ։ Առաքի Հերմէս առ Կալիփսէ, զի կամայ և ակամայ արձակեսցէ զՈդիս։ Ծովալողնացութիւն հրաշապատում Ոդիսեայ 'ի վերայ լաստափայտին։ Մրրիկ սաստկալի յուզեալ 'ի Պոսիդոնէ. կենդանագրութիւն սքանչելի․ խորտակի լաստն Ոդիսեայ, և անկանի 'ի լուղ․ օժանդակի 'ի դիցուհւոյն ծովայնոյ․ յետ անբաւ աշխատից ունի Ոդիսևս զկղզին Փէակեցւոց։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ե.

Եւ Տիթոնեին 'ի կողմանէ այգն 'ի մահ-
ճէն գայր 'ի վեր,
կանացածնաց և անմահից կանուխ լինել
լուսաբեր.
Ի գլուխ յատեան ահեղազօր կայր ամպրո-
պեանն Արամազդ,
Եւ Աթենաս կիրս զՈդիսեւսեայ մեծ ատե-
նին առնէր ազդ.
Տեսեալ 'ի տան Յաւերժահարսին փակեալ
զՈդիսեւս վշտատես,
Բողոք բառնայր. « Հայր Արամազդ, և
դուք աստուածքդ յաւէժ.

Չիք տեսանել այսուհետև մեզ Թագա-
ւոր զոք արդար ,
Ո՛չ հեզ , ներող , և մարդասէր , այլ ցանգ-
անգութ չարարար .
Զի մոռացեալ եղև Ոդիւսն այր հեզ
խնամողն հայրօրէն ,
Նա 'ի կղզւոջըն Կալիփսեայ հեծէ 'ի խոր
'ի սրտէն .
Յաւերժահարսին ունի ընդ նա . չիք դարձ
յերկիր հայրենի .
Չիք նաւ , չիք թի , չիք նաւաստի ածել
ընդ ծով ամեհի .
Նա և որդւոյն 'ի դարձն 'ի տուն արք ո-
խերիմք մահ նիւթեն ,
Որ 'ի Սպարտա և 'ի Պիւղ չոգաւ լուր
ինչ առնուլ ըզհօրէն ։
Ըմպրոսպայքինն ձայն եառ . « Դուստր իմ ,
զի՞նչ բանք բառ ցանգդ ել շըրթանց .
Ո՞չ զՈդիսեայ վրէժուն 'ի դարձ դու
խորհեցար հնարիմաց .
Տեղեմաքեայ , կարող , հոգ ած . դարձցի
'ի տուն նա ողջիկ ,
Իսկ խեռացեալքդ այդ նաւաչուք ընդ
կրուկ դարձցին համանիք » ։
Ըսաց . ձայն եառ Հերմէս որդւոյն . « Հեր-
մէս , յաւէժ իմ բանբեր .
Ե՛րթ գանգրահեր Յաւերժհարսին ազ-
դեա զանշուշտ խորհուրդ մեր ։

Պարծցի Ոդիսս չարչարազգեաց ապրո-
պարեալ 'ի լաստ մի
Բազմահանդոյց. ոչ դէք ոչ մարդ լիցին
նըմա հովանի.
Յոր քսաներորդ հասցի 'ի Սքեր յերկիր
յուռթի 'ի յանդոց
Առ փէակեանս, որ են նոքա մերձազգաւ-
ակք աստուածոց 21.
Շուք դիւցական հարցեն նոքա, տացեն
նըմա նաւ 'ի տուն,
Յոսկի, պղինձ և 'ի հանդերձ նաւըն լի-
ցի ակապձուն,
Յաւէտ քան զոր 'ի գարձն ողջամբ 'ի
Տրոյական յաւարէն
Էառ Ոդիսս. զի արդ նըմա բախտք բա-
րեբաղդք կնքեալ են։
Տեսցէ զաշխարհն և զախրեղիս, տեսցէ
զիւր տունն բարձրայարկ ».
Ասաց պատգամ. յարեաւ 'ի գործն ար-
գոսասպան Հերմիսն։
Կապեաց 'ի յոտս զանմահ, զոսկի, նաւըղ
կօշիկս անմըրման.
Նոքօք թռչի 'ի թեւս հողմոց ընդ ծով, ցա-
մաք, յանսահման.
Առ զգաւազանն, որով մարդկան նա
քուն ածէ ըստ կամի
Եւ թօթափէ. այնպէս 'ի բուին թռչէր
հրեշտակն այն արի։

Հասեալ 'ի ծայրսըն Պերսիայ, 'ի ծով սլա-
  ցաւ նա յօդոյ,
Հատեալ սուրայր նա ընդ ալիս երբեմն ըղ-
  ձաւըն Լարոս 22.
Որ զնոր ծոցովք անդոյս ծովուն որսայ
  զձըկունս իւր 'ի կուր,
Եւ տանէր բառնէր ընդ ալեծուփ թանայ
  ըղթեա, ըղփեսուր.
Նըման Հերմէս հատեալ զալիս հաս 'ի
  կղզին բացական,
Եւ կապուտակ նա 'ի ծովէն զընայր ծո-
  վուն առ ափն.
Ի մեծ քարայրն և հաս 'ի յարկ Յաւերժ-
  հարսին գանդրահեր,
Եգիտ 'ի ներքս. և առ հուր մեծ 'ի կրա-
  կետեղ բորբոքէր.
Մայրք գիւրահերձք և խնկենիք այրեալք
  բուրեն ընդ կղզին,
Նա յերգ 'ի քաղցր ստայն անկեալ կըկոց
  շարժէր զիւր ոսկին.
Անտառ բուսեալ ըզքարայրիւն 'ի շուրջ
  պատէր դալարի,
Աստառ ստեաց, և կաղամախ, անուշա-
  հոտ և նոճի.
Բոյնս 'ի նոսա լայնաթեւեան թռչունք
  եդեալ դարէին,
Բուք և բազէք, նաև սակուռք լայնալե-
  զուք ծովային,

Զբօսանս ծովուն խայտան սոքա . բայց
անդամնոք և այգի
Յորժ նորատունկ ողկուզալից յանձանձն
ողջոյն բոլորի .
Ընդ և աղբիւրք ընծայ հոսեն ականա_
կիտ ջուր յատակ ,
Մօտ առ միմեանս բաշխին յառաջս , և են
'ի Թիւ 'ի քառեակ .
Մարգ փափկութեան մանուշակաց , գա_
լարագուարդ և նեխուր .
Որ և Անմահ որք անդ հասեալ յակնձնուքս
կայք և գրանդոյր :
Ընդ ըղձկայ առ մեծ Նուիրակին և հիմնայր
'ի գընդին .
Քայլեաց եմուտ յանդոյր քարայրն , ան_
դէն ծանեաւ Դիցուհին .
(Անմահք միմեանց չեն անծանօթք Թէ_
պէտ իցեն տարաբնակք .)
Բայց նա զՍդիւս չէգիտ 'ի ներքս . էր նա
ուրեք միայնակ .
Նա մերա մեկնեալ նստէր ծովափն յոգւոց
հանէր արտասուագելոց ,
Հայէր լալեաք ընդ ծովն անդրոյս մաշէր
զոգին յարտասուաց :
Վէհ Կալիփսէն պաշտեալ զՀերմէս 'ի գահ
փայլուն մեծապէս ,
« Ա՛ռ ի՞նչ , ձայնէր , եկ քո առիս , ամէն_
բարեմանեալդ Հերմէս .

Չէր այս յառաջ, մէհ եկաւոր. աստ
 զպատճառ գալըստեան,
Ի գլուխ հանից սիրողաբար որ ինձ մարթ
 է և արժան.
Մտաց յառաջ, տալ քեզ հիւրոյթ ». 
 ասաց, սեղան եւ արար
Ամենահաւան ըն ճաշակօք, Նեկտար խառ-
 նեաց կարմրորակ.
Եկեր և արբ մեծ Նուիրակն և ըմբոշխ-
 նեաց լիապէս,
Կրկնեաց յայնժամ. « Աստուածուհիդ,
 արդ զիս զաստուածս հարցանես.
Ասեմ ճշգրիտ, քանզի խնդրես. զիս
 Ջեւս յղեաց զակամայն,
Զի՞ ո՛ երբէք հատցէ կամաւ զայս աղա-
 ջուր անսահման.
Ուր չիք քաղաք դից ձօն հանել, չիք հա-
 րիւրեզն առնել յաշտ.
Բայց դից չէ մարթ յոնչաց քերել զոր
 պատուիրէ Արամազդ։
Կայ առ քեզ այր ընաւից թշուառ, որք
 յԻլիոն կռուեցան.
Զինն ամ տանջեալք՝ 'ի տասներորդն այ-
 րեալք զստանն մեկնեցան.
Նոքա յուղւոջ 'ի յԱթենաս յանցեան,
 յարոյց նա մրրիկ,
Ընդ լեռնացեալ ուղան ալեօք ընկէլք
 նորա քաջարիք.

Խնչին հողմավար և ալէատանջ աստ 'ի կղզի
հաս առ քեզ.
Ամպրոպայինն արդ ձայն կարդայ թողուլ
ըզնա փութապէս.
Բայց չէր նմա մահ տարագէմ յերկիր
առնուլ օտարին,
Նա 'նդ սիրելեաց տեսցէ ըղձաւորն, տես-
ցէ զաշխարհ հայրենին ":

Լուսաւ ըզբանն և զայրացաւ, ձայն ետ
անդէն Կալիփսէ.
«Ա՜յ դիք անգութք, խէթք դիցուհեաց,
ո՞չ բանդ ահա նախանձ է.
Խեռայք ընդ մեզ, երբ մերձանեմք մեք
առ պարկեշտ ամուսին.
Որպէս յորժամ Այգ վարդամատն առ
զանկողին ըղձալւոյն 23,
Յորժ խեռայէք դիք հեշտակեացք,
մինչ ոսկեգահն Արտեմիս
Ըզնա յՕրտիգիայն 24 հար ողջախոհն ըս-
պան գողտրիկ յիւր փքքինս:
Եւ զի 'նդ Յասոն յանդ եռահերկ Դե-
մետրն եմուտ վարսագեղ,
Գիտաց Դիոս և ըզՅասոն եհար 'ի շանթ
իւր ահեղ.
Արդ և ընդ իս, զի զայրդ ունիմ, խեռայք
աստուածքդ ողջոյն,
Որ ես հանի զայրդ 'ի ծովէն զապրեալն
'ի գոգն 'ի նաւուն.

Քանզի հրացան Դիոս շանթեւալ՝ քակեաց
ընթացն ամրակուռ,
Ցնդեաց 'ի ծով և անդ ողջոյն ընկերքն
եղեն ծովակուր.
Եւ զհողմավարն և զալէտանջն առի
մնացի զրդատակս,
Անմահ գործել և անծերական կենաց
հաղորդ զոլ յաւէժ.
Այլ զի պարտք են գիր պատկառ կալ
Արամազդայն հրամանի,
Թող ըստ նորա պատուիրանին գա ծով
հատցէ ամէհի.
Այլ ես ինքնին ոչ արձակեմ, չիք իմ աստ
նաւք, նաւաստիք
Ընդ յաղթ ալեաց ածել ընթա. ամենայն
խորհուրդ տայ քաջին.
Դա յաջխարհ իւր դարձցի ողջամբ, առ_
տոր եղէց անվնասականն »:
Կրկնեաց Հերմէս. « Բայց արձակեա՛,
ցասման Դիոսյ զու անձն ած.
Մի՛ 'նդ քեզ յասպայս նա զայրասցի ».
ասաց և եւ քաջն Հերմէս.
Լուաւ ընդրանն Յաւերժահարսն, յա_
րեաւ խնդրել զՈդիսեւս.
Նաւեալ ծովափն եգիտ ընթա, աչք իւր
Թացեալք յարտասուաց.
Հոգայր ընդարձն և լայր հաւէր ընդարձը
արեն ըզկենաց:

Զյաւերժհարսանցն անտես առնէր.
հարկեալ միայն գիշերի,
Ո՛չ կամեցողն առ կամեցողն, հանդչէր՝ի
խոր անձաւի :
Ըղձիւ զափանցն նստեալ՝ի վէմս, զոգին
հիւծէր և հողայր,
Յողբ՝ի հեծիւն հայէր ընդ ծով, այլ
ցողէին արտասուք :
Մ՛օտ դիցուհին եկաց ձայն ետ. « Ա՛ն-
ձըն մաշեալ, զի՞ ողբաս.
Մի այլ ծնգիր. քեզ արձակուրդ տամ
մտադիւր, որն եհաս.
Դու ձեռն յերկաթ, հատ յաղթ հեծանս,
լաստեալ կապեա լաստ արձակ,
Տախտակամածս գործեա բարձունս ընդ
ծով զընթաց կայտառակ,
Եդից զինի քեզ կարմրորակ՝ի գիւր
քաղցր հաց, ջուր առց,
Արկից և ձորձս, նաև անոյշ քեզ հողմ
յղեմ՝ի Թիկանց.
Դարձցիս ողջամբ՝ի հայրենիսդ. միայն
թէ դիցն հաճեսցին
Այն երկնաբնակքն ոյք ինէ մտօք են գե-
րագոյն՝ի կարգին » :
Լուաւ Ոդիսս, կրկնեաց անդէն, այլ
քրտմնեալ մեծապէս.
« Ո՛վ դիցուհիդ, քան արձակուրդ ան-
շուշտ դու այլ ինչ նիւթես.

Հրաման լսատիւ ինձ հատանել ծով ա-
լէտանջ ահագին ,
Յոր և հազիւ նաւք քաջակուռք հողմով
Դիւայ յաջողին .
Զեկեց 'ի լատան քէղյակամայս , թէ ինձ
չերդնուս դիցուհի
Զերդումն ըղձծ , թէ ինձ ալէա զայլ
ոչ նենգեա 'ի սրտի ։
Յաւերժահարսին ժպտեցաւ , գըգուեաց
ձեռամբն և ասէր .
« Այ խորադէտ , մանրակըրկիտ ես և 'ի
բան անմէհեր .
Զինչ հնարեցար . արդ դիտասցէ եր-
կիր , երկին վերնական ,
Դիտասցէ քաջ և ջուր Ստիւգեան յան-
դունդս 'ի խոր սահական .
Դիցս երջանկաց այս է երդումն ահե-
ղահրաշ սոսկալի .
Քաւ թէ ես քեզ ալէա ինչ այլ մեքե-
նայեմ 'ի սրտի .
Ըզնոյն խորհիմ և վասն անձինս , եթէ
երբէք պէտք իցեն ,
Պարզ են միտք իմ և գըթած եմ , սիրտ
ոչ ունիմ քարեղէն ։
Րաց . յարեաւ վէհ դիցուհին . ըզհետ
զընայր Ոդիւսէս .
Եկին յանձաւն . Ոդիւս նստաւ 'ի գահն ,
ուր ել մեծն Հերմէս ։

Յաւերժահարսն եդ Ոգիսեայ հաց մա-
հացուաց և բաժակ.
Նստաւ հանդէպ. Նաժիշտք նորա վճեկ-
տար, զանմահն ըշմաշակ.
Զեռս կարկառեալ առնուն խոհիցն
մինչ կշտացեալք յագեցան.
Խօսէր յայնժամ վեհ Կալիփսէն. « Ո՛
քաջդ Ոգիսս Լայերտեան.
Ա՛յդպէս ուրեմն, այր բազմահնար, 'ի
տուն փութաս հայրենին.
Գնասցես ողջամբ. այլ ու՛շ 'ի կուրծս
այժմէն միտ դիր քում անձին.
Վիշտք քանիօն կրեքեալ են քեզ մինչև
հասեալ քո յաշխարհ,
Թէ գիտէիր, ընդ իս յանձնեալ մնայիր ան-
մահ դիւցազար.
Թէպէտ յանձուկ քոյ ամուսնոյն տարփս
դու ցանկ 'ի յոգի,
Այլ ես յիրաւն չեմ ինչ խոնարհ և ոչ 'ի
տխալ պատկերի.
Զիք մահացուաց 'ի մայն մարմնոյն և կամ
'ի գեղն 'ի դիմաց
Ընդ անմահից կռչիւ գործել »: Լուաւ
Ոգիսս և կրկնեաց.
«Մ'է ցասնուր, վեհդ, ապաշ եմ քաջ.
քան Պենելոպն իմ ուշիմ
Խոնարհն 'ի գեղ, խոնարհն յիրան քան
ոչ դայ քեզ 'ի կշռին.

Նա մահացու, դու յանմահից ես ան-
　　տրխեղծ 'ի կարգէն .
Համայն անձուկ բերեալ դարձին , ա-
　　ւուրն այնմիկ փափաքեմ.
Իսկ թէ սատան ինձ դիքն յուղէն կա-
　　պոյտ ծովուն ընկոհակ ,
Կրեցից ոգւով համբերատար . սովոր եմ
　　կրից դըժնդակ .
Շատ ինչ արդէն չարչարեցայ 'ի ծուփս
　　ծովուն և մարտին .
Կրեցից դարձեալ » : Ասաց և մութ պա-
　　տեաց 'ի մուտս արեգին ։
Առտին յալուց քարանձաւին , հանդեան
　　միմեանց առընթեր ,
Մինչ առաւօտըն ծագեցաւ ծայրակար-
　　միրն այգաբեր ։
Զխլայն , զբաճկոն արկ Ոդիւսէս . արկ
　　Դիցուհին պատմուճան
Լայն , ճիւնափայլ , գիրգ , շնորհաշուք .
　　և ած կամար անմըման ,
Զընաղ , ոսկի . և գլխաշուք առ 'ի դը-
　　լուխ գեղանին .
Եւ հանդերձէր ճեպ արձակուրդ տալ
　　Ոդիսեայ դիւցազին ։
Ետ զերկայրի գործի ձեռին մեծ զեր-
　　կաթին պատալար ,
Մեղեխ փայտին կուռ ձիթենւոյ էր գե-
　　ղեցիկ քաջ յարմար .

Եա սուր կայծին, ու 'ի խորս կզզւոյն ու-
ղւոյն լինէր զօրավիգ,
Ուրյաղթ սօսիք և կաղամախք և երկնա-
բերձ կան մայրիք,
Ձորք, բազմօրեայք, քաջ ցամաքեայք,
թեթեւ նաւել 'ի ծովին.
Ցոյց զհաստատուն ըղձայր ծառոյն, ու 'ի
տուն դարձաւ Դիցուհին:
Հար փայտ Ոդիսա արագ արագ արկ
ծառս քսան տապալեաց,
Տաշեաց յերկաթ, յղկեաց քանջիկ, և 'ի
գործ խիր յարմարեաց:
Ած և գչիրս վէհ Դիցուհին, նա առ ող-
ջոյն և ծակէր,
Լաստ յերիւրեաց, և բեւեռք և ագոււ-
ցիւք կուռ պնդէր:
Ցո՛ր չափ յատակ հիւղին Ճարտար ըղնաւ-
գործէ բեռնաբարձ,
Ի նոյն 'ի չափ 'ի լայնութեան և Ոդիսեւս
լաստ կապեաց.
Տախտակամածըս բարձրացոյց, կուռ գե-
րանօք յարմարէր,
Եւ տարածեալ յերկայնաձիգ 'ի մարգա-
կաց կատարէր.
Զառագաստակայլն պատրաստեաց, կայ-
մըն կազմեալ 'ի լաստի,
Քեղի ուղղիչ եդ առմացոյց շուրջ 'ի կըր-
կուսս ուռենի.

Նիւթ շատ կուտեալ 'ի նաւախիճ, կը-
ռուել ընդ ծով ալեատատ,
Կըտաւս առեալ 'ի Կալիփոռնեայ գործեաց
նոքօք առագաստ •
Կապեաց պարանս, պնդեաց կառանս
յաջ և յահեակ 'ի լաստին,
Եւ լծակօք գրդուեալ ըզլաստն ձգեաց
'ի ծովն ահագին ։
Յաւուրս քառեակ ելից ըզգործն, 'ի
հնգերորդն Կալիփսոէ
Եթող զՈդիւս • լուացեալ ըզնա հան-
դերձ բուրեան արկանէ,
Եդ տիկ գինւոյ, տիկ մեծ ջըրոյ, եդ 'ի
մախաղն և պաշար,
Եւ հանդերձեաց նըմա բաղում և 'ի խա-
հից բերկրարար ։
Հողմ 'ի թիկանց օդ քաղցրաշունչ յղեաց,
խնդայր Ոդիւսէս,
Զառագաստին բաց թռչառան, զղեկին
վարէր քաջապէս ։
Նըստեալ այնպէս և նինջ երբեք յար-
տեւանունս չանկանէր,
Ի Բազմաստեղս և յԱրջապահն 'ի յամ-
բառնուան ակնարկէր •
Դէտակն և յԱրջ զոր Սայլ կոչեն, որ
'ի Հայքն է հայեցուած,
Ընդ մամ առնու և ինք միայն յՈվկիանէն
է անթաց 25 •

ԶԱրքն ընդ ձախոյ կողեալ ընդ կողմն
արգեաց ծովէլ Կալիփսէ,
Այնպէս աւուրս նա եօթնեւտասն ծո-
վայածէր ընդ ձախմէ.
Յութ և տասին երևեցան մութ սարք եր-
կրին Փէակեան,
Չէր ինչ բացեալ, և երևէր ընդ ծով կա-
պոյտ զերթ վահան։
Դարձ Պոսիդոն յԵթովպացւոց և 'ի լե-
րանց Սողիմեանց,
Դիտեաց բացուստ, սրտմտեցաւ տե-
սեալ զՈդիս ծովայած.
Շարժեաց զգլուխն, ասէր ընդ միտս.
« Բարէ՛ ուրեմն նոր պատգամ
Եդուն անմահք վասն Ոդիսեայ, լեալ
իմ 'ի ծագն Եթովպեան.
Դա Փէակեանց մօտ կայ յերկիրն, ուր
վիճակ նորա սահմանին.
Սակայն անշուշտ դա չարաչարն կոչկո-
ծեալ տակաւին »։
Ասաց, և հար զերեքարձէնն, ամպ գու-
մարեաց, ծով խռովէր,
Ըզծով ցամաք ծածկեաց յամպոցս, և
Քոյց յերկնից ըզգիշեր.
Եւրոս, Նոտոս կից խուժեցին, զեփիւռ
շնչեաց ուժգնակի,
Ցուրտ պարզ հիւսիսն մոլեգնեցաւ ալիս
ամբարձ ամեհի.

Պակեաւ Ոգիս կթուցեալ ծնգօքն յու_
գայց եհան քաջարին .
« Եղո՛ւկ եմ ես , տագնա՛պ է ինձ . իրաւ
զուժեայց Դիցուհին .
Նախանձայնէր զիս ծովատանջ մինչև հա_
սեալ 'ի տուն իմ .
Վա՜հ , հիքացեալս զի՞նչ լինիցիմ . արդ
բանքն ողջոյն կատարին .
Դիոս զերկին պատեաց ամպովք , ըղծով
խռովեալ վէտ 'ի վէտ .
Մրրիկք շնչէն այլահողմունք . ո՛վ օրահաս
դառնադէտ .
Երիցս , քառիցս երջանիկք Յոյնք որք
յնկեան 'ի մարտին
Տապաստ անկան առ Ատրիդեաւ . ո՛վ ինձ
դէպ տայր զոր հասին
Յաւուր յորում յիս Տրոյացիք շուրջ ըզ
մարմնոյն Աքիլլեայ 26
Տէգ անզգային պղնձագէն , բախուն իմ լի_
նէր գերակայ .
Զի գիտէին եւ առնուին փառօք 'ի
Յոյնս պանծալի .
Այլ արդ , ա՜յ անփառունակ ինձ մահ
մեռնայ ողբալի » :
Այն ինչ ասաց , գիղան կոհակ թափ
յահագին 'ի բարձունէն
Բախեաց ըղկատն , և պտտուտկեալ ոս_
տոյց ըզնա 'ի լաստէն .

Ղեկին զերծաւ նորա ձեռացն, հողմք
խառնաշուռնչք փոթորկին,
Շնչէին աստի բախեին անտի, խորտակեցաւ
կէս կայմին.
Առագաստակալն և առագաստն անկան 'ի
ծով բացաձիգ,
Խիքըն ջրասոյզ 'ի տագնապի մնաց ներ-
քոյ ժամս ձիգ.
Արդ 'ի վեր չուժեաց վազել ընդ թափ
ահեղ կոհակին,
Զի ծանրացան ձորձք ջրապարպառ՝ զոր
ետ նմա Դիցուհին.
Վազեալ ապա, 'ի բերանոյն ժայթքէր
զաղին ջուր ծովուն.
Գլխոյն վարսից ջուրն առուանայր, յի-
շեաց ըղձաստան 'ի ժամուն.
Թափ ետ յալիս կալաւ ըզնա նըստաւ 'ի
մէջ մազապուր,
Ըղձաստան սաստ անդ վարեն կոհակք առ-
նուլ ըզնա ծովակուր.
Որպէս յաշնան փուշք 'ի հիւսիսէն վա-
րեալք 'ի դաշտ և 'ի յանդ
Կցուցին յիրեարս, այսպէս ըղձաստան
հողմք վարէին աստ և անդ.
Է՛ զի հարաւ վանեալ ըզնա հիւսիսին յը-
ղէր նըպատակ,
Է զի Եւրոս վարէր հանդէպ զեփիւռո-
սին նըշաւակ։

Տեսեւ զՈդիւս դուստրըն Կադմեայ այն
գեղեցկուհըն Ինէ.
Ա՛ռ կենդանեաւ սա յոյս անուն կոչէր
նախնեացն 'ի զարմէ.
Լեւկոթէա կոչեալ ապա շուք առ զծո-
վուն դիցուհեաց,
Սա աղեկեզ Թափառականըն Ոդիսեայ
խընամ՛ ած.
Թըռուիչս էառ իբր հողամաղ եւ յալու-
ցայն իւր 'ի վեր,
Նստաւ 'ի լաստն բազմադուցիկ, ձայն առ
Ոդիւս արձակէր.
« Հիքացեալ դու, Երկրասասանն հե՛մ
զայրացաւ քեզ այդչափ.
Զարխ'նիւթէ, Թէպէտ անձկայ՝ մահուն
չածցէ քեզ սադնայ:
Լո՛ւր զոր ասեմ, զի ուշիմ ես. ընդլաստ-
հողմովք տո՛ւր յալիս,
Մերկեա զհանդերձդ, անկի՛ր 'ի լող առ
Փէակեանս՝ ուր ապրիս.
Ա՛ռ քեզ զայս շար անմահական ձըգեալ
'ի լանջդ անվեհեր.
Քեզ ո՛չ զմիտաղք ինչ աղցեսցեն, եւ ո՛չ
արկածք մահաբեր.
Հասեալ ծովափն հան դու ընչարդ, ա-
րա՛ դարձեալ ծովայոյդ.
Ա՛րկ բացադոյն 'ի ցամաքէն կալեալ ըն-
դէմոդ 'ի յետ կոյս »:

Ասաց , ըղձալին ետ դիցուհին , և ինքն 'ի
ծով ալէտանիք
Իբր հողմահար սուրաւ 'ի խորս ծած-
կեալ կապոյտ կոհակաց :
Ընդ միտս եկեալ համբերատարին հեծէր
'ի խոր 'ի սրտէն .
« Վա՜յ , մի այլ նենգ լարեն ինձ դիք չար-
կեալ զիս արդ 'ի լսանն .
Քա՛ւ . ոչ անսամ . զի ես բացեայ տեսի
զերկիրն ապրանաց .
Այլ որ լաւն է , մնամ ցոր վայր հոծք
են ինձ շարք ատաղձաց .
Ժուժամ ցայնվայր և չարչարիմ մինչև կո-
հակք յաղթք ծովուն
Քակեն ըղձասամն . 'ի լող անկայց . չէք
բան քան զայս լաւագոյն " :
Մինչ զայս խորհէր , անդուստ կոհակ
լեռնանակարկառ Պոսիդոն
Դրդեաց զահեղն , ըզմոլեգինն , և Ոդիւ-
սեայ ետ մըղէն .
Եւ որպէս օդք ուժգնաշնչականք ցամաք
յարդիցն հողմավար
Ըզշեղջաշեղջն փոթորկեն յայսկոյս յայն-
կոյս դիր և սար ,
Նոյն Ոդիսեայ քակեալք ցնդին ատաղձք
հոծեալքն 'ի բնէն ,
Ինքն 'ի հեծանն մի վերելեալ իբրև արշաւ-
ձի վարէր .

Մերկեայ զհանդերձն, ըղձիցուհւոյն
    ըղձաւրն 'ի լանջ իւր ձգեալ.
Թափ եառ 'ի ծով, անկաւ 'ի լիւղ բաղխա-
    տարած 'ի յորսայս։
Տես Պաւխդոն, շարժեալ ըղձլուսին,
    առէր ընդ միաս զայրագին.
Այդպես ամենքեալ Թափառ ընդ ծով
    հասցես յորեար Դիոսին 27.
Այլ ոչ և անդ յանդորր եղցես, ա-
    սայ, ըղձիս գեղականս
Մորակ 'ի կուշտ վարեալ 'ի տան իւր
    հոյակապ 'ի յՆդաս։
Բայց Աթենաս հնարեալ քաջիկ զուղիս
    հողմոց կուրացոյց.
Զարթոյց միայն զարագն Հիւսիս, զայլն
    'ի հողմոց Թմբրեցոյց.
Երեք զալիսն 'ի հանդիպոյ, մինչև գիւ-
    ցազն Ոդիսեա
Հասցէ փեկեանց յազգ ծովագէտ զերծ
    յորհասէն փութապէս.
Անդ զերկուս տիւս երկուս գիշերս ծը-
    փայր յալիս ահագին,
Ծըփայր Ոդիսա, և շատ անգամ գոգցես
    մեռաւ 'ի սրտին։
Այդ վարսագեղն երևեցաւ, զորըն եր-
    բորդ կատարեաց,
Եւ հողմն հանդեաւ և պարզութիւն ան-
    դորրաւէտ յաջորդեաց.

Յայնժամ կոհակ մի ահագին ամբարձ
ըզնա առ 'ի վեր ,
Եւ նա 'ի մօտ զերկիրն անձկով կոր ովարիր
ակնարկէր .
Որպէս յորժամ կեանք ծընողին որդւոյ
դառնայ խնդալի ,
Որ բաղմօրեայ ծնդեալ ծիւրէր անկեալ
ցաւոց 'ի մահճի ,
Զի դաժանաբար լլկէր ըզնա ոխն 'ի Քա-
ջաց ոխերիմ,
Նայլ Դիք գըթածք ըզհայրն իւրեանց թա-
փեն ժանեաց յորհասին .
Նոյն Ոդիսեւսեայ երկիրն , անտառն , երևե-
ցաւ բերկրալի ,
Եւ զոտն 'ի լուղ ձեռակէր շարժէր անձ-
կայր 'ի կոյս ցամաքի ։
Իսկ երբ այնչափ կայր 'ի բացեայ , որչափ
լըսի ձայն մարդկան ,
Գոչիւն ահեղ լըսէր Ոդիսս ընդ ժայռս
բախեալ ծովակման .
Վարազացեալք մըռնչէին ալիք խուժ-
եալք ընդ ալիս ,
Եւ զամենածիրն ափնիկք ծովուն ծածկէն
փրփուրս յամեհիս .
Ո՛չ ծոցք , ո՛չ գոգք կային անդէն , ոչ նա-
ւակայք 'ի դադար ,
Ողջ ծովափունքն 'ի դուրս ցըցուեալ են
ահագին վիմք և ժայռ ։

Ընկաւ Ոդիսա, և ծունկք լուծան, և
աշխարհեալ հան Թառանչ.
« Իսկ զի՞ Դիոս ցոյց ինձ ցամաք, զակօս
հատեալ կոհակաց.
Ո՞վ դեալք սիրունք. այլ վա՜յ է ինձ, ելք
չերեւին ՚ի ծովէն,
Ահա ցցուեալ ժայռք ալեբախութք և շուրջ
ալիք մռնչեն.
Ալիք ահեղք, վէմ անպատեալ, և մօտ կայ
ծով մեծախոր,
Կռուան ոտից չէք ինչ ուրեք, չէք երեւել
ինձ յանդորր.
Յանկարծ թէ յելս զիս մեծ կոհակ հան-
դէպ ՚ի վէմ որձաքար
Յափշտակեալ և բախեսցէ, Ճիգն իմ լի-
ցի վայրապար.
Իսկ թէ ՚ի լող յառաջ վարիմ գտանել
ծովափին առ ՚ի ցած
Կամ նաւակայս, գուցէ դարձեալ մրրիկ
տարցէ զիս ՚ի բաց.
Ծով ձկնաւէտ զիս հալածեալ, հեծե-
ծեցից ես յոգի,
Կամ յիս ծովէն արձակեսցէ Քաջ ոմն
ընկէտ անհնի.
Զի և շատ ինչ վիշապ ձկունս Ամֆի-
տրիտէ 28 բուծանէ.
Քանզի գիտեմ զի Պոսիդոն ընդ իս ՚ի մարտ
պայքարէ »:

Մ՛ինչդեռ հեծէր, ընդ՚ա կոհակ յափըն
 վարեալ ապառաժ .
Կարթակոտոր լինէր համբուն թէ յոգն
 հասանել չէր Պալլաս .
Յուշ ած նմա . Ոդիւս ըղձիմն կալաւ ձե_
 ռըքըն կրկին
Յոր կըռուեալ կայր, մինչ ընդ վըռմէն էանց
 կոհակն ահագին .
Հեծէր Ոդիւս . զերծաւ յայնժամ, այլ
 մըմռեալ վերադարձ
Խուժեալ կոհակն եհար ընդ՚ա վարեալ
 'ի ծով 'ի յափանց .
Որպէս յորժամ ըղպորտնեայող կորզեալ
 յորջոյն 'ի խորոց ,
Խիճք և քարինք կըռուեալ կան առ խուր
 ճիրանացն 'ի խոռոչ ,
Նոյն Ոդիւսեայ ջլապինդ ձեռաց մորթն
 հերձուեալ 'ի խարակ
Մընաց կռուեալ . և զնա ծածկեաց հե_
 տախաղաղ մեծ կոհակ .
Անդ հերացեալն անշուշտ դրուէր նա_
 խավախճանն յորահաս ,
Թէ չէր նըմա ուշ և հանճար յորդեալ
 խաժակն Աթենաս .
Վաղեալ յալեաց , քերէր զափամբ , դի_
 տէր զերկիրն և լողայր
Գտանել ուրեք ծովափն անքոյթ կամ
 նաւաց ինչ ընդադար .

Մինչև 'ի լեառն հաս 'ի բերան գեղահոսան
'ի գետոյն.

Վայրն էր անքոյթ, զերծ 'ի վիմաց, և
պաշտպանեալ 'ի հողմոյն։

Ծանեաւ զհոսանն, և աղօթէր յանձայն
սրտին հեծութեան,

« Լո՛ւր ինձ, արքայ, ո՛ որ իցես, բազմա_
պաղատ առ քեզ գամ.

Սուրբ է և գիշերն անմահից մարդոյ լինել
վանատուր,

Որպէս Թափառ ես առ հոսանդ, առ
ծունկսդ գամ մաղապուր.

Ի սպառնալեաց Պոսիդոնի փախեայ յա_
հեղ 'ի ծովէս,

Յիս, տէր արքայ, ողորմաւոր խոստովա_
նիմ զիս առ քեզ »։

Ասաց. և նա ցածոյց զհոսանս, ամենայն
ալեաց յորձանկման,

Կալաւ զառաջն, և զՈդիսեւս փրկեաց
գետոյն 'ի բերան։

Նա զերկուս ծունկս և զյաղթ ըզձեռս
կըքեաց յերկիր վշտալմեր,

Մարմինն ողջոյն էր ջրապարպատ, ուռն_
գունք, բերանն, ծով հոսէր.

Էր ծովատանջ, անշունչ, անձայն, ան_
կաւ անդէն ապիկար,

Զի ամեհի ալիքն ըզնա կոչկոճեցին չա_
րաչար։

Իբրև չնչեաց նա միւսանգամ, ուշաբե_
 րեաց և 'ի նոյն,
Եհան ըղչարն ըղ Լեւկաթեան արկ յա_
 ղաղջուրն 'ի գետոյն.
Ընդ կրունկ ըղչարն ալիք ծովուն 'ի ջուր
 գետոյն վերբերէ,
Անապարեալ բռնահարեաց առ ըղչար
 իւր Լեւկաթէ:
Փայլեաց Ոգիս առ 'ի գետոյն, անկա_
 յամուրս կընխնոց,
Անձկով համբոյր եա ցամաքին և հառա_
 չեաց 'ի խորոց.
« Վիշտ վտանգիս, կրեցից դարձեալ,
 Թէ առ գետովս աստ ոչնիմ,
Դառն է գիշերս, տագնապեցեն զիս
 օդք ցրտինք, ցօղ գիշին.
Կար զօրութեան իմ պակասեաց, վտան_
 գեցայց եա ողջոյն,
Երբ և այգուն այն ցրտագին օղոխք շըն_
 չեն 'ի գետոյն.
Իսկ թէ 'ի սարն անդ ելանեմ հովանա_
 ւորն 'ի յանտառ,
Եւ 'ի թաւուտս ընկողմանեալ ըղթուլիս
 առից 'ի դադար,
Թէ քուն անոյշ ինձ ներկայեն ցուրտն
 և խոնջել ոսկերաց,
Խիթամ լինել եա կերակուր գիշերայած
 գազանաց »:

Հաճոյն ընտրեաց նա զայն խորհուրդ,
յուղի անկաւ 'ի մայրին.
Եգիտ ըղձալին հուպ առ ջրով յերևանի
'ի բլրին.
Եգիտ զերկուս բոյսս համարոյս 'ի ձի֊
թենեաց 'ի ծառոց
Մին ընտանի և մին վայրի, զերծք գիջա֊
շունչ 'ի հողմոց.
Անդ ոչ հրակէզ նետք նշողից արե֊
գականն էն թափանց,
Եւ ոչ հոսանք էն միջամտուխ տեղատա֊
րափ անձրևաց.
Այնպէս խիտք, հոծք, և համարոյսք գան
առ իրեարս Ճաղպատին.
Անդ մուտ Ոդիսև և իւր ձեռօք զայն յար֊
դարեաց անկողին.
Անդ կոյտ ամբառ կայր տաղարթուց, եր֊
կուց արանց բաւական
Նաև երից առ 'ի ծածկոյթ և 'ի ձմերան
դառնութեան.
Զայն վայր տեսեալ տերևատիփ համ֊
բերատարն բերկրէր,
Ընկողմնեցաւ և բարդ 'ի բարդ տաղարթ
զանձամբն արկանէր.
Զոր օրինակ այր մնացեալ 'ի ծագ վեր֊
ջին իւր անդոյ
Ննջեալ խանձող խնամով ծածկէ թուխ
դաղախոյն 'ի ներքոյ,

Սերմն ըղձերոյն պահէ առ. խուր, մի՛ հուր
    այլուստ լուցանել,
Նոյնպէս Ոգիս անձին հող ած սաղար-
    թապատ 'ի ծածկել:
Պարտասելոյն գութ ած Պալլաս, աչացն
    եհեղ քուն անոյշ,
Հեշտին այնպէս նա ըղձողնեալ զար-
    տեւանունացն կափոյց:



# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Զ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մօտ 'ի քաղաք Փէակեցւոց 'ի քուն լենել Ոդիսեւայ, Աթենաս երեւի 'ի գիշերի յերազի դստեր արքային Փէակեցւոց՝ որ կոչէր Նաւսիկէ. ձայն տայ նմա երթալ 'ի գետն լուանալ զհանդերձն, իրրու մերձ էր որ հարսանեաց կուսին։ Նաւսիկէ առեալ զկառսն 'ի հօրէն, երթանէ նաժշտօքն 'ի քաղաքէն։ Լուացեալ զհանդերձն, և պարապեալն 'ի գնտախաղս։ Հառաչիւն գնտակացն զարթուցանէ զՈդիս 'ի քնոյն, որ մօտեալ առ արքայադուստրն, խնդրէ օգնութիւն։ Նաւսիկէ ձեռն տայ հիւրացեալոյն Ոդիսեւայ՝ կերակրով և հանդերձիւ, և առեալ ածէ զնա 'ի քաղաքն։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Զ.

Ի ՔՈՒՆ *անոյշ հանգչէր անդէն դիւցազն*
*Ոդիւս խոնջ վաստակ ,*
*Բայց Աթենաս յարեաւ գնալ փէակե_*
*ցւոցն 'ի քաղաք .*
*Սոքա յառաջ առ Կիկղոպեանս առ մեա_*
*սարեր ազգ մարդկան ,*
*Վայրագք հուժկուք , բնակեալ էին 'ի*
*լայն սահմանս Հիւպերեան :*
*Վէհ Նաւսիթոան հան ընդոստ հեռի յա_*
*րանց Ճարտարաց ,*
*Ած 'ի Սքերիա , շինեաց անդ տունս և քա_*
*ղաքին պատուար ած .*

Կառոյց մեհեանս, բաշխ եդ անդոց, էջ
օրհասին 'ի դըժոխս,
Եւ անդ յայնժամ Թագաւորէր այր դիւ-
ցախառն Աղկինոս.
Ի տուն սորա չըքաւ խաժակն, հնարէր
ըղձարձ Ոդիսեին,
Դիմէ եդ 'ի չէն 'ի սրսկապանն ուր 'ննջէր
դուստր արքային.
Էր 'Նաւսիկէ կուսան չքնաղ 'ի մոյն 'ի
գեղն անմահից,
'Նաժիշտք երկուք յոյժ շնորհաշուքք
կան երկուսեակք առ դրանդին.
Դուռք լուսափայլք աղխեալ կային.
մուտ իբրև սիւգ դիցուհին.
Մատեաւ առ կոյսն, կաց 'ի մարիցն 'ի
տիպ դստեր Դիմանտին.
Էր Դիմանտեա հըզօր 'նաւազ, դուստրը
նորա 'նազելի
Էր 'Նաւսիկեայ յոյժ սիրարուն 'ի 'նոյն 'ի
տիս հասակի:
Ներկեալ խաժակն ըղտիպ սորա, « Զի՛.
'Նաւսիկէ, կարդայց ձայն,
Զի՛ զքեզ տարտամ ծընաւ մայր քո.
ձորձք քո յանհօգս անկեալ կան,
Զորձք շնորհափայլք. Ո՛չ հարսանիս
քեզ 'ի մօտոյ գործեսցեն,
Ի զգեստ պայծառ վայելչացիս, որոց
ըզգեղ ածիցեն.

Համբառնաւանէնչ լեալ քո այժմէն, և խըն-
դացեն հայր և մայր ·
Սրփ ընդ այդն 'ի լըւանալ, եա փոյթ
գործոյդ կամ սատար ·
Ու եա այլ չառ մնացես դու կոյս · ըղ-
ձեղ յազգիդ փեսայեանց
Խնդրեն ատայք · այլ ընդ այդն և երթ
ընդհայր քո դըդեալց ·
Հրաման տացէ ածել ըղկառս, 'ի լուծ
ձըգել զոյգ ջորեաց,
Քոյ կամարացդ և շըղաշից, պայծառ
ձորձոցդ բեհնարարձ ·
Գնասցես շըքով և մի հետի, զի հեռի
կան լըզարանք ·։
Նայց խաւսանէն, եւ յՈղիմպոս՝ ուր դից
աւէն դոլ կայեանք ·
Կայեանք յաւէժք · ոչ շնչէ հողմ, ոչ ան-
ձայ անեղ, ոչ ձիւնէ,
Պարզ է ընաւին և անամպրոպ, նըշոյլ
յառակ փայլակէ ·
Յանդ պարեն դիք · անդ եւ Պալլաս երբ
զայն խորհուրդն եա կուսին,
Նա ոսկեգահ այգըն ծագեաց, զարթոյց
զՆաւսիկէ գեղանին ։
Հիացեալ էր նա ընդ երազն · յարեա-
պատմել ծընողաց,
Եգիտ ըզնոյն 'ի ներքս 'ի տան, շուրջ
զաւք կային նաժըշտաց ·

'Նաւէր մանկր 'ի յաղէկաւան ըղձովային
ծփանին .
Այլ հայրն յատեան գընայր 'ի կոչ յա-
ւագորեար քաղաքին .
Եգիտ առ դուրս . մատեաւ Նաւսիկ'
․․ Հայր իմ սիրուն, ձայն կարդայ .
Ո՞չ տաս ածել ըղբարձրագաշն, ըղջաշխա-
նիւն ինձ ըզկառս .
Գնայցից 'ի գետ անդր 'ի լուանալ զաղտ-
եղերձ ձորձոց 'ի ջնջել .
Ձա՛հ է մեծիդ յատեան մեծացն մաքրա-
հանդերձ երևել :
Հինգ քո որդիք, երկուք զուգեալք, և-
րեքն առոյգք անայրակ,
Խնդրեն սոքա ջինջ և պայծառ ձորձովք
լինել պարերգակ .
Այս են հոգք իմ » : Նա զայս ասաց և 'ի
հօրէն պատկառեաց,
Զքան հարսանեացն 'ի վեր չեհան, այլ
հայրն եղև խրադգած .
․․ Քեզ ոչ ջորիս և ոչ այլ ինչ խանդամ,
ասէր, ով դուստր իմ .
Երթ . բարձր ըզկառան ածցեն ծառայք
ըղբեռնաբարձ զքաջանիւն » :
Ասաց, ձայն ետ, ածեն ծառայք կառս
քաջանիւս ջորեձիգ ,
Լծեն 'ի կառս . կոյսն 'ի յարկէն զձորձ-
սըն ածէր գեղեցիկ .

Կոտեալց 'ի կառս. մայրն 'ի սակառ եղ-
 խահս անոյշ համաձայն,
Ըսպառ բաղում. հեղ և գինի անուշաբոյր
 տիկ յայծեան ։
Սերեւլակեաց կոտանն 'ի կառս, եղ
 և յանկի 'ի կամիրակ
Իւղ գիրգ անոյշ յօծումն անձին ընդ
 նաժշտացն գառակ.
Առ ըզմորակն առ զերասանն, զանեալ
 ջորիքն 'ի դաշտին
Վաղեն գոփեն, տանին ըզձորձն և ըզ
 նաժիշտան ընդ կուսին ։
Հասին գետոյն 'ի պերճ հոսանն, ուր
 անսպառ լոզարանք
Էն շատաջուրք, և զաղտ անջինջ առ 'ի
 մաքրել բաւականք ։
Լուծեալ կառաց վարեն առ գետոյն յոր-
 ձանուտ զղոյգ ջորեաց
Ուտել ըզսեզ անուշահամ. բարձին ըզ-
 ձորձսն 'ի կառաց.
Արկեալ 'ի փոսս, ջնջել արագ զան ըզ
 մրմեռանքս յել և եղ,
Մինչև լուացեալ ջինջ և պայծառ առին
 կարգաւ 'ի սփռել
Առ ծովափանքն, ուր խիճք քարինք 'ի
 ջուրց ծովուն ողորկին.
Լուացեալք օծեալք պարարտ իւղովն
 գետափն 'ի ճաշ նստէին.

Զօրհքըն սփռեալք ցամաքէին յարփւոյն
հրակէզ՝ ՚ի շողից,
Մինչ կշտացեալքն կային և նաժիշտք վայե
լեցին ՚ի խաղից.
Գնդակախաղք լինին առա զերծեալք
ըղձօղս ՚ի գլխոց,
Եւ Նաւսիկէին լուսածըղին ձայն նուա_
գաց տայր երգոց.
Որպէս յԵրիմանթ կամ ՚ի Տայգետ դը-
ժուարակոխն ՚ի յանից 29
Գընայ ընդ սարս լեռնախաղաց ոսկեփը-
քինն Արտեմիս.
Կապարճ զուսովն յորս վարազուց խըն_
դայ և շոյտ եղջերուաց,
Եւ շուրջ խաղան կոյսք մարգեղունք յա_
ւերժհարսունքըն մայրեաց,
Ղէտոնն ՚ի սիրտն անդ մեծապէս ընդ օ_
րիորդն իւր խնդայ,
Որ գլխով չափ և ճակատուն բնաւից նո_
ցա ՚ի վեր կայ,
՚Նաև ՚ի մէջ գեղասորաց գեղովն հեշտա
գայ յերևան,
Այսպէս Նաւսիկէն էր ընդ նաժիշտս աշ_
խոյժ կուսանն անարատն 30.
Լըծեն զջորիս, ծալեն ըզձորձս և համ_
գերձեն դարձ ՚ի տուն,
Բայց Աթէնաս խաժաչեայն այլ ինչ հնա_
րեաց խորհուրդ ՚ի ժամուն.

Զի զարթուցեալ Ոդիսևս 'ի քնոյն տեւոցէ
ըղձէ՛ զայն կուսան,
Որ զնա առեալ տարցի շըքով փեսեկե_
ցուցն 'ի յոստան:
Գնդակ մի կոյսն արկ 'ի նաժիշտ, վրի_
պեալ արկ խորս 'ի գետոյն.
Մեծաբարբառ խնծղան նաժիշտք, շըր_
ժեաւ Ոդիս 'ի քընոյն:
Լսաւ կանչուն, խորհէր ընդ միտ,
« Վա՜յ ինձ, ասէր, ո՞ւր իցեմ.
Արդեօք վայրագ և ճիւաղակաց ա՞րք անօ_
րէնք աստ բնակեն.
Իցէ՞ն արդեօք արք վանաւորք, ոյց դից
ահն է 'ի սրտի.
Այլ ես կուսից յաւերժհարսանց բար_
բառ լսեմ կանացի,
Որք 'ի լերինս են բնակաւորք կոչեալք
վերջին զարտեան,
Եւ որք յաղախիւրս 'ի խոտաւէտս, յա_
կունս գետոց օթանան.
Արդեօք մարդկա՞ն լսեմ ըղձայն. ահէ
ինքնին փորձեմ ես,
Տեսից աչօքս ». ասաց, արտաքս ել 'ի
թաւոյն Ոդիսևս:
Ամփածանելի կորզեաց ուժով ոստ ստ_
զարթուք քաջարուն
Ի թաւ մայրէն, ափածու զըմայր իւրև
ամփոփ ընծայումն.

Գաղափն հաւժկու, անձրևայեղց, և հող_
մահար, ոխդատպանծ,
Դիմէ յանդեայս, յօգիս, 'ի բոյլս վայրա_
գասուն եղջերուաց.
Աչքըն հրացայտ, փոր տոմատանջ, մրխի
փարախն անդ 'ի բուն,
Գուժկան խաչին. այսպէս Ոդիսեայ յայս_
նէր կուսիցն ընդաստուն։
Նա յօրհորդալըն վարատեալ գայր և մօ_
տէր անվեհեր,
Թէպէտ մերկ էր, այլ անհրաժեշտ իւր
հարկն ըղձա բառնալէր։
Պակեան, տեսեալ զայր դաղաշոտ յաղա
ծովային և 'ի մոյն,
Զօտս արձակեալ փախեան տատ անդ
բարձրը զափամբք ըղձեայն։
Մընաց միայն վեհ Նաւսիկէն. զի զնա
անահ և արտեայ
Եդ Աթենաս. յակառատանի նա կայր մը_
նայր Ոդիսեայ։
Խորհէր Ոդիսս, փարել զծնգամբք այն
աչաղեղ Նաւսիկին,
Թէ 'ի բացուստ աղու բանիւք ախրտ ամո_
քել ըղկուսին,
Յաղթք անկեալ խնդրել քաղաք, խնդրել
հանդերձ մերկութեան.
Հաստատեցաւ 'ի յայս վերջին, բացուստ
ձայն տալ աղուական.

Զի մի՛ թերեւս ըղձունդամն առնեալ սրտ-
նեացի կորա՛ն ՚ի ժամուն.

Զայն եւ ասա, ձայնն էր ազդու, ՚ի նոյն
եւ բան խրատուն:

Ողջաւոր եմ քեզ, դշխոյդ. մարդ
ես եթէ դիցուհի.

Եթէ արդեօք ոմն յանմահից երկնաձեմ
մեծն ՚ի կարգի.

Ես ՚ի գեղոյդ, յասույդ անձնէդ, եւ յերա-
նէդ գերակայ

Ըզքեզ համգոյն քաջ ճշդրանեմ կուսին
մանգեղն Արտեմեայ.

Իսկ թէ մարդ ես որ երկրաբնակ, հայր
քո երիցս երջանիկ

Եւ մայրդ արդոյ, նաեւ եղբարքդ երիցս
անդամ երանելիք.

Զի ցանդ նոցուն հրճուելին ոգիք եւ դու-
ինքնին ես պատճառ,

Երբ տեսանեն զայդ վեհ բողբոջդ ՚ի պար
խառնիլ գեղապար.

Իսկ ապա այրն է վեհ քնաւից երանե-
լեաց գերարուն,

Որ օժտագանձ բազմահանդերձ ածցէ ըզ-
քեզ կին ՚ի տուն.

Զէք իմ նըման ՚ի մահացուաց մարդ ոչ
տեսեալ եւ ոչ կին.

Հիացեալ կամ, զինչ ՚ի Դեղոս Ապողո-
նեան առ բագնին,

Երբ նորատունկ արմաւենւոյ ընձիւղ տե-
սի ամենամեան 31,
(Եւ անդ յերթալս ինձ բաղձանօքն ըղ-
ձեալ խաղայր մեծ խուժան,
Բայց ձախողակ դիպաւ ինձ այն), արդ
զայն ընձիւղն երբ տեսի,
Յանձնեալ կայի. տունկ նոյնատիպ երբէք
բուսեալ չէր յերկրի.
Եւ արդ նոյնպէս ընդ քեզ, ով կին, յան-
ձնեալ կայեալ հիանամ,
Այլ ոչ ժրանիմ փարել ըզծնգաց, թէ-
պէտ ցաւով տանջեալ կամ.
Ահաւասիկ զբաւան ՚ի կապուտակ ծովն յա-
լեաստ ծրփեցայ,
Իբրեւ զերծայ. յայս դիւաշունչ վարեալ
կղզւոյն յՈգիգեայ.
Արդ յայս յափունս արկ զիս աստուած
թերեւս և այլ ալ ինձ գան
Գուցէ տատանի և չարչարանի. խիթամ թէ
դիք ոչ գըլան:
Ցես, ով դշխոյդ. ես չարատանջս ըզքեզ
դըրան աւագին.
Ի դաշտայնոց, քաղաքայնոց ինձ զոք ծա-
նօթ ոչ ունիմ.
Ցո՛յց ինձ քաղաք, տո՛ւր ինձ հանդերձ
մերկնոյս ծածկոյթ շըջապատ.
Թէ աստանօր դու ձորձ բերէր, տուր ինձ
ձորձոյդ ըզպատատ.

Տացեն քեզ դէք ըստ քում ըղձին, և տուն և լաւ ամուսին,
Եւ միաբան խաղաղութիւն, քան զոր չէք մեզ լաւ բաժին.
Երբ այր և կին միախորհուրդք տուն տըն-տեսել լինին խղճք,
Չարք չարչարին, բարիք խնդան, և մանաւանդ ըղձակիցք ":
"Ջէք քո, ով հիւր, եմ՚նաւակէն ոս-կեծըղին պատասխան,
Չէք քո 'ի բանդ ոչ անկածի ոչ անմըտի կերպարան.
Բարեաց, չարաց, վէհ Ողիմպեանն բաշ-խեաց պարգևս ըստ կամի.
Քեզ ցաւըս ետ, համբերատար պարտիս ըլնել 'ի վերջ.
Բայց արդ հասեալ քո մեր յերկիր գտցես զամէնն յօտանէն,
Զորձ և այլ ինչ ողորքաւոր հիւրացելոց որ պէտք են.
Ցուցից զքաղաքն, ցուցից և զազգն, յեր-կիրս փեկեանք բնականան.
Ես դուստրն եմ մեծն Ալկինոսի որ Փէա-կեանց է իշխան ":
Ասաց, ձայնէր իւր նաժշտաց. « Ըզ կայ աւէք, կանանք,
Ո՞ւր փախչիք դուք, զայր ոք տեսեալ կար-ծէք այր դող թշնամի.

Չիք մարդ ծնեալ և ոչ ծնցի, որ փեա֊
կեանց ոխերիմ
Աղէտս ածցէ. զի յոյժ սիրունք եմք ան֊
մահից երամին.
Նա՛ զի եմք իսկ ծովապարփակք, չեք տու֊
եալ ընդ մարդկան.
Այս հիւրացեալս այր է Թափառ և եկե՛
ալ մեզ ապաստան.
Հիւրք և աղքատք են 'ի Դիէայ, գոհ են
նոքա և ընդ խումն.
Այլ դուք նաւժիչայք առատաձեռն ար֊
բումն և կեր տուք հիւրոյն.
Լուացէք 'ի գետն յանքոյթ հողմոյ ». ա֊
սաց, առին քաջալէր.
Ընդ հովանեաւ ածեն զՈդիւս՝ որպէս
Նաւսիկէն էր պատուէր.
Ածեն և ձորձ, ըզգեստ, բաճկոն. տան
իւղ յոսկի 'ի կամփսակ.
Եւ միջամուխ, յորդորեցին, լուանալ
գետոյն 'ի հոսանս:
Ասէր Ոդիւս. « Վայր մի 'ի բաց, ո՛ ա֊
ղախնեայք մինչ ինքնին
Ես ըզմարմինս զաղս ըզծովուն լուա֊
ցեալ և ողջ օծանիմ.
Արդէն յանոյշ 'ի յօծմանէն շատ ժամա֊
նակ զուրկ եմ ես,
Այլ քաւ թէ մերկ լուացայց հանդէպ
օրիորդաց գեղադէս »:

Իջուան, չոքան պատմել կուսին. մինչ-
դեռ Ոդիւս 'ի գետոյն
Լուանայր ջնջէր զաղտ տարրացեալ ըղ-
ձամանքին և զուսոյն.
Ջնջեաց ըղձահն և ըղջլոյն, լուացաւ
ողջոյն և օծաւ
Եւ զընծայեալն 'ի Նուսիկեայ ըղպատ-
մուճանն առկաւ:
Ըզնա Պալլաս եդ առոյգանձն, և փա-
ռաւոր եւս գիտակ,
Եւ վարսք գլխոյն հեղան զանգուրք յա-
կինթ ծաղկանց հանգունակ.
Որպէս յորժամ զոսկի՛ ընդ արծաթ ա-
ռեալ յեռու այր Ճարտար
Սանն Հեփեստեայ և Պալլասայ ամէն-
արուեստ գործարար,
Նոյն գեղ և շնորհ 'ի գլուխն և յուս ա-
ռեալ Ոդիւս Պալլասէն,
Մեկուսացաւ նստէր 'ի յափն, և հիանայր
Նուսիկէն.
« Իմ գեղապարք, լուարուք նաժիշտք
բան մերկանամ ձեզ ահա.
Ոչ յակամայս ողջ անմահից առ Փէա-
կեանս եհաս սա.
Յառաջն անշուք ինձ երևէր, արդ երկ-
նաշինմ դից նըման,
Իցիւ թէ սա աստ բնակաւոր ինձ ամուս-
նեալ էր փեսայն.

Ո՛վ Թէ հաճէր մընալ աստէն . այլ դուք
ըսպասս տուք դըմա » .
Ասաց , արագ յարուցին 'ի կեր պաշտօն
հարսին Ոդիւսեայ :
Նաւաւ Ոդիւս , առնոյր զընթրեացն յա_
պուրանկի ըղձաչակ ,
Իբրու որ այն անկերակուր մնացեալ հա_
րուստ ժամանակ :
Բայց Նաւսիկէն ակեծըղին այլ ինչ
խորհէր 'ի սրտի ,
Ծալեալ ըղձորձան եդ 'ի պերճ կառս
լծեաց զջորիս կորովի .
Ել և հրաւէր առայր Ոդիւսեայ » . Արի ,
ով հիւր , 'ի քաղաք .
Տարայց ըզքեզ արագ իմ հօրն ես 'ի տա_
ճար բարձրայարկ .
Անդ փեակեանց հիւրամեծար առցեն
ըզքեզ քաջորեար ,
Այլ դու արա զոր ես ասեմ . Նա արու_
եալ է քեզ հանճար .
Ցորչափ ընդ դաշտս ուղեւորիմք , ընդ ան_
դաստանս մըշակաց ,
Ցայն վայր ձեպ սուր ընդ իմ նաժիշտս
ըղջեաս ջորեաց և կառաց .
Ես առաջ հորդեմ մինչև եկցուք բարձրա_
պարիսպն 'ի քաղաք ,
Ուր են անդորր աստի անտի անձկանձե_
ղուց նաւակայք

Նաւք անդանօր ծովագնացիկք մեն մի
    կարգեալք շար 'ի շար ,
Եւ հրապարակ նաւակայից սալայատակ
    քաջ յարդար .
Վայր միջակին մեհենազարդ Աստղոնին
    է կայան ,
Ընդ ձեռն 'ի գործ ժրանման կահել զէն
    և կազմած նաւական .
Ձէ գործ նոցա կապարճ աղեղն , այլ
    թիք , պարանք , և կառանք ,
Կայմ , և քաշանք , նաւք ամբակուռք , ո-
    րով ծովեն փէակեանք .
Ի գժգոհի փախչիմ զրուցաց , մի որ արհե-
    ցէ ըղձեա իմ ,
Զի են նոքա այր բամբասանք և սմբերքոք
    խուժանին .
Թէ երեա խեռ ոք ընդառաջեալ բանխիք
    լեցի քարաձից .
Ո՞ է այդ հիւրդ ընդ Նաւսիկեայ այր
    թիկնաւէտ , գեղեցիկ .
Ո՞ւր գիտ ըղձա , անշուշտ յայր իւր . կամ
    թէ թերեւս զայր թափառ
Ի սար երկրէ առ 'ի նաւէ , զի մօտ առ
    մեզ չէք ոք այր .
Կամ անձկայրեաց յողոք կուսին յերկնից
    իջեալ ոք աստուած
Կայ առ գլխա . կալցի ըղձա ողջոյն զա-
    ւուրս իւր կենաց .

Սակայն լուր եմ, եթէ գնացեալ այլուստ
գիտ իւր ամուսին ,
Ունչս ապարեալ ընդ տարփածուս ընդ
այս տեսագ մեր աղջկին :
Զայս ասացեն, և ընկեցիմ ես այսպանաց
նըշաւակ ,
Եւ որ ցանկում ընդ անձնապանդ իւրոց
ծնողացն ընդ զաւակ ,
Երբ նա գնացեալ խառնի ընդ այս նախ
քան զհաչակն հարսանեաց .
Վասն այն լրուր ինձ և փոյթ գացես նաւս
՚ի հօրէս և ըղձարձ :
Մ՛եք զՊալլասայն գացուք յուղւոջ կա-
զամախից ալերձ մայրի ,
Ընդ է աղբիւր և մարգ և դրախտ , անդ
է կալուածս հայրենի .
Հեռի կայ վայրս ՚ի քաղաքէն , որչափ
ըլսի ձայն մարդկան .
Անդ կացցես դու ժամանակ մի մինչև եկ-
ցուք մեք յաստան .
Երբ համարիս հասեալ ըզմեզ ՚ի հայրե-
նիս մեր ՚ի յարկ ,
Դու զԱղկինեայ հօրն իմ ըղտուն խըն-
դրեա մտեալ ՚ի քաղաք .
Ցերևանի կան ապարանքն , ածցէ ըզքեզ
և տղայ .
Զի չէն նըման յարկք Փէակեանց յար-
կաց դիւցազն Աղկինեայ .

Այն ինչ մտեալ, ընդյարկ գաւթին ա-
րաք արտաք դու անցցես,
Մինչ յարքունիս առ կրակարանն նըս-
տեալ ըզմայլին իմ գացես.
Նա 'ի լոյս հրոյն, յեցեալ 'ի սիւն, ըզծի-
րանին յաղեկատ
Զընաղ մանէ. գայք նաժշտաց յետուստ
նորա նստին անդ.
Գահոյք կայ հօրս, ուր գինարբու բազ-
մեալ ըմպէ բեր զորթոյ.
Դու անց յառաջ առ զոտիցս մօրս, տես-
ցես արագ ըզդարձ քո.
Տարադիմեալց տեսցես անշուշտ, միայն
ընդ միտ մնաս մօր իմ,
Ըղձիրեալքդ, և զապարանսդ, տեսցես
զերկիրդ հայրենին ։։
Ասաց, գանեաց. ջորիքն հուժկուք թո-
ղին հապճեպ զհուն գետոյն,
Վազս առնուին եղեալք միմեանց 'ի վերդ
ոտիցն արագուն.
Այլ կոյսն ուշիւ կառավարէր ընդ ող-
բախեալ խարազան,
Զի հետեւակքն Ոդիւս, նաժիշտք ըղհետ
գայցեն միարան։
Արեգն եմուտ, 'ի սպերճ անտառն հասին
'ի ձօն Պալլասայ,
Անդ կայ Ոդիւս, մաղթէր մեծի օրիոր-
դին Որմզդայ.

« Գէ՛թ լո՛ւր ինձ տուր, որ ոչ լուար յա-
ռաջին յուխտին իմ պաշտօն,
Երբ ալէտանջ գլխ գանալից առեալ կո-
ծէր Պոսիդոն.
Տուր ինձ շնորհս առ. վանատուրս, քև
գութ ածից փէակեանց ».
Զայս աղօթեաց յորդք անկեալ. Պալլաս
լուաւ մաղթանաց:
Բայց ակն ածեալ վեհ Հօրեղբօրն 32,
ոչ տայր գեռ ձեռն անվեհեր,
Զի՛ նա՚նդ Ոդիսս, մինչև տայրեալ, հրա-
վառ ցասմամբ բորբոքէր:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Է.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ·

Հասանէ Նաւսիկէ 'ի քաղաք իւր և յարքունիս. յետ սակաւուց և Ոդիւսէս: Նմա 'ի կերպարան մարդոյ երևի Աթենաս, և բազում ինչ իրաց խելամուտ առնէ զնա: Հիանայ Ոդիւս 'ի զնին արքունեացն Աղկինոսի արքային Փէակեցւոց: Նկարագիր նորա գեղեցիկ, որպէս և պարտիզին արքունի: Մտեալ Ոդիւս յարքունիսն յոտս անկանի առ դշխոյն Արետէ. հիւրընկալի մեծապէս 'ի նմանէ և յարքայէն և 'ի պալատականացն: Հարցեալ 'ի դշխոյէն' 'ի ճանաչել անդ ըղպատմուճանն արկեալ զՈդիւսեայ, պատմէ ոճով զանցս ուղւոյն իւրոյ' 'ի Թողուլ իւրում զկղզին Կալիփսեայ, մինչև 'ի հասանել իւր 'ի կղզի անդր Փէակեցւոց:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Է.

Յաղօթս Ոդիսեւ կայր, և ըղկոյսն ածէն
Ջորիքն 'ի յոստան.
Հասեալ 'ի հօր պերճ ապարանսն, կաց
Նախադրանցն յանդիմանս։
Յարեան եղբարքն, տիպք անմահից, բակ
ըղձնավառ գործեցին,
Լուծին զջորիսն, զհանդերձանսն առեալ
'ի ներքս ածէին։
Կոյսըն չոգաւ 'ի սրահապանն. ներմա պա_
տան հուր վառէր
Սենեկապանն Եպիռացի, Եւրիմեդէ
անուանէր.

Ըզգաս երբեմն նաւք յՆաւլոնեայ Աղեքսանդրի ձիր ածին
Իբր աղքայք, ում և փեկեանք իւր Աստուծոյ լըսէին ։
Ըզնաւախնէն լուսածրգի ողնոյց աւազարգայս ՚ի ման .
Սա ըզխարոյկըն արկանէր և զարդարէր ըզսէգան ։
Ոգիա յարեա գընալ յուսաման . ըզնա Պալլաս հոլանի
Ամպով ծածկեաց . մի որ փեկեանց աղաւոյն նորա խուչ լեցի
Կամ ըան պարսեալ, կամ ն իցէ՝ հարցափորձեալ ընդ երկար .
Մինչև Ոգիա եկաց առ դուրս մտանել յուսաման ՚ի պայծառ .
Ընդ առաջեաց նըմա խաւ ժամն իւր օրիորդ մի կուսան ,
Որ ըզսափորին առեալ տանէր , և կայ նըմա յանդիման .
« Աղէ , ով դուստր , ոչ տարցիս զիս , ձայն Ոգիանէս եա նըմա .
Տարցիս ՚ի տունն Աղկինոսի , որ քաղաքիս է արքայ .
Հիւր եմ եկեալ չարչարանացեալ ՚ի տարագէմ ՚ի ծագաց .
Մարդ զոք երկրիս ոչ ճանաչեմ , ոչ քաղաքիս ՚ի բնակաց »։

Կրկնեաց խաւարն. և Յուն զոր խնդրեա,
Եւ քեզ ցուցից, հիւր հայրիկ.
Մերձ անդադոր բնակէ հայրն իմ. եւ ռահ
հորդեմ. Եկ լըռիկ.
Մ՛ի հայիր յոք, մի հարցաներ. որք վա-
նատուք այսր չեն.
Եւ ոչ սիրով հիւրամեծարք օտար մարդ-
կան գիրկ ածեն.
Ընդ ծով կուտէլ առաջին նաւաց տայ
Պաւխդան արձակուրդ,
'Դ. ամիս աւուրն. նաւքն են այդա շըրջաք
իբրև Թէ, կամ խորհուրդ 33 ";
Բայց խաւարին, հորդէր առաջ. Ոգիս
ըղձեա ընԹանայր.
Անցեալ գնայր ընդ մէջ մարդկան, որ
փէակեանց չիմանայր,
Զի Թոյլ ոչ տայր վեհն ԱԹենաս քաջ
գեղագէս գիցուհին,
Եւ երկնամուխ ծածկեալ ամպով կայր
հովանի Ոդիսին.
Ընդ զնաւատորմ և զնաւակայս անցեալ
Ոդիւս հիանայր,
Ըզհրապարակս դիւցազանց, զերկայնա-
նիստն ըզպատուար.
Պատուարք բարձունք և չերտափակք.
գործ հրաշալի յարուեստին.
Մինչև եկին 'ի յապարանս արփիահրաշ
արքային:

Ասէր խաժական․ «Ահա քեզ տունն, ով
հիւր հայրիկ, զոր խնդրես․
Գտցես աստ ՚ի ճաշ բազմեալ․ մուտ
դու և մի երկիցես․
Զի այր սրտեայ, թէպէտ օտար, յաջո-
ղեսցի յիրս ողջոյն․
Բայց դու մտեալ, քեզ յարքունին առ
՚նըպատակ ընդդիմոյն․
Արետանուն է արքային, դշխոյս կոչի
Արետէ․
Զի Պոսիդոն ծնաւ զՆաւսիթ ՚ի Պերի-
բեայ կնոջէ․
Էր Պերիբէ դուստրըն կրսեր Եւրիմեդոն
քաջազին,
Որ Տիտանեանցն թագ կալեր վիսացե-
լոցն զարմին․
Սա ըզխուժանն եղեռնաւոր կորոյս և ին-
քըն կորեաւ,
Եւ Պոսիդոն ընդ Պերիբեայ դստեր նորա
խառնեցաւ․
Ծընաւ որդի ըզՆաւսիթոս փէակացւոց
թագաւոր․
Նաւսիթ ծընաւ զԱղկինոոս և զհարա-
զատն Հռէքսենոր․
Փեսայ եկաց սա անուստրը, հարաւ փեր-
եայն ՚ի փըքին․
Դուստրըն միակ թող զԱրետէ, զոր Աղ-
կինոս առ ՚ի կին․

Պատուեաց ըզկինն, որպէս ոչ ոք 'ի յա-
րարեալց մեծարի,
Այնչափ դշխոյս 'ի սերտ սրտէ Աղեքսիոսի
է յարգի.
Սիրեն ըզնա զաւրք զաւակացն և Աղեքսիոս
և խուժանն,
Հայրին խրրե 'ի գիցանոյն սեսեւալ ըզ-
գնայն ընդ սոսան.
Ընդառաջեն ներբողենիւք. զի է խոկ
նա քաջուշիմ.
Կայ հոգւոյն իւր սիրելեաց, կազդ խաղա-
ղէ զխռովութիւնն:
Արդ թէ երբէք գոյ հնարխուսյ ընդ մտա-
ծոցես դշխոյին,
Տեսցես անշուշտ ըզխրախինգ, ըզտուն,
զերկիր հայրենին ::
Բայց, ընդ ծով չոգաւ ամբեր, զհայերն
և թող ցանկալի.
Ի Մարաթոն ուղևորէր և 'ի յԱթէնս
լայնուղի.
Մ՚ուտ յՆերէքթեայն առն քաջամուր
'ի սեպհականն իւր տաճար.
Մինչեւ Ողիւս ածող հեռանէր յԱղեք-
սիոսին առն պայծառ.
Կայր հիանայր մինչև ինքնին 'ի սեամն
հասանալ պղնձի,
Քանզի ճաճանչ առնն հաստանէր իւրն
լուսին և արփի.

Որոց պղպջնձիք աստի անտի 'ի խորս ձգին
'ի սեմոյն,

Եւ բոլորեր շուրջանակի որոց պլպակն
երկնագոյն.

Դուզք ոսկեղէնք փակեն ըզդուռն, սե_
մոյն գրանդիք արծաթի,

Եր բարաւորն արծաթեղէն. զարդ մա_
նեկին էր ոսկի.

Կան պահապանք աստի անտի բարակք
ոսկիք, արծաթիք,

Ի հրաշարուեստ Հեփեստոսէն զգայուն
հաստատեալ կենդանիք.

Պահել ըզդուռն Ալկինոսին, անմահք,
անծերք յաշխարհի.

Եւ ընդ որմոյն երկայնութիւն գահք
կուռք աստի և անտի.

Շարք են ափուեալք բարակամանք, են
կանանւոյն գործ ձեռարար.

Անդ 'ի խնճոյս յարբուցն յաւէժ նստին
փեկեանց քաջորեար:

Իսկ պատանիք կայծն ոսկիք ջահք բոցա_
վառք 'ի ձեռսին,

Լոյս 'ի վերուստ շէն սեղանոց տալ գի_
շերի 'ի յարկին.

Նորա յիսուն ժիր աղախնեայք, կէսքն
երկանաւ խարանեալ հատ

Աղան ալիւր. կէսք ոստայնանկք, և կէսք
շրջեն զաղեկատ.

Շրջէին արտաք որպէս տերեւք կաղամախից
էն շարժուն .
Իսկ յաստայինից քաջանկելոց գոգ խաղ
կամէ գիրգ փայլուն .
Որչափ փեկեանք են հմտագոյնք արտա-
գանաւք 'ի ծովուն ,
Այնչափ Պալլաս քաջ անկանել եւ գործ ,
հանճարք կանանուոյն :
Նակ արտաքոյ մերձ յարկրունսն էր մեծ
պարտէզ սիրալի ,
Չորս լըծաւոր . եւ ցանկ ամուր շուրջա-
նակի բոլորի .
Ծառք բարձրուղէշք , դալարագեղք . ա-
ճէր անդ նուռն եւ տանձիք ,
Խնձորք չքնաղք , եւ թուզք քաղցունք ,
եւ քաջատունկ ձիթենիք .
Յաւերժատար պտուղ նոցա ոչ նուաղէ ,
ոչ ծնդի ,
Ոչ ձմերանի , ոչ յամառան . ցանկ զե-
փիւռ կայ հովանի ,
Շնչէ անդուլ , ըզկէս եփէ , ըզկէս ան-
նէ աճեցուն :
Ըզկնի տանձոյն տանձ ծերանայ , խնձորն
ըզկնի խնձորոյն .
Ըզհետ խաղող գայ խաղողոյն , թըզոյն
դարձեալ թուզն ըզհետ ,
Նա կայ անդէն բազմաբերուղ անկեալ
այգի գինեւէտ .

Կէս զոգկուզացն յարեգունիսըն ցամաքէ
շող արփեան ,
Ըզկէս պաշէն 'ի յայգեկութ , ըզկէս կո-
խեն 'ի հնձան .
Որք 'ի ծառկին աղոխացեալք , և որք հա-
տեալք և խայծին .
Բայց երփներանգ մշակեալ ածուք կան
'ի դրախտին ծառ վերջին
Մ՛շամծաղիկք գունակ գունակ . խակ և
աղբիւրք են կրկին ,
Մին ծառայի ողջ ընդ պարտէզ մին ընդ
տառկըն գաւթին ,
Հոսէ գընայ մինչ յապարանն , անափ
մարդիկ ջուր առնուն .
Ա՜յսպէս աստուածըն յարդարեցին զԱղ-
կինուսին պերճ՝ ըզպատուն :
Յակնձիւս անդ կայր դիւցազն Ոդիւս և
ընդ միտ խոր հիանայր .
Եկաց զննեալ առհասարակ , 'ի ներքս
եմուտ 'ի տաճար .
Զաւագորեարն եգիտ ձօնել բաժակ ար-
թուն Հերմէսին ,
Որում՝ նուէր վերջին ձօնեն յորժամ՝ դը-
նան յանկողին .
Քայլեաց Ոդիւս յաներեւոյթս , հաս 'ի
դըխոյն և յարքայն .
Էր քօղարկեալ յԱթենասայ ծածկեալ
'ի յամպ թանձրութեան .

Ձեռամբ զոտիցն առ զԱրեանայ, բա_
ցու զիւցեան քող ամպոյն .
Տեսեալ ըղձիւքն և համբուրեան հիացեալք
ընդ յարկն ընդ ոսկոյն :
« Գուսարք վեհին Հաւքանեորի, ձայն
պաղատանէր Ոդիւսէս .
Նա քոյ փեսայն և առ քոյ ծունդս զամ
չարչարեալս մեծապէս .
Գամ և առ ձեռն առաջորեար, ոյց քաղցր
արիք ծարաւեցին ,
Թողցեն որդւոց զանձն, կարասի . Թողցեն
և շուք քաղաքին .
Յիս, Արետէ . զիք զիս ուղւոյ, առուն տե_
սանել զիմ արաղ ,
Զի տառապեմ 'ի սիրելեաց տանջիմ ես
ձիգ ժամանակ » :
Ասաց, առ հուր կրակարանին նստաւ վե_
րայ 'ի մոխրոյն .
Կայր նա այնպէս . ամքն հիացեալք աճ
'ի բերան կան ողջոյն .
Մինչև ուրեմն Եքենոս վեհն առաջ փե_
կեանց ծերունին ,
Բանիկայ Ճարտար, հնունեանց ներհուն,
պատուաւորեաց յասեանն .
« Քեզ, Ալկինոէ, չէ այդ 'ի Ճոհ, չէ գե_
ղեցիկ, ով արքայ .
Նստել հիւրոյդ առ կրակարանն յերկիր
մոխրոյն 'ի վերայ .

Լոյս կայ առեանս, զի քում ձայնին ապա_
ւեալ մնան արքունեան .
Կանգնեան ըղձիւրդ և բազմեցայ յարծա_
թափայլ բազմականն .
Տուր Քարոզից մատռուակել նուէր հան_
ցուք Դիոսի .
Ամպրոպային արդոյ հիւրոցդ յողջըն
կայ հովանի .
Ձայց և հիւրոյդ կենըն առօրէն տայցէ յառ_
ձեռն կերակրոյն ":
Լուաւ, յարեաւ մեծն Ալկինոս, խորա_
գիտին առ զաւջոյն .
Կանգնեաց մանկոյն, զաւհ եա փայլուն,
ըղձ աւդամաս քաջորդին
Շարժեալ զահէն, որ մերձ նստէր և էր
նորա նազելին .
Ջուր աղախինն արկ յասկեղէն 'ի գեղե_
ցիկն 'ի յաման ,
Կոնք արծաթի առ 'ի լուանալ . մերձ եդ
մաքուր և սեղան .
Ձայց սուրբ եղաւ կենըն առօրէն, և խահս
առ ձեռն ած ալէսալէս .
Այնպէս յընթրեաց վայելս առնոյր համ_
բերատարն Ոդիսեւս .
Անդէն յայնժամ ձայն Քարոզին Ալկի_
նոոս եա արքայն .
« Ո՛վ Պոնդոնէ, գինի պաշտեամ խառ_
նեալ քո զայդ խառնարան .

Բնաւէից 'ի տանս լէր մատըռուակ, նուէր
հանցուք Դիոսի.
Ամպրոպայինն արդոյ հիւրոցն յողջըն
կայ հովանի ։։
Սատնեաց Պոնդոսն զանոյշ գինին, բաշ-
խեաց ձօնեալ 'ի բաժակ.
Խառնէր արքայն երբ ըզգինւոյն լցին ըզձօնն
և ճաշակ.
« Արդ զիմ մըտաց լուարուք խորհուրդ,
պետք Փէակեանց և առաջք.
Ընթրեալք, հանգիստ առէք 'ի տունս.
և խմբեսցուք մեք ընդ այգ.
Առեան կարդեալ զծերականսն մար-
դոյդ լիցուք հիւրասէր.
Եւ Աստուածոց պերճ հոյակապ ձօնս
հանցուք 'ի նուէր.
Խորհուրդ ապա արասցուք զուղւոյն, զի-
արդ այդ հիւրդ անաշխատ,
Զուարթ, արագ, հասցէ յիւր տուն, թէ-
պէտ իցէ յոյժ բացատ.
Ընդ հովանեաւ մեր որերոյն մի ինչ
կրեսցէ 'ի չարեաց
Մինչև հասեալ անդրժէլի յերկիր իւրոց
հայրենեաց.
Անդ նա առցէ 'ի դժպըհի Թելահանեացն
յորհանէն,
Որ զինչ նըմա Թել նիատցին յորժամ
ծընաւ 'ի մօրէն 34.

Բայց թէ յանկարծ ոք յանմահից յՈ-
 ղիմպոսէն էջ առ մեզ,
Այսուիկ ապա մեզ զայլ իրաց յայտնեն
 աստուածք ըղձանգէս.
Զի մեզ 'ի ձօն հարխուրեզին ցանդ երեխին
 յանդիման,
Եւ հանդերձեալք 'ի հացկերոյթ ընդ մեզ
 առնուն բազմականս։
Իսկ թէ իցէ այր առանձին յուղի անկեալ
 անցաւոր,
Ոչ ծածկեն զերս. զի եմք իսկ քաջ մեք
 աստուածոց մերձաւոր,
Որպէս միմեանց են Կիկղոպեանք և Տի-
 տանեանք ազգ վայրագ 35 ».
Կարճեաց Ոդիսս բազմահանճարն և ան-
 դրադարձ եւ արագ.
« Փոխեա՛ զմիտդ, ով Աղկինէ. չեմ
 անմահից ես հանդոյն.
Երկնաբնակաց ոչ նմանեմ, ոչ 'ի մարմին,
 ոչ 'ի մոյն.
Ի մահացուաց, զոր ճանաչէք, վշտատե-
 սիցն եմ ճետից.
Նոյուն նման, նա՛ առաւիկ եւ, չարչա-
 րեցայ ես 'ի դից.
Այլ արդ ինձ թողէք ընթրել թէպէտ
 ցաւովք տանջեալ կամ,
Զի և չիք այլ ցաւ առաւել քան զտխա-
 տանջ որովայն.

Սա բուռն առնէ զհարկ խոր յիշել. նաև
սաստիկ տանջելոյն ,
Որպէս և ինձ ցաւագնելոյս բռնացեալ է
արդ. ոգւոյն .
Հրաման կարգայ ինձ անհրաժեշտ ու-
տել յանդորր և ըմպել ,
Անյուշ չարեացս լինել խոպան և կշտա-
պինդ վայելել .
Բայց դու ընդ այգն ուղղոյն ձեզ տուք
հիքացելոյ իմ անձին
Տաժանելոյս լերուք , ով տեարք , յուղար-
կաւորք 'ի տուն իմ.
Տեսից զիմ անդս և ըղձաւայս , տեսից զե-
մոյն շուք յարկի ,
Թող ինձ ապա ակնապարար արևն յա-
չաց իմ հատցի » :

Լուան սիրով . փութան լինել սատար
հիւրոյն քաջարան .
Արբին ըստ կամս , հանին նուէր , չոքան
'ի քուն յօթևան :
Մ'ընթաց Ոդիսս և առ նըման վէհն Արետէ
'ւ Ալկինոս ,
Մինչդեռ անդուստ ժիր աղախնեայք
կահ բառնային ըղկոչնոց :
Զայն առաջին եա Արետէ , քանզի ծա-
նեաւ զպատմուճան
Ցուռն Ոդիսևայ , զլօդիկ , զբաճկոն , ըզ-
ձեռագործն իւրական .

Իմքն էր նուիրեալ ընդ նաժշտաց . ձայն
եւ ասա . « Ո՛վ հիւր դու .
Նախ զայս հարցից . ո՞ ես և յո՞յց ես 'ի
մարդկան 'ի դասու .
Ո՞ ետ քեզ զայդ ըզպատմուճանդ . ոչ
տայցէր թէ ու մեզ
Հաներ դու սոս թափառ ընդ ծով ». .
Լուաւ կրկնեաց Ոդիսեւս .
«Դըժնդակ է , ով թագուհի , պատմել
ողջոյն զարկած մեր ,
Զոր երկնաւորքն ինձ հասուցին . սակայն
ասեմ զոր հարցեր :
Ովգիւգ կղզի կայ 'ի սար ծով , ուր մեծ
դստերն Ատղասի .
Ուր խարդաւանիկըն Կալիփսէ բնակէ դժնեին
դիցուհի .
Կենաց կցորդ 'ի մահացուաց չունի և
զոք յանմահից .
Այլ անդ միայն ըզհիւրացեալս զիս Քաջն
էած յարկակից .
Երբ Ամպրոպեանն 'ի ծով կապոյտ հրա-
ցան շանթիւ գիր և տար
Քակեաց զիմ նաւն , անդնդասույզ կո-
րեան ողջ իմ քաջորեար .
Ես զգոգ նաւուն բռնահարեալ այնպէս
ինն օր ծըփեցայ .
Ի մութ գիշեր տասներորդին հասի կղզին
յՈվգիւգեայ .

Ընդ զիս սփռով առ. և բուծեալ այն Կա_
    լիփսէն զանգրահեր,
Եւ զիս անմահ առնէր գործել և կեանս
    ունել միշտ անծեր.
Այլ ոչ ըղձիւքս յանկոյց երբէք. անդ
    ամս եօթնեակ ես կացի,
Եւ ըղձանդերձս զոր ՚նա ետ ինձ ցանգ
    արտասուօք թանայի
Հոլովեցաւ ամն ութերորդ և տայր յոր_
    դոր իմ դարձին.
Կամ բանիւք եկն յԱրամազդայ, կամ
    շրջեցաւ խելք ոգին.
Եդ զիս ՚ի լաստ բազմագամուցիկ, հաց ետ,
    գինի անուշակ,
Եւս ձորձս անմահ, և շնչեաց հողմ ինձ
    քաղցրաբուղ յաջողակ.
Լաստեալ այնպէս եւթն և տասն օր
    գնայի ընդ ծով ալերբեր,
Յութն և տասնին երևեցան հովանաւոր
    լերինք ձեր,
Սիրտ իմ խայտայ. այլ տառապանս մնայր
    դարձեալ շատ լալոյ,
Զոր ինձ զարթոյց բազմարկածեանն եր_
    կրասասանն Պոսիդոն.
Սա հողմ յուզեաց, արգել զուղիս, խռո_
    վեաց ըզծովն ահագին.
Կոհակք ընդդէմ ինձ ամբարձան, յոգւոց
    հանեմ ՚ի լաստին.

Մրրիկ խուժեալ, քակեալ ըզլաստն, 'ի
    լեռն զանդունդս չափեցի.
Մինչ հողմավար և ալեծուփ կալեալ ըզձեր
    զայս կղզի.
Ընդ եղանելս բախէր զիս ծով 'դ ափըն
    վիմուտ տատապար.
Ի լեռն անդրէն անկայ մինչև հասի 'ի գետ
    բերկրալար.
Վայրն էր ախորժ, ոչ վէմք կային, ոչ
    հողմ ընչէր զառանպարէր.
Նշեալ 'ի գիւղն, ոգի առի, մինչ աստուա-
    ծեանն հաս գիշէր.
Ի գեղահաս մէկնեալ գետոյն, ննջեմ 'ի
    թուփ թանձրութեան
Սաղարթապատ. և ինձ Աստուած արկ
    քուն անոյշ անպայման.
Ննջ 'ի տերևս առի զգիշեր մինչ լոյս
    և յոր հասարակ.
Խոնջ էր ոգիս. մնանէր արեգն և թող
    զիս քունն անուշակ:
Նաժիշտք զաներդ անդ խաղային, ինքն
    էր 'նըման գիցուհեաց.
Յողջք անկայ. 'նա քաջուշիմ էր և բարուք
    բարեզգեաց.
Ուշիմ այնչափ, մինչ դժուարին գտցես
    'նըմին համանման,
Զի հանապազ մանկութենից խորհուրդք
    մըտաց խոհանան.

Եւ հաց տուաւ, ՚ւ անոյշ գինի, լուաց
  ՚ի ջուրն ՚ի գետոյն,
Զորձ զայս արկ ինձ. այս է Ճշգրիտ հի-
  քացելոյս պատմութիւն ":
« Նշուշա, ով հիւր, կրկնեաց արքայն,
  զուարթն իմ յանցեաւ քեզ յայնժամ,
Որ զքեզ ինքնին ընդ նաժշտաց չեած ՚ի
  մէրն օթեվան.
Այն զի նմա դու խոնարհեալ յոդոք ան-
  կար առաջին ".
Կրկնեաց Ոդիս. « Մի մեղ, արքայ, զի-
  ջես անբիծ կուսանին.
Նա ընդ նաժիշտս ուղ ինձ հորդեաց. այլ
  ես ընդդէմ անկն ածի,
Զուցէ այնպէս տեսեալ քո զիս, սրամտ-
  եալ ցես ՚ի յոգի.
Զխոտես խիկ քաջ. ազգ երկր մարդկան ազգ
  կասկածոտ հեշտաբար ".
« Զեր յիս, ով հիւր, ասէր արքայն, չէք
  սիրտ ցասկոտ վայրապար.
Միշտ սիրելի է վայելուչն։ Ո՜վ. Զեւս,
  Պալլաս, և Փեբէ.
Ո՜վ. այդպիսի գոլով որ միշտ և իմ խոր-
  հուրդս քոյն իցէ,
Որ տաս ամուսին առեալ զիմ դուստր և
  զքեզ փեսայ կոչեի,
Եւ կամակար աստ մնացելոց քեզ տուն
  և գանձ ես տայի.

Զի զքեզ բանի կալցի ոչ ոք. չեն այս
հաճոյք հօր Դիւայ.
Ըզքեզ վաղիւ, զխնեա՛ քաջիկ, ուղւոյ
զընկեմ ես ահա.
Դու քաղցր 'ի քուն ընցխս յուղւոջ. քեզ
խմն որեար ծով հասցէ,
Մինչ հայրենին առագին յերկիր. կամ
ուր հաճոյ քեզ լիցէ.
Թէպէտեւ հեռի քան զհնդիկս, զոր յոյժ
տանեն բացական
Որք միանգամ մեր որերոյն գնացեալ ան-
սին զայն անհաճան,
Երբ ըզխարտեաշն Հռադամանթոս առ
Տիտիոս երկրածին
Տարան նաւեալք 'ի յայն աշխարհ, և ան-
աշխատ ծով հատին.
Նոյն օր չոգան, նոյն օր դարձան. ըզ-
փորձն առցես դու զարդիս,
Զիա՞րդ կուռք նաւքս և ճիր որեարս 'ի
ծով շարժէ ըզքաջախս »:

Ասաց այսքայն, խնդայ Ոդիս. և աղօթէր
եւ 'ի նոյն.
« Արամանդոց հայր, այսքայն զխոր բանին ա՛մ-
թէ ընոյր ինձ աղջոյն.
Սա յաշխարհի անմահական անձին զըա-
ւէր շուք փառաց,
Եւ ես յիմ տունն գնայի աղջամբ ». զայս
զրուցէին ընդ միմեանց:

Իսկ Արեւուն ձայն տայր կանանց մահիճ՛
ձըգել 'ի գաւթի ,
Գորգս արկանել , ափռել չքնաղ պաս-
տառակալս ծիրանի .
Խըլլայս և Թաւըս արկանել , վերածած-
կել ըզմարմին .
Լուան ձեռքէն 'ի տաշտարին ջահըս կա-
լեալ 'ի ձեռին :
Արկեալ քնքուշ Թանձր անկողին , հրաւ-
էր կարդան Ոդիւսեայ .
« Արի՛ նընջել , մահիճդ , ով հիւր , պատ-
րաստեցաւ քեզ ահա » .
Հրաւէր քընոյն յոյժ քաղցրացաւ համ-
բերատարին Ոդիւսի .
Նընջէր մահիճս 'ի քերածոյս յարձագան-
գողն 'ի գաւթի :
Նա և աղջկայն 'ի սրահակապան բարձու յար-
կին ընկողմնէր ,
Եւ որ քնարան անդ զարդարեալ դշխոյն
եմուտ առընթեր :

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ը.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ·

Առեան խորհրդոյ Փէակեցւոց, դարձուցանել զՈդիսևս 'ի հայրենիս իւր: Ընթրիս մեծահաց տայ Արքայն, և անդ Դեմոդոկ կոյր երգահան նուագէ զկագն՝ որ երբեմն ընդ մէջ Ոդիսևեայ և Աքիլլեայ · Ոդիսևս փղձկի յարտասուս: Մրցանաց խաղք Փէակեցւոց, յորում հանդիսանայ Ոդիսևս. Նուագէ դարձեալ Դեմոդոկ զհնարիմաց վարմն Հեփեստեայ, յորում շաղեաց անդերձ զշնացեալսն զԱրէս և զԱստղիկ: Ընծայաբերութիւնք առ Ոդիսևս: Դեմոդոկ դարձեալ նուագէ ըզձարտարարուեստ երիվարն փայտեայ՝ յառումն Տրովայ, և դարձեալ չհանդուրժէ արտասուացն Ոդիսևս: Յայնժամ արքայն առնէ զՈդիսևս յայտնել զինքն, ասել զանունն, և պատմել զամենայն անցսն:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ը.

ԵՐԲ վարդամատն ծագեցաւ, յարեաւ
արքայն 'ի մահճաց.
Յարեաւ դիւցազն եւ Ոդիսեւս քանդիչն
հըղըր քաղաքաց.
Կարապետանէր վեհն Ալկինոս առ նաւս
փեկեանց 'ի յատեան.
Ի ողորկաշ քարանց վերայ մատեալք նըս-
տին միաբան :
Իսկ Աթենաս ըզձեւ առեալ ըզՔարոզին
Ալկինոի,
Շրջէր ընդ ոստանն. հոգայր ըզդարձն հա-
բերասրտին Ոդիսեւսի.

Զայն արձակէր, ուժգին գոչէր. « Արէք,
իշխանք փեսակերանց,
Ճեպ տուք յառաւան ըղձաւոր հիւրոյն
լսել 'ի լուր ականջաց.
Այս հիւր նորեկ, հիւր անդնդոց, զեր-
ծեալ ծովուն 'ի տատանից
Կայ արդ 'ի տան մեծ արքային մարմնով
նըման անմահից »։
Ասաց, զարթոյց ոգւոյն զօտատանն. ըմբոյլ
տանեանն յորերոյն.
Լնուն աթոռք, և ընդ Ոդիսս հիացեալ
կային անդ համբուն.
Ի գլուխ նորա և բակ զուսակք Պալլաս
շուք հեղ արփենի.
Եդ առոյգանձն և չնորհաւոր, սիրուն
փեկեանց և յարդի,
Ցորդեաց և այժ յաղթել նոցա 'ի փորձ
խաղուց 'ի մրցման.
Եւ բոլորեալ բազմականնին, ձայն տուե-
նին եւ արքայն ։
« Լուարուք, արքայք, հիւր եկն առ իս.
թէ ով իցէ, չեմ գիտուն.
Յեւլիցն արդեօք իցէ ընակչաց, թէ 'ի մը-
տից արեւուն.
Սուղ խնդրէ, մաղթէ ձեզմով. մեք որպէս
մեծան և զարգիս
Ժրացուք 'ի գործն. հիւր ոչ առ իս չե-
կաց յերկար վշտալից.

Հանապազ նաւ, նոր ածցուք 'ի ծով. և քաջք
յիսուն և երկու
Կուռ 'ի նաւուցս կապեալ քաշախս, եկեսցեն
մրցել ընդ ծովու։
Ծեալ տուք ապա յընթրիս իմ մեծ. պա-
տուէր զայս տամ պատանեաց.
Բայց յօթեւանին իմ փութասջիք, իշխանք
թագաւորդ աւագաց.
Զի այս հիւրոյս ընծայք սիրով հիւրասէ-
ծարք մեզ 'ի տան.
Բայց կոչեցէք ըզԴեմոդոկ զաստուա-
ծային երգահան.
Որում Աստուած յինաշխարհիկ ետ շէր և
տաղ անուշակ,
Եւ գեղեցիկ իւր մտաւթեամբ ինքն յոր-
դորի 'ի նուագ »։
Ասաց. գնացեալ, ալեւորքն ըզհետ. Քա-
րոզն հայնեաց զերգահան.
Իսկ պատանիքն յիսուն և երկուք ըստ հրա-
մանին կազմեցան.
Զոքան 'ի նաւն, առ ծովափամբ արկին
'ի խորս 'ի ծովուն,
Եդին ըզկայմն, և կուռ փոկովք կապեն
զթաշխս զարդարուն.
Առնուն պարզեն և զառագաստն, նաւուն
'ի խորս տան դադար,
Յարեան ապա յԱլկինոսին յարքունա-
կանն 'ի տաճար.

Լըցան գաւիթք և որմափակք, լըցան և
 տունք 'ի յարանց,
Ընդ պատուհանս շարք խռնեցան, շատ և
 գաւակք ծերունեաց.
Երկոտասան 'ի յայն կոչուեն ոչխարս և
 զէն մեծ արքայն,
Գալարեղջիւր եզինս երկուս, ամխանակ
 ժանիս ուլթ խոզեան.
Մորթեն, կազմեն. այնպէս ընթրիս
 պատրաստեցին մեծահաց.
Եհաս Քարոզն որ զԴեմոդոկն ածէր ըզ-
 վեհ տաղասաց.
Յանչափս ըզնա սիրեաց Մուսայն, ետ
 ըզբարին և ըզչար.
Յաչաց լուսոյն զրկեաց ըզնա, այլ երգ
 շնորհեաց բերկրարար 36.
Նստոյ 'ի մէջ Քարոզն էարկ արծաթազամ
 գահ պայծառ
Յեց 'ի սիւն մեծ, և 'ի մնարից կախեաց
 ըզպերճն ըզկիթառ.
Ուսոյց նըմա առնուլ 'ի ձեռն. եդ և սե-
 ղան առաջի.
Եդ և ըզխանն, բաժակ գինւոյ, առնուլ
 արբուցն ըստ կամի:
Իբր բազմականքն կերան, արբին, և
 կշտացինդք յագեցան,
Ընդուստ Մուսայն երգել ըզքաջս զար-
 թոյց ըզվեհ զերգահանն.

Երգ մի երգեաց, որ փառքն յայնժամ
    եհաս մինչեւ 'ի յերկինս.
Նուագ երգոյն էր Ոդիսեւսեայ եւ Աքիլլեայ
    պայքարին.
Զխռո՞վ երբեմն առու բանիւք պայքա֊
    րեցան յանկըմբի
Ի գինս կոչունս. 'ւ Ագամեմնոն խնդայր
    ծածուկ 'ի սրտի,
Տեսեալ զի քաջք Աքայեցւոց այր ընդ
    ընկեր կագ յուզեն.
Զի զայս Փեբոս գուշակեալ էր առ 'ի Պիւ֊
    թեայ պատգամէն,
Երբ Ատրիդէս եկ 'ի քարեայ սեամն 'ի
    խնդրել հաւատախս,
Զայս գուշակեաց եթէ յայնժամ լիցի
    ըսկիզբն աղէտից,
Եղծցին Տրոյեանք, կրեսցեն եւ Յոյնք մե֊
    ծին Դիոսյ խորհրդովք 37.
Այդ զայս նուագ երգէր յայնժամ մեծն
    երգահան Դեմոդոկ:
Լսէր Ոդիսեւս, ոչ հանդուրժեալ, առ
    զպատմուճան ծիրանին,
Ած ընդ գլխովն եւ արկանէր քող գեղեցիկ
    պատկերին.
Զարտասուսն արշաց ծածկէր յարանցն. բայց
    մինչ կիթառն լռէր,
Սրբեաց զարտասուսն, եղերծ ըզքողն, առ
    զգաւաթուրան, հան նուէր.

Իբրեւ անդրէն հրաւէր իշխանք տային
երգոյն բերկրարար,
Անդրէն յայնժամ Ոդիւսէս քօղ ըզցըւ
խոժէ արկ և լայր։
Զանխուլ յայլոց կայցին լալիք, զննեաց
միայն Աղկինոս.
Մերձ կայր նըմա, լսէր զի խոր հանէր
Ոդիւս 'ի յոգւոց։
Զայն եւ անդէն 'ի յատենսի. « Լուա-
րուք, իշխանք փէակեանց.
Շատ ինչ արդէն վայելս առաք մեք հա-
մաչափ 'ի յընթրեաց.
Վայելս և քաղցր 'ի կիթառէն, որ պը-
սակն է պերճ կոչնոց,
Արդ ելք զարդիս, նաև մրցմանցն ողջոյն
տացուք մեք ըղփորձ.
Հիւրն 'ի դարձին հաչակ հարցէ, քանի
վեհք եմք մեք քան զայլս
Ի բռնամարտ, 'ի զօտեմարտ, յոստոստա-
ոտից, և 'ի վազ »։
Ասաց արքայն, քայլեաց յառաջ գնային
ըղձեա աղբն ողջոյն.
Քարոզն յայնժամ ըզպերճ կիթառն ա-
ռեալ կախեաց ըզանպոյն.
Առ և զաջոյն Դեմոդոկեայ և 'ի յարկէն
արտաքս ած,
Հորդէր նըմա ուր այլք գնային կալ 'ի
զննին մրցմանց.

Խըռնին աւագք 'ի հրապարակ խուժան անբաւ ընթանայր ,
Եւ նաւահատակք յարեան մըցել շատ պատանիք քաջորեար .
Յարեաւ յառաջ Ակրոնէոս , Ոկկիալոս , Ելատրէս ,
Նաւտէս 'ի նոյն և Պրիմնէոս , Անքիալոս , Երետմէս ,
Եւ Պոնտէոս , և Պրորէոս , Անաբեսինոս , և Թոոնի ,
Ամփիալոս , որ Տեկտոնեան Պողինեան էր որդի .
Յարեաւ և քաջն Եւրիալոս , որ զԱրէսին ախոյ բերէր ,
Եւ Նաւբոլեդ մարմնով առոյգն և 'ի դիմացն 'ի պատկեր .
Բնաւից փէակեանց սա վեհագոյն յետ Լաւդամեայ ամբըծին .
Բայց և որդիքն յարեան երեք վեհք Աղկինոս արքային ,
Էր Լաւդամաս և Աղիոս և դիցանմանն Կղիտոնէս .
Եւ առաջին 'ի վազս ոտից կարգան միմեանց ասպարէս .
Նըպատակեալ 'ի կրկիսէն 'ի յամս փոշւոյն միարան
Թռչէին ամէնքն . յաղթող 'ի վազս էր Կղիտոնէան անընման .

Վազեաց յառաջ 'ի նըպատակն և զայլսն
եթող ըզկըռնի ,
Որչափ զեզինս թողուն ջորիքն ակօսա-
բեկք 'ի յանդի ։
Եկին ապա 'ի դժուարին զօտեմարտին 'ի
հանդէս .
Այս Եւրիալոս ընաւից քաջաց յաղթա-
նակեաց մեծապէս .
Ի փորձ ոստման վերոյ ընաւից հռչակե-
ցաւ Ամփիալոս .
Իսկ 'ի սահրիճ յոյժ գերազանց գըլտ-
անդէն Եղատրոս .
Քաջըռնամարտ էր Լաւոդամաս . իսկ երբ
ողջոյն մըցանաց
Զխըղճըն հարին , ձայն ետ ապա վեհն
Ալկինեան Լաւոդամաս .
“Եկայք , հրաւէր տացուք մըցման , թէ
գիտէ ինչ , մեր հիւրոյն .
Զի առոյգ է յազդերս , 'ի սրունս , ող-
ջոյն յիրան և մարմնոյն .
Պարանոցն յաղթ , կորովն է մեծ , քաջ
առոյգ է , այլ անկած .
Զի բեկանել և զայր հուժկու չէք քան
ըզծով չարատանջ ” ։
“ Քա՛ջ ասացեր , ո՛ Լաւոդամէ , կըկնեաց
նըման Եւրիալէս .
Արդ դու ինքն հրաւէր կարդա՛ ձայն տո՛ւր
նըման յառաջարկէս ” ։

Լռեաւ զայն վէհ արքայորդին, արձանա-
ցաւ 'ի միջի.

Ասէր ցՈդիս. « Եւ դու հայր հիւր, 'ի
փորձ մրցմանց ո՞ն արի.

Գիտես Թերեւս. Ծա՞նր է զխոսելդ. շուք է
մարդոյ մեծապէս

Ի կենցաղիս լինել քաջոտն և 'ի ձեռացն
'ի հանդէս.

Մատիր 'ի փորձ. զի քեզ Թախծելդ.
ուղիղ մտա կայ առաջիկ.

Քո նաւն այժմէն 'ի ծովն արկեալ, և պատ-
րաստ կան նաւաստիք »:

« Զի՞, Լաւդամէ, ասէր Ոդիս, խըրկ-
ընդ հենդն ինձ ձայն տայք.

Ցաւք զիմ ոգիս վարանեալ են. զի՞նչ եր-
եփն ինձ մրցանք.

Անձն իմ արդէն չարչարանդէաց, վշտաց
տարայ ես պէսպէս.

Եւ աստանեալ դարձիս կարօտ մաղթեմ
զարքայս և ըղձեղ »:

« Ըղձեղ, ով հիւր, կրկնեալ յայնժամ
Եւրիալոս նախատեաց,

Չասեմ նըման հմուտ մարդոյ կենցաղ-
օգուտ մրցմանց,

Այլ որ 'ի նաւս կացեալ 'ի գլուխ վաճա-
ռականն նաւաղից,

Հաշուէ ըզբեռն, 'ւ օգտածարու կայ
աւարաց պարէնից.

Մրցանաւոր ախոյենից ամենեքին 'նըման
չէս ։ ·

Տիգըք աչաց կրկնեաց յայնժամ բազմա-
հըմուտն Ոդիսեւս ·

« Ինձ դու, ով հիւր, ոչ ճարտասան,
այլ քաջ ժըպիրհ տեսանիս ·

Չի և Աստուած ոչ տայ միում զամէն ըղ-
ձիրս պանծալիս ·

Ոչ դէղ դիմաց, և ոչ հանճար, ոչ բան
ճարտար 'ի լեզուէ ·

Է որ անդէղ, սակայն Աստուած ըզնա
բանիւք զարդարէ ·

Յակճիւս 'ի նա այլք հեշտանան, յոր-
ժամ բանայ ըզբերան,

Խօսի պարկեշտս և հրաշակերտս, և պեր-
ճանայ 'ի յատեան ·

Թէ գնայ 'ընդ քաղաքն, իբր աստուծոյ
այլք կան 'նորա 'ի զըննին ·

Եւ է գարշեալ որ գեղաւոր ախտ յան-
մահից պատկերին,

Այլ շնորհ բանից չէք 'ի նըմա · սոյպէս
և քո ախտ դիմաց,

(Ե՛ւ ոչ Աստուած հասանէր այլ լաւ) ·
սակայն մտօք ես անկած ·

Դու 'ի սիրտ իմ հուր վառեցեր բարբա-
ռելով անալիս ·

Այլ ես անփորձ չեմ մրցանաց, որպէս
բանիւքըդ ըսես ·

Ի տխուր առոյգ եւ ժիր բազկաւ մրցանա-
ւորս առաջին,
Արդ վշտալից շատ ինչ կրեցի 'ի մարտս, 'ի
ծովս ահագին.
Համայն այնպէս շարչարակիր 'ի փորձ
մարտից մրցանաց.
Երգիծական բանդ աւէծուսի զիս վեր 'ի
վայր ամբոխեաց ":

Ասաց, թափ եւ, ձորձ իւր զանձամբ
առ վէմ բոլոր 'ի բռին.
Ծանր եւ հարուստ կշռէր քան զայն որով
'ի փորձ մատչէին.
Շրջանակեաց արկ յաղթ ձեռամբն, վէմն
ահագին շռինդն հար.
Զարհուրեցան. յերկիր կքին փէակա-
ցւոց քաջորեար.
Անցոյց զանցոյց զամէն նշանս, սրացոյց
ձեռամբն յաղթական.
Բայց Աթենաս 'ի տիպ մարդոյ մատեաւ
'ի վայրն եդ սահման.
" Ով հիւր, ասէր, նաւ կոյր որ շօշափե-
լով զայս նշան,
Մարթի զատել յայլ նշանաց. կայ միայ-
նիկ բացական.
Արդ դու ո՛վ քաջ, լեր անվեհեր 'ի ձիգ
յաղթողդ 'ի բաղկէ.
Փէակեանց ոչ որ հասցէ 'ի դա, թող թէ
զայնուիկ անցուսցէ ":

Լուսաւ խնդաց դիւցազն Ոգխա, զի ընկեր մի բարեբար
Գտա յազգոնին. և փէակեանց ձայն զայս կարդաց աղուաբար.
« Հաստուցէք յայդ, ո՛ պատանիք, զի ես արդ խակ վերստին
Վէմ ձգեցից կամ հաւասար կամ ծանրագոյն ՚ի կշռին.
Իսկ և զայլս, քաջք, որց կամք իցեն, արիք ելէք ՚ի մրցանս,
Վառեցէք զիս ՚ի բռնամարտ, ՚ի գօտեմարտ, և ՚ի վազ.
Ոչ հրաժարեմ յաղջոյն փէակեանց, բայց ՚ի քաջէն Լաւդամեայ.
Հիւր եմ նորա. իսկ ո՞ ՚ի վէգ ընդ հիւրընկալն իւր խաղայ.
Պանդուխտ է այրն և անուաղ որ ՚ի յօտար սահմանի
Գայ, ընդ հիւրընկալն ՚ի վէգ մրցի և զիւր անձին խանգարէ.
Յայլոց անտի ոչ հրաժարեմ, բայց ոչ քերեմ և յընչաց.
Կամիմ զգիտել և ակներև կամիմ փորձել ՚ի մրցանս.
Չեմ վատ արանց, որ զինչ և փորձ. իմ կորովի յաղեղան
Նետն իմ թռչի խոցէ նախկին զայր թշնամին ՚ի խրոխտն,

Թէպէտ զինն բազում համճարք նետ
կշռեսցեն Թշնամեաց.
Մին փղոսկեան ինձ յՆզհոն յաղթեր 'ի
ձիգս հեղինեաց.
Վէգն իմ ընդ հինան չէ ընդ Հերակլ. ոչ
ընդ Եւրիտ Եքաղեան,
Որք 'ի յաղեղն և ընդ անմահս 'ի վէճ յառ-
նել ժպրհեցան.
Վասն այն 'ի տան մեծն Եւրիտոս անծեր
մեռաւ փութապէս.
Ըապան փերոս զի ձայն 'նըմա կարդայ
յաղեղն յասպարէս.
Եմ արդ'նըն կէց, որչափ ոչ ոք որ կորովի
նետս ձըգէն.
Միայն յաւէս, ոք թէ Փեկեանց զիս
պարտեսցէ, զանգիտեմ.
Քանզի 'նըկուն եղէ յալեաց բազմակոհակ
'ի ծփման,
Եւ զի պարէն չէր ցանք 'ի նաւն, վասն
այն անդամք իմ լուծան »:
Լռեաց, կացին ամփ 'ի բերան. ալբայն
միայն ձայն կրկնէր.
« Չեն բանքդ անճահք, որ զանկանկիցքո
զարութիւնդ մեզ ցուցեր:
Յասեար, զի այրդ 'ի յադոնին ըզբեղ
հեղինեաց 'ի լեզուէ.
Այլ ողջամիտ այր ուղղախոս քո զարու-
թիւնդ չայպանէ:

Բայց լո՛ւր ինձ, հի՛ւր, զի և այլոցն դիւ-
ցազանց պատմեցես,
Յորժամ 'ի տանդ ընդ ընտանեացըդ բո-
լորեալ ճաշ առցես.
Պատմեա՛ յայնժամ զմեր արութիւնս զոր
Արամազդ մեզ ձօնեաց,
Զոր և յաւէժ ժառանգութեամբ ունիմք
անդուստ մեք 'ի հարց.
Չեմք քաջ ընթիչք, ոչ գօտեմարտք, այլ
շոյտք 'ի վազ, քաջք նաւազ.
Են մեր յաւէժ խնճոյք անոյշք, պարք, և
նուագք կիթառայ.
Զանդերձս ունիմք փոփոխակս, մա-
հիճս, և ջերմ աւազանս,
Հա՛պա փեկեանց, քաջ կայթահարք, ա-
րինք 'ի խաղ յոր պանծամք:
Պատմեցէ՛ հիւրն 'ի տան իւրում, քանի
վեհք եմք 'ի ծովու,
Քաջ նաւազնացք, արագոտինք, յերգ
և 'ի կայթս 'ի պարու.
՚Նա և ճեպ տո՛ւք 'ի շուք մերոյ Դեմոդո-
կեայ երգակին
Գնացէք ածէք զկիթառն անոյշ կախեալ
'ի մեր տաճարին ":

Ասաց արքայն, յարեաւ Քարոզն ածել
յարկէն արքունի.
Յարեան և ինն հարթիչք խաղուց մրցա-
նակեաց քաղաքի:

Հարթեն տափեն ընդվայր պարուն, լայ-
նեն կրկէս որբաչեա.

Եհաս Քարոզն, զկիթառն անոյշ Դեմո-
դոկեայ 'ի ձեռն ետ։

Նա եկն 'ի մէջն և պատանիք քաջ կայ-
թահարք բակ գործեն,

Նոյգքն 'ի տես ընդպերճ կրկէսն ոտիւք
տրոփեալ հարկանեն.

Յափից կայտուերս հայէր Ոդիւս. և հիանայր
'ի յոգին.

Իսկ Դեմոդոկ յանոյշ կիթառ երգէր
զասարփանս Արէսին.

Նոյն զԱստղկան գեղապսակ, զխաղդ-
անկան գաղտագողաբար.

Ընծայս շատ ետ և զՀեփեստեայն զմա-
հիճ պղծեաց և զատաճար.

Արևն տեսեալ, գուշակ եղև. լուսա ըղ-
գոյժն Հեփեստոսի.

Երթ 'ի դարբնոց. չարիս նիւթէր. առ
կոճղ մի փութացեալ.

Սալ ահագին եդ 'ի վերայ. սարիս ան-
լոյծս առ կռեաց,

Անխզելիս. զի կաշկանդեալք կայցեն 'ի
նոյն 'ի յանցանս.

Յոյժ զայրացեալ էր ընդ Արէս. և
կաղմութիւն գարամանին.

Չոգաւ ապա 'ի յառագաստն, ուր դիրգ
նորա անկողին.

Եհեղ ողջոյն անդ ըղձալիս շուրջ յամե-
նայն 'ի կողմանց .
Եհեղ բաղումն և 'ի վերուստ յառաջա-
տին 'ի ձեղուանց .
Իբրև անձրև սարդի ստուայինք անդ 'ի յար-
կին ձըգեցան ,
Աշտեսք յաշաց և յաստուածոց , զի յոյժ
հնարիւք նիւթեցան :
Իբրև ողջոյն կաղմեալ ըղձման , կեղծեալ
երթալ 'ի քաղաք
Ի չէն Լեմնոսն , զոր նա սիրէր քան զա-
մենայն ընտահանդ :
Զեկաց Արևուն ովկեանոսն դէտ վայրա-
պար զննութեան ,
Զ Հեփեստոս Տարտարին եւես մեկնել , չո-
քաւ 'ի տուն Հեփեստոսեան .
Խնդրէր զԱստղիկ , որ նա այն ինչ մեկ-
նեալ հօրէն քաջարուն
Եկեալ նստէր . Արէս 'ի տուն եմուտ 'ի
ներքս առ զաջոյն .
« Ո՜վ քաջ , ասէր , եկ հանդիցուք , զի
Հեփեստէս չէ 'ի տան .
Նա տարադէմ կայ 'ի Լեմնոս առ Սին-
տացիս խորդաձայն » :
Ասաց . յանկոյց . ընկողմնեցան անդոր-
րացեալք երկոքին .
Եւ շաղեցան յանկոյծ սարսան Հեփեստ-
տեան Տարտարին ,

Շաղեալք այնպէս ձեռն շարժել ոտն
ամբառնալ չէր հնար.
Դանեան մղձկեալք զի դաւեցան Հեփես-
տոսին յանդերձ լար :
Մատեաւ Հեփեստոս, 'ի Լեմնոսէն դար-
ձեալ 'ի կէս 'ի յուղւոյն.
Զի դէտ անքուն եկաց Արեգն, Ճառեաց
'նմա զպատմութիւն.
Զօքաւ 'ի տուն Թախծեալ ոգւով, կայ
զայրագին 'ի դաւթի.
Յոյժ էր որմնեալ, գոչեաց ահեղ ազ-
դեց ամար լսելի.
« Արամազդ հայր, և դիք յաւէժք եկայք
գործոց 'ի զննին,
Գործք են համբուն ծիծաղելիք, անտա-
նելիք գլխովին.
Զիարդ զիս կաղս Աստղիկ հեգնեալ, սի-
րէ զԱրէս մարդախանձ,
Զի առոյգ է, զի քաջման է, և ես յամից
եմ անկած :
Զի՞նչ իմ առ այս յանցանք իցեն, բայց թէ
ծընողքն իմ կրկին,
Որ զիս ծնանել չէր պարտ նոցա. բայց
արդ եկայք 'ի զննին.
Լիք դուք վըկայք, ուր արդ հանդչին ե-
ղեալք 'ի յիմ որսկապան.
Հայիմ Թախծեալ. այլ չարացեն և ոչ
վայր մի այլ անդամ,

Թէպէտ տապերայք . զի և քաջ խակ զգչա_
ցեալ էն առագիկ .

Այլ ըղձօսս անզերծ կայցին իմ որո_
գայթն և սարկք .

Մինչ զօժիտն իմ հայրն ողջ տացէ վասն
անծանօթ աղջըկան .

Թէպէտ չքնաղ դուստր է նորա , բայց
անժուժկալ 'ի սարսափման ։

Բայց . խմբին 'ի կուռ տաճարն . էին
երկրպագեալ Դաւիթին .

Եկին և Հերձեալքն մարդասէր , եկին և ար_
քային Արտաղն .

Բայց դիցուհիք անճոթահարք մնացին 'ի
տունս տուանձին .

Իսկ բարերարքն աստուածք կացին 'ի նա_
խադրունս տաճարին .

Անդ երջանկացըն անմահից ծաղր ան_
պայման հասանէր ,

Զարմանալ Ճարտարըն Հեփեստեայ ան_
ւեալ խաղէր այր ցնկէր .

“ Ո՛չ յաջողէն գործք աներարկք . յանկըն
յարադն հասանի .

Որպէս Հեփեստայն յամբարայլ կաղա_
զԱրէս կորալի .

Սա է յաստուածս Ողիմպոսին արագն
ոտիւք աննըման .

Այլ կաղն յանից կարթեաց ըղնա . բուծցէ
ըղձէժ չքնաղթեան ։

Զայս զրուցէին . իսկ առ Հերմէս զուար.
Թարմանեալ Արղոն .
« Սատար բարեաց , Ժրայեալդ Հերմէս
Հրեշտակութեանն 'ի պաշտօն ,
Արդեօք յԱստղիկ փափաքէիր , շաղեալ
սարեօք դու այդպէս ":
« Բա՜րէ , ո՜ տայր , ո՜ քաջաղեղն , անդէն
կրկնեաց զայս Հերմէս .
Սարէք եթէ հեղեալ կային երից ան.
բաւք 'ի կարգի ,
Եւ 'ի զենին դիք , դիցուհիք . ոչ ես այն.
պէս յետնէի ":
Ասաց , զանձանձա շարժեաց 'ի ծաղր , այլ
ոչ ժպտէր Պոսիդոն .
Խնդրէր առնուլ 'ի Հեփեստեայ լուծեալ
զԱրէս առ իւր ձօն .
« Լո՜յծ դու , և ես , որպէս կամիս , առ.
նում ըզդա յերաշխի .
Հատուցէ դա ողջ զարժանին դիցն ան.
մահից յատենի ":
Կրկնեաց Հեփեստ . « Քաջ Պոսիդոնդ
երկրասասան մի ժրաէր .
Յանկած երաշխի վասն անկածից չեմ ինչ
այնպէս անվեհեր .
Թ' Արէս փախչի զերծ 'ի պարտուց ,
զխո՞րդ ես բուռն առնեմ քեզ ":
" Քա՜ջ լեր , կրկնեաց վեհ Պոսիդոն ,
թէպէտ փախուստ տայ Արէս ,

Թէպէտ պարտուց իւր դրժեսցէ, եւ
հատուցից յարժանեաց ”.

« Օրէն բանից չէ անստուել ”. ասաց
Հեփեստ, և խզեաց ։

Նորա սարէք կուռք խզեցան. փախեաց
Արէս 'ի Թրակէ,

Ճեպ և Աստղիկ ուղղոյ եղեալ և 'ի Կիպ-
րոս հասանէ.

Վայրն էր Պափոս, ուր և 'նորին անտառ,
բուրեան կայր բագին.

Ըզնա Շընորհքն լուացին անբիծ, և յիւղ
անմահ օծեցին.

Դոյլու ծաղկին յանկերծականքն. արկին
և ձորձ աննըման.

Արդ զայս յանժամ երգէր 'ի քնար մեհ
Դեմոդոկն երգահան ։

Ոգիսս լուեալ զմայլէր 'ի սիրտ, նոյն
քաջորեար փէակեանց.

Մինչև արքայն Ալկինոս և Լաոդամեայ
ձայն կարդայ,

Զի զկայթն հարցեն նոքա միայն անդու-
գականքն յարուեստին.

Համայս ցքնար ծիրանեգոյն առին ըզ-
գունդն 'ի ձեռին,

Գործ Ճարտարին էր Պոլիբեայ. մին առ-
ըզգունդն և ձգեաց

Թեքեալ յետկոյս յամպս վերինս, և միւսն
ոստեաւ վերամբարձ,

Այնպէս հեշտին կախեալ ընդ օդս յա_
փշտակէր ըղձընդակ,
Մինչև կշիռ ձգեալ գնդոյն կառաւարեցան
այն մրցմունք :
Յերկրի առաս կայթեն Ճարտար, կայթն
էր փոփոխ դարձադարձ,
Եւ 'ի ջրնին անդ ծափք և ձայնք հառա_
նէին պատանեաց :
Յորդեաց գոչմանն, և յԱղկինոս առեր
գիւցազն Ողիսեւս
« Յոյժ պանծալի է, արքայ քաջ, կայ_
թահարիցդ այդ հանդէս .
Քաջք, անկրթարք են յարուեստին հիա_
ցեալ կամ 'ի ջրնին ».
Լուաւ խնդաց մեծն Աղկինոս, ձայն եա
փեակեանց ակումբին :
« Լուարուք, իշխանք . ընդհիւր մեր զայս
եւ անսանեմ քաջուշիմ.
Արդ ծն արիք, հիւրսյթս արդույս աա_
ցուք նշմա զարժանին .
Աթբայք են աստ երկոտասան, եւ եռա_
տասն 'ի կարգի .
Մէն մի ըզգինկ քինջ, և բանձկոն, ածէք ոս_
կւոյ տաղանդ մի .
Ածցուք փութով . առեալ զայն հիւրս
յոյժ խրախասցի մեր յընթրեաց .
Իսկ Եւրիալոս զրգեսցէ զգա 'ի ձեռս 'ի
բանս բարեգգեաց .

Քանզի անձահ բարբառեցաւ »: Ասաց
արքայն, գովեցին.
Այր այր յղեր զնուրն Քարող ընծայա-
բեր դիւցազին:
Յայնժամ Նուրիալ առէր ցարքայն. « Ար-
քայ, բնաւից մեհափառ,
Ըղձիւր մեր զայս ես հաշտ առնեմ ըստ
հրամանին քո արդար.
Ըղ սուր իմ զայս ալըղընձակուռ յարծաթ
դաստակ ասոյ նըմին,
Պատեան կուռալ ՚ի փըղոսկրէ, գործ նո-
րակերտ ճարտարին.
Կայցի ընդդա իւր փարէլն », ասաց, մա-
տեաւ անվեհեր.
Զարծաթազարմ եղ սուրն ՚ի ձեռս, և առ
Ոդիսս բարբառէր.
« Խնդա՛, հայր հիւր. և զդժպըհի բանն
ասացեալ փոյթապար
Արագ արագ ՚ի յոդ լուծեալ մըրիկք
տարցին հողմավար.
Տացեն քեզ դիք ՚ի տուն դառնալ և տե-
սանել զամուսին,
Զի տարաշխարհ երկայնաւուրբք չարչա-
րեցար ՚ի յոգին »:
Զայն և Ոդիսեան ետ բարդիմաստ. « Խնդա՛
և դու, բարեկամ.
Ուքեղ ինքնին բարօրութիւն տացեն աս-
տուածքն յաւերժեան.

Եւ դու մի այլ 'ի կենցաղումս սըրբոյդ
կայցես ընկեցիկ ,
Զոր ինձ ետուր և գիրդ բանիւք հաշտ
արարեր զիս զարդիս ”:
Ասաց . ըղձաւորն արծաթագամ կախեաց
զուսոյն կորովի .
Արեն եմուտ . ընծայքն արդոյք կան Ո-
դիսեայ առաջի .
Զայն յարքունիս տարան Փէաքացին . ար-
քայորդիքն ընկալան .
Զընծայսն արդոյս առ մայր գեղոյն ածին
եդին յանդիման :
Յառաջ արքայն , նոքա ըղհետ 'ի յար-
քունիս բազմեցան
Ի բարձրագահս ելեալք յաթոռս . ձայն
գեղոյին ետ արքայն :
« Աղէ , ով կին . ածեալ առէն զարկղըն
չքնաղ հրաշափառ ,
Դիցես 'ի նմա լոդիկ , բաճկոն , զհանդեր-
ձանին ըզպայծառ :
Եւ ջեռուցէք սան մեծ առ հուր . պատ-
րաստեցէք ջուր ջերմին .
Լուացի մեր հիւրն , և պերճ ձօնից փե-
կեանց կայցէ 'ի զըննին .
Գեղեցկակարգ տեսեալ զամէնն զըւար-
ճասցի մեր յընթրեաց ,
Զըւարճասցի նաև 'ի լուր քաղցրաձայ-
նեալ նուագաց .

*Եւ ես զսակին իմ դաշխուրանն ընդեղէ-
ցիկ առամ ՚նըմա .*

*Ցանդ յիշեցէ ՚նուէր ՚ի սանն համեալ
Քաջացն և Դիւոյ ։։ ։*

Լ*ուսաւ դշխոյն . հրաման կարգաց կազ-
մել ընդանն լայնատարր ,*

*Ծիր աղախնեայք սան լուսման եղին
առ հուր բոցավառ .*

*Արկին ընձուրն , և ժողովեալ անդ ՚ի
՚նեբբոյ փայտ վառէն .*

*Բոյլն սպասեայ ընդփոր սանին և ջերմա-
նայր ջուրն անդէն ։*

*Դշխոյն առ հիւրն յառաջատուէն զարկ-
զըն ածէր դեղապանծ ,*

*Եդ պերճ զընծայսն , ձորձս , և զսակին ,
ձեռն զաւագաց փեսակեանց .*

*Եդ ընդօղին , եդ ընդրանձկոնն , և ձայն
կարգաց յՈդիսեւս .*

*« Արդ դու արդ , և ած ընխուսին , և կապ
մի տուր պնդապես ,*

*Մի որ յուղուոջ քեզ դրժեսցէ ՚ի խոր
քունեւլդ ՚ի նաւին ։։ .*

*Մատեան Ոդիսս , ած խուսի և կապ բազ-
մակնճիռն հանդուցին .*

*Արդոյն Կիրկէ* 38 *ուսոյց զհանգոյցն .
ապա հրաւէր լուացման*

*Տայր ՚նըմա կինն . Ոդիսս մտադիւր ՚ի
ջերմ եմուտ լոգարան .*

Զէր զարմանեալ յորմէ հեռաւ ընդոստուցին
ելք Կայլփայեայ
Գանգղբաշխերին, որ ցանց զարմանն իւր
աստուածոյ տայր 'նշան .
Լուսայս ծաւ 'ի սպաս կանանց, արկ
ընկըրայն պատմուճան ,
Ելեալ գընդայր 'ի բաղանեաց կոչնակա-
նացն 'ի սեղան ։
Նոկ Նուսաջիկէն կոյս գիցատիկն սա-
սեամն յարկին եկն եկաց .
Ակնակառոյց հիացեալ յՈդիւս բարբա-
ռեցաւ և ասաց .
« Խնդամ ով հիւր . և ոտն հասեալ 'ի
հայրենից յիշեամ զիս .
Եա 'նախ ստասար եմ արեւուզ՝ զոր սեսա-
նես դու զարդիս » ։
« Նաւայիկ դու վէհ դուսար ալքայի ,
կրկնեաց Ոդիւս բաղձմանս .
Տացէ իւն զարն ողջամբ 'ի տուն սանդրո-
պայրին Արամայդ .
Անդ 'ի կեանս իմ իբր աստուածոյ ես շուք
հարից քեզ ամբաւ .
Դու իմ փրկիչ, կոյս գեղապանծ » . ա-
սաց , յարկայն մերձ նստաւ ։
Սանք բաշխէին , գինին խառնէր . ան-
դուսա Քաղաղն հասանէր ,
Զարդոյն երգանկ ընդ Դեմոդոկ կոչնակա-
նաց զարդ ածէր .

Ա՛ռ և երբեր յեց 'ի սիւն մեծ Նըստոյց
'ի մէջ ակմբին.
Ոդիւս ըղձամբ կարեաց զողին գիրապա-
րար վարազին.
Եւ Քարոզին. « Ա՛ռ. յոյր ըղձամբդ
Դեմոդոկեայ տո՛ւր 'ի ճաշ.
Եւ մեծարանս գընեմ մարդոյդ, Թէպէտ
Թախծեալ հանապազ.
Շըքեղ մարդիկ են երգահանք, արդոյք
'ի մէջ երկրածնաց.
Մուսայն նուագս ուսոյց նոցա, զերա-
ժշտաց զազգ սիրեաց »:
Ասաց. Քարոզն առ ըղձորակին եառ Դե-
մոդոկ դիւցազին.
Առ և խնդայր, մինչ բազմականքն ըղձըն-
ձոյից զձեռն հարին:
Զայն եա Ոդիսեւս առ Դեմոդոկ. « Եւ
նախ, ո՛վ քաջ, քեզ տամ ձօն.
Ըզքեղ կամ վեհ Մուսայն վարժեաց և
կամ ինքնին Ապողոն.
Դու յոյժ ճշգրիտ 'ի յերգ առնուս
զնախճիրս, ըզկիրս, հելլենաց,
Իբրու որ կամ ականատես և կամ 'ի լուր
ականջաց.
Ա՛զէ երգեա դու և ըզ դէպ զերիվարին
փայտակերտ,
Զոր Եպէոս ընդ Պալլասայ կերտեաց և
առ մոյծ 'ի բերդ.

Մոյծ նա հնարիւքըն Ոդիսեւայ լցեալ
զայն քաջ որերով
Որք զԻլիոնըն քանդեցին . ո՛ն արդ զայն
դեպս սու 'ի գով .
Թէ զայդ ճշգրիտ ինձ պատմեսցես , աշ-
խարհաւոր զքեզ անուանեմ
Թէ ո՛չ մատուցեր ըզքոյ կիթառն՝ այլ թէ
աստուածք հարկանեն ›› ։
Լուաւ , անդէն աստուածաշարժ նուագ
առնոյր 'ի սկզբանց ,
Զիա՛րդ հելլենք նաւագնացիկք հուր
նախ արկին խորանաց .
Իբր Ոդիսեանք 'ի Տրոյիա նստան ձիոյն
'ի փորին ,
Եւ Տրոյացիք զայն երիվար 'ի բերդն ա-
ռին և մուծին .
Կայր երիվարն , և ըզնովաւ նստեալ
Տրոյեանք խորհեցան .
Եւ մեր 'ի վայր երրեակ խորհուրդք յա-
ռեան նոցուն յուզեցան .
Կամ զփայտակերտն յերկաթ մատնել և
կամ հատել 'ի ժայռից ,
Կամ զանարին զայն ըզդիւցեալ հաշտ դից
պահել 'ի ձօնս .
Յաղթեաց վերջինն . 'ի մահ անձանց 'ի
ներքս առին զերիվար ,
Ուր քաջք Յունաց կային դարեալք Տրո-
վեանց մահուն դաժանաց ։

Երգէր, զնո՛րդ զարմանմունքն արտաքս
վազեալ 'ի ձիոյն,
Քանդեն զոստանն, առեր ածեն շահա-
ստանին այն բարձուն ։
Անդ իւր Արէս գիմեաց Ոդիսս ընդ Մե-
նելաւ քաջալին,
Եւ Դեիփոբեայ յաղթէր 'ի գոտն ընդ հո-
վանեաւ Պաղլասին ։
Մ՝ինչ զայսոսիկ, կիթառ հարեալ, վէհն
այն երգէր երգահան,
Տայլէր Ոդիսս և 'ի ցօղս արտևանանցն
այտք թանան ։
Զոր օրինակ բազմակական սիրուն զա-
րամբ կինըն լայ,
Զի փրկանակն իւրոց որդւոց և քաղաքին
տապաստ կայ,
Հայի 'ի նա յոգւոց պարզելըն և թալանայ
կինն համբուն,
Մինչ 'ի թիկանց ուժգք թշնամեացըն
գաւհձարար զուսն հարուն,
Քարշեն յանդարձն 'ի գերութիւն լի
անձկութեամբ լի վշտօք,
Եւ հիքացեալ կընոջն յայնժամ այտքըն
տապին արտասուօք,
Նոյն Ոդիսևեայ ողորմելի յարտևանանցն
արտասուք
Ցօղէր անդուլ. բայց հասարակ յայլոց
եկաց 'ի ծածուկ .

Միայն արքայն բազմեալ ընթեր եղև
 բանին իրազգած .
Խոր 'ի յոգւոց լսաէր հեծիւն , դարձաւ
 ձայն եա փէակեանց .
"Լուարուք իշխանք . ասեն Դեմոդոկ
 տայէ անոյշ կիթառի .
Քանզի նուագ երգոյն նորա չէ բոլորից
 փարելի .
Յորմէ հետէ նստաք յընթրիս և վեհն եր-
 գիչ նուագէ ,
Այսուր անդադար հեղու մեր հիւրս ան-
 շուշտ արտին ցաւ ազդէ :
Լռեսցէ երգն , հրճուեսցի հիւրն , հիւր-
 ընկալուքն հրճուեսցին .
Լաւ է խորհուրդս . զի վասն հիւրոյս այս
 ամենայն հանդերձին .
Ուղւոյ գնեմք , ընծայս ձօնեմք , մարդա-
 սիրեմք մեք հիւրոյն .
Հիւր ողջախոհ իբրև եղբայր է մտաւոր ո-
 րերոյն :
Արդ մի ծածկեր դու այսու 'ի այսու զոր
 հարցանեմ 'ի կարգին .
Չէ լաւ ծածկելն . այս զանուանդ զոր
 անդ ըզքեզ կոչէին
Հայր քո , և մայր , քաղաքացիք , սահմա-
 նակիցք քո որեար .
Զի անանուն չէք մարդ ծնեալ եթէ բարի
 եթէ չար .

Այլ որք ծնանին առնուն անուն . բայց
դու առաւ և զոտանանդ ,
Զարդ և զաշխարհ , զի նաւքս ուղիղ ա-
ռեալ ըզքեզ տարցին անդ .
Զի փեսակեանց , իբրև այլոց , չե՛ն պէտք
վարչի , ո՛չ թեղեայց ·
Այլ նաւքն ինքնին են խորհրդոյն ու-
ղևորաց խորագգած .
Զամենեցուն զխանձնոցս քաղաքս և յոյլ
անդաստան ,
Արագաթռիչք ծով հատանեն պատուարք
'ի մէգ թանձրութեան .
Ոչ վտանգին , ոչ կորնչին . բայց և հայրն
իմ՝ Նաւսիթոոն
Ասէր երբեմն՝ եթէ ընդ մեզ ցասմամբ
վառի Պոսիդոն .
Ցասնու , զի մեք ընաւից անվրդով եմք
ուղահորդք 'ի ծովու .
Նաև ասէր , թէ՝ կործանեսցէ նա քաջակուռ
մեր նաւու ,
Ծովամածքեալ կապոյտ յալիս վտան-
գեսցէ 'ի դարձին
Ըզմեր ոստան լերամբ ծածկեալ . զայս
ինչ ասէր ծերունին ։
Արդ զայն Աստուած թէ արասցէ թէ
չարասցէ ըստ կամի ,
Դու զթափառելդ և ըզգաւառսն ողջ
պատմեա ինձ ըստ կարգի .

Զինչ չեն քաղաքք , զինչ այք իցեն , ո՞յք
    չարք վայրագք և դժնիք .
Ո՞յք հիւրասէրք , ո՞յք երկիւղած միտս
    ունիցին գեղեցիկ ։
Աստ և զայն , հիմ լսա լուեալ Տրոյեանց ,
    Յունաց ըղձմանդ .
Ո՞չ զմահ քաջաց դիք կնքեցին յեանոցս
    առնուլ 'ի նուագ .
Կամ յԻղիոն մեռաւ աներդ և որ փեսայ
    փարելի ,
Արդ զքն առ մեզ ըղձնի զասուն արեան-
    առուաց և զարմի .
Կամ թէ թերեւս տապանտ անկաւ անդ
    ընկեր քո մտերիմ ,
Զի քան զեղբայր չէ ինչ խոնարհ այր որ
    ընկեր քաջուշիմ "։



# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Թ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Սկիզբն առնէ Ոդիւսէս պատմութեան անցից իւրոց 'ի մեկնելոյ անտի իւրմէ 'ի Տրովադայ: Մարտ պատերազմի ընդ Կիկոնեանց: Հասանել 'ի կղզին Լոտոսակերաց: Նկարագրութիւն գեղեցիկ կղզեկի միոյ: Նկարագրութիւն քարանձաւին Կիկղոպին Պողիփեմեայ: Այս Կիկղոպ հափափեալ ուտէ զվեցս յընկերաց Ոդիւսեայ: Ոդիւս յետ կուրացուցանելոյ զվիրադն, անձնապուր լինի հանդերձ այլովք, նորաքանչ հնարիմացութեամբ:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Թ·

ԱԼԿԻՆՈԷ, տէր վեհափառ, ձայն ետ
    յայնժամ Ոդիսեւս,
Զայդ երգահան ունել աստէն անշուշտ
    մեզ է մեծապէս.
Զայն ունի զդեց, մեծ են կոչունքս, հըր-
    ճուէին ամենքն 'ի յոգի,
Երբ 'ի յակումբս առեալք բազմոց նուագ-
    լսեն հրաշալի:
Հացիւ խահճիւք լի է սեղանս. խառնա-
    րանէն ըզգինի
Մատռուակեն, ընուն բաժակք. զխորդ
    խընձոյք փարելի:

Բայց դու զիմ կեանս խնդրես լսել, զի ես եղէց ցաւագին.

Այլ զո՞րն յառաջ կամ զո՞ր երկրորդ կամ զո՞ր պատմեմ ես վերջին.

Ինձ ցաւս անթիւ ետուն անմահք. զանունս ասեմ ես յառաջ,

Զի անձնապուրս հիւր ձեզ եղէց, թէպէտ յոյժ եմ տարակաց:

Ոդիւսեւս եմ ես Լայերտեան աշխարհալուր խորագէտ,

Շուքս հաս յերկինս: Իթակէ երկիրս արեգունի է յաւէտ.

Ներիտոն անդ լեառն անտառախիտ, գեղաշխարհ, բարձրաձայր,

Եւ շուրջ բնակեալ կղզիք բազումք յոյժ մերձ միմեանց առնուն պար,

Դուլիքիոն, 'ի նոյն Սամէ, Թանձրամայրին Զակինթէ.

Ծովապարփակ կայ յարեւմուտս խոնարհ և վերջն Իթակէ 39.

Ընդ արեւելս և ընդ հարաւ հային կղզիքն. այլ Իթակ

Է առապար. բայց պատանեաց քաջաց վայր է ընդունակ:

Քան զհայրենիս զի՞նչ քաղցրագոյն. բայց զիս կալաւ Կալիփսէ

Վէհ դիցանոյշն յանձաւս 'ի խոր. ընդնոյն արար և Կիրկէ.

Կիրկէ Էէեանն այն խորագէտ պահէր
յիւրում զիս յարկին .
Զիս լծակից ունել իւրեանց խնդիր լե-
նէին երկրին :
Բայց զոգին իմ ոչ յանկուցին . չէք քան
ըզգրոյն անուշակ ,
Թէպէտ ընչեղ յօտար երկիր լեալ 'ի ծնո-
ղաց տարաբնակ :
Այլ աղէ քեզ և ըղձալին իմ զարտա-
սուելին պատմեցից ,
Զոր դարձելոյս 'ի Տրոյիոյ Ամպրոպայինն
կրկներաց ինձ :
Հողմն շնչեալ յԻլիոնէն ած զիս յԻս-
մար Կիկոնեանց .
Զոստանն նոցա աւար հարի , որհաս ածի
բընակչաց .
Կանայս գերեալ , և շատ կարասւոյ բաշխ
եղ ընկերաց յաւարէն .
Եւ ես յայնժամ արագ արագ զիմսն խոյս
տալ յորդորեմ .
Ինձ խոլամիտքն անսաստեցին , շուայ-
տեալք զօրէն գինեբրուաց
՚Նաւին ծովափին , ոչխ զենուն և Թաւթա-
հերձ 'ի յանդեաց .
Մ՛ինչ շուայտէին , յարեան Կիկոնք ձայն
Կիկոնեանց կարդացին ,
Որք էն դրացիք քաջք , բազմաԹիւք , բնա-
կաւընուդք գաւառին .

Քաջք 'ի կառաց ներհունչք կուսել, ներ-
հունչք 'ի մարս և հետի .

Եկին վաղ քաջ, որչափ սաղարթք, ծա-
ղիկք բուսեալք գարնանի ։

Օր չար ծագեաց հիքացելոցս յԱրամազ-
դեան արկածին .

Արձանացեալք մղեն Կիկոնք մարտ ընդ
նաւաց հանդիսին .

Տեղան նիզակք ․ ցոլմայր այգ էր և օրն
աճէր սրբազան ,

Ցայն վայր սակաւքս ընդդէմ շատից կայ-
աք անձանց 'ի պաշտպան .

Արեգն 'ի մայրն իւր խոնարհէր, Կիկոնքն
ըզ Յոյնս վանեցին ,

Եւ զխստապատս մէն մի նաւաց վեցք քաջ-
որեար անկանին .

Անդ նշխարեալքս նաւեալք անդրէն զա-
լիս հերձուլ ըղձալուն ,

Բայց անձնապուրքս ցաւիմք 'ի մահ նիզա-
կակցաց մեր սիրուն .

Ոչ յառաջեմք մինչև զայր այր կոչեալ
երիցս յանուանէ

Ըզ հիքացեալն, որ անդ անկան 'ի Կի-
կոնեանց նիզակէ ։

Յայնժամ զհիւսիս մըրկեալ 'ի նաւ շըն-
չեաց Դիոս շանթարեր ,

Ըղձով ցամաք ամպովք ծածկեաց, յերկ-
նից պատեաց մութ գիշեր .

Նաւք տատանեալք . յերիս 'ի չորս հեր-
ձուն ծուէնս առագաստք ,
Ամփոփեցաք աւարեկեալք , վարեալք ըղ-
նուս 'ի ցամաք .
Տխուր և գիշերս կացաք երկուս մղձկեալք
յոգիս դժկամակ .
Մինչև զերրորդն օր մեզ ծագեաց ոսկե-
գիսակն արեւակ :
Այսմ ամբարձեալ և զառագաստս ան-
դրէն պարզեալ զնաւախումբ ,
Նաւինք անդորր . ըղձուս վարեն քեղիքն
և հողմ յաջողակ .
Գնայի ողջամբ յերկիր ծննդեանս . այլ
զիս կոհակ յորձանաց
Նոյն և հիւսիս շուրջ ըզՄալէաւ առ և
դարձոյց 'ի Կիւթերեայից .
Աւուրս ինն եւ 'ի յանդունդս հող-
մովք ծըփեամ ահագին .
Ի տասներորդն եկաք յերկիր Լոտոսա-
կեր խուժանին .
Ուտեն նոքա ճարակ ծաղկեալ . մերոյք
յերկրին առաք ջուր .
Ճաշեալք առ նաւս առնումք բաժակ առ-
նումք 'ի նոյն կերակուր .
Յայնժամ ընտրեալ յղեմ երկուս , երրորդ
զՔարոզն ընդ նոսին ,
Դիտել թէ՞ զազգն . յարեան նոքա զԼո-
տոսակերացն գտին .

Վըրնաս մահու չածին մերոյն, ետուն
լուսոյ ճաշակել,
Խակ որք կերանն զանոյշ պտուղն, ոչ կա-
մէին դարձ առնել.
Ոչ և յուսալընդայնելին. ցանդ անդ մը-
նալ փափաքին
Լուսաստակեր ազգին ընկեր, զոր մոռա-
ցեալք ըզդարձին.
Լալեաք զնոսա ածեալ 'ի նաւս, նոցա եւ
բուռն արարի,
Լաստափոյախն ընդ նաստարան կապեալ
զնոսա պրկեցի.
Այլոց ձեզ տամ՝ մտանել 'ի նաւ, զի մի
նըման որ նոցին
Լոսաս կերեալ զախան ախտացի. մը-
ռին զնըրատոցըն տունին.
Կարգ բառ կարգէ հարկեալ քաշախ, ըզ-
ծով բախեն զաղէտանց.
Նաւեալք անդուստ գնացաք հանդէպ,
յոգիս հարեալք տրտմագնեալ:
Յերկիրն հասաք մէս Կիկլոպայց. նոքա
չունին ինչ օրէն.
Միայն 'ի գիս վստահացեալք ոչ տունկ
տընկեն, ոչ հերկեն.
Անսերմ, անհերկ, ցորեան գարի անդ
բուսանի. և այգի
Մեծողկուղեան և գինեկէտ յանձրեւն ա-
ձեալ Դիոսի.

Իւր 'անմարդկաց չիք ոչ օրէնք և ոչ ա-
ւետման խորհրդին .
Լերանց բարձանց բնակեն 'ի ծայրս . 'ի
քարանձաւս խորին .
Տեարք են կանանց և զաւակաց , և ոչ հօ-
գան ըղձիմեանց .
Եւ կայ անդէն կղզի խոնարհ առ Նաւա-
կայս Կիկղոպայց .
Ոչ մօտ ոչ տար է մայրախիտ վայր այ-
ծեմանց անդրուեց .
Շրջին անհօտք զի չիք մարդկան անդ ա՜
ելից և մտից .
Չիք անդ որսորդ յոգնեալ յանտառս
յածեալ ընդ գագաթս լերանց ,
Ոչ հօտարած , և ոչ մշակ արօրադիր
ակոսանեաց .
Անհերկ , անսերմն , վայր անմարդի . անդ
այծք պապչեալք արածին .
Եւ Կիկղոպայք 'ի կարմրայտից զուրկ են
նաւաց գլխովին .
Չիք անդ քաշտիկ ագատամատոյց յայց
ելանել քաղաքաց ,
Որպէս մարդիկ 'ի այլոց անձանց Նաւա-
գնացիկք են միմեանց :
Չէ չար երկիրն . և բերէ նա այրուղ զա-
մէն բաս ժամուն .
Չի են անդ մարգք առ ծովափամբ ,
յուռթիք , կակուղք , բարեբուն .

Որթք անապատք անդ բուսանին. եր-
կիրն յարօր է հեշտին.

Եւ հունձք առատք ամարայնոյ. զի յոյժ
պարարտ է գետին:

Է՛ անդ անդորյթ նուաճհանգիստ , պէտք
չէն խարխափ արկանել.

Ո՛չ լար կապել և ոչ կառանս. կայ անդ
նաւայն անարգել.

Կայ , և Թողու , երբ և կամի և երբ հող-
մունք շնչեսցեն.

Բայց 'ի ծայրին ընդ անձաւով ջուր սուրբ
հոսէ յաղբերէն:

Ընդ իջաք մեք ածեալք 'ի դից 'ի յաղջա-
մուղջ գիշերին,

Զի նաւքս 'ի մէգ և յամպ ծածկեալ ոչ
շողշողէր մեզ լուսին.

Ոչ ընկղզին տես ոք 'ի մէնջ, ոչ ըզծովափն
ալեսատ,

Մինչև հասեալ անդ մեր նաւոյ , ամփո-
փեցաք զառագաստ.

Ծովափն ելեալք , Թմբեալք 'ի քուն
Մնայաք մինչ մեր այգուն.

Մինչև ծագեաց մեզ առաւօտ ծայրա-
կարմիրն արևուն.

Հիանայաք ընդ վայրն , շրջիմք , և մեզ յա-
ւերժհարսունք գերարուն

Ճաշ պատրաստեն , քանզի յարօտ զայծ-
սըն վարեն լեռնմասուն.

Ծեալ 'ի Նաւաց հասս զաղեղունս առաք
և սուր ըզգեղարդ.
Յերիս առաջս նետաձգարեալ, ետ մեզ
աստուած որս առատ.
Մէն մի Նաւացս երկոտասան՝ ինն այծ
առին 'ի վիճակ.
Առի ես տասն. և յերեկոյն առհասարակ
ըղխահս և բաժակ.
Քանզի անոյշ կարմիր գինին չէր ըսպառ-
եալ 'ի Նաւաց.
Զի մեք շատ ինչ ամանեցաք յառնուլ
զուստանն Կիկոնեանց:
Մօտ Կիկլոպայցն հայիմք 'ի ծուխն. Նո-
ցուն և օդեաց ձայն լսէր.
Արեգն եմուտ, պատեաց խաւարն, հան-
գեաք ծովուն առ եզեր:
Այգ վարդամատն երևեցաւ, խըմբեալ
զընկերս բարբառիմ.
« Մնացէք դուք աստ, ես Նաւադնաց
յուղի խմոյքս անկանիմ,
Դիտել զորեարն արդեօք ժայիրհք են
արք վայրագք չարիմաց,
Եթէ արդեօք արք հիւրասէրք և յաս-
տուածոց երկիւղած:
Ելեալ 'ի Նաւն հրամեմ արանց առ ար-
ձակուրդ կառանաց.
Ելեալ և արքն առեալք Նաւաց կառուին
քաշեցք ընդ ալեաց.

Հասեալք 'ի վայրն 'ի ծայր վերջին ան-
տառ անձաւ մօտ 'ի ծով.
Բարձր էր անձաւն, շուրջ սարդենիք.
անդ այծք և ոզիք կան յոլով.
Կայր շուրջ պատեալ և գաւիթ բարձր
'ի վիմաստաշ 'ի քարանց,
Հաստատահարուստ 'ի թեղօշից, ամբարձ-
ուղէշ 'ի կաղնեաց:
Բնակէր անդ մարդ ստակաֆթխար, որ
հօտ մեկին արածէր,
Հրէշ ահագին, անմերձ յայլոց կայր նա
'ի զատ և մոլէր.
Չէր նա իբրև մարդ հացակեր, այլ մայ-
րախիտ արանան
Ինձ երևէր լերանց բարձանց կացեալ
յուրոյն գագաթան:
Թողի զընկերս 'ի պահ նաւուն, առի ինձ
քաջս երկոտասան,
Առի զգինւոյն տիկն այծենի՝ զոր ետ
Մարոն Եւանթեան.
Սա քահանայ էր Փեբոսին, որ պահ-
պանէր զԻսմարէ.
Ըզնա շըքով ընդ ընտանեաց մեք փրկե-
ցաք յարկածէ.
Բնակէր այս քուրմ 'ի անկախիտ Ապո-
ղոնին յանտառի.
Ընծայս չքնաղս, տաղանդըս եօթն ետ ինձ
ոսկւոյն արքինի.

Էր ինձ բաժակ համակ արծաթ. և 'ի սափորս երկոտասան
Գինի սևու քաղցր անապականն, Ճաշակ անմահ ըմպելեաց.
Գտանէր ոչ որ 'ի ծառայից, ոչ նաժշտաց որ 'ի տան,
Այլ գիտէր ինքն և կինն արգոյն և անա-կալուչ կին միայն.
Հրաշէկ գինւոյս յայս անուշակ քանիցս անգամ որ ըմպէր,
Ի մի բաժակ չափեալ քըսան ջըրոյն 'ի նոյն արկանէր.
Բուրումն անմահ խառնարանէն գրգէր յարբումն անդանդաղ.
Տիկ մեծ լցի 'ի յայն գինւոյն. եդի պա-րէնս 'ի մախաղ.
Առեալ ընդ միոս, որպիսի՞ այր արդեօք էլցէ ընդ առաջ,
Բուռն և վայրագ, ոչ իրաւանց ոչ օրի-նաց իրազգած:
Նեղ առնէաք մեք մըտաք յանձնեն, ըզ-նա 'ի նեղըս ոչ գըտաք.
Յարօտ խաշին իւր գեղերէր. մըտեալք յակծինս անդ կայաք.
Կողովք պանրովք էին ակաղձուն. դա-ռամիք, ուլովք լի պատուակք.
Զատ նախածինք, զատ միջնածինք, զատ նորածինք կան 'ի փակ.

Տաշտք, դոյլք, կըթոցք ամանք հովուին
  լողան ողջոյն 'ի չինչուկ.
Մաղթէն ընկերքս, ինչ մի կապուտ առ-
  ցուք պանրոյն և դարձցուք.
Նաև գառինս և ուլս պառակաց վարեալ
  անկցուք մեք յուղի.
Անշուշտ յոյժ լաւ էր այս խորհուրդ.
  այլ ես 'նոյա չանսացի.
Կամիմ հիւրոյթ առնուլ յաննէն, այն
  որ մեզ էր ոխերիմ.
Ուտեմք պանրոյն, և հուր վառեալ զո-
  հեմք, մնամք վերագին.
Եկն յարտաքն. բեռն աճապին հեծան
  ցամոյք յուս բառնայր
Ի պէտս ընթրեաց. դուրս յանձաւէն ա-
  հեղ թնդմամբ արկ 'ի վայր.
Փախեաք ահիւ 'ի ներքսավայրն. վարեաց
  ըղջօան յանձաւին.
Զարուան ամէն խոյ և 'նոխազ թող ար-
  տաքոյ 'ի դաւթին.
Բարձեալ ապա եդ անձաւին վէմ յաղթ
  հաստատ դռնափակ.
Ո՛չ կարէին զայն քսաննիւ քըսան 'ւեր-
  կու շարժել կառք.
Զայծսն պապչեալս և յոյր զօջխար
  էառ 'նաստ և կըթէր.
Ա'ռ հասարակ կըթեալ կարգաւ, 'ներ-
  քոյ զծընունդսն արկանէր.

Ընկէս կաղթինըն մանկարդեաց եդ 'ի հիւ-
սեալ սակառի,
Ընկէան առեալ արկ 'ի յամանս 'ի պէտս
ընթրեաց ըմպելի:
Լցեալ ըզգործն, հուր բորբոքեաց, ե-
տես ըզմեզ և եհարց:
« Ո՞ էք, ո՛վ հիւրք. ուստի՞ նաւէք, ար-
դեօք 'ի շա՞հ վաճառաց.
Արդեօք շրջիք թափառականք իբրև ծո-
վու աւազակք,
Որք թափառին անձնանախատք ածել
այլոց ըզվտանգ ».
Ասաց. և սիրտք մեր հալեցան, տեսեալ
ըզհրէշն ահարկու,
Լուեալք ըզձայնըն խուժադուժ. բայց և
այնպէս ձայն ետու.
« Մե՛ք 'ի Տրովեայ Յոյնք զարտուղիք վա-
րեալք յալիս ամէհի,
Ուղղեալք 'ի տուն հողմավարեալք գամք
այժմ ընդ այլ ընդ ուղի.
Այսպէս կնքեաց զայս Արամազդ. մեք
Ատրիդեայ եմք որեար,
Ո՛յր արդ մեծ են փառքըն ընդ երկնաւ, զի
զմեծ ոստանն եդ յաւար.
Ագամեմնոն անուն նորա, որ շատ խու-
ժան արկ տապաստ.
Բայց մեք զարդիս առ ծունկըս քո ողո-
քանօք եկաք աստ.

Արդեօք հիւրոյթ տա՞ն հիւրընկալց,
կամ այլ պարգեւ 'ի քոյոց.
Ա՛ռ քեզ, ով քաջ, մեք գանձ յողբս, գու-
ակն ածցես աստուածոց,
Հիւր որերոյն ողբաւոր Արամազդն է
հովանի.
Այն վանատուրն սիրէ ընդհիւրս եւ շուք
եղեւալ պաշ ունի ։
« Խօ՛ւլ ես դու, հիւրդ տարագնեալ,
ձայն մի կրկնեալ խռժարար,
Որ լինձ հրամես երկիւղագին խորշել 'ի
դից դերասխտ.
Ու ընդդիմայ, եւ ոչ զայլ դից փոյթ ինչ ոչ
է Կիկղոպայց.
Մեք քաջք հուժկուք. եւ Դիոսին չեմ ես
'ի խէլթն երկիւղած.
Եթէ կամիմ, 'ի քեզ 'ի քոյոց խնայեմ
կամ ոչ, զինեամ քաջ.
Այլ տաս դու, ուր եհաս նաւդ. աս-
դեօք հեռի, թէ մօտ կաս ։
Ասաց, փորձելով. այլ խելամուտ ես խա-
բանօք տամ բարբառ.
« Ընկուան իմ կուռ վէհ Պոսիդոն խոր-
տակելով հար ընդ ժայռ
Ի ծագ կղզւոյդ 'ի գահաւանդն, հող-
մունք առին 'ի ծովէն.
Ես նչխարեալ ընդ սրերյս զամ անձնա-
պուր յորհանէն ։

Լուռ կայ վիրապն, և Թափ տուեալ յեր-
կուս խմոց ընկերաց,
Բանահարեալ և ընդ գետինն եհար կո-
րեանց հանգոյն չանց.
Ծորէր ուղեղն, Թանայր զերկիր. յո-
չեալ զանգամս եդ յընԹրիս.
Լափէր զընդերս. չեԹող ինչ միս, չե-
Թող զոսկերս ուղղալից.
Մըռընչայլէր սոխասանջեալ խլրև ա-
ռիւծ լեռնաստան.
Սոսկանք ընդ գործն. յերկին ձեռք մեր
և արտասուս աչք հեղուն:
Կամք յուսահատ. վիրապ Կիկղոպն ելից
ըղձիւրն աչացն.
Հրեշ մարդակերին արբ կաԹն անոյշ, պա-
ռակեցաւ յանձաւին.
Ածի զհրատ Թափ տալ ոլորելս 'ի լանջն
ընդ կողն ընդ ողջոյն,
Ընդ ցանցլերգին. այլ յուշ ածեալ յե-
տըս կաց' 'ի խորհրդոյն.
Դառն օրահաս մընայր և մեզ, զի էր
անհնար գլխովին
Վէմ զանդարին շարժել 'ի դրանց. մնայաք
այգուն ցաւագին:
Այգըն ծագեաց. նա հուր վառեալ կը-
Թէր զոչխարսն ըստ կարգի.
Մասեաց զգառինսն. ելից ըղձործն, ան-
դրէն Թափ եա սոսկալի.

Զերկուս և այլ գօշեալ յիմոցն ճաշ փա-
　ղաղեաց զայն համակ.
Ըղձօսն 'ի դուրս վարէր բարձեալ զայն
　ահագին գռնափակ.
Փակեաց դարձեալ զայն հեշտաբար որ-
　պէս խուփ մի կապարճի,
Հորդան խաշին ես գըլըլդմամբ ընդ դարս
　ընդ սարս 'ի վայրի:
Խորախորհուրդ մնացի յայնժամ ըղձալէժ
　առնուլ վրէժին,
Ո՛չ թէ ինձ փառս տայր Աթենաս. և
　խորհեցայ զայս վերջին:
Կայր Կիկղոպին լախտն 'ի պատուակ բուն
　յաղթ և մորչ ձիթենւոյն,
Կտրեաց'նա անդ թող ցամաքել. մեք տա-
　կացաք 'ի տեսոյն.
Էր յաղթ հեծան, քըսանաթի կուռ մեծ
　նաւուն իբրև կայմ
Որ ընդ անդունդըս կոււեացի, այնչափ
　երկայն էր և լայն.
Հատեալ 'ի բնոյն վեց ասնաչափ տամ ըն-
　կերացս 'ի յղկել,
Նա ես սրածայր գործեալ ըղնա ածի զըր-
　ցոլ 'ի խանձել.
Եդի 'նդ աղբովն անդ դէղադէղ. առա
　խմոյս տամ վիճակ,
Վարել ընդ իս զխանձողն ընդ ակն, երբ
　քունն առցէ զայն վիրապ.

Եւ ըստ ըղձից չորից վիճակին և ես էի
հինգերորդ․
Դարձաւ 'ղ երեկս վիրաւ յանձանն ըղ
գեղեցկաբարձ վարեաց հետ․
Վարեաց ողջոյն, չեթող 'ի գուրս կամ
յաստուածուստ, կամ խեթայ․
Փակեաց զանձանն կըլթէր ըղձոտն և ըղ
ծընունդս նեքոյ ած․
Անդրէն ապա զերկուս յխոցն յընթրիս
գոչեաց յերեկոյն․
Եւ ես հրաւէր առամ Կիկղոպին 'ի ձեռս
բարձակ սեռաւ գինւոյն․
« Որ ըղձորդական կերպար մարմնոյ, ընկալ
Կիկղոպ, որբ գինի․
Տես զոր արբուցն ածաք առ քեզ պա-
հեալ 'ի մերն 'ի նաւի․
Եւ զայդ նուէր քեզ բերէի գըթալ յը-
ղէլ զիս 'ի տուն,
Այլ ո՞ յապաղս մոլի առ քեզ, վիրաւ
մոլեալ դու անհնուն․
Զար գործեցեր, վայրագասունդ »,
Լուսաւ կատ ըղբարձակ․
Ըզմալլեցաւ․ խնդրէր յինէն կրկնել զար-
բուցն անուշակ:
« Տո՛ւր ինձ դարձեալ․ պանտունդ սաա․
հիւրոյթ առց քեզ խնդաքին․
Է Կիկղոպայց խաղողն արգոյ յանձրին
աճեալ Դինսին․

Բայց այդ բաժակդ անմահ ճաշակ նեկ-
տարին է բըխումն ։ .
Ասաց, և ես հրաշէկ գինւոյն եռու կըր-
կին 'ի յարբումն .
Եւսու երկիցս, որբ 'նա երկիցս անմըռա-
ցեալ 'ի յոգին ,
Մինչև ուրեմն հրաշէկ գինին եկըն զա-
կամը վիրագին ։
Աղու բանիւք ասեմ յայնժամ . « Զա-
նունս խնդրես , Կիկղոպէ .
Բայց դու 'սա խոստմանդ մի զըկեսցես
զիս հիւրականդ ըղձայն .
Ասեմ , Ուտիս է անուն իմ . Ուտիս ծը-
նողք զիս կարդան .
Ուտիս ընկերքս ։ . Լուաւ վիրագն և ձայն
խեթիւ ետ յայնժամ .
« Այս քեզ հիւրոյթ . յետ բոլորից ու-
տեմ զՈւտիս 'ի վերջոյ ։ .
Ասաց , յորսայս պատուակեցաւ թեքեալ
յաղթ զուլն 'ի յուսոյ .
Ընկլաւ 'ի քուն խոր թանձրութեան , գի-
նի ժայթքեր կոկորդէն ,
Զգայուէր գինեաւ , ժայթքեր 'ի դուրս
կտորս մարմնոց մարդկեղէն ։
Յայնժամ զխանձողն 'ի թանձր յաճիւն ,
մինչ 'ի ջեռնուլ , վարեցի .
Եւ գործակցացս մի վեհերել շատ քաջա-
լեր ես տայի .

Իբրև գալար ձող ձիթենւոյն անդ հրա-
վառեալ կարմրացաւ ,

Առին 'ի հրոյն , շուրջ կան ընկերքս , Աս-
տուած ոյժ մեզ հեղ անբաւ .

Մատ առ վիրագն առեալ սրածայր գլխան-
ձողն 'ի յաչս վարանեցին .

Ի վեր կանգնեալ ես 'ի ծայրէն պտտոյ-
տայի խանձողին .

Որպէս յորժամ ըղնաւափայտն Հիւսնաւոր
գչրաւ Թափ ծակէն ,

Ի այլք երկուստեք չըջէն փոկով և գնա
անդուլ պտտուակէն ,

Այսպէս գխանձողն ըղհրավառեալ պը-
տուտկէաք 'ի յակնին ,

Եւ ընդ հեծանըն տարաշէկ վըտակ հոսէր
յորդ արեան .

Զարտեւանունսն և ազջ ըզյօնսն եկեղ
խանձոյն գոլորշին ,

Եւ տապախառն այրեցաւ բիբն , ար-
մատքն 'ի հուր շաչէին .

Որպէս գարբին Հարատարապետ մըխել
զտապար և կացին

Ի ջուր 'ի ցուրտ առեալ վարէ , անդուստ
շաչիւնք հատանեն ,

Քանզի մըխէ և կուռ գործեալ տայ ամ-
րութիւն երկաթոյն ,

Այսպէս շաչէր ակն ըղբըննով տարաշէկ-
նեալ ձիթենւոյն :

Գոչեայց ահեղ, թմբկեայց անձաւն. վա-
ռատեցաք 'ի յաշէն.
Նա ըղխանձողն արիւնշաղախ կորզեայց վե-
րագն յականէն.
Մոլէր ցասմամբ, արկ զայն 'ի բաց, առյր
Կիկղոպայց մեծ բարբառ,
Որ ընակէին մօտ անդ յանձաւս 'ի գահա-
ւանդս հողմահար:
Լուեալք զգոչիւնն աստի անտի վա-
զեալք կան շուրջ անձաւին,
Հարցանէին. « Հիմ, Պողիփեմ, ցա-
ւեալ գոչես ահագին.
Գոչես ընդ մութն, անքուն առնես. ըզ
հօտս արդեօք զոք տանի.
Արդեօք երկեար թէ ոք ըզքեզ նենգաւ
սպանցէ կամ բռնի »:
« Ո՛չ բռնութեամբ, խօլ Պողիփեմն 'ի
յանձաւէն ձայն կրկնեայց,
Ուտիս ըսպան զիս, բարեկամք, ոչ բռնու-
թեամբ. նենգ գործեայց »:
» Եթէ ոչ ոք 41, կրկնեն նոքա, քեզ
միայնոյդ չար արար,
Յաւ քեզ ուրեմն հաս 'ի Դիոյ, յորմէ
խուսել չէք հնար.
Հօր քում մաղթեա Պոսիդոնին ». ասեն,
դառնան ետ ընդ ետ.
Յոյժ խնդացայ. խաբեայց անուամբ և
խորհուրդն իմ խորագէտ:

*Կիկղոպն հեծէր, խարխափ ձեռամբն*
*առ զաւհադին վէմն 'ի դրաց,*
*Հաստու առ դուրս, ձեռս կարկառեալ*
*կալցի զելեալն ընդ օդեաց.*
*Խոլ զիս կարծէր· այլ ես յայնժամ յու-*
*զեմ 'ի միտս այլ խորհուրդ,*
*Զինչ դըմից ես հնարիմաց ինձ և ինոցա*
*արձակուրդ.*
*Հընարս նիւթեմ և անդաձեմ· որ հասան*
*առ դուրս հասեալ էր,*
*Եւ 'ի վերջէ, գոլ անձնապուր, ինձ քաջ*
*խորհուրդ այս թուէր.*
*Ոչխարս արուս յաղթ թաւադէս առ*
*ես յայն պատակէն,*
*Կապոյտք, պարարտք. և ընտելեայն կա-*
*պեմ յօղորս քաջհիւսկէն,*
*Յորս Կիկղոպն ընկողմանէր մահաշըն-*
*չուկին այն վերադ.*
*Զ երիսն 'ի մի յայնց ոչխարաց առեալ կա-*
*պեմ ես արադ.*
*Միջինն այր մի տանէր ներքոյ, զնային*
*երկուքն 'ի կողմանց,*
*Փրկեն ըզնա. այսպէս երեքն ըզմին առ-*
*նին յընկերաց։*
*Խոյ մի էր անդ երևելի յաղթամարմին 'ի*
*հօտին,*
*Կալայ զթիկանց, տարածեցայ 'ի թաւա-*
*դեղմն 'ի պորտին.*

Ջերկային տարոյն կուռ ունէի պատեալ
ձեռամբ քաջարուն .

Այսպէս անդէն յոգւոյ համեալ սպա-
նեալ մընամբ մեք այդուն :

Երբ վարդամանան այգ ծագեցաւ, ա-
րուքն յարօտ տան հօրդան,

Իսկ էգքն անկիթք բառաչէին՝ ըստինքն
կաթին 'ի զեղման :

Կինկղայն 'ի յաւս, զոնէր ձեռամբ զլթի-
կուտս կանգուն ոչխարաց .

Ոչ գիտաց խոյն, այլ կան կապեալք տա-
րրուտյն առ 'ի լանջ :

Խոյն եւ յետոյ մեծ գեղինարարձն, եւ ես
շատ ինչ անդուհիմ .

Առ եւ ըղա եւ շօշափեր . ձայն լսէի զվե-
րագին .

« Զի՞ քեզ, ո՞ խոյ . զի՞ գաս վերջին . չէր
քո երբեք դանդաղեալ .

Դու առաջին յարօտ մարգաց վազես առ-
նուիր մեծաքայլ .

Դու 'ի վըտակս արծաթափայլ գետոց
գնայիր առաջին .

Դու ընդ երեկս նախկին 'ի գոմն . եւ արդ
մնացեր դու վերջին .

Թերեւս հալուեդ անենչատ ակամն, զոր եղծ
Ոդիսեան 'ի գինւոյն,

Ոդիսեան այն չար գեռ ընդ ինչոցն կար-
ծեմ չէ զերծ 'ի մահուան .

Ո՜վ թէ էիր ինձ համախորհ և լինէիր
 ձայնահան ,
Եւ ասէիր ո՞ւր նա խուսեալ յիմոյն բազ-
 կէն յաղթական .
Քա՛ջ աստ և անդ ուղէղ նորա ցայտէր
 յաստակս անձաւիս ,
Դիւրէր ըզցաւս զոր ինձ հասոյց ում-
 պէտն արանց վասն Ոդիսի ,,։
Բայց · ըզխոյն եթող երթալ · մեք յան-
 ձաւէն վայրկենի մի
Գնացեալք յառաջ, զերծայ խոյէն, ապա
 և զայլսն լուծի ։
Վարեալք ընդ մեզ որ շուրջ ըզմեօք շատ
 յոյր ոչխարս յանձաւէն .
Հասաք 'ի նաւն , տեսին անձկով ըզմեզ
 զերծեալ յորհասէն .
Լային զընկերսն , ես ակնարկի յօնիւք
 առնեմ մի՛ հեծել .
Այլ ձեպ զոչխարս գեղագիսակ 'ի նաւն
 առնուլ և ծովել .
Մըտին արագ , առին նաւոյ , քաշանեօք
 ըզծովն հարկանէին .
Գնացաք այնչափ որչափ լսէր ձայն 'ի
 յանձաւն 'ի նաւէն .
Ձայն կարդացի , կըծեմ զԿիկլոպն .
 ,, Արդ , Կիկլոպէ , ո՞ւր դու կաս .
Ուսեա , գազանդ , 'ի խոր անձաւդ 'ի վա-
 տի առն յընկերաց .

Աղուհեքդ ըղձեղ տացեն, ո՛յ չար. ու-
տեղ ըղձիւրս քոյ յարկին
Ո՛չ քամեցար. վասն այն ըղձեղ Դիոս
և գիք պատժեցին ״։
Լուսու միրադն, 'ի բոց ցասմանն անդ
զարմանանն անարի
Կորզեաց զերին, արկ առ նաւուն տար
'ի զեկէն վայրիկ մի.
Ժայռըն բամբեաց, ծով գիզացաւ, յոր-
ձանքն ալեաց դարձ առին,
Նոյն այլեկոծ վարէր ըղնաւն և մօտ ձգէր
ցամաքին.
Զող մեծ առեալ կալայ ընդդէմ զեր-
ծուլ ըղմեղ ցամաքէն.
Զայն տամ գլխովս թմափ տալ քաշեաց
և խուսափել յարկածէն.
Վարեն ըղթխոն. խակ երբ ծովեալ երկիցս
այնչափ հեռացաք,
Զայն առ Կիկլոպ խնդրեմ կարդալ
կրկին կրծել զայն միրադ.
Ընկերքս յողք թոյլ ոչ տային կացեալք
աստի և անտի.
« Օ՛հ քեզ, այր դու. հիմ գրգռես զայ-
րըդ վայրագ անհեհի.
Այն ինչ 'ի ծով զա նետ ձգեաց վարեաց
ըղնաւս 'ի ցամաք.
Զերծաք հազիւ. թէ այլ ձայն տաս,
կորզէ այլ ժայռ գըժնդակ,

Ջախջէ ըղձասա եզմեր կառավին . այնչափ
    նեռան ասակայլ » .
Ջայս ասէին . բայց և այնպէս ոչ յան-
    կուցին զիմ ոգի ։
Զայն զայրագին կորդամ դարձեալ .
    « Թէ ոք հարցցէ , Կիկղոպէ ,
Զի՞ դու յաւէժ կաս 'ի գիշեր , ո՞ զքեզ
    զրկեաց յականէ ,
Ասա . քանդիչըն քաղաքաց ինձ Ոդիսեւս
    խաւարը ած
Այն Լայերտեանն , որ յԻթակէ ունի իւր
    տունս արքունեաց » ։
Լուաւ Կիկղոպն , յոգւոց եհան . և Վա՜հ
    հին պատգամքն ինձ հասին .
Էր աստ երբեմն այր լաւ և մեծ , էր դու-
    շակաց առաջին .
Անուն նորա էր Տելեմոս , Եւրիմիդեայ
    քաջ որդի ,
Գուշակութեամբըն 'ի Կիկղոպայս հաս
    յալեւոյթ հասակի .
Սա գուշակեաց ինձ զամենայնն , ինձ կու-
    րանալ յՈդիսեւսեայ .
Ցանգ մինայի թէ ոք առոյգ հասցէ աստ
    այր յաղթ սրտեայ .
Իսկ զիս ումպէտ այր դուզնաքեայ յաղ-
    թեալ գինեաւ կուրացոյց .
Այլ մօտէ այսր Եկ Ոդիսեւս , քեզ լա-
    ձեռն տաց հիւրոյթս .

Քեզ Պոսիդոն հայրս ուղեկից, մաղթեմ
որդիս, լիցի արդ.
Նա թէ կամի, զիս բուժեսցէ. ոչ դիքն
անմահք և ոչ մարդ»:
«Ո՛վ թէ, կրկնեմ, ես քո զոգիդ 'ի վերջն
յանդընդս տայի ձեռն,
Եւ անդ քո զակն ոչ բուժեսցէ և ոչ ինք-
նին Պոսիդոն»:
Լուաւ և ձեռս ամբարձ յաստեղս, Պո-
սիդոնին ձայն կարդայր.
«Լուր Պոսիդոն, ծիրանավարսդ, երկ-
րասասան, լուր ինձ հայր.
Թէ ես քո եմ և դու հայր իմ. մի Ոդիւ-
սէս տուն անցցէ
Քաղաքաւերն այն Լայերտեան, որ տուն
ունի յԻթակէ.
Իսկ թէ կնքեալ է տեսանել տուն և զեր-
կիր հայրենին,
Գէթ անագան չարաւ հասցէ և վիշտ
գտցէ առ տընին.
Նաև զընկերսն ողջ կորուսեալ 'ի նաւ օ-
տար ծով հասցէ»:
Մաղթեաց վիրաւորն, անսաց ձայնին վեհ
Պոսիդոնն 'ի ծովէ:
Բարձ նա մըղեալ առ միւսանգամ վէմ
առաւել ահագին,
Շրջանակեաց. թափ ետ ուժոյն յաղ-
թաբազուկ կորովին.

Արկ յեռ նաւուն կշիռ 'ի խելս գոգցես
'ի ծայրըն ղեկին ,
Ճօճի 'ի վիմէն ծփեալ ըզնաւն 'ի կոյս
վարէր ցամաքին .
Կոչէք զկղզին , ուր դադարեալ նաւք
քաջակուռք մեր կային ,
Եւ մեր ընկերքն անդէն նստեալք մեզ
ըսպասեալք , ողբային :
Ելեաք 'ի դուրս և զնաւաստափայտն ձգեալք
յաւազն 'ի դադար .
Բաշխեալք զոչխարս ըզԿիկլոպին բաշխ բա-
րերեց հաւասար .
Ըզխոյն ընկերքս պատուատրեալք ինձ
'ի բաշխէն յաւելին .
Եւ ես ըզնա յազեալ մեծի ամպահաւաք
Դիոսին .
Նմա զոհիցն այրեալ զԹամբս , նա չը-
հոգայր ինչ համբուն .
Խորհէր զեարդ նաւք կորիցեն , 'ի նոյն
ընկերքս իմ սիրուն :
Նստեալք խնճոյս ցերեկաս արփւոյն առ-
նումք մեք խաշ և բաժակ .
Արեւն եմուտ , մութըն պատեաց , առ
ծովափամբըն հանգեաք :
Արդ ածըղն այգն երևէր , ձայն տամ
ըռծամն կառուանայ .
Յարեան արագ , մտանին 'ի նաւն , առին
նաւոցս ըզքաշանեաց :

Կարգաւ այնպէս Թիավարեալք ծով
հատանեմք տարադէմ.
Ըղմաշն ողբամք մեր սիրելեաց, խըն-
դամք զերծեալքս յորհանէն ։



# ՈԴԻՍԱԿԱ՛Ն

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ժ·

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ·

Հասանէ Ողիս 'ի կղզին Եօղիայ ։ Եօղոս արքայ կղզւոյն համբաւաւոր հողմոց ըն-ծայարերէ Ողիսեայ տիկ մի կապեալ՝ յորում ամենայն հողմունք բաց 'ի զեփիւ-ռէ ։ Ընկերք Ողիսեայ հետաքրքրեալք լուծանեն զկապ տկին, յառնէ մրրիկ, և միւսանգամ դառնան առ Եօղոս, մեր-ժեալք վարին 'ի նմանէ ։ Գնան 'ի քա-ղաքն Լեստրիգոնաց մարդակերաց · բազ-մագոյնք յընկերացն Ողիսեի և 'ի նաւուցն 'ի կորուստ մատնին · բաց 'ի միոյն՝ որով հասանէ 'ի կղզին Կիրկեայ վհկին, որ 'ի խոզեան փոխակերպէ զկէսս յընկերացն Ողիսեայ, մին միայն ողջանդամ գայ և գուժէ ։ Ողիս բժշկական խոտով ուսեալ 'ի Հերմեսէ, լուծանէ զվհկու-թիւնն ։ Ամ մի կացեալ առ Կիրկեայ, խորհրդով նորա պատրաստի իջանել 'ի սանդարամետս 'ի տուն Անդնդէ հայեածին ։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ժ.

*ՅԵՈՂԻԱՑ հասաք կղզին, ուր անմահից սիրելին*
*Բնակէր Եղոս Իպպոտաեան ծովապարփակ 'ի կղզին ։*
*Կուռ պղընձոյ պատուար, և ժայռն ողորկ պատէր զայն ողջոյն,*
*Եւ ծնան նորա վեցեակ դստերք և վեց ուստերք քաջարուն .*
*Եա ըզդստերս որդւոց իւրոց . նոքա արգոյ ծընողաց*
*Խրախճանակիցք յանդ լինէին 'ի համագամ 'ի խորտկաց .*

Ընդունին ողջոյն հնչէր բուրեան ողջ ար_
քունիքն 'ի գաւթի,
Ըզցայգ ննջէն պարկեշտ հարսամբք 'ի
գորգազարդ 'ի մահճի :
Սա ամիս մի հիւր քաղաքին զիս յարկ
չքնաղ մեծարեաց,
Հարցափնէր ինձ զնշխոյն, ընծաւս Յու_
նաց և ըզդարձ.
Ոչ՛ պատմեցի. հաս օրն, և զիս ուղղոյ
գընել մաղթէի.
Յանձն առ սիրով. զիս արձակեաց, նաև
հորդեաց ինձ ուղի.
Պատուասիրեաց եւ ինձ և տիկ զմորթոյ
զեզին ինննամեայ,
Եւ ըզհողմունս մրրկաշունչս էկից կա_
պեաց 'ի նմին.
Ըզնա հողմոց համբարապետ եդ Արա_
մազդ յաշխարհի,
Զի սանձ կամ թափ տայցէ նոցա իշխա_
նաբար ըստ կամի.
Տիկ զայն առեալ, 'ի լար արծաթ պըր_
կեաց եդ խորս 'ի նաւուն,
Ըզգուշացաւ զի մի արտաքս ոսպըրդեսցի
սիւք մի խուն.
Զեփիւռ միայն թող մեզ արտաքս շնչել
նաւաց օժանդակ,
Սակայն 'ի զուր. զի մերոյին անմըտու_
թեամբ մեք կորեաք.

՝Լուեալք ինն որ տխուր եւ գիշեր տեսայք
զերկիր հայրենին ,
Ի տասներորդն ընկերակալաւս տեսայք
գոլով մերձ ՝նմին .
Ընդ գլխ քուն առ , զի խոնջ էի . յանդ
յիմ ձեռս էր ՝նաւուն ղեկն ,
Չետու ումեք զ՛ ՝ի հայրենիս հասանի-
ցեմք մեք արագ ։
Զրուցէին ընկերքս թէ զարծաթոյ ես եւ
զոսկւոյ ըղձիթեր
Ձիր զԷոլոսին տանիմ ՝ի տուն . եւ այր ա-
ռէր ընդ ընկեր .
« Բամբէ , ընաւից արդոյ է այրս յոր եւ
աշխարհ հասանէ ,
՝Նաեւ փարթամ ՝նա շատ կապուտ ՝ի Տրոյ-
իոյ ՝նդ իւր ածէ .
Իսկ ուղեկիցքս ունայնաձեռն ահա դառ-
նամք մեք ՝ի տուն .
՝Նա եւ Էոլոս պատուաւորեալ շնորհեաց
սմա տիկ թաղուն .
Եկայք տեսցուք զինչ կայ ՝ի տիկն , որ-
չափ ոսկի եւ արծաթ » .
Զայս խօսեցան . եւ հրապուրեալ յաղ-
թեաց ՝նոցա խորհուրդ վատ ։
Լուծին զտիկն . հողմունքն ամէն թափ-
ան ՝ի դուրս եւ խուժէին .
Մրրիկ ահեղ առ ըղձոսս ՝ի հայրենի ՝ի
յերկրէն .

Ծփման յանդունդս և կականեն . եւ ըն-
թափեալ 'ի քնոյն ,
Խորհիմ, արդեօք հասեալ Նաւէն մա՞հ
խնդրեցից 'ի ծովուն .
Կամ թէ արդեօք լուռ ժուժեցից և ապ-
րեցայց տանջանօքն .
Համբերեցի և քող առեալ կայի այնպէս
'ի Նաւին ։
Լան զի անդրէն Նաւք մերկեալք յեղծա
վարեցան .
Ընդ առ ծովափն առեալք ըղձուր , առ
Նաւս 'ի Ճան բազմեցան .
Կերին արբին . եւ Քարոզեան և ընկերաւ
'ի յուղի
Զորայ յԵղոս , գլոխ 'ի Ճան ընդ ընտա-
նեայն յանկողնի ։
Մ՝ըստաք 'ի տուն . Նաւախք առ սեամս .
հիացեալ Նոքա հարցանեն .
« Դաւրձայր , Ոդիսս . զի՞նչ քեզ ազէտք
հասին 'ի չար 'ի Քաջէն .
Մ՝եք զամենայն քեզ հոգացաք յղել 'ի
տուն հայրենին „
Կամ թէ ուր քեզ հաձոյ իցէ ». լուայ ,
կրկնեմ թախծադին .
« Մ՝եղան ինձ ալքս , մեղաւ և քունս .
տուք , բարեկամք , զօրավիգ ».
Աղու բանիւք կարծեմ գթեալ, Նոքա համ
բուն կան լռին .

Ձայն կարդայ հայրն. « Ո՛վ 'ի կղզւոյս,
Եւ այր չուառ, այր 'նըկուն.
Չէ՞ ինձ մարթ զայլն առնուլ, յղել ընդ
որ անմահ դիք ցասնուն:
Ո՛վ երթ 'ի բաց. զի Աստուծոյ ատա
ոխերիմ հասեալ ես ».
Ասաց, վարեաց. եւ' 'ի տանէն. յոգւոց
հանեալ դառնապէս:
'Նաւեմք յառաջ թախծեալ ոգւով, սիրտ
նուաղեալ բեկեալ էր.
Զի մեք ինքնին անմտացեալք, և մեզ այլ
դարձ չերևէր:
Վեց օր նաւեմք, տիւ և գիշեր. եօթնե-
րորդին ծագեաց այգ,
Յերկայնագոյն Լեստրիգոնեան հասաք
Լամին 'ի քաղաք:
Աստ ընդ երեկս ածեալ ըզխաշն հովիւն
հովուին ձայն կարդայ,
Եւ հովուակիցն անդուստ լուեալ առնու
զանդեայսն 'ի դուրս գայ.
Վարձք են կրկին հսկող հովուի յարօտ
անդեայց և խաշին,
Եւ կարգ առեալ արօտք առնջեան գիշե-
րայնոյն հեանեփն.
Ըզնաւակայն առհասարակ ժայռաքար-
ձրացեալք շուրջ պատեն,
Եւ երկուստեք սարասանդեալ ափունքն
անձուկ մուտ գործեն.

Մուծեալք 'ի նեղքս ընդունայնութեան կա-
պեն ընդուաւ մերձ նուաւ.
Չէք անդ ալեք ոչ փոքր, ոչ մեծ. և կան
անծուփք յանդորրու.
Եւ ընդ նաւն իմ կայեալ արտաքս, ընդ վէմ
կապեմ ընդ վերջին.
Կացեալ անդէն, 'ի դիտարանն ելի վե-
րայ 'ի ժայռին.
Գործ չերևէր անդեայց, մարդկան. և-
լեալ յերկրէ ծուխ տեսայք.
Յղեմ լրտես գիտել զինչ արք են հա-
ցակերքն անդ բնակէք.
Յղեմ զերկուս, երրորդ զՔարոզն. յա-
րեան կալան զուղին հարթ,
Ընդ որ սայլորդք զլեռնանց լերանց ա-
ռեալք յոստանն տանէին փայտ:
Պատաջ ելին առ քաղաքաւ Անտիփա-
տեայ վէհ դստեր,
Որ յԱրտակեան յարծաթաբուխ 'ի յաղ-
բերէն ջուր հանէր.
Ջուր քաղաքին անտի ածեն. հարցին
զարքային դուստրն,
Հարցին զարանց. նա մատուցոյց առնէր
ըզտուն ծընողին.
Ի բարձրայարկն 'ի տուն մըտին, գըտին
ըզկինն, սոսկացան.
Կին հարըստի յաղթահասակ խըրու լերին
արանան.

Արդ արդ հրապարակէն կարդայ
ձայն իւր Անափիսա.
Դիմեայ միրադն, կորզեայ ըզմին և յօ-
շատեալ ընկերեայ անդ.
Երկուքն ահիւ խուճապեցան 'ի նաւս 'ի
շատայ տագնապի.
Գոչեայ միրադն, խոյք Լեսոբիդոնք վա-
զեն ասափ և անափ.
Անրաւք 'ի Թիւ, չեն մարդամփայք, այլ
են հսկայք սոսկալիք.
Յորոց ձեռաց, կայեալք 'ի ժայռս,
վէմք արձակին անարիք.
Խօլիւն հասաւ անհընարին նաւատորմին
արհաւրաց,
Ընդ մահ, արիւն, էր աւաննել, և ջախ-
ջախել ըղնաւաց.
Իբրև ձըկունս կարթահարեալս 'ի քըրա-
մնելի կերակուր,
Այնպէս մեռեալքն 'ի նաւակայան եղեն
մահուն անձնատուր.
Սուր յաղցերես հանեալ յայնժամ հասի
զպարանս 'ի նաւէն.
Ձայն տամ խմբոյս Թափ տալ Թիոց և ձո-
ղոպրիլ յարկածէն.
Արդ քաջանեալք խաղան 'ի խորս, նաւն
իմ զերծաւ 'ի վիճաց.
Իսկ այլքն ողջոյն քարակոչկոճք անկան
յիմոց ընկերաց:

Ինդամք զերծեալքս, նաւեմք յառաջ
ընդ մահ մերոյ թախծագին.
Ցեյան կղզին ժամանեցաք, ուր և բնա-
կէր դիցուհին.
Էր ստ Կիրկէն այն քաղցրաձայն, և գե-
ղաճիս վարսք գլխոյն,
Քոյր հարազատ ուշիմն Էտեայ, Ձեռք
լուսատիպն Արեւուն.
ՅՈվկիանուն 'ի դստերէն ծնեալք մօրէն
'ի Պերսեայն.
Աստ 'ի յանքոյթ նաւահանգիստ եմուտ
նաւ մեր լռելեայն.
Մեզ ոմն 'ի դից էր առաջնորդ անդ եր-
կուս տիւս և գիշեր.
Եղեալք 'ի դուրս դեգերեցաք խոնջք և ո-
գւով վշտամբեր.
Ծագեաց երրորդ այգ գեղագէս, առի
ըզսուրն և զաշտեան.
Ելի 'ի դէտ գործ տեսանել կամ ձայն լը-
սել ըզմարդկան.
Կացեալ 'ի դէտն ժայռաւոր, տեսի ես
ծուխ 'ի բացեայ
Ընդ թաւ կաղնիս և ընդ մայրին, ուր ա-
պարանքն էին Կիրկեայ.
Խորհիմ 'ի միտս երթալ դիտել, այլ թուե-
ցաւ լաւագոյն
Դառնալ 'ի նաւն, և ճաշ տալ յընկել
անդ դէտս յորերոյն.

Մերձեալ առ նաւս, և միայնոյս խնամա-
կալու ոմն աստուած
Ընդ բարձրեղջիւր յաղթ եղջերու 'ի նոյն
ուղին արձակեաց .
Նա 'ի տապոյ արփւոյն պապքեալ, մո-
րւոյն 'ի գետն իջանէր .
Հարի՛ նդ թիկունս ընդ ողնայարն և թափ
աշտէն անցանէր .
Անկաւ տապաստ, հանեալ մայիւն դիակ-
նացաւ կենդանին .
Ես թափ առեալ քարշեմ զաշտէն՝ թո-
ղեալ անդէն 'ի գետին .
Երթեալ կորզեմ թուփ և կընիւն, լար
ոլորեմ վեց կանգուն .
Եւ ափինդ արկեալ կապեմ զոտիցն ըզվիթ-
խարի զեղջերուն .
Բարձեալ ընդ ուս գնայի 'ի նաւ օժան-
դակեալ 'ի յաշտէն ,
Զի չէր հրնար միով ուսով բառնալ տա-
նել յաղթ գէրէն .
Արկի 'ի վայր, ասեմ, « Ո՛արք, թէպէտ
տանջեալք 'ի ցաւոց
՝Նախ քան զօրհաս մեք ոչ իջցուք առ բա-
րապան դժոխոց .
Ցոր վայր 'ի նաւն է հաց գինի, մի ծըն-
դեացուք 'ի սովուն » .
Ահքն 'ի ծածկոյ ելին ծովափին, հիանան
ընդ յաղթ եղջերուն :

Յաղեալք տեսլեամբն, լուացեալք ըղ-
ձեռս, խրախճան կազմեն մեծահաց.
Ցրմուսս արփւոյն անոյշ գինեաւ ուռեալք
յառաւօտ 'ի խորակաց:
Րօրէն եմուտ խաւար պատեաց, հան-
գեալք ծովուն առ ափան.
Վարդածըղին ծագեցաւ այգ, ժողով
խմբեալ ձայն կարդամ.
« Թեկալկացուցեալք, ո՞ բարեկամք, լուա-
րուք զարդիս ինձ ողջոյն.
Այս ոչ գիտեմք ո՞ւր իցեն մուտք աշխարհ-
ասփիռ արևուն.
Պարձեալ և ո՞ւր ելք արփենւոյն, այս ես
'ի մէնջ զանխուլ է.
Կամք յերերի. խորհուրդ առցուք, եթէ
խորհուրդ ինչ կայցէ.
Բայց զանգիտեմ. զի դէտ կացեալ ես 'ի
ժայռէն դիտեցի,
Ծով անսահման պատէ զկղզիս կացեալ
խոնարհ 'ի կայի.
Ծուխ 'ի միջոյն տեսի այջք ընդ Թաւ
կաղնիս ընդ մայրին ».
Լուան, բեկան. զՆեստրիգոնին զար-
կածն անդէն յուշ ածին.
Յիշէին և զհոյն ըղՆիկղոպայ ըղ վիրագին
մարդակեր,
Ի գերարտօսր հատան սատակ. այլ զի՞նչ
լալեք շահարեր.

Յերկուս բաշխեալ ըզքաջօրէարն և երկո-
ցուն տամ իշխան .
Միոյն ես պետ, միւսոյն եկաց Նուրիդդբօս
գիւցանմանն .
Տարուբերեալք 'ի ապաստարան արտաքա-
պէս ըզվիճակ .
Նա եւ վիճակին Նուրիդդբեայ . յարեան եր-
թալ 'ն ուհաստակ .
Քաան և երկու ընկերքն 'ի լաց թողին ըզ-
մեզ ցաւագին .
Զօրքն գլխովին ըզյարկ Կիրկեայ 'ի վայե-
լուչ 'ի հովտին .
Յարկ վիմատաշ հարթեալ քարամբք յե-
րեանի գեղեցիկ .
Շուրջ պահ կային գայլք լեռնաստունք և
առիւծունք ամէհիք .
Հրաշամտք և հեգք էին գաղանքն 'ի գեղ
աղու 'ի Կիրկեան .
Ո՛չ յարձակին . քծնեալք զարամբքն եր-
կայն ձեռինք կանգնեցան .
Որպէս քըծնին շունք ըզտերամբ, որ յա-
րուցեալ 'ի կոչնոց ,
Ցանդ 'ի ձեռին կալնու պատառ , պատառ
հրապոյր շանց ոգւոց .
Սոյնպէս զարամբք առակաձիգանք , գայլք,
առիւծունք քծնէին .
Ի տես հրէշիցն արք զառաջինն անդ տա-
կացեալք վերջանեին ։

Կայծն առ անամբս գիշուհւոյն վարսա-
գեղոյն քաղցրաձայն.

Լուսին, Կիրկէ անոյշ երգէր փակեալ 'ի
ներքս յօթեվան.

Ոստայն նիստայր նա լայնատարր յանմա-
հական 'ի ձեռին,

Գիրգ, չնորհաշուք և ձիւնափայլ, գործք
գիշուհեաց երամին.

Պողիտէս պետան արդոյն, ախոյեան, ձայն
ետ արանցն և ասէ.

« Ահա 'ի ներքս, ո՛ բարեկամք, ոք ոս-
տայնեալ քաղցր երգէ.

Երգէ և յարկն արձագանգաւ կրկնէ
ձայնին քաղցրաւիւդ.

Կամ նա կին է, կամ դիցանոյշ. այլ մեք
նորին ձայն տայցուք »:

Լուան, ձայն տան. յարեաւ փութով,
ընդդուրս երաց լուսափայլ,

Հրաւէր կարդայր. մեկին նոքա առ հա-
սարակ խոլացեալ.

Եւրիղոքոս խիթայ ընդ ձայն, մնայ ար-
տաքս անդ միայն.

Նա ընձնեալսն մեծարէր, և տայր նըս-
տոց, բազմական.

Խառնէր գինի ընդ Պրամնեայ, և մեղր առ
եղ գալարի,

Աղեւր, պանիր, և ընդ հացին խառնէր
Կիրկէ դեղ դժնի.

Ախտամժեռեալ էր, զի մոռացցին նոքա զեր-
կիր հայրենեաց.
Եւ հայց, արբոյց. եհար ցըպով, 'ի խո-
զարոյն առ փակեաց.
Կնճիթ խողայ առին նոքա, խանչին,
բուռն և մազմին.
Այլ միտք ամբողջ էր 'ի նոսա, որպէս
յառաջին ունէին.
Փակեալք այնպէս և արտաքուստ. Կիր-
կէն նոցա արկ յառաջ
Կաղին, ազոյն, եղջիւր, 'ի կեր գեռնախնդ-
ալի բուռ խողայ:

Սուռնալեցաւ Եւրիլոքոս, 'ի նաւն եհաս
գուժաբեր.
Ըզդառն օրհաս պատմել զարանցն, թէ-
պէտ կամէր, ոչ կարէր.
Ցաւ դառնութեան հարեալ յոգին, լի
էին աչքն արտասուօք.
Վարանեցաք մեք յայն տեսիլն անդուհա-
կան խորհրդովք.
Ափշեալք այնպէս հարցումն առնեմք,
արդեօք դիպան ինչ արկած.
Նա հուսկ ուրեմն ողի առեալ դոյժ ար-
կանէր զընկերաց.
« Ըստ հրամանիդ, մեծդ Ոդիսեւս, 'ի
կաղնատունն ընթացեալ,
Դըտաք ըզյարկն անդր 'ի հովտին, տա-
յատակ որմափայլ.

Յարկ գեղեցիկ յերկանի. անդ ուր ժրա-
ցեալ յոստայնին
Ի բարձր աւազ երգէր անոյշ. եր դիցուհի
և կամ կին.
Զայն տան նրմա. յարեաւ փութով ըղ-
դուրան երաց լուսարուն,
Հրաւէր կարդայր. խակախորհուրդքն 'ի
ներս մըտին անդ ողջոյն.
Դաւ խինդացոյ, եւ ոչ մըտի. ոչ այլ
ըղձնկերս իմ առնի.
Անհեռացան համանդամոյն, թէպէտ
յերկար դէտ կայի »:
Լուսոյ, առի զաղեղն և սուր զարծաթա-
զանն իմ զուսով.
Զայն տամ նրմա. « Հանապա ուղւոյն ինձ
կարապետ լեր փութով ».
Նա արտասուօք յողջք անկեալ կալաւ զի-
մոյ ըղձնդայց,
Եւ պաղատէր. « Մի՛ անդր, ով քաջ, մի՛
զիս առներ յակամայս.
Բա՛ և ոչ դու դարձցիս այսրէն կամ դար-
ձուսցես զոք անդուստ.
Մինչդեռ օր կայ մեզ ապրանաց, անկցուք
ոտքօք 'ի փախուստ »:
Ասաց. անդէն ձայն կրկնեցի. « Նշրի-
զորէ, նիստ դու աստ,
Կե՛ր, արբ, այր դու. բայց ես դընամ.
հարկ բուռն առնէ մեծատատ ».

Զայս ասացեալ եւ՝ 'ի Նաւէն և Ճեպեցայ
'ի յուղին,
Ընդ ձմեռաւ վայրան 'ի մեծայարկն հասի
Կիրկեայ գեղատունն:
Եւ ինձ հանդէպ ոսկեբարբառնոյն Հեր֊
մէս իբրև պատանի,
Ոյր աղէգք մօրուսոյ նորածաղիկ, ովով
շնորհաշուք պատկերի.
Ձեռն եառ 'ի ձեռն և ձայն կարդաց.
« Ո՞ւր հեծեալդ, ո՞ւր գնաս,
Անդէտ վայրացս այս ապառէր 'ի գիւտ
երթաս ընկերաց.
Նոքա Կիրկեայ յանձուկ նըկուղս իբրև
խոզեան փակեցան.
Եւ ոչ դու ինքն անդրէն դարձցիս, մնացես
խոզացըն յերամ:
Բայց յարկածեդ փրկեմ ըզքեզ. առ
դու զայս դեղ հրաշագործ.
Մուտ առ Կիրկէ. այդ դեղ յոր չար
պահէ ըզգլուխս քո անփորձ.
Ասեմ զնորա կիրս մահահոսս. խառնա֊
բաժակ քեզ տացէ,
Եւ հաց դեղեալ, այլ չազդեսցէ ինչ
քեզ վըհուկդ այդ Կիրկէ.
Այս դեղ հրաշից, զոր ես տաց քեզ,
պարապէ ըզնա. բայց ասեմ,
Երբ ցուպ յերկայն հարցէ ըզքեզ, դու
հան ըզսուրդ յազդերէն.

Թուի ատուր 'ի նա խրրու մխել, նա երկու-
ցեալ կըքեացի,
Առաջ յողոք անկեալ տացէ հրաւէր քեզ
յիւրն 'ի մահճի.
Դու մի հրաժեշտ առնեալ զըզուէր ըղջե-
ցուհւոյն մեծարանս,
Զի արձակուրդ տացէ քոյոց դը-
գուեալ ըղջեղ 'ի յիւր վանս.
Բայց տուր երդնուլ զերդումն մեծ առ
'ի գալոյն գոլ անքոյթ,
Մի՛ զքեզ տեսեալ մերկ 'ի զինուց, մերկ
վասնեսցէ և յուժոյդ ։։
Նայեաց Հերմէս, եա խնձ ըղջեկըն զոր ինք
կորզեաց 'ի հողոյն.
Ցոյց խնձ ըղըռուն, արմատն էր սեաւ,
կաթնին ծաղիկն էր հանգոյն.
Ըզնա Մոլի կարդան աստուածք. մարդ-
կայն կորզել դժուարի 42.
Այլ աստուածոց չէք ինչ անհնարթ. եա
զայն Հերմէս և մեկնի ։
Վերապառնալ 'ի մեծն Ողիմպ նա 'ի կըղ-
զւոյն մայրաքէր.
Եա առ Կիրկէն չոքայ 'ի տունն. սիրտ
իմ ծըփայր և վազէր.
Կացի առ սեամս և ձայն կարդամ դիցու-
հւոյն գեղապանծ.
Լուաւ ըղձայնս յարեաւ փութով, ըղ-
լուսափայլ դուրսն եբաց.

Հրաւէր կարդայ, մըտի թախծեալ. եւ
ինձ չքնաղ բազմականն,
Դաշն հրաշալեօք արծաթազարդ, եդ և
ոսկից պատուանդանն.
Զխառնարանաժամն ինձ համդերձեր, յար-
բումն 'ի սկահ արկ յոսկի,
Արկ և ըզդեղն. մեքենայեալ չարիս նիւ-
թէր 'ի սրտի.
Մատռուակեաց. առեալ արբի. այլ
զիս գիւթել ոչ զօրեաց.
Ամբարձ ըզձայն 'ի հարկանել, 'ի նոյն
սաստիւ զայս ասաց.
« Արի դու արդ 'ի խոզարոյն, խըշտեակ
ընդ քըոյդ առ անդէն ».
Այն ինչ ասաց, ձըգեալ և ես ըզսուր
սուսերն յազդերէն.
Թափ 'ի Կիրկէն յարձակեցայ իբրու
հարուլ մոլեգնած,
Ճըչեաց սաստիկ և ընդ ոլորտս վազեալ
կալաւ զիմ ծնգաց.
Ձայն ինձ կարդայ ողբալաւոր. « Ո՞ ես,
ուստի՞ ես, այր դու.
Ո՞ւր քո քաղաքն, ո՞ւր և ծընողքդ. դու
միայն ինձ անհարկու.
Հիացեա՛լ եմ. որ զիմ ըզդեղն արբեալ
դու ոչ գիւթեցար.
Չեկաց ոք այր, որ արբ զիմ դեղն, և
զնա նախանձ ոչ արար.

Ոչ հանդուրժեաց, որ զայս բաժակ քա-
մեաց ընդ փող կոկորդին.
Այլ քեզ տուաւ այս անվրկանդ ոյժ
տարրացուս 'ի յոգին.
Մինչ արդեօք դու ինքն իցես բազմա-
հընարն Ոդիւսէս,
Զոր սոս գալոց ցանդ ինձ ասէր ոսկե-
բարանունքըն Հերմէս.
Արդ ոչ եկեալ 'ի Տրոյիոյ, ա՛րկ 'ի պա-
տեանդ ընդ ուսեր,
Եւ մեք յանդորր 'ի սէր յողջոյն կացցուք
սաստէն անվեհեր »:

Լուայ, կրկնեմ. « Զիա՞րդ, Կիրկէ,
խնդրես, զի եւ հեզանամ,
Դու որ զընկերս իմ դարձուցեր կընճը-
թակերպ 'ի խոզեան,
Եւ ինձ սաստէն նենգ լարելով հրաւէր
կարդաս յառագաստ,
Մերկել ընդէնս, զի և յուժոյն մերկեալ
արկցես զիս տապաստ.
Քաւ, ոչ դընամ ես յառագաստ, թէ
ոչ երդնուս, դիցուհի,
Զերդումն ընդմեծ թէ ինձ աղուեսք այլ ոչ
նիւթես 'ի սրտի »:
Իբրև երդուաւ զերդումն անսուտ, մըտի
'ի յարկն անհնարին.
Նաժիշտք պարկեշտք քառեակ թուով
ըսպասաւորկուք են 'ի տան.

Հարստունք նորա ծնեալք յաւէժք 'ի յաղ-
բերաց, 'ի մորեաց,
Եւ 'ի գետոց նուիրականն, որ ծով գնան
յալէտանջ.
Մին ժիրաժիր գորգըս չքնաղս անդ 'ի
գահոյս արկանէր,
Ըզծիրանիսն առ 'ի վերուստ, ներքոյ
կըրտուս տարածէր.
Իսկ միւսն հանդէպ սպերճ գահոյից սե-
ղան դընէր արծաթի,
Եւ 'ի վերայ առեալ կարգէր չքնաղ
ըզխանորըն ոսկի.
Յարեաւ երրորդն, 'ի խառնարանն զգի-
նին խառնէր անուշակ,
Էր խառնարանըն արծաթի. բաշխեալ
ոսկի եւ բաժակ.
Չորրորդն ած ջուր, և հուր վառեաց
սանին մեծի 'ի ներքոյ,
Գնալով գըլնայր ջերմանայր ջուրն 'ի մէջ
հրաշէկ պղնձոյ.
Հրաւէր կարդաց 'ի լոգարանն, և զնա
լուանայր 'ի մեծ սանն,
Ի գլուխ և յուս հեղեղ հեղոյր մինչ խոնջ
անդամքս հատանեցան.
Լուաց և օծ անոյշ իւղով, արկ սպերճ
բաճկոն և խլլայ.
Եմոյծ նստոյց յարծաթագամ չքնաղ 'ի
գահ գերակայ.

Եդ 'ի ներքոյ և պատուանդան. և կինն յոսկի յամանոյն
Արկ ջուր ձեռաց յարծաթ 'ի կոնք. և սպաս եհար սեղանոյն.
Ած կին անուանն հաց և խորտիկ շատ համադերձեալ, և ձայն տայր.
Զայն հրաւիրի տայր ճաշակել, այլ հաց ինձ ոչ քաղցրանայր.
Էր 'ի բաղմոց, միտք իմ այլուր խորհուրդ խորհին ձախողակ.
Դիմեաց Կիրկէ. Նայիմ անճաշ 'ի սուգ հարեալ դըժնդակ:
Ո՛դիսեւս, ասէր. « Զի՞ քեզ, Ոդիս, զի իբրև համր 'ի սեղանս
Նստեալ մղձկիս, չուտես չըմպես. թէր. ես դաւ մի այլ խիթաս.
Ո՞չ քեզ երդումն երդուայ անսուտ. զի տակաւին քեզ խիթալ »:
Ասեմ, « Կիրկէ, ընդ իմ թախիծ հիմ քեզ այդպէս զարմանալ.
Ո՞ր այր երբեք այր ուղղամտես բաժակ ըմպէ, հաց ճաշէ
Մինչև զընկերսն յանդորր համեալ և ողջ աչօքն իւր տեսցէ.
Արդ թէ անշուշտ ինձ փափաքես ուտել ըմպել 'ի տան քում,
Տո՛ւր արձակուրդ. ինձէն աչօքս տեսից զընկերսն իմ սիրուն »:

Լուսաւ Կիրկէ, եւ 'ի յարկէն, 'ի ձեռն
ունէր գաւազան.
Երագ ընթացս խողարունոյն, 'ի դուրս
վարեաց հէգ զորեանն.
Ինն ամեաց խոզաց նըման էր կերպարանն
որերոյն.
Եղեն արտաքս, հանդէպ նորա կային
այնպէս անդ ողջոյն:
Շուրջ դայր Կիրկէ, և այլ դեղով օծէր
զայր այր առանձին.
Եւ մազք գիւթեալք նախկին դեղոյն ողջ
'ի մարմնոյն թափէին.
Քան զառաջինն յաղթ քաջառոյգ դար-
ձան նոցա տիպ մարմնոյն.
Ծանեան զիս անդ, յառաջ եկեալ և
ձեռն 'ի ձեռն տան ողջոյն.
Ի ձայն լալեացըն քաղցրութեան մեծ
ապարանքն հնչեցին.
Խանդաղատեալ և դիցուհին ձայն ինձ
կարդայ առանձին.
« Բազմահնարն քաջ Լայերտեանդ դու
արդ 'ի նաւդ երթ արագ.
Առ ծովափամբ առ որերոյն քարշել
ըզնաւն 'ի ցամաք.
Զինչս և ըզդոյս բարձէք յանձաւս և զա-
մենայն ըզկազմած.
Եւ դու փութով դարձիր այսրէն առեալ
ըզխումբ ընկերաց »:

Հաւանեցայ , չոքայ 'ի ծով , գըտի զըն֊
կերս առ նաւին ,
Նստեալք 'ի սուգ ողորմելի յորդ արտա֊
սուս հեղուին .
Զոր օրինակ պատուականին որմք կայծս
հարեալք և խայտան ,
Երբ 'ի փարախին արօտականն պատուակա֊
մայրքըն գառնան ,
Շուրջ գան ըզմնուրբք , բառէք և գաւիթք
ըզխայտացեալն ոչ ամաձէն ,
Նոքա զնոքօք կայտռեալ հարեալ բառէալ
բառաչէն ,
Նմանպէս առքա այն խնչ աներին , լալեօք
առ խս վազեցին ,
Եւ թուէր այնպէս եթէ յերկիրն հա֊
սեալ իցեն հայրենին ,
Մ'ընտեալք ժայռուտն խթակայ բնակա֊
րանուենդն 'ի յաստան .
Այնպէս զինե փարեալ լալեօք ձայն կար֊
դային մթարան .
« Դարձա՞ր ողջամբ . խնդամք այնպէս ,
ո՞ մեր զխուցանդն Ոդիւսէ ,
Որպէս եթէ 'ի հայրենիս հասեալ իցեմք
յԻթակէ .
Ա՛ղէ զարկածն ասա զմերոցն » . խնդրոյն
ձայն զայս տամ արագ .
« Արիք . զի՞ կայք . մեք ձեզ ընդ ձեզ
տարցուք ըզնաւն 'ի ցամաք .

Զինչս, ըղկալեալ եղեալ յանձնաւս,
գնեա իմ ելէք ձեռըմնթաց,
Տեսջիք զընկերս 'ի տան Կիրկեայ 'ի խրա-
խուսթեան մեծաչաց »։
Ասաան այջոյն․ մին Նեբրիդոբ բնաւից ե-
կայ խոյընդակ․
Կաց և ձայնէր․ « Հեդբ, ո՞ւր գընաք․
զի՞նչ այդ ձեր խղջք ձախողակ․
Ի տա՞ն վըհկին, որ կամ առիւծ կամ
գայլ առնէ կամ խոզեան․
Զի մեք նորա ապարանիցն հարկեալ կալ-
ցուք պահապան․
Ո՞չ և ըզմերան 'ի յանձանքն գոչեաց Կիկ-
ղոպն այն վիրաւ․
Ընդ եր և խրոխտ այս Ոդիսեւս, որ
խոլութեամբ կորեան արք »։
Հուր յիս վառեաց Նեբրիդըս․ անդէն
ըղուրին յաղցերէն
Զդեալ, խնդրեմ զարեանտաւուխս ա-
նուլ ըզգլուխն յերանէն․
Ընդ մէջ անցեալ կացին ընկերքս, բար-
բառեցան աղաւարան․
« Թո՛ղ քեզ, գիւցազն․ աստ թողցուք
զայրն՝ աստ կալ նաւուն պահապան․
Տա՛ր դու ըզմեզ 'ի տուն Կիրկեայ »․ ա-
սեն, յառնեն 'ի նաւէն․
Յարեաւ ընդ եւ Նեբրիդոբ 'ի պատանա-
ւեացն իմ յահէն։

Իսկ անդ կիրկէ առեալ զորեամն, լը-
ւաց և օծ յիւղ պարարտ.
Խըլայս ջըքնաղս և պատմուճան արկա-
նոյս արդ և զարդ:
Գըտաք ըզմերան 'ի խրախութեան. խըն-
դան անեալք այր զընկեր.
Ջաղեան յիշեալ արտասուէին և 'ի լա-
լեաց յարկն հնծէր:
Զայն դիցուհին մատեան կարդայ.
" Ըստ են լալիք, մի ողբայք.
Գոմ' առատակից, դիւցազն Ոդիս. և ես
բնքնին եմ' գիտակ,
Դուք քանիօն յանդնդախորն 'ի ծով
կրեցէք 'ի վշտաց,
Նոյն 'ի ցամաք յարանց խժից քանի ա-
ղէտք և արկած.
Այլ արդ արբէք 'ի ճաշ, յարբուցմն. ա-
ռուգացին ձեր ոգիք,
Որպիսիք անդ յորժամ' զԻթակն ըզհայ-
րենիս ձեր թողէք.
Վատեալ էք դուք ցանդ ձեր զաղեան 'ի
յուշ բերեալ դառնապէս,
Չէք ցնծութիւն 'ի սիրտս ձեր, զի շատ
եղէք վշտատես ":
Լուաք ըզբանն, և հաւանեալք տարի մի
ողջ անդ նստաք.
Ի խաղս խորտկաց զոր ամենայն անոյշ
բաժակ քամէաք:

Նա՛ բոլորէր յեղանակաց, ամիսք անցին
և աւուրք․
Ընկերքս յայնժամ զիս մեկուսի առեալ,
տան 'ի ծածուկ․
“ Ո՛չ քեզ 'ի յուշ գայ, հիքացեալդ,
աշխարհդ և տուն բարձրաշէն․
Ո՛չ և ողջամբ զայն տեսանել սահմանե-
ցաւ քեզ արդէն ”․
Քա՛ջ էր խորհուրդն․ անդ ողջ ըղձիւն
ուտեմք, առնումք ըղբաժակ․
Արեգն եմուտ, մութըն պատեաց․ այր
այր առին ըղխշտեակ․
Ես 'ի Կիրկեայն 'ի յարկ պայծառ մտեալ
յողոք անկանիմ․
“ Ըզքո խոստումն ինձ լից, Կիրկէ․ լը-
սէր հեզիկ իմ ձայնին․
Ուղղեայ դէպ զիս․ 'ի տուն ոգիքս իմ և ի-
մոցս փափաքեն․
Դուքս զախոր իմ հաշեն լալեօք, երբ դու
բացեալ ես յինէն ”։
“ Քաջ Լայերտեան, ուշիմդ Ոդիս, մեծ
դիցուհին ձայն կրկնեաց․
Քա՛ջ է․ ոչ ևս 'ի տան իմում դադարես-
ջիք յակամայս։
Բայց նախ 'ի տունն Դըժոխայնոյն պարտ
է ուղի հատանել,
Եւ զանհարկուն Պերսեփոնեայ յարկ խա-
ւարին տեսանել․

Անդ հարցանել խորհուրդ յոգւոյն Թե-
    բայեցւոյն Տիրեսեայ.
Գուշակ է սա, կոյր է մարմնով, այլ միտքն
    'ի բուն ամբողջ կայ.
Պերսեփոնեէն արժա միայն 'ի մեռելոցն
    գանէն
Շնորհեալ ըղձիւ. այլքըն Թափառք
    իբրեւ ըստուերք խուսափեն »:
Ի լուր բանին անկայ բեկայ. յարտասուս
    հասայ ես ողջոյն.
Զարեւ կենացս այլ ոչ խնդրեմ, ըղձայր
    տեսանել զարփենւոյն:
Իբրեւ ըմբերօք յագեցայ, ասեմ. « Կիր-
    կէ, խոր յոգւոց.
Իսկ ո՞ լիցի ինձ առաջնորդ 'ի տունն եր-
    Թալ Դժոխոց.
Ո՞ր մարդ ցայսօր անդ նաւագնաց ըզծովն
    եհաս ալեբեր ».
« Մի՛ տագնապիր, դիւցազն Ոդիս, Կիր-
    կէն ձայնեաց քաջալեր.
Առաջնորդի չէն պէտք նաւուդ. կանգ-
    նեա՛ ըղկայմն եւ բազմեա՛ց.
Բա՛ց զառագաստ, տարցի ըղնաւդ հիւ-
    սիսն յիւրոց 'ի շնչմանց.
Հասեալ նաւդ զՈվկիանոս, ուր խո-
    նարհ կան ծովափունք.
Եւ ուր անտառ Պերսեփոնեայ, ուր
    կաղամախք կան բարձունք.

Ուր շար 'ի շար և ուռենիք անպղտորա-
բերք վարսաւոր ,
Դու անդ ըզնուագ առկայացո յՈվկիա-
նոսն յորձանախոր .
Գնասցես 'ի տուն Դժոխայնոյն տուն
խաւարին մեգամէջ .
Ուր յԱքերոն գետքըն հասեն Պիրիփլե-
գէթ , Կոկիտէս .
Է՛ Կոկիտէս Ստիւգեայ վտակ . և անդ
գոցես քարաժայռ ,
Կարկաջասահ կրկին գետոցըն բաղխելոց
է այն վայր .
Դու անդ , գիւցազն , առաջի անտի մնա
փոս փորեա՛ կանգուն մի .
Եւ շուրջ նուէր հա՛ն մեռելոց , նախ մեղ-
րակաթն ըստ կարգի .
Հեղցես ապա անոյշ գինի , երրորդ
արկցես և ըզջուր ,
Եւ ցան և ցիր ափուեա՛ն անդէն և զըսպի-
տակըն ալիւր .
Աղաղթեա՛ ապա խաղաղականօքն Թափուր
գանկերց և ուխտ դիր .
Համակալ յԻթակ յաշտ մեռելոց կով մի
ամուլ քաջընտիր
Յաղէլ 'ի տան . նաև խարոյկ ընուլ յիրաց
պատուականն ,
Բայց Տիրեսեայ խոյ համակ սեւաւ յաղել
զհօտինն ընտրականն .

Իսկ կատարեալ քո ըղձաղթանս արդոյ
ազգին մեռելոյ,
Յաղեամ ոչխար արու՝ և էգ սեաւ զուգըն
չըքնաղ յՆերերոս :
Բայց դու գետոյն լեր 'ի հոսանան ակըն-
կառոյց անդրըթիթ,
Եւ անդ հոգիք շատ մեռելոց գայցեն առ
քեզ խումբ առ խումբ.
Զոչխարս յաղեալս, ձայն տուր քոյոց,
մորթել այրել 'ի կրակի,
Յուխտ մեծազօր Դժոխայնոյն, Պերսե-
փոնեայն ահարկուի.
Սուսեր մերկեամ, նիստ մի թոյլ տար սին
փուռ գանկկից կառափանց
Մտանել յարիւն, մինչև կալեալ ընդ Տի-
րեսեայ փորձ և հարց :
Ոչ յամեսցէ, գայ քեզ Գուշակն 'ւ իշ-
խանն ազգին, առնել ազդ
Յայտնել զուղին և զչափ նորա, ըղ
դարձն ընդ ծովն ալեատատ » :
Այն ինչ ասաց, և ոսկեգահն երևեցաւ
այգն արփեան.
Աւեալ խոլայ և ըղձաճկոն, արկ նա զի-
նև պատմուճան.
Ինքն ըզկըրկնոցն առ զճինակայլ, զբա-
րականմանն, և զարդոյն,
Ած ըզգօտին չքնաղ ոսկի, և գլխաշուք
արկ գլխոյն.

Յարեալ ընդ տուէն և ընթացեալ ձայն
տամ իմոյ որդերոյն ·
Աղու բանիւք ձայնեմ. «Շատ են վայելք
անոյշ ձեր քընոյն ·
Արիք, երթամք · աղջ է Կիրկէն ». լուան,
յարեան անդ արագ ·
Այլ վա՜հ, զի ողջ և ոչ անդուստ զընկերան
հանի անվըտանգ ։
Էր Եղպենոր այր խոլթամիտ, ոչ քաջ
մարտիկ, մանկագոյն ·
Սա յընկերաց զատեալ 'ի տանն, էր ծան-
րացեալ 'ի գինւոյն,
Ննջէր ուրոյն 'ի զովանալ· լուաւ արտ-
մամբ զաղմկաձայն ·
Զարթեաւ յանկարծ, յուշ ոչ եբեր
զէջս ընդ սանդուղսն ընդ երկայն ·
Թաւալ 'ի յարկէն հոսեալ 'ի վայր շրու-
շանկ ուղան ջախջախէր ·
Դիականացաւ և զըժոխոց 'ի տունն հոգին
իջանէր ։
Խմբի որեանն · ասեմ. «Կարծէք 'ի տուն
երթալ հայրենի ·
Բայց մեզ Կիրկէն վէհ գիւանոյն սահ-
մանագրեաց այլ ուղի,
Ի տուն աճեղ Պերսեփոնեայ, Դըժո-
խայնոյն յարկն 'ի բուն ·
Զի Տիրեսեայ Թեբայեցւոյ խորհուրդ
հարցցուք մեք յոգւոյն »։

Ի լուր բանին իմ սրտառուչք նուաղեալք
և լան, վարսս խլզեն.
Ելի աղաղս ոչ գըտանեն, զի՞նչ 'ի լա-
լեաց շահք իցեն.
Գըտանեմ թաղծեալք 'ի ծով 'ի նաւն հե-
ղումք 'ի յորդ արտասուաց.
Եկեալ Կիրկէն խոյ մի 'ի նաւն և էգ մի
սեաւ եդ կապելոց.
Այնոսս ապա սրացաւ ըղ մեզ. զի ո՞ տես-
ցէ որ զաստուած,
Երբ նա զանձն իւր ծածկէ յաչաց, թէ
աստ կամ անդ ուր գնայ:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ոդիւսէս ցանկորդեալ 'ի պատմութիւն իւր, հասանէ առ Կիմմերեանս, և իջանէ 'ի խորս դժոխոցն։ Կատարեալ զպարտաւոր արարողութիւնս, յերևան գան նմա հոգիք մեռելոց։ Խօսի ապա Տիրեսիաս պատգամախօս խելամուտ առնէ զՈդիւս վասն հանդերձելոցն։ Երևի Ոդիսեայ հոգի մօրն յորմէ իմանայ զվիճակ տանն իւրոյ։ Գան ապա երևելին նախնի դիւցազնուհիք մեռեալք, և ապա դիւցազունքն, յորս Ագամեմնոն, և Աքիլլէս, և Այաս. ապա Մինովս, և Տիտիոս, և Տանտալոս, և Սիսիփոս և Հերակլէս. մինչև յահի մեծի եղեալ Ոդիս, յարուցեալ դառնայ 'ի նաւ իւր։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱ.

ՀԱՍԵԱԼՔ 'ի ծովն անդէն ընթացան ա-
 ռեալ 'ի ջուր ձգեցաք .
Կանգնեմք ըղկայմ և զառագաստ սպար-
 զեմք նաւուն զսպիտակ .
Առնումք զոչխարս . մտաք լալեօք յոգի
 հարեալ թախծութեան .
Այլ առաքեաց մեզ զանդրահեր վէհ
 դիցուհին քաղցրաձայն .
Ընկեր բարի մեզ 'ի յետուստ սիւգ մի
 փչեաց յաջողակ ,
Այս զառագաստն . մեք ըղկազմածն 'ի
 կողմն եղեալ նստէաք .

Հողմ և քեղին վարէր ըզնա ըզաւիւն ող֊
ջոյն ծովագնաց .
Եմուտ արևն . և զճանապարհս առ հասա֊
րակ մութ պատեաց .
Յանդնդախորն Ովկիանոսն նաւ մեր ե֊
հաս 'ի սահմանն .
Անդ Կիմմերեանք մածեալք 'ի մէգ , ու֊
նին քաղաք և խուժան .
Զուրկ են յարփւոյն 'ի նշուլից թէ յամ֊
բառնալն 'ի յերկինս ,
Եւ թէ յորժամ 'ի մայր դառնայ յաս֊
տեղազարդն 'ի յերկնից .
Կան 'ի մթութան . ըզհեգ զորեանն գիշե֊
րամած օդք պատեն .
Անդ մեք ըզնաւ մեր ձըգեցաք , առեալ
զոչխարսն 'ի նաւէն .
Գոտեպնդեալք գնացաք ըստ ափն ովկի֊
անոսն հոսանաց .
Ժամանեցաք մինչ 'ի տեղին զոր գիցուհին
մեզ ազդեաց .
Պերիմեդէս և Եւրիղոք զոչխարսն ունէին
յաղեղի .
Ես սուր մերկեալ փոս փորեցի աստի ան֊
տի կանգուն մի .
Զօն մեռելոց առ մեղրակաթն , անոյշ
գինի և ըզջուր ,
Եւ ցան և ցիր անդ ափուեցի և զսպիտա֊
կըն զալիւր .

Մաղթեմ ապա խաղաղականյս թափուր գանկից ուխտադիր
Յաշտ մեռելոց հասեալ յԻթակ կով մի ամուլ քաջընտիր
Յաղել 'ի տան . նաև խարոյկ լնուլ յիրաց պատուական .
Իսկ Տիրեսեայ խոյ համակ սեաւ յաղել զհօտին ընտրական .
Երբ առ մեռեալս ուխտիւս հայցմանց զուլ աղօթի և զաղատ ,
Զենի զոչխարսն փառայն վերայ և սեաւ արիւն խոխոջայր .
Խումբխումբ յայնժամ յԵրեբոսէն գալ-ին հոգիք մեռելոց .
Խառնին հարսունք , և ամուրիք , և հին-օրեայ զաւք ծերոց .
Կուսանք փափուկք , նոր սգաւորք , և որք շատք խոցք 'ի յաշտես ,
Անկեալքն 'ի մարտ , արիւնշաղախք ու-նին ըզզարդս և ըզզէնս .
Փողով բազում բակ ըզփոսովք ատտի անտի շուրջ վազէն .
Գոչիւն խառնակ , խոչիւն ահեղ , և դեղ-նեցայ ես յահէն .
Զայն տամ խմբոյն զոչխարս յաղեալս մորթել այրել 'ի կրակի ,
Յուխտ մեծազօր Դըժոխայնոյն , Պերսե-փոնեայն ահարկուի .

Եւ սուր մերկեալ՝ նստիմ չբաժամ սին ըղ-
ձեղայքն գանկից
Մտանել յարկսն, մինչև խորհուրդ 'ի Տի-
րեսեայ եւ հարցից։
Նախ եկն հոգին, Նշպենորայ. չև էր թա-
ղեալ ընդ հողով,
Զոր մեք անցայ 'ի տան Կիրկեայ թողաք
անթաղ հապճեպով.
Տեսեալ ըզնա յարտասուս հառայ, խան-
դաղատեալ բարբառիմ.
« Զիա՞րդ եկիր, ո՜վ Նշպենոր, յայս յաղ-
ջամուղջ խաւարին,
Զի՞արդ հետի կանուխ եկիր քան զիս,
որ եմ նաւագնաց »։
Կրկնեաց բանիւ. « Ուշիմդ Ոդիս, անտա՛,
ով քաջ դիւցազանց.
Զիս չար որհաս պատահեաց ՝Քաջին՝ նաև
գինին անպայման,
Ննջեալ 'ի տան յուշ ոչ բերի դէմս ընդ
սանդուղքն ընդ երկայն.
Թաւալ 'ի յարկէն հանեալ 'ի վայր չըղու-
շակ ուղանս ջախջախեր,
Մարմինս տապաստ, հոգիս 'ի տուն Դը-
ժոխայնոյն իջանէր.
Եւ արդ 'ի սէր տարակայից, վէհ ա-
մուսնոյդ պաղատիմ
Եւ հօր ծերոյն, որ զքեզ մանկիկ դը-
դուեալ սընոյց 'ի յարկին,

Նաև 'ի սէր Տելեմաքեայ զոր անդ թողեր
միածին,
Մի՛ զիս, աղբայ, զամենայնացեալս անյուշ
թողցես 'ի դարձին.
Քանզի գիտեմ, դու արդ թողեալ զայս
խաւարին օթեվան,
Աստի ընդ նաւուդ խարըսխեսցես դարձեալ
կղզին 'ի յԷյան.
Մի՛ զիս անլաց և մի անթաղ, մեկնեալ
անտի, մոռասցիս,
Եւ մի ինչ խէթ վասն այնորիկ քեզ յու-
զեսցես դու 'ի գիս.
Այլ զիս այրեալ համդերձ զինուքս,
առուր առ ծովափին ինձ դամբան,
Հողադամբան հիքացելոյս լուր եղիցի և
յապայն.
Զայս կատարեալ նաև ըղթին վերայ շիր-
մին զիմ վարսեայց,
Որով 'ի կեանս թիավարեալ գնայի ընդ
իմ ընկերաց »:
Լուայ, կրկնեմ. « Այո՛ զխնդիրդ հե-
քացելոյդ ողջ լըցից ».
Այսպէս անդէն մեք նստէաք, բանիւ
զրուցեալք թախծալից.
Ես յապաժոյժ արեան վերայ կալեալ
ըզ սուրն իմ սուսեր,
Եւ ընկերիս ուրուն ընդ իս 'ի հանդիպոյ
շատ խօսէր:

Եկն անդ հոգին և Անտիկլեայ մօրն իւր
սիրուն մեռելոյ
Աւտողիկի դուստրը քաջին սա ՚նազելի և
արդոյ .
Երբ յԻլիոն ես չուեցի Թողի ըզնա կեն-
դանի ,
Եւ արդ անսեաւ լացի ըզնա աղէկիզեալ
՚ի յոգի .
Այլ ոչ և մօրն իւր Թոյլ տայի , Թէպէտ
յոյժ էր ցաւալից ,
Մօտել յարիւն , մինչև խորհուրդ ՚ի Տի-
րեսեայ ես հարցից :
Չա՛ եկն հոգին և Տիրեսեայ կալեալ ոս-
կի գաւազան .
Ծանեաւ ձայն իմ , « Հի՛մ դու , ո՛վ հեզ ,
լքեր ըզլոյսըդ արփեան .
Զի՞ սա եկիր յայց մեռելոց , վայր ան-
սանել ապաստանելոյ .
Արի ՚ի բաց լեր ՚ի փոսոյդ , տար և ըզ-
սուրդ զայդ ՚ի բաց .
Արբից արիւն , և պատմեցից Ճշմարտա-
խօս քեզ պատգամ » .
Ես վերքաշեալ զարծաթագամ սուրն
իմ եսու ՚ի պատեան :
Արբ յարենէն նա ապաժոյժ , և խօսե-
ցաւ ինձ այսպէս .
« Եւ արդ դու քեզ դարձ անդորրիկ խըն-
դրես ո՛վ քաջդ Ոդիսեւս .

Այլ քեզ զուգեր մի ոմն տառապեալ յար-
գարեսցէ զժուարին.
Քեզ խոչ ընդ ոտն է Պոսիդոն, ոխակա-
լն զայրագին.
Ցանկաս զի դու կուրացուցեր զորդին
նորա սիրական.
Բայց և այնպէս չարչարանօք հասջիք 'ի
բուն ձեր ժամին.
Միայն եթէ սանձ քեզ դիցես և ընկե-
րացդ դասին,
Երբ քաջակուռ հասցես նաւաւ 'ի Թրի-
նակեան 'ի կղզին 43.
Զերծեալք ծովէն գտջիք յարօտ զան-
գեալս զօղիս բարերուն,
Հօտք են Արեւուն որ բոլորից տեսող, լը-
սող է ամենուն.
Թէ անդ նոցա ոչ դրժեսցես ուղղոյդ ե-
դեալ մտադիր,
Թէպէտ և վիշտ կրեալ բազում հասջիք 'ի
բուն ձեր երկիր.
Իսկ եթէ դրժես, նաւուդ կորուստ, քեզ
և քոյոցդ ես կարգամ.
Եւ դու թէպէտ զերծցիս ողջամբ, չա-
րեաւ դարձցիս անագան.
Ողջ կորուսեալ ըզքո ընկերսդ օտար նա-
ւու ծով հասցես,
Զարիս 'ի տան, զորըս գոռոզս և հաց-
կատակըս գտցես.

Նոքա ցեցք տանդ և ամուսնոյդ են տարփածուք օժտարեր ,
Թէպէտ նոցուն ըղխնուԹեանցն ըղձելէժն առցես անվեհեր ։
Իսկ երբ տապաստ արկցես զանզղեխս Թէ խարանեալ Թէ յայտնի ,
Առ քեզ Թի մի արուեստականօք այնպէս անկցին դու յուղի .
Մինչև հասցես դու առ մարդիկ որ ոչ ըղձով ճանաչեն ,
Եւ ոչ ազխ համեմելով ինչ կերակուր ճաշակեն .
Ո՛չ ճանաչեն զինչ նաւքն իցեն կարմրաներկեալքն ՚ի խելաց ,
Զինչ և քաշանք արուեստականօք , որք Թեք Թռուցիկք են նաւաց .
Տաց և նշան քեզ քաջայայտ զի դու ճշդիւ գիտասցես ,
Երբ ուղևոր ոք ընդառաջ ելանելով հարցցէ քեզ .
Ա՛յր դու , զինչ է այդ հեծանոյդ զոր յաղԹ ՚ի յուսոյդ տանիս .
Վարսեա յայնժամ ըղԹին յերկիր , Պօսիդոնին տուր ձօնիս .
Խոյ մի , ցուլ մի , վարազ արու , տացես նըմա ՚ի յաշտից ,
Եւ հարիւրեկին յաղեսն ՚ի տանդ երկնաբնակաց անմահից ,

Կարգ ըստ կարգէ բնաւեցյաղեալ. և գու-
  գերծեալց 'ի ծովէն
Խաղաղ մաշուածք խոր ծերութեամբ
  մեռցին 'ի տանդ յորհամէն.
Նաև ըզգեն քո ժողովուրդք երջանկացին
  փարելի,
Այսպէս ասաց անսուտ պատգամ". — լու-
  այ և ես կրկնեցի:
"Անշուշտ աստուածք, ո՛ Տիրեսիէ, զայս
  կնքեցին. հնազանդ եմ.
Այլ ասա ինձ, որ զմեռելոյ մօրս ըզհո-
  գին աստ գիտեմ.
Զի՞ մօտ յարիւն գայ լուռ նստի, երես
  որդւոյն իւր չառնէ,
Ոչ և խօսի. ասա՛, արդեօք, զիա՞րդ նա զիս
  ծանիցէ":
Կրկնեաց նա ինձ. « Լո՛ւր բան հեշտին,
  լե՛ր խելամուտ նոյն հետայն.
Զո՛ր որ մեռելոց մօտես յարիւն, նա քեզ
  ճշգրիտ խօսի բան.
Իսկ ում խանդգաս, նա լուռ մնջիկ 'ի քէն
  'ի բաց ընկրկի".
Զայս ինձ հոգին Տիրեսիայ պատգամա-
  խօսն արքայի.
Դարձաւ ապա 'ի տուն խաւար անդնդա-
  պետ Պղուտոնին,
Իսկ ես 'ի վայրին անշարժ մնացի, մինչև
  մատեաւ անդ մայրն իմ.

Արդ յապաժոյժ սեաւ յարեննէն, և խոկ
և խոկ ծանեաւ զիս.
Զայն եռ լալեօք. «Դու ո՛վ որդեակ զի-
նորդ եկիր աստ առ իս.
Այս 'ի խաւար աղջամղջեան, դու ստա-
կաւին կենդանիդ,
Որ կենդանեաց գժնդակ է գալ 'ի տուն
յայս խորափիտ.
Գետք աՀագինք կան անջրպետք, կան և
Հասանիք առակալի.
Եւ առաջին Ովկիանոս, զոր Հատանել չիք
Հեռի.
Անանց են խորքք Հեռեակքն, թէ քա-
ջակուռ չունի նաւ.
Գա՞ս դու թերևս 'ի Տրոյիոյ Հասեալ թա-
փառ ծով անդրաւ.
Նաւարդնացիկ լեալ ընկերօք միգ ժամա-
նակ 'ի ծովին,
Ո՞չ եա Հասեր դու յԻթակէ, ո՞չ եա ան-
սեր զամուսին »:
« Ո՛խ, ով մայր իմ, ձայն կրկնեցի,
յայս տուն խաւարի Հարկն եբեր,
Զի եւ խորհուրդ 'ի Տիրեսեայ յոգւոյն
Հարցից անմեՀեր.
Ո՛չ եւ Հասի յԱքայիս, 'ւ 'ի տուն,
ցանդ թափառիմ վշտացելոյ,
Երբ յՆշխան ընդ Ատրիդեայ չըքայ կը-
ռուել ընդ Տրովեանց.

Այլ ադէ ինձ ասա, մայր իմ, պատմեա՛
այժմէն ինձ ազգոյն ,
Զխո՞րդ ըզքեզ առ յօրհասից երկայնա-
ձիգ քուն մահուն .
Արդեօք յերկա՞ր ժամանակաւ դու ծիւ-
րեցար 'ի յախտին ,
Թէ Արտեմիս աղեղնաւորն յանկարծ
հար քեզ գիրգ փըքին ,
Ասա՛ զհօրէս և զիմ որդւոյս, 'ի ձեռս
նոցա՞ են ինչք իմ,
Եթէ այլ ոք գրաւականեաց և չունին ակն
իմ դարձին .
Ասա՛, զկնոջ միտք են անմոռանոյս , ընդ իմ
մանկանս նա մնա՞յ ,
Պահէ՞ ըզտունս , կամ թէ այր յոյն յա-
ւագանւոյն ած ըզնա " ։
" Քոյ ամուսնիդ , ինձ պատասխանէ մայրն
իմ արգոյ եւ անդէն ,
Մինչ կայ 'ի տանդ թախծեալ ոգւով , և
չէ մեկնեալ 'ի յարկէն .
Ինքն 'ի յարտասուս , և ցանդ նորա են աւուրք ,
գիշերք ցաւագին .
Չև ևս 'ի ձեռս է օտարաց քոյդ գեղե-
ցիկ կարասին .
Տելեմաքոսն 'ի յանդորրու պահէ զկա-
լուածս հայրենեան ,
Եւ 'ի կոչունս ատադաց ունի և նա բազ-
մական .

Հրաւէր չըքով յամենեցուն պատուա-
ւորեալ գայ առ նա ,
Բայց հայրըն քո ընակէ յանդի և 'ի քա-
ղաքս ոչ երթայ .
Անդ ոչ մաշիճ, ոչ անկողին, ոչ խըլայք
և գորգք փարելի ,
Այլ ձմերանի նընջէ հայր քո 'ի ծառայ-
ից 'ի յարկի .
Առ կրակարանն անկեալ յաճիւնս, զան-
ձամբ ունի գըրգըլեալ
Մինչև յամառն, և մինչ դալար գայ աշ-
նայնոյն եղանակ .
Յայնժամ նըմա ողկուզաբեր այգւոյն ընդ
վայր դալարին ,
Ի տերեւոց թօթափելոց խշտիս կազմեն
յանկողին .
Անդ նա անկեալ յոգւոց հանեալ ըզքո
զօրհասն արտասուէ ,
Ցօղի հարեալ է դառնագէս և ծերու-
թեամբ հաշեալ է .
Նըմանգէս և զիս վառեաց օրհաս , և ոչ 'ի
տանս Աբրամեան
Այն անվրիպելին աղեղնաւոր լռիկ վիրաւ-
եհար զիս .
Եւ ոչ դարձեալ երկար անձըկեալ յախտ
ծընդեցայ դժուարին ,
Ախտ ծիւրական որ յանդամանց աննու-
քաղէ ըզհոգին .

Այլ քո անձուկն և բարքդ արգոյք, ո՛վ
իմ ազնիւդ Ոդիսեւս,
Եւ հոգս ըղձին, զիս զրկեցին քաղցր
կենացս յարևէ ։
Այս զայս ասէր, և իմ անդուստ խոր-
հուրդք սրտիս տայէին,
Ո՜վ թէ լինէր ինձ գիրկ ընդ խառնու-
նել ըզմօրս ըզհոգին.
Երիցս 'ի նա դիմեալ անձկով սիրտ իմ
փարել փափագէր,
Երիցս յիմոց ել 'ի ձեռաց իբրև երազ և
ըստուեր.
Ցաւ սաստկութեան հարաւ 'ի սիրտս,
յոգւոց հանեալ բարբառիմ.
« Մայր իմ, ընդէր խուսես յինէն և ոչ
ըմբռնում զանձնուկն իմ.
Թո՛յլ տուր գրկեալք և 'ի գըժոխս յա-
գուրդ տացուք մեր սըգոյն.
Արդեօք ըստուեր ինձ յոյր յղեաց Պեր-
սեփոնէն այն արգոյն ։
Մայրն իմ արգոյ կրկնեաց, « Աւա՜ղ,
հէգ դու բնաւից իմ որդեակ,
Վէհ Պերսեփոնն ոչ 'նենգեաց քեզ. այս
մեռելոց է վիճակ.
Մարմինք, ոսկերք, և 'նեարդք չիք առ.
Թափ մեծ հրոյն զայն ծախէ.
Երբ պատառինն շունչըն զոսկերացն զըս-
պառեալս ըզքանէ, –

Հոգին սրտնոյ խրլու երազ. այլ դու աս֊
 տի էլ 'ի լոյս.
Եւ խնլամնոս զայս ամենայն գնացեալ
 կընոջ սծ 'ի յուշ»։
Մ՝ինչ եւ խօսիմք, հան Պերսեփոնն 'ի
 վեր ըզդստերս բամբշաց.
Էին նոքա կանայք արանց, էին դըս֊
 տերք սաւաղաց.
Առ սեւ արեանն զան եւ խռնին. խոր֊
 հիմ զիարդ ըզմին մի
Հարցից նոցա. եւ խորհրդոյս եղս հնա֊
 րից զայս դըրոյ.
Մ՝երկեալ ըզսուրս, թոյլ ոչ ետու ա֊
 րեան ըմպել խմբովին.
Նոքա նորա կարգաւ մատեայք ինձ զազգն
 իւրեանց պատմէին.
Հարցումն առնեմ ես բոլորից. եւ նախ
 տեսի ըզՏիւրէ.
« Դուստր եմ, ասէր, ես հզօրանոյն վեհ
 Սալմոնեան հայր իմ է.
Կին զինքն ասէր Եոլեան Կրեթեայ, սի֊
 րեաց ըզգետն Ենիպեոս,
Գետ գեղեցկագոյն ծաւալ 'ի դաշտ բնա֊
 կից գետոց գեղահոս.
Ի սորա վտակսն թարթափէր. եւ Պո֊
 սիդոն համանման
Ընկողմեալ 'ի յորձանուտ գետոյն հանգ֊
 չէր 'ի բերան.

Դիզան ալիքըն ծփանելք լեռնակուտակ
ամբարձեալ,
Հողմնացեալ ծածկեալ զաստուած և
զկղզին անդէն թարթափեալ.
Լոյծ ըղձաւոին ըղխուստականն, քան մի ե-
հեղ ըղձոմնս,
Յետ այնորիկ ձեռըն տուեալ զայս ինչ
առ նա խօսեցաւ.
Խնդամ դու արդ, ՝ի դալ տարւոյս
մայր եղիցիս զաւակաց,
Հոգ մայրորէն ած և սընո. չէն մանուք
ունայնք երջանկաց.
Ե՛րթ արդ ՝ի տուն, զխաւեամ միայն, և մի
ըղբանդ անուներ այդ.
Նայց, ես եմ վեհ Պոսիդոն. սուզաւ ՝ի
ծովն ալէստատ.
Ծընաւ զՊեղէս և ըզ ՝Նեղեա քաջ պաշ-
տօնեայս ըզԴիոս.
Բնակէր Պեղէս յերկիր անդորր ՝ի խաշ-
նաւէտն Յաւլքիս.
Պիւղն յաւազուտ բնակէր ՝Նեղեւս. բայց
վեհ Տիւրէ Թագուհին
Ծընաւ Կրեթեայ զԷսոն, զՓերէս, և
զԱմիւթոն քաջամին:
Տեսի ապա զԱնտիոպէ, և էր սա դուստր
Ասոպի.
Ամոլս որդիս յԱրամազդայ ծընաւ զԱմ-
փիոն, ըզԶեթի.

Սպա զԹեւրէն զեօԹնագըռնեան հիմ_
նեալ, բրգունըս կանգնեն.
Զի չէր բնակել, Թէպէտ և քաջք, ան_
բուրգն 'ի մեծն 'ի Թեւրէն:
Տեսի ապա զԱմիխարոնին պերճ զամու_
սինն Աղկմենա,
Որ մայր եկաց 'ի Դիոսէն առիւծասպրան
Հերակլեայ:
Անդ Կրիոնեայ և վեհ այն դուստրն ինձ
Մեգարէն եկն 'ի տես,
Զորած 'ի կին յանձնապաստանն քաջա_
կորովն Հերակլէս:
Զէպիկաստէն կին գեղաւոր զԻդիպոսին
տեսի մայր,
Այն որ ըզմեծն յանցեաւ եղեռն անգի_
տացեալ չարաչար.
Ամուսնացեալ իւրում որդւոյ հայրա_
սպանին եղև կին.
Սակայն աստուածք փութով զեղեռն
աշխարհագոյժ արարին.
Այլ Իդիպոս 'ի չէն Թեւրէն տարեալ
ցաւոց և վշտաց,
Դից խորհրդովըն գժըդհի Թագաւորէր
Կադմեանց.
Յատակըլուկ մայրն 'ի խեղդան կախեալ
ընդ բարձր ընդ գերան,
Էջ զըժոխոցն 'ի դրանդխ պղընձանիգս
անստան.

Այլ հէգ որդւոյն նա ցաւ բազում Թող
ըղձերի և ըղձանք,
Որչափ ինչ շատ տան չարչարանս մօր
վրէժխնդիր Երինեանք։
Տեսի զՔլորիէն չքնաղագեղ, զոր ած Նէ_
ղեւս իւր ՚ի կին
Յօժիտ ամբաւ. էր նա կրտսեր դուստր
Իասիդեան Ամփիոնին.
Սա յՈրքոմէն Մինեան, ՚ւ ՚ի Պիւղ ար_
քայ եկաց քաջազօր.
Եւ ծնաւ Քլորէ զաւակս արգոյս ըզՔրո_
միոս, ըզ Նեստոր.
Ծնաւ և զքաջ Պերիկլիմէն, և ըզ Պէ_
րէն հրաշալին
Կոյս անմրցման. դրացեաց բնաւից էր նա
խնդրելայ ամուսին.
Նեղեւս ըզ կոյսն ոչ տայր ումեք, բայց
որ Փիւղակէն ՚ի գաշանէ
Առեալ զանդեայս գալարեղջիւրս, լայ_
նաճակատս, յինքն ածցէ.
Զեռանդարկ դըժար. պահէր զանդեայս
քաջ կորովին Իփիկլէս.
Բայց խոստացաւ զայս մին միայն վէհն այն
գուշակ Մելամպէս.
Այլ մեծագոր կամքին աստուծոյ խստա_
մանն եղև խոչընդակ,
Եւ կապեցին անլոյծ սարեօք ըզնա հո_
վիւքն այն վայրագք.

Ամպք, աստղք, և երամակք լուցին զեւ-
րեանց ընդհանդէս.

Ամ շրջեցաւ, եղոյծ առա ընդոս հուժ-
կուն խփիկլէս.

Քանդի զպատրաստանս գուշակութեան բար-
բառեցաւ նա ողջոյն.

Այսպէս ապա եղև յերուսղեմ Արամազդայ
խորհրդոյն:

Տեսի զԼեդէ, որ Տինդարի ծնեալ ըն-
քաջս այս բանիւք,

Ըզճախորոխս զայն ըզԿաստորն և ըզՊո-
ղիւկ քաջ ըմբիշ.

Ի ծոց երկրի գոգցես իբրև ըզկենդանիս
կան սոքա,

Եւ ընդ հողով պարածածկեալք պա-
տուականին 'ի Դիոսայ:

Փոփոխս ասուրբք մերթ կեան նոքա,
մերթ և դարձեալ մեռանին.

Եւ այսպատուանակ են աստուածոց համա-
նմանեալք մեծանկին.

Ըստ նըմանեն զԻփիմեդէ ասեն ըզկին
զԱղոյեայ.

Սա բան ծնաւէր զանկանելոյն Պոսիդո-
նին ընդ նըմա.

Ծնեալ կրկին սա քաջորդիս. բայց կար-
ճօրեայք վախճանին.

ԶՈդոսն ասեմ ըզդիւցազնն և զԷփիալ-
տեայն.

Սոքա անչափ սոսկալիթխարք երևեցան
յաշխարհի ,
Նաև անչափ չքնաղագեղք յետ հոյակա_
պին Հայկին . 44
Դեռ ինքնամեայք բարուարացան 'ի լայն
ինըն կանգնաչափ ,
Եւ աճեցին բըլուրք մըսեղինք յերկայն ի_
նըն գըրկաչափ .
Սոքա յՈղիմպ և անմահից բազմատա_
րիս կալեցին ,
Կռուոյ խառնուրդ յուզել նոցա բազմա_
շըշուկ ըղձալորին .
Յատակնեցան դնել զՈսսան Ողիմպոսին
'ի վերայ ,
Եւ Ոսսային ըզսարն ըզմեծ զանտառա_
խիտըն Պեղեայ . 45
Զի սանդղաձև ելանելի ուղ գործեսցեն
'ի յերկին ,
Եւ գործէին թէ էր նոցա հասեալ յար_
բունս հասակին .
Այլ քաջորդին Արամազդայ կորուսա
նեւթեաց անդէց ,
Զոր Լէտոնէ ծընաւ նըմա գեղագի_
սակն 'ի վարսից .
Կորոյս զնոսա մինչև ծաղկեալ 'ի քունս
նոցա մէգք մօրուաց ,
Եւ գիրգ ծընօտք ծածկեալ նոցա գե_
ղաբուսիկ յաղուամազ :

Տեսի զՓեդրէ, և ըզՊրոկրէ, զԱրիադ-
նէն գեղեցիկ

Ըզդուստրն ուշիմին Մինովսի, զոր 'ի Կրե-
տայ ած Թեսևս.

Ած նա 'ի զուր 'ի սուրբ Աթէնս, զի զնա
կանուխ Արտեմիս

Առ 'ի Դիա կալաւ կղզւոջն, և գուշակն
էր Դիոնիս:

Տեսի զՄերա, ըզԿլիմենէն, զԷրիփիլէն
չարագդեաց,

Որ ընդ ոսկւոյ ըզախրելին զիւր զամուսին
վաճառեաց:

Այլ թէ զքաջաց կանայս, զդստերս
'ի կարգ առնում զամենայն,

Ի լուր ձայնիս չէ բաւական մեզ այս գի-
շերս տառապեալ:

Ժամ 'նջելոյ հասեալ է ինձ կամ անդ 'ի
նաւն կամ աստէն,

Այլ զիմ զուղին են աստուածոց և ձեզ
խնդրին յանձն առնել,,:

Ասաց, լռեաց. ընդ մութ սըրահն առ
հասարակ լուռ կային

Զմայլեալք 'ի լուրն. մինչև ձայն ետ մեջն
Արետէ ատենին.

" Արդ ո՞ Փէակեանք, այդ զիարդ թուի
ձեզ այս աստ այր,

Ի տիպ զինացն, 'ի յասադոյթն, 'ի տըն-
կակիցն իւր հանճար.

Դա հիւր իմ է. այլ բաժանորդ այր այր
'ի ձէնջ է սպասուոյն.
Մի՛ զդա հալածեալ մի՛ ձեռն ուժոյն ար_
ձակեսջիք դուք 'ի տուն.
Դա կարօտ է. ձեր յարկք բարեաց 'ի
դից շնորհաց զեղանին ,,.
Ասաց դշխոյն. և Եւքենոս դիւցազն եա
ձայն ծերունին.
Այս ծեր արդոյ առ. փէակեանս, " Ո՛
բարեկամք իմ, ասէր,
Ոչ վայրապար, ոչ ապարան խօսի ուշիմ
դշխոյն մեր.
Օ՛ն ձեռն 'ի գործ. բայց մեք մնամք
ձայնին 'ւ արդեանց արքային ,,.
Լուաւ արքայն, և սպասաւորան զայս ինչ
կնքեաց յատենին.
,, Լիցի այդպէս, Թ' եւ կեամ իշխեմ նա_
ւամարզիկ փէակեանց.
Այլ հիւրս արդոյ ժոյժ ունիցի, Թէպէտ
ձեպէ ինքն 'ի դարձ.
Մինչ 'ի վաղիւ կահեմ զընծայս, ա_
պըսպարեմ եւ զուղին
Իմ որերոյս, և ինձ յաւէտ, որ իշխան եմ
քաղաքին ,,:
Ձայն եա Ոդիսեւ. " Ալկինոէ, արքայ
բնաւից գերազանց.
Թէ և ամ մի հրամեք մնալ, կազմել զու_
ղիս, տալ ընծայս,

Շա՜հ մեծապէս գիտեմ ինձ զայս, թէ
    լիաձեռն յիմ աշխարհ
Դարձայց, գիտից անդ շուք, եւր մեծ,
    յիմ Իթակէն առապար ,,։
Կրկնեաց արքայն. ‘‘ Ո՛ Ոդիսեւս, չու-
    նիմք ինչ խէթ մեք ընդքէն
Թէ խորտուբիկ պատրեօ ըզմեզ, որպիսի
    ոք բազումք են.
Շատ խակ երկիր սնուցանէ մարդիկ սըփ-
    ռեալ աստ եւ անդ
Շաղուաշուրթն, որ կցկցեն բանըս
    մտատեալ քըմադարդ։
Բայց դը ըզքեն ոչ խիթացի. պերճ ես
    'ի բանս 'ւ ողջամիտ,
Որ զվէպն Յունաց, զերթ գնչրգահանն,
    բան ճառեցեր մեզ ճշգրիտ.
Ի նոյն եւ զքոյ ըզ չարչարանս. բայց արդ
    դու պատմեա մեզ,
Տեսեր եւ զդք 'ի քաջազանց որ արարին
    չու ընդ քեզ,
Զու յԻղիոն քեզ մարտակիցք, եւ անդ
    անկան յորհանէ.
Ազէ պատմեա. երկայն գիշերս ոչ մեզ
    փութով կարճանէ.
Ժամ ննջելոյ չէ է հասեալ. ճառես ինձ
    գործս հրաշալիս.
Ցայգ ես ժամժամ թէ դու ժաժես ըզ
    վիշտըս քո պատմել ինձ ,,։

Կրկնեաց Ոգին. « Ո՞ Ադելինէ, արդեօք
    բնաւ իցես դու արդոյ.
Ժամանակ է շատ խօսելոյ, ժամանակ է
    և քնոյ.
Բայց զի դեռ ես ցանկաս լսել, քան-
    զայս քեզ ոչ զլանամ.
Պատմել զայլեւս նիզակակցացս, որք յետ
    դարձին հիւծացան:
Ասե՛մ, նոքա զերծան Տրովլեանց գերաշ-
    խարան 'ի մարտէ,
Եւ 'ի դարձին անկան տառապանս 'ի չար-
    արուեստ կնոջէ:
Որդ ոսկեախոհն երբ Պերսեփոն զհոգիս
    խոնարհեալս ընկերացն
Իշխանապար աւելալ զնոսա յայս կոյս
    յայն կոյս վարատեաց,
Հան ինձ 'ի վեր զԱգամեմնոնեայ հոգին
    թախծեալ ցաւագին,
Ի նոյն և զայսն որք ընդ նմա անկան 'ի
    տան Եգիսթեայ: 46
Արբ յարենէն, ծանեաւ նա զիս. լայր
    արտասուս յորդ ցողէր.
Ձգեաց յիս ձեռն հպել ցանկայր, այլ
    կար և ոյժ ոչ ունէր.
Ո՞ւր այն նորա նախկին կորովն յանդամսն
    առոյգ և ճկուն.
Տեսի ընդոստ, արտասուեցի տարեալ 'ի
    գութ և յանձուկ.

Ձայն յանուանէն կարդամ առ նա ․
« Ասրիդ, ազգայ գերարուն,
Ո՞ր օրանջառ պարտեայ ըղձեղ երկայնա-
քուն 'ի մահուն ․
Արդեօք զարդայդ ընկճեաց 'ի նասս իշ-
խան ծովուն Պոսիդոնի
Ուժգնահնչական ասառնիկ հողմովք, գիզան
ալեօք բարձրայոն ․
Արդեօք ըղձեղ 'ի ցամաքի հարին ջոկեր
թշնամեաց,
Զանդեայս յաւար վարելով քո, հօտ գե-
ղեցիկ զոչխարաց,
Կամ երբ արդեօք մարտ մղէիր պահել
ըզտունդ և զատաան ։
Զայս ես հարցի ․ նա խօր յոգւոյ հա-
նեալ ետ ինձ պատասխանի ․
« Դիւցազն Ատրիւս, բազմախորհուրդ ․
ոչ Պոսիդոն զիս ընկճեաց
Ի բուռն հողմոց ․ ոչ 'ի ցամաքս խուժք ո-
խերիմ թշնամեաց ․
Այլ ինձ Եգիսթ և կին իմ ժանտ 'ի տան
տուեալ կերակուր
Մահ նիւթեցին, որպէս թէ ոք փողոտէ
զեզն 'ի մսուր ․
Այսպէս մեռայ ես հեշտաբար, և շուրջ
զինև խումբ որեան
Մի ըզ միով փողոտեցան զերթ պարա-
րեալ ըղխոզեան ,

Որ 'ի սեղան առ՛ն հարըստի զենեալք յօ-
շին պատրուճակ,
Ի հարսանիս կամ 'ի խնճոյս կամ 'ի կոչ-
նոցն հանդիսական:
Ըղձահ բազմաց անկեալ տրոյն, կամ թէ
'ի մարտ դու տեսեր,
Այլ դու յայնժամ զինն յանկն արկեալ,
աղեալք սրածիգ տաչորեր.
Մեք 'ի յարկին զհատ նարանոք և զհազա-
րից սեղանովք
Անկեալ տապաստ, և անդ յատակն ներ-
կէր յարեանն մեր յորդ.
Նման զհեծիւն ընդ Կասսանդրեայ ընդ
Պրիամոսի ընդդասեր
Զոր մօտ առ իս, ո՜հ, չարանենթ Կղիտեմ-
նեստրէն խողխողէր.
Ահա ես տապաստ յոգւոց պարզել ձեռն
իմ 'ի սուր դանդաչէր.
Նա և զայն ժանտ լիրբն աներես, յինէն
'ի բաց խուսափէր.
Ձեկաց ինձ նա մօտ իջեալ առ դժոխոց
բարապանն,
Ձեկաց ձեռօքն փակել զիմ զաչս, և յար-
դարել զիմ բերան:
Ո՜վ, չէք ժանտ սխա, չէք լիրբ անգութ
քան ըզկին մի այսպիսի,
Որ այսպիսի ինչ մթելս չարեաց կու-
տեալ իցէ 'ի յոգի.

Այն ինձ կինս աղուոր ամօթեայ զոր
ինձ ըղձաս կոյս ածի .

Մահ իւրում սան արուեստակեայ , ում
ակն երբեք չունէի :

Եւ ասէի , յոլորդն որդւոցս և ծառայիցս
գալ 'ի տուն ,

Այլ կինն արևանց մերկենագործն անձին
ամօթեայ վասն անուն .

Նա և յապայս եղ նա արտա կանանց աղ-
գին իգական ,

Եւ կորացոյց անօթապարտ և ըղպար-
կեշտաղն անդամ ,, :

Լուայ ես զայն , յորժամ հանի . " Բամբ
ըղձեան Նարեկեանց

Զխարդ տատիկ աւեաց Դիոս 'ի կանան-
ւոյն խարանաց .

Ո՞չ 'ի պատճառս և հեղինեայ կորեալք
բաղումքս հելլենաց .

Եւ քեզ ինքնին բաղականիդ Կլիտեմնես-
տրէն նենգ լարեաց ,, :

Կրկնեաց դարձեալ Ագամեմնոն և խոր-
հուրդ քաջ ինձ տայրէր .

" Մի և դու ինքն քոյին կընոջդ մի դէմս
քաղցունս ցուցաներ .

Մի և ոլջոյն ըզբոյ զաղտնիս 'ի վեր հան-
ցես դու նըմա .

Այլ մասըն մի հաղորդեսցես և մասըն մի
քեզ պահեա .

Այլ քեզ, Ոդիսեւ, չէք խէթ անօսի զի ող-
ջախոհ է յոգին .
Քաջամիտ է դուստրն Իկարեայ Պենե-
լոպէն այն ուշիմ.
Ընդ նոր հարսն 'ի չուն 'ի մարտ թողաք
անդէն մեք 'ի տուն ,
Որդի ունէր դեռաբուսիկ մանուկ 'ի
ստեանց կաթնասուն .
՝Նա արդ չըքով 'նստի 'նդ արանց . հայրն
իւր ընդ նա փոյթ տեսցէ ,
Եւ գիրկ ընդ խառն անդ 'ի դարձին որ-
դին համբոյր հօր տացէ .
Այլ, ով, իմ կինս և ոչ 'ի տեսան որդւոյս
յագուրդ ետ աչաց ,
Քանզի կանխեաց և զիս ինքնին յարեան
խմուս թաթաւեաց ։
Բայց քեզ ասեմ, և կալ անձինդ . գաղտ
ել յերկիրդ հայրենեաց ,
Մի զու յայտնի . զի մեզ այլ չէք վստահ
լինել 'ի կանայս ։
Այլ զիմ զորդեակն , ասէ տատ , լուա՞ք
ուրեք կենդանի ,
Կամ յՈրքոմէն և կամ Պիւղեայ 'ի յաւա-
զուտ նահանգի .
Կամ 'ի Սպարտա լայնածաւալն առ Մե-
նեղաւ քաջ արքայն ,
Զի դեռ առ ձեզ կայ կենդանի իմ Որես-
տէսն անձնըմանն ”։

« Զայդ ինձ, ասեմ, զի հարցանես. գի-
տեմ ինչ ոչ, Աստղիկ.
Թէ կենդանի՛, կամ թէ մեռեալ. վայրա-
բանելն 'ի զուր է »։
Մ՛ինչ այս մինչ այն, մեք զուցեալք ջերմ
արտասուօք ցաւագին,
Անդէն 'ի վեր քաջին արանց Աքիլլեսին
եւ հոգին.
Նոյն Պատրոկլեայ 'ւ Անտիղոքեայ եւ
Այասայ քաջարւոյն.
Ուր գէմին, խոսնի, յետ Աքիլլեայ էր
Աքայեանց մեհադոյն.
Ծանեաւ հոգին զիս Աքիլլեայ. յոգւոց
հանեալ ձայն կարդայ.
« Դիւցազն Ոդիս, այր բազմարուեստ,
ընտանիք հնարիւք դերադանց.
Զինչ, հեղգեալդ, նոր նորութեցեր. զի-
արդ իջեր յայս խաւար,
Տուն դժոխոց. ուր մեռելոց խոյք ու-
րուականք վայրապար ».
Ձայն կրկնեցի. « Աքիլլ Պեղեան, զօ-
րաւ արանց յոյն ազգին,
Ի լուր եկի աստ խորհրդոյն Տիրեսիայ
գուշակին,
Զխորդ հանից յիմ առապարն. չեւ եմ
տեսեալ զիմ երկիր.
Յաքայիս չեւ եմ հասեալ, եմ տանջանին
վշտակիր.

Այլ երջանիկ քան զքեզ, Աքիլլ, չէք 'ի նախնեաց, չէք յապայից.
Զի և յառաջ ըզկենդանութեանդ մեք պա- տուեալք իբր աստուած.
Նաև աստէն դու մեռելոց ես հրամանատար և իշխան
Ուստի Թախիծ, ո՛ Աքիլլէս, չէք քեզ և ոչ 'ի մահուան »։

Լուաւ Աքիլլ, ձայն մի առաջ ընդդէմ կրկնեաց անձկէհեր.
« Մի՛ ինձ, Ոդիսեդ քաջախոհ, մի՛ ինձ ըզմահըն գովեր.
Կամիմ յանդի պարէնաւոր առն աղքատի սինլքոր
Վարձկան լինել, քան մեռելոց կալ բոլո- րից Թագաւոր։
Այլ պատմեա ինձ դու զքաջորդւոյս. է՞ նա 'ի մարտ նահատակ.
Պատմեա և զվէհ զհօրն Պեղեայ, եթէ իցէ ինչ գիտակ.
Արդեօք ըզնոյն ունի՛ պատիւ նա 'ի յազ- գէն Միւրմիդոնեանց,
Թէ յԷլլադա, 'ի Փթիա, զծերն ըզ նա իբր անկած,
Իբրու որ այն ձեռք իւր և ոտք են ծերու- թեամբ գողդողջուն.
Ա՜հ, չեմ նըման արդ զօրավիգ ընդ նըշու- լիւք արևուն.

Որովհետեւ որ յորժամ երբեմն 'ի Տրոյիա
    լայնատարր
Ըզխումբ քաջաց հարկանէին կացեալ Յու-
    նաց եւ պատուար .
Եթէ այնպէս և փայլիկ մի գնայի 'ի առաջ
    իմ այժմուս ,
Կորուսի և հոյնս յահ խուճանաէր ըղհօրն
    իմոյ զանտարդուս ”։
« Ըզմէհ Պեղեայ , ասեմ , Աքիլլ , ոչինչ
    լուայ ճշմարիտ ,
Այլ քեզ ըզճառըն ճշգրտեմ 'նեապաղեմ
    որդեկիդ .
Ես նաւագնաց առեալ ըզնա ածի առ
    Յոյնս 'ի Սկիւրայ ,
Եւ մեր յառեանն առ Տրոյիա նախ և
    քաջիկ խօսէր նա .
Միայն 'նեստոր և ես Ոդիս պայծառէաք
    ընդ քաջին ,
Բայց 'ի խառնուրդ մարտին Տրովեայ 'նա
    էր մարտիկն առաջին .
Նոր 'նահատակ , ոչ կայր 'ի խառն . շատից
    եղև մարդասպանն .
Չեք ինձ ասել , այդ ախոյեանդ քանի
    որեան սատակեաց .
Ասեմ ըզմահ Տեղեփիդեան Եւրիպիղ-
    եայ դիւցազին ,
Այնկաւ յորդւոյդ նա 'նդ որերոյն վառն
    հարսանեացըն օժտին .

Էին Կետեանք որեարն համհարգք Եւրի-
պիւղեայ քաջարւոյն ,
Զոր յետ դիւցազըն Մեմնոնի տեսի գե-
ղով վեհագոյն :
Եղ և զԷպեան փայտակերտեալըն
պատմեցից զերիվար , 47 ,
Յոր 'ի ծածուկ դարանակալք մտին Յու-
նաց քաջերեար .
Հոգն ամենայն ինձ էր յանձնեալ փա-
կել բանալ զայն դարան .
Բայց մտելոյն անդ 'ի քաջաց յահէն
անդամք դողդոջան .
Տեսի ես անդ զի քաջորեարն զարտասուս
աչաց սրբէին ,
Միայն որդւոյդ աչք անարտասուք և առոյգ
գունեան էր մարմին .
Շատ ինձ մաղթէր 'ի դուրս վազել ձեռքն
'ի դաստակ սուսերին ,
Տեգ կուռ 'ի բուռն , որհատ արագ ածել
Տրոյեանց խուժանին :
Իսկ մեք յորժամ աւար հարաք ըզ Պրիա-
մեան բարձր ոստան ,
Նա մեծ կապուտ առեալ զիւր մասն 'ի
նաւն եմուտ ողջանդամ.
Ոչ խոցեցաւ ոչ 'ի բացուստ , ոչ 'ի մօտոյ
'ի մարտին ,
Որպէս դէպք տան 'ի խառնիխուռն յա-
հեղ խոժոռ Արեսին ,, :

Լուաւ հոգին Աքիլլեսի, և 'ի դալար 'ի մարգին
Քայլ մեծաքայլ գնայր խայտայր լուեալ ըղձալով զաւակին ։
Իսկ այլ հոգիք անդ մեռելոց յաւերալք զրուցեանց վիշտ պատմեն ,
Միայն հոգին մեծն Այասայ անդ 'ի բա- ցեայ կայր յինէն .
Կայր զայրագին , զի զնա 'ի վէճն վասն զինուցն Աքիլլեան
Ես պարտեցի , երբ զառաջեաւ եդ զայն Թետիս մայր յայնժամ .
Որդիք Տրովեանց և Աթենաս զայն դա- տաստան կնքեցին .
Իցիւ թէ ես ոչ պարտէի ըզնա 'ի յայն պայքարին .
Արդ այն գլուխ վասն այն զինուց ամ- փոփեցաւ 'ի յերկրի ,
Այասն Յունաց յետ Աքիլլեայ վեհն 'ի նախաճիրս 'ի մարտի ։
« Դիւցազն Այաս , ձայնեմ աղու , դեռ ես յիշես 'ի մահուն ,
Անջինջ ընդ իս է խեթ ցասմանդ վասն այն զինուց մահաթոյն .
Դիք զայն Յունաց ետուն աղէտք . և դու- նոցուն կուռ պատուար
Անկար , և մեք զերթ զԱքիլլեայն ըզ մահդ ողբամք հեքարար .

Մեղ չէք ումեք. Ջեան ոխերիմ քաջաց
Յունաց. քեղ մահ ետ.
Արի, արքայ, 'ի լուր բանիս. ընջեա՛ ով
քաջ, զորդւոյդ խէթ ,, :
Զայն չետ, զինայր. ընդ այլ մեռեալս
խառնէր յՆերեբն ընդ հոգիս.
Եւ անդ Թեբեա, Թեպէտ ցասկոտ, մեք
ընծէաք խոստկից :
Կալ ցանկայի և այլ հոգւոց յայց եղա-
նել եւ յայնժամ.
Տեսի զՄինոս մաղցեղն արքայ ոսկի կա-
լեալ գաւազան.
Բազմեալ 'ի գահ դատէր զմեռեալս, նոքա
անդ շուրջ արքային
Նստեալք, կացեալք, տային համար 'ի
տան լայնդուռն Պլուտոնեին :
Տեսի զվիթխարեն զՈրիոն, վարէր զգա-
զանս 'ի մարգի,
Զորս ինքն եհար 'ի Թաւ լերինս, լախտ
կուռ կալեալ պղընձի.
Եւ Տիտիւոն զորդին երկրի տեսի տարած
'ի գետին,
Եղջեաց զինուոյ արտաւանացայ գրաւէր այն
մեծ վիթխարին.
Աստի անտի Թառի յախոնդիս անգեղք
կայցք գիշակեր
Կրծէին ըզլեարդն. ըզձեռան ածեալ ինքն
ապիկար զուր վանէր.

Զի նա և ոչ անկն ած Գինոյ վէհն ամուս-
նոյն Ղեոնիդեի,
Բռնաւորաբար 'ի գնալն 'ի Պիւթ ընդ
մերդ չքնաղ Պանոպի։
Ըզ Տանտալոս ածեր ես անդ ցաւովք
անանցելեաց տանջանացն,
Կայր նա կանգուն 'ի մէջ լըճի որ մօտ քե-
րէր ծընօտին.
Ծարաւելոյն բերեր ըղձեմ, այլ կաթ
յարբուցանել ինչ չունէր.
Ծերըն քանիցս յըմպել կըքէր, ջուրըն
սրացեալ սուզանէր.
Հող սեւահող 'զ ոտիւք նորա գայր յե-
րեւան առաջի
Երաշտացեալ առ 'ի Դիւցէն ցամաք համ-
բուն անջրդի.
Ծառք ամբարտաւանք վերոյ գլխոյն կա-
խին պտղովք ակաղձուն.
Տանձ, նուռն, և թուզ, գիրգ ձիթենի,
առնէն գեղաւէտք խնձորոյն.
Զգայեր ըղձեալ առ ինքըն զոստսն ու-
նել ձգնէր ծերունին,
Հողմն ըզնոսա առեալ տանէր 'ի մութ 'ի
յամպըս վերին։
Տեսի ես անդ և զՍիսիփոս տառապեալ
ցաւովք չարաչար.
Վէմ ահագին և արտասոյ կրկին ձեռօ-
քըն բառնայր.

Ձեռամբք, ոտիւք, ձիգըն Թափէր ծը-
գել ըզվէմն յարանան ,
Քերեալ զծայրիւն անդուստ ընդ կրուկ
վանէր յուժոյն վերնականն .
Վայրաշրջեալ վէմն անարգին դայր հոլո-
վէր ընդ գետին ,
Նա Թափ ուժով այր միւսանգամ ձգել
'ի ծայրըն լերին .
Այսպէս 'ի խորանս Սիսիփոսին յորդա-
կայլակ քրտան հոսէր ,
Եւ մըրրկեալ անդ մի փոշւոյ գլխոյն 'ի
վեր գիզանէր .
Տիտ 'ի վերջէ ըզՀերակլեայ տեսի գըր-
չեալ ուրուականն ,
Իսկ ինքըն յանմահս դիցն 'ի խնճոյս բերկ-
րեալ ունի բաղձանկան .
Ըզնազաքայլն ունի զՀեբէն դուստր մե-
ծին ըզ Դիոյ ,
Ծընունդ արդոյ մեծ դշխոյին ոսկեկօշ-
կըն Հերայ .
Կանչիւն զնովաւ էր մեռելոց զերթ խու-
ձապեալ հաւուց ձիչ ,
Ինքն 'ի պատկեր մութ գիշերոյ զաղեղն
ունէր լայնալիճ .
Նետ կազմ 'ի լարն առ անդ խեթիւ հայ-
էր ձըգել ըզ փըքին ,
Եւ առ լանջօքն ոսկի քեմուխա շողայր
ահեղ կամարին .

Անդ հրաշակերտք են քանդակեալ արջք
և վարազք վայրենիք ,
Սօս առիւծունք , մարդք և նախճիրք մա-
հունք , արեանց ծարաւիք ·
Ճարտարին , որ զայն հրաշակերտեաց ,
այլ համեմատն ոչ արար
Կրկին գործել ճարտարութեամբն սքան-
չելարուեստն ընդ կամար ։
Ցիս զակն արկեալ ծանեաւ անդէն , յու-
զւոց հանեալ ձայն կարդաց ·
Աւա՜ղ , գիւղաղն ուխտիդ Որդիս , անշուշտ
և քեզ հաս արկած ·
Որովհետև ինչ և ես տարայ յարև կենացս
աշխարհի ,
Թէպէտ և ձեռս Արամազդայ , գրաւեալ
յաղէտ օդրայի ·
Զարարչուք առն եղէ 'նդ ձեռամբ · քըր-
տամբք տանջէր զիմ ոգին ·
Եւ էր զի առա յղեաց 'նա զիս ըդ գամփռն
ածել ահագին ·
Զայս 'ի նախճիրս ինձ մեծ մրցանք ան-
կրաւելի կարծէր 'նա ·
Հանի զայն գամփռն 'ի դըժոխոց ընդ
հովանեաւ ես Հերմեայ ·
Հերմէս ինքնին հորդեաց ինձ առա և
Աթենաս գլխաւքին » ·
Ասաց , անդրէն էջ 'նա 'ի տուն աշխար-
հական խաւարին ։

Մնայի ես անդ թէ գայցէ ոք նախատախ-
ձան դիւցազանց.
Եւ էր արդեօք ինձ տեսանել, ոյց ցան-
կայի ծերունեաց.
Ըզթեսեան ասեմ դիւցազն և զՊիւրի-
թոս հրաշալին.
Այլ անդ հաւաքեալ մեռեալք անթիւք
խուռնին գոչմամբ ասակայի:
Ես 'ի գալուկն հասայ յահէն, մի ինձ
ըղջըլուխ Գորգոնեան
Զահեղ հրէշին մեծ Պերսեփոնն 'ի մեր
հանցէ յերևան:
Ճեպիմ 'ի նաւս, ձայն տամ խմբին. յա-
րեան լուծին ըզպարանս,
Մըտին արագ կարգ ըստ կարգէ առին
զիւրեանց նստարանս.
Նաւն ընդ ալիս Ովկիանուն կոհակաւէտ
հոսանաց
Վարէր քաշուեք, ապա և հողմն բարե-
շունչ մեզ փըչէաց:

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԲ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դաւանայ Ոդիս 'ի կղզին Կիրկէայ, կատարէ զգխաւհանս զմեռելոյ միոյ յընկերացն, և մեկնի 'ի կղզւոյն. խրատեալ և հրահանգեալ 'ի Կիրկէայ՝ անձնապուր լինի 'ի վտանգէ Ծովայնոցն, այն են քաղցրաձայն և մարդակեր Յուշկապարիկք և Սիրէնք։ Ապրի և յահագին Սկիւլլայն և Քարիբդեայն, այն են վտանգաւոր նեղուցքն Սիկիլիոյ. այլ կորուսանէ զերկուս յընկերացն։ Հասանէ 'ի Թրինակիա, այն է Սիկիլիա, ուր ընկերքն ընդդէմ պատուիրանին գենուն յանդեաց նուիրելոց արեգականն։ Արամազդ շանթէ 'ի նաւն, և ամենեքեան կորնչին, բայց յՈդիսեայ ապաստանելոյ 'ի նշխարս նաւուն. և զերծանի 'ի բազմավտանգ նեղուցացն զարմանալի հնարիմացութեամբ. և յետ աւուրց տասնից հասանէ 'ի կղզին Կալիփսեայ։ Եւ աստանօր վախճան առնէ իւրում պատմութեանն։

# ՈԴԻՍԱԿԱՆ

## ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԲ·

ՀԱՍԵԱԼՔ զհոսանս անդնդախոր զՈվ-
կիանեան ըղձեւոյն,
Հասաք յէջյան մեք 'ի կղզին ընդ մըկա-
նունս մեծ ծովուն.
Ընդ տուն և պարք Արշալուսին գան 'ւ
ելք արփւոյն յերեւան,
Մեք յասպատուան առեալ ըզնաւն ելաք
յանդորր ծովափան.
Երեկայաք, մինչ վէհ այգուն ծայրակար-
միր ծագեաց օր,
Ցըղեմ յիմոցն 'ի տուն Կիրկէայ առնել
զմեռեալն Եղպենոր,

Փայտ հատանեմք, Թաղեմք լալեօք առ
ծովափանցն 'ի կարկառ,
Մինչ մեռելոյն դիակն և զէնք 'ի հուր
ծախին բոցավառ.
Հողակարկառ կուտեալ դամբան կոթող
անդէն կանգնեցաք,
Եւ 'ի ծայրին ըղձաջանկերս ըղձին նորա
վարեցաք:

Մ՝ինչ այս մինչ այն մեք ըզբաղեալք, ան-
դուստ Կիրկէն նախազգաց
Դարձին մերոյ 'ի դըժոխոց, զարդ արկ
զետրն և վազեաց.
Ածին նաժիշտք հաց և միս շատ, հրա-
տապ գինի բերկրարար,
Եւ 'ի մէջն արձանացեալ մեծ դիցուհին
ձայն կարդայր.
« Ա՜յ հերացեալք, որ կենդանւոյն իջէք
Դժոխոց յօթեւան,
Դուք կրկնամահք, ուր այլ մարդիկ մահ
Ճաշակեն միանգամ.
Բայց դուք աղէ աստ զօրն ողջոյն, արբէք
բաժակ, կերայք հաց,
Վաղվաղ յուսուրն յառաւօտեղ ուղոյ
լիջիք նաւագնաց.
Ես ձեզ զուղին ցուցից անվրէպ, զի մի
նաւեալք 'ի նանիր,
Դուք կամ 'ի ծով կամ 'ի ցամաք լիջիք
յոգիս վտանգիր »:

Ջանձնայք ընդ բանըն քաջախօհ, նըշ-
ոխից ցըմուաս արեւուն,
Վայելս ատնուլք զաւառ մըտոյն եւ զա-
նուշակ ըղձիւոյն .
Արեւն եմուտ, խաւար պատեաց, համ-
գեան մարդիկն առ նաւուն .
Նա զիս ուրոյն առեալ զաջոյս, նստոյց
հանդէպ, հարց ողջոյն .
Մանրամասին ինձ հարցանէր . ես կարգ
՚ի կարգ պատմեցի .
Նպա կրկնեաց արդոյն Կիրկէ, խօսէր
յայտնէր ինձ ուղի ։
« Օ՜այդ ամենայն ՚ի գլուխ հաներ . եւ
արդ լո՛ւր ինձ զոր ասեմ,
Եւ քեզ ըզբանս, թէ պէտք լիցին, նաեւ
աստուածքըն յուշ բերցեն .
Արդ դու նաւեալ ժամանեսցես նախ ՚ի
կղզին Սիրենաց .
Ողջ զանցաւորս վարմեն նոքա, հըմայս
նիւթեն գիւթութեանց .
Որ անխորհուրդ անդ մերձենայ եւ զՍի-
րենաց լսէ ձայն,
Նըմա ՚նդ առաջ ՚ի դարձն ՚ի տուն կին եւ
զաւակք ոչ խնդան .
Գիւթեն Սիրէնք անդր երգով՝ նստեալք
մարգացն ՚ի դաշտի,
Եւ անդ շուրջ կան մարթք փտեալք մարդ-
կան եւ կըմախից մեծ կարկառ .

Այլ դու նուաղեալ վաղեմն զնորքդ, խոցյն
զանկանձս որերոյն,
Լսեալ մռմռալ քաջ քաջ խցցես, մի՛ որ
լուիցէ ՚ի յերգոյն.
Բայց Թէ կամիս, դու լուր բղձայնն. այլ
զքեզ կանդնումն ՚ի նուէին
Կապեսցեն ալքք զոտից, ձեռաց, պա_
րանոցեալ ՚ի կայմին։
Լուր հեշտարար ձայն Սիրենաց, և երբ
խնդրես արձակուրդ,
Աղդ շատ սաստեսջ զքեզ պրկեսցեն. այս
քեզ յինէն քաջ խորհուրդ։
Անցեալ զնոքօք քեզ ընդ առաջ գլորցես
զուգիս ընկերկին,
Պատմեմ զերկուսն. այլ ոչ ընտրեմ, դու
ինք խորհեամ առանձին.
Յայս կոյս են ժայռք սարաւանդեալք,
ընդ որս կոհակքն հարկանեն,
Հնչեն ալիք կապոյտ ծովուն, զորս Թա_
փառք դիք կոչեն.
Ոչ հաւք անցանեն Թռչին զնոքօք և ոչ ա_
ղու աղաւնիք,
Որք վերբերեն Արամազդայ զՃաշակն ան_
մահ գեղեցիկ.
Զի և ՚ի յայնց շորԹէ հասուց ժայռն
այն ողորկ ներպածայր,
Բայց այլ փոխան կարդէ անդ Հայրն, զի
Թիւն լցէ հաւասար.

Ընդ այս անզերծ ցուրդ նաւ չէանց, այլ
ընդ լաստին և զօրեար
Ծովին ալէաշունչ եկուլ, 'ի նոյն մըրրիկ
հըրոյն բոցավառ 48.
Մ՛ին աստ միայն անդրժելի որացաւ վա-
ղեալ հատեալ ծով
Այդուն այն նաւ համբառնալենչ առ 'ի
յենլեալ նաւելով.
Բաժ բաժնէին և զնա կոչեակք ընդ այն խա-
ւարակս ամէհի,
Սակայն հերա անցոյց ամբողջ, զի էր
Յասոն սիրելի։
Նաւ և յայնկոյս են ժայռք կրկին, մին
վերամբարձ մինչ յերկին,
Սրածայր ծայրիւքն պարապրեալ ծածկի
'ի յամպըս մըթին.
Օդ պարզութեան յաւերժաբար չէք 'ի
նորայն յարանան,
Ոչ յեղանակ աշնանայնոյն և ոչ դար-
ձեալ յամառան.
Ոչ ելանել ոչ իջանել երբեք չէ մարդ բա-
ւական,
Թէպէտ և ձեռք թէպէտ և ոտք իցեն նո-
րա թիւ քսան.
Այնչափ ողորկ սուրբ է պարեխն շուր-
ջանակի 'ի կողմանց.
Բայց 'ի ժայռին 'ի միջակին անձաւ կայ
խոր միգամած.

Ի մուտս 'ի կոյս Թեսաղոնիկեայ հայի 'նդ
Երեբ սոսկալէս .
Արդ ընդ այն սրացէք նաւու , անտի
ինձ քաջդ Ոդիսեւս .
Նետ 'ի նաւէն աղեղնաձիգ և ոչ այլ ոք
քաջազօր
Թափ տատուցեալ հարկանիցէ 'ի քարան_
ձաւն յայն 'ի խոր .
Առ ընդակութիւն ունի Աքիլլս , կանչիւն
հանէ քամահանայն .
Ձայնն է ճչգրիտ իբրև կաղկանձ սանդխա_
ցիկ կորեանց շան ,
Ինքն է դժխեմ հրէշ ահարկու . որ միան_
գամ տեսանելն ,
Քաջին սոսկան , թէպէտ աստղն է
յանմահից 'ի դասէն .
Ոտք են նորա երկոտասան , և ոտքն երկք
են ողջոյն
Եւ պարանոցք վեցք են նորա երկայնա_
ձիգք 'ի բնոյն .
Մէն մի ահեղ ունին գլուխ երեքկար_
գեան ատամունք ,
Են ատամունքըն խիտք և հոծք սեաւ գու_
ժաբեր լի մահուամբ ։
Ինքըն միջով 'ի խորափիտն յայն քարան_
ձաւ սուզանի ,
Արտաքս 'ի վեր կալեալ ըզգլուխս յայն
վիրապէն սոսկալի .

Կայ ինքն 'ի ժայռն լռանս խոժոռ. որպաղ-
ըղբօսն , ըղգլխին .
Կէտս անարիս , բուծեալք ամբաւք յան-
դընդախորս Ովկիանոսին .
Զև ևս ընդ այս անցին նաւաստք անդրժե-
լեք յորհանէն ,
Զի նաւաղ մի մէն մի գլխոյն առնու կոր-
զէ 'ի նաւէն ։
Մ՛օտ ըզմիւս ժայռ գոցես խոնարհ , հար-
կանելի 'ի փքնոյ .
Եւ կայ բուսեալ անդ բարձրուղէշ ժանտ-
թըղենի հերապանծ .
Բայց ընդ ստվար վեհ Քարիւբդիս կլանէ
զկապոյտ ջուր ծովուն ,
Ժայթքէ երիցս աւուր աւուր երիցս ըմպէ
աչարկուն 49 .
Դու 'ի կլանելն մի մօտ գնասցես , 'ւ ոչ
Պոսիդոն փրկէ զքեզ .
Այլ առ Սկիւլլաւ 'ի մօտ քերեալ սրա-
ցիր նաւու փութապէս .
Լաւ է վեց այս սալ վիրագին քան թէ
զողջոյն նաւաստի ։
Լուայ , կրկնեմ . « Աղէ և զայն սաս Կրը-
գրիտ , գեցուհի .
Եւ անձնապատուր յորահասէ մանկաշըշուկ
Քարիւբդեայն
Եւ զխակիւլայն ո՛չ վանեսցես երբ նա կոր-
զէ զիմ որսան ».

Լուսու, կրկնեայ. « Ա՜յ հիացեալ, դու-
տակաւին ըղձարանից

Նախանձիւս 'ի յուշ քո վերբերեա ոչ ակն
ածեալ յանձանձից.

Զէ մանկացու այդ Խակիւլեայդ, անման
չար է 'ի ձեռան,

Հարուստ, ահեղ, գըժոխըմէնք, անկըռ-
ուելի 'ի բաղխէ.

Զիք դեղ դարման. փախչելն է լաւ. Թէ
'ի վանեալ գ. նուան յամէ,

Թամք տայ կրկին այնչափ գլխոյք այնչափ
որեամ յինք կորդէ.

Արագիր և անց, և առ Կրաթէին առ մայր
Անկիւլայ ձայն կարդա 50,

Որ զայս ժամանակս ծընաւ մարդկան,
նոյն և որդւոյն իւր ամեն տայ:

Ի՛ Թըրինակեան հասցես կղզին. անդ շատ
անդեայք յոյր օդիք

Արոտականք կան Արեգին. եօթն են ան-
դեայցն ջուրք.

Եօթն են և հօտք չքնաղ օդեալ. յիսունք
թուով 'ի մէն մի.

Ոչ սերընդեամբ աճեն նոքա և ոչ մահ-
ուամբ պակասին.

Հովիւք նոցա են դիցանոյշք յաւերժ հար-
սունք գեղանկայ,

Փաէթուսէ և Լամպետէ, ծընունդք վե-
հին են Նէերայ.

Զատա՛ նէրք ծընաւ գաւերս վէրնածն-
մեալ Արեգին,
Ծընաւ, սընոյց, յղեաց 'ի տար 'ի Թըրի-
նակեան 'ի կղզին.
Զի անդ կայեալ ըղըրնակութիւն կացցեն
Նորա պաշտպան
Գաղտրեղջիւր անդեայց ջոկոց, օդեաց
հօտիցն հայրական:
Արդ թէ սոցա ոչ դըժնեսցես միայն 'ի
դարձդ ուղարկիր,
Ողջ ժամանեսցէք դուք յԻթակէ թէպէտ
տանջեալք վշտակիր:
Իսկ թէ դըժես, մահ քեզ գուժամ, նա-
ւուդ քոյոցդ միարան.
Եւ դու փրկեալ, սակայն չարաւ դարձ-
ցիս 'ի տուն անդրան.
՚Նաև ցաւով դարձցիս անկեալ ողջոյն 'ի
քոց ընկերաց »:
Այն ինչ յանդեաց վէհ գիցուհին, և ոս-
կեգահն այգ ծագեաց:
Ինքն ընդ կղզին մեկնեալ յինէն, եր-
թեալ 'ի նաւն եւ ձայն տամ.
Յարեաւ որեարն, լուծ ըղպարանս, մը-
տին առ ին ՚նստարան.
Զծովն ալէատանջ բախեն քաջաւք, մեղ
'ի թիկանց հողմ յղէ
Վէհ դիցանոյշն այն գանգրահեր գեղ-
գեղաձայնըն Կիրկէ.

Հողմըն ելից մեզ զուարթագատ քաջ ուղե-
կցին և ընկեր .
Լքեալք ըղձիւ, նախանձք յանձնեալ հող-
մոյն, քեզւոյն անվեհեր :
Յօդւոյ հանեալ խախմ յայնժամ. և Ո՜
բարեկամք. արժան չէ
Մխում և երկուց դխաել զպատգամս, զոր
խօսեցաւ ինձ Կիրկէ .
Ի վեր հանեմ ես հասարակ, զի գիտա-
ցեալք կամ մեռցուք ,
Կամ անձնապուր 'ի մահուանէ մեք յոր-
հասէն ապրեսցուք :
Հրամայէ նախ մեզ պատկառ կալ սա-
տանայնոց Սիրենայց ,
Չանոյշ երգոյն խուսել՝ նոցա և ծաղկա-
ւէտն 'ի մարգաց .
Ինձ ես լսել . բայց զիս պարեցք զիս
պրկեցէք 'ի նաւին .
Կանգուն անշարժ կացից այնպէս պա-
րանդեալ 'ի կայմին .
Թէ արձակուրդ ես խնդրեսցից , դուք
կրկնեսցէք ըղ կապանս » .
Զայս խօսեցայ . և նաւն արագ հաս 'ի
կղզին Սիրենաց :
Հողմն յաջողակ ձնեալէր ցայն վայր , անդ
խաղ և խաղ դադարելոյ .
Հանդարտութիւն պարզ և անախք , ա-
ւելաց Թմբիր Փառքն եած .

Յարեան նաւաստք և զառագաստս ծա-
լեալ դնեն 'ի նաւին.
Եւ փըրփրադէզ շարժեն քաջաթիւ յըղ-
կեալս 'ի փայտս եղևնի :
Եւ զուռնա մամոյ մանըր կարկեալ 'ի ձեռս
առեալ ըղմկի,
Փոյթ կակղացոյց շողն Արևուն վերնածա-
մեալ արքայի.
Մ՚առեալ, մամով զականջս արանց խըցի
եւ կարգ ըստ կարգէ.
Նոքա կանգուն զիս պրկեցին, ոտք ձեռք
պնդեալք 'ի կայմէ.
Նաւեալք ապա արագ թիովք ծըփեն ըղ-
ծով ըսպիտակ,
Մինչ 'ի կըղզին, որչափ լինի ձայն լըսելի,
մերձեցաք.
Սիրենք լուան զշառաչ նաւուն, ձայն
տան անոյշ նուագաց.
« Կացո ըզնաւդ աստ 'ի լուր մեր, քաջդ
Ոդիսեէս, փառք Յունաց.
Զի՛ք նաւագնաց որ աստ չէկաց անոյշ եր-
գոյն մեր 'ի լուր,
Եւ մեկնեցաւ բերկրապատար շահից ե-
ղեալ նա ներհուն.
Զի յԻլիոն, Յունաց, Տրոյեանց, գի-
տեմք մեք զանցան աստուածեան,
Գիտեմք և որ բազմաբերոյց յերկրի վե-
րայ զինչ դէպք տան »:

Զայս երգէին քաղցրաձայնեալք . սիրտ
իմ տապէր 'ի ձայնէն ,
Յանխուք հրամեմ զիս լուծանել , նոքա չուա-
պաւ- թի վարեն .
Բայց Պերլիմա և Նուրխլոք եկեալ կրկնեն
զիմ կառանս ,
Մինչև անցեալք այլ ոչ լսուեմք ըղձայն և
զերգ Միրէնոյ :
Լսելափակքն անդէն 'ի բաց առին զխո-
ցանս մոմեղէն ,
Զոր ես ունկանց ետու նոցա , և զիս լու-
ծին 'ի կայմէն :
Ողեալք զկղզին , ծուխ և կոհակքըն
ամեհիք ընդ առաջ
Բոմբեն ահեղ . պակեան նաւավարք , թիք
անկանին 'ի ձեռաց .
Արգելեալք յանդունդս ձայն ամբարձին .
նաւըն չունէր զօրավիգ
Կայր և ծըփայր , քանզի 'ի թիս ձեռք թու-
լացան կորովիք .
Ես վեր 'ի վայր զնացեալ ընդ նաւն , ա-
մոք բանիւք ընկերաց
Տամ քաջալեր . « Ո՞ բարեկամք , քան չեմք
անփորձք 'ի չարեաց .
Քան զԿիկղոպայն չէն մեծ չարիքս երբ
փակեցաք յանձաւին .
Զերծաք սակայն յանդերծ ուժոյն իմ
խորհրդովքըս ուշիմ .

Դուք զայն յապայս յուշ ածիցէք. բայց
արդ լուարուք իմ ձայնի.
Քաջ Թիւմարք, հարէք զանդունդս.
Դիտս կայ մեզ հովանի։
Այլ որ զգեղին ունիս նաւուն, զայս
պատուիրեմ քեզ ով քաջ,
Մի՛տ դիր ողջիկ, ուղղեա՛ ըզ լաստն 'ի
դուրս ծըխոյն և յալեաց,
Դու զակն 'ի ժայռըդ կառուսցես, մեկ-
նեա՛ց անտի հանապազ,
Մի՛ մեզ, այր դու, աղէտ ամբառ. արագ
ածցես օրահաս »։

Լուան ձայնիս, այլ զՍկիւղլայն լռեմ
զաղէտն անդարմանն,
Մի՛ սրտաբեկ Թիւմարողք լքցեն ըզԹիս
միարան։
Անյուշ Սկիւղեայ դժնի բանին՝ այն որ
արգել ըզդէնս իմ,
Նա զէնս պայծառ արկի զանձամբ և ած
կըկին 'ի ձեռին.
Լաստափայտին ելի 'ի գլուխ, առեալ, ան-
տի Թափ տայցէ
Սկիւղլա վիրագն բնակիչ ժայռին, և զիմ
ընկերս հափափել.
Ոչ կարացի ես ուշ ունել, զի յոգնեցան
անդ աչք իմ
Ցայս կոյս յայն կոյս ակնակառոյց սաւե-
մամբ ընդ ժայռըն մըԹին.

Յոգւոց հանելով անցանէաք մեք ընդ կա-
ծան նրբուղի.
Աստի Սկիլլա, անտի Քարիբդ ահեղ կլա-
նէր ծով աղի.
Յորժամ ժայթքէր, ծով պղպջայր իբրև
կաթսայ յեռանդան,
Ցնցուղքն 'ի վեր անկանէին կրկին ժայ-
ռիցն յարտեան.
Երբ կլլանէր զաղին ըղձուր, ծովքն փլու-
զեալ յանդնդոց
Բոմբէր զժայռիւ, բանայր աստէն 'ի կա-
պուտակ աւազոց.
Մինչդեռ ողջոյն 'ի դոյն դալկան սար-
սիմք յահէն Քարիբդեայ,
Անդուստ նաւէն վեց քաջորեար առ հա-
փափելոյ Սկիլլա.
Դարձայ տեսի ես զերկեւլեան ոտիւք, ձե-
ռօք վերամբարձ,
Տասանք ընդ օդս, ձայնեն Ոդիսա, ըզ-
ձայն վերջին եղկուխեանց.
Զոր օրինակ 'ի ցուպ երկայն կարթեալ
ձկնորսն յապառաժ,
Խայծ խաբուսիկ ընդ կարթն հարկեալ
մանրիկ ձկանց որսահար,
Առեալ 'ի ծովէն սուղանէ զեղջիւր եզին
ըղվայրագ, 51
Եւ ըմբռնեալ, մինչ թինդըս տան, հանէ
ձըգէ 'ի ցամաք,

Այսպէս զնոսա, մինչդեռ տրտմեալ, ընդ
ժայռն 'ի վեր ամբառնայ,
Նա առ ժայռին գոչէր ուժեր զըժոխա-
կուլն Խակկլա.
Յես ըղձատունս տառանեքին գերաշխա-
րան տագնապի.
Ողջ յաղէսս իմ ծովալըլուկ այս ինձ ան-
ախ ողբալի։
Մեկնեալն ժայռից մեք անձնատուրք և
մանհահատ Քաղիրդին,
Արագ նաւեալք յառաջադէմք հասաք
'ի վեհ 'ի կղզին.
Ընդ արածին արտասուանք լայնածաւալ
պերճ անդեայք,
Զոկ վերնաձեռն Արեգական, շատ և օ-
դեաց յոյր գասակք.
Լուայ նաւէն զօդեաց մայլուն, զբառաչ
գեղանց պառաւին,
Յուշ եկն ինձ բան Թերայեցւոյն կոյր Տի-
րեսեայ գուշակին.
Զայն և Կիրկէն Եայեցի ինձ երկրոր-
դեաց 'ի խրատուն,
Մի թարթափել մեզ 'ի կղզին ակնապա-
րար Արեւուն.
Զայն տամ խմոցն. « Արդ, համհարգք
վշտաշարշարք ունկերն դէք,
Ըզ Տիրեսեայն և ըզԿիրկեայն պատգամն
յայտնեմ ձեզ ողջոյն.

Պարտ է խօսել ինձ 'ի կղզւոյ անծանօթա-
բար Սրբուն.
Ընդ մեզ աղէտ անհընարին գումեաց
Կիրկէն 'ի խորաստուն.
Ո՞ն ընկղմեալ անդէք արագ ․․ Լուան,
բեկեալ սիրտ նոցա.
Յարեաւ անդէն Նեպտունոս և բան արար
ասէր ինձ գժնեայ.
և Ընդունելդ Ոդիս, անընկճելի, երբէք
ոգիդ ոչ խոնջի.
Արդարեւ քո ներքինքդ ողջոյն են 'ւ ար
տաքինքդ երկաթի.
Յամառք ունել դու զըլանաս խոնջ և աղք-
նեալ ընկերաց,
Ի մօտ կղզիս չտաս կահել մեզ կշտա-
- ալինդ հաց ընթրեաց.
Գու ընդ գիշերս արագահաս մեզ երե-
բել վայրապար
Տար 'ի կղզւոյս հրաման կարգաս ընդ
մութ անդունդքս Թափառ.
Հողմունք սաստիկք 'ի գիշերաց, մահուանք
նաւուց, արձակին.
Իւ ո՛ զերծցի զաւան յորհասէն եթէ յան-
կարծ մրրկին.
Կամ հարաւոյն կամ գիշաշունչ զեփիւ-
ռոսին 'ի փչմանց,
Որք և ըղլասան անշուշտ քակեն զից ար-
քայից յակամայս.

*Որդ մեք հնազանդք մութ գիշերոյն ըն-*
*թերիս առացուք մերձ նաւու,*
*Կապարաջ ընդ այգն ելցուք 'ի վեր, մըտ-*
*ցուք 'ի ծովն աճպարկու »։*

*Լուան ողջոյն և հաւանեցան · անշուշտ*
*ծանեայ ես յայնժամ,*
*Թէ մեզ աղէտ նախաթեաց Բաղ ունի · հրա-*
*պուրողին ձայն կարդամ.*
*« Միխրանեանք, Նուրիղոբէ, աագնաւ*
*ածէք միայնոյս ·*
*Այլ ասէ դուք առ հասարակ երդուիք*
*անսասան ինձ երդմունս ·*
*Թէ չոկ զանդեայց և կամ զօդեայց անս-*
*ջէք դասակ գեղապար,*
*Մի խօլացեալ մի ոք 'ի սպանդ տարցի ար-*
*ջառ կամ ոչխար ·*
*Կերայք անդորր ըզկերակուրն, զոր մե-*
*ծարեաց զմեզ Կիրկէ » ·*
*Լուան անդէն և ուխտս եդին յանդրժե-*
*լին երդմանէ ·*
*Ըզնաւն 'ի խոր 'ի նաւահանգիս մերձ կացու-*
*ցաք առ աղբեր,*
*Ելին նաւէն և ժիրաժիր ընթրիս կազմեն*
*առ եզեր ·*
*Կերան, արբին · զարան յուշ ածեն կոր-*
*զեալս գօշեալս 'ի Սկիլլայ,*
*Լան զանձնալէս · արտասուսցեցին հաս*
*անոյշ քունն 'ի վերայ ։*

Նաւեալք յերկինս հոլովեցան. պահն էր երրորդ գիշերին
Հողմ յուզեցաւ յԱմպրոպայնոյն խառնեալ յահեղ մրըրկին.
Զերկնիր ըզծով անդունդք ծածկեալ, յերկնից պատեալ մութ ամպաւ,
Մինչև ծագեալ այգ վարդամատն առնուաք ըզնաւն 'ի յանձաւ.
Էր խոր անձաւ ուր պարք չքնաղք յաւերժահարսանց գեղապար,
Ուր և բազմեալք. մեք անդ մնացաք ըզլաստափայլն 'ի գաղար.
Խմբեմ զընկերսն, ասեմ. « Ի նաւն ո՛ բարեկամք գոյ ձեզ հաց,
Գոն կերակուրք, գոն ըմպելիք. ըզցուլերուք 'ի յանդեայց:
Այդ պերճ անդեայք, այդ վեհ ոգիք Աստուածոյ են ահեղին,
Արփւոյն ասեմ ամենատես ամենալուր արքային.
Պատկառ կացցուք. մի ինչ կրեսցուք ». լուան ըզբանն և անսան.
Ամսոյն անդուլ զամիսն ողջոյն չնչէր հարաւ մեզ յայնժամ.
Եւ թէ գըլայր, հողմ ոչ շնչէր բայց արևելք և հարաւ,
Եւ արքն անդեայց պատկառ կային մինչ հաց գինի գոյր 'ի նաւ.

Հնազանդ կայծին խմոյն ձայնի համայն
'ի սէր և կենաց .
Մինչև նուռն բարաւեցան պաշարք ող-
ջոյն Ճարակաց .
Սով տագնապէր . 'ի յորս հաւուց և կոր
կարթիւք յորս ձկանց
Շրջին որսան զոր և գտանեն նկթեալք
անդէն աշխատանօք :
Եւ ընդ կղզին մեկուսացեալ մաղթել առ
գիս անդանօր
Վասն իմ դարձին , լուացի ըզձեռս , յա-
ղօթս կայի վայր յանդորր :
Նոր իմն յաղօթս գիրն ողիւմպեանք
քուն քաղցր հեղին իմ աչաց ,
Անդ Եւրիղոք հրապոյր պղտոր արբու-
ցանէր ընկերաց .
« Լուարուք տանջեալքդ առ հասարակ .
մահուանք դառինք են ողջոյն ,
Այլ ամենահ հեքայելոց մահն է աղէտ
դառնագոյն .
Եկայք զընտիրս յանդեայց Արեւոյն յա-
ղեմք անմահ Ողիմպեանց ,
Հաւեալք յիթակ անդէն Արեւոյն տա-
Ճար կանգնեսցուք գեղապանծ ,
Ցանձար փարթամ . դիցուք 'ի նմա արդոյ ,
առատ , և ձօնիս .
Տեսցուք փոխան եղջերաւերիդ անդեայց
նուէք մեզ չարիս .

Թէ՛ նոր գիւղ ողջոյն դրժէ նուաստս, մինչ
    ծովակուր միանգամ՝
Ընտրեմ յաւէտ, քան յանձնարգել կղզւոջ
    ծփուրիլ՝ 'ի վախճան ։.
Լուան, խնծղեք յարեան անդէն զըն-
    տիրան յանդեայց վարեցին,
Զի մեռ յարօտ լայնածաւալ կամար-
    եղջիւրքն անդ կային.
Բակ ըղնողք յաղօթս առ գիս փափուկ
    աղաղարթս յաղթ կաղնուոյն
Կորզէն 'ի ձեռն. զի չուանէին գարի ամփոփակ
    'ի նաւուն.
Կայեալք յաղօթս զենուն մորթեն, զաղ-
    գերս հատեալ պատեցին
Կրկին ձարպով, և 'ի վերայ ըղձհամ յօ-
    շուածս կարգէին.
Գինի հրակեզ ոչ ունելով 'ի նուէր ձօնիցն
    'ի ցօղման,
Խորովէին զընդերան ողջոյն՝ նուիրելով
    ջուր փոխան.
Զխառն այրեցան, առին զձաշակս, մանր
    յօշատեալք շամփրեցին.
Քունս անուշակ հատաւ յաչաց, յա-
    րեալ երթալ 'ի նաւն իմ։
Այն ինչ մերձեալ, բուրեալ ձենձերն
    զհոտ խորովոյն քաղցրութեան,
Ցօղեաց հանեալ եւ անմահից ողորմելի
    ձայն կարդամ.

« Արտասուաց հայր, և դիք յաւէժք, ինձ
քուն հեղէք դառնագին .
Ձեան մեծապէս . զի անդ որևայրն ոճիր
գործեաց ահագին ։։
Իսայց մեծ Արփիւոյն արար դաժկան երթ
քողազարդ Լամպեանէն, 52
Բողոք բառնայր, զենան անդեայք, Ար-
փին ձայն դից եա անդէն .
Զայրացեալ էր . « Ո՛վ Զեւս, ո՛վ դիք . ըզ-
փէժ լուծցեն Ոդիսեանք .
Ահա տառհակ այն որերոյն 'ի տուր զե-
նան իմ անդեայք .
Անդեայք փառքն իմ, երբ յաստղազարդ
եա 'ի յերկին ամբառնամ,
Եւ միւանդամ տա 'ի յերկնից յերկիր
'ի մայրն իմ դառնամ.
Թէ ոչ լուծցեն նոքա զարժանն ըզ փո-
խարէն զանդեոց,
Եա 'ի դժոխս իջեալ հալածեալ անդ լոյս
ծագեմ մեռելոց ։։
Կարծեաց անդէն ամպրոպայինն . « Դու
ո՛վ Արփի լուսանկիր,
Դու անմահից լոյս և մարդկան 'ի կեն-
սատուն տո՛ւր երկիր .
Արագ արագ 'ի նաւ դոցա եա հեշտ ար-
կից շանթ հրացան,
Ըզ լաստն հարեալ քայքայեցից 'ի մութ
ծովուն ցիր և ցան ։։

Զայս եւ լուայ 'ի բերանոյ վարդապետացն
 Կաղնիփոեայ .
Նա ինքն ասէր լուեալ յառաջ 'ի հրեշ-
 տակէն 'ի Հերմեայ ։
Ճառեալ 'ի նմանէ , անդէն զայր այր կըշ-
 տամբեցի առանձին .
Բայց անդարման էին ախտքն , զի ալեբծ
 անդեայց գրժեցին .
Ա՜յլ փոյթ նոցա գէր խոլականս հրեշից
 առակմամբ ցուցանեն .
Սողան կաշեք , հուռն և խորով միայն 'ի շամ-
 փուրս բառաչէն .
Իբրու զեղանց ձայն լսէին . այնպէս վէց
 օր առնուն հաց .
Ուանէն խորանէկ այն յանցաւորքն զըն-
 տիրան Արփւոյն 'ի յանդեայց .
Յոր եօթնեկորդ յԱրամազդայ մրրիկ
 հողմոյն դադարեաց .
Եղաք 'ի նմանէ , մըտաք 'ի ծով , պարզեմք
 'ի կայմն առագաստ ,
Մ՚եկնեալք կղզւոյն , չէք այլ երկիր , ծով
 երևէր և երկին .
Ըզ նմանէ 'ի մէջ պատեաց Դիոս , ան-
 գունդք ներքոյ մըթագնին .
Նաւըն քայլեաց վայր մի յառաջ , զե-
 փիւռ ընչեաց յեղակարծ ,
Մրրիկ հողմոյն ահեղակերպ խուժեաց
 կայմին կառանաց .

Ուժգնահնչակ խաղեալ զկառավարն, ան-
կաւ թաւալ կայմն 'ի կործան,
Ի գոգ նաւուն թօթափեցան և ողջ կազ-
մածք նաւական.
Գլխակամարին 'ի խելս նաւուն ջախջախէր գը-
լուխն 'ի կայմէն,
Ողջ և ոսկերք փշրէին գլխոյն, ինքըն գլը-
ցաւ 'ի նաւէն.
Թմբեալ 'ի ծով իբրև լուղորդ, զոգին
փչեալ եղկելին,
Զևս որոտեալ անդ խիտ առ խիտ շան-
թեաց հրացան 'ի նաւին.
Սասանեցաւ ողջ լաստափայտն հարեալ
'ի շանթն աստուածեան,
Հոտ ծըծըմբոյն գրաւեալ ողջոյն, այլքն
'ի նաւէն հոսեցան.
Շուրջ թօթափեալք իբրև ագռաւք յա-
լեաց վերայ ծըփային.
Ո՜յ հեքացեալք. Աստուած ինքնին զյա-
նայր նոցա զօր դարձին:
Ես 'ի նաւուն. մինչև մրրիկ քակեաց ըղ-
կողսն 'ի տաշտէն,
Այնպէս մերկնիկ 'ի բուռն առեալ տաշ-
տըն ծըփայր ապաղէն.
Նաև զկայմն խլեալ մրրիկ զհաստեալ
խարիսխն 'ի գոգէն,
Եւ էր անդ փոկ պատատ 'ի կայմն 'ի քե-
միտոյ արջառին.

Աւելաւ զայն փոխն , ըզդոգն ըզկայմն 'ի
միասին արկեալ .
Նստայ 'ի յայնս , և զխաչանշանս ես 'ի հող
միայն ծըփայի .
Մըրրկաշունչ ըն զեփիւռս վայր մի
յայնժամ դադարեաց ,
Հարաւ խուժեալ արտադադեալ , տագնապ
մահու ինձ էած .
Խնդրէր հարաւն վարել կրկին զիս 'ի Քա_
րիւբդն աշխարհին ,
Զամբոյն գիշերն այնպէս վարէր մինչև
ցլոյս արեգին ։
Իսկ Սկիլլեան 'ի ժայռն ահեղ և Քա_
րիբդեանն 'ի վերայ ,
Երբ նա զաղին ջուր զանդնդոց կլանէր
իբրև ըզվիշապ .
Ի շտապ ժամուն ես յայն'ի յաղթ ժանտ
թըզենին վերացեալ ,
Պինդ ըղնովաւ շաղապատեալ իբրև չղջիկ
անդ մնացայ .
Չէր ինձ հընարք ելից 'ի վեր , և ոչ ուրեք
գոյր կըռուան ,
Արմատքն էին երկայնաձիգք , ոստք բար_
ձրուղէշք բացական .
Ոստք երկայնեալք և աշադինք հովանա_
նան Քարիբդեայ .
Անդ ես մնացայ մինչև անդրէն ըզկայմն
ըզտաշտ ժայթքէ նա .

Եհաս ինձ ժամըն անձկացեալ, երբ դա-
  տաւորն յառենէ ,
Պայքարս բազում գտեալ զմարդկան ,
  զընթրիս առնուլ յոյն յանձէ 53 .
Յայնժամ Քաղիրդ 'ի դուրս ժայթքեալ,
  ընկողքն 'ի ջուր ծածանին ,
Եւ 'ի վերուստ կազմիլ պարուել զաւանել
  'ի ծոցն ինձ զուգին .
Անկայ գոփմամբ 'ի մէջ ալեաց այն ա-
  տաղձիցն առ ընթեր ,
Վերամբառնայ և ձեռն իմ անդ փոխան Թիոց
  զիս վարէր ։
Եդ զիս Դիոս անուն Ակիլլայ , պաշտեաց
  'ի դառն օրհասին .
Ապրեալ այնպէս ինն օր յանդունդս ես
  ալէծուփ տարբերիմ։
Նր ինձ գիշերն այն տասներորդ , ածին
  զիս դիքն յՈվգիգէ .
Ուր վարսագեղ ընակիչ կղզւոյն էր դի-
  ցուհին Կալիփսէ .
Նա մարդասէր հիւրընկալու առեալ զիս
  անդ 'ի յալեաց ,
Բազմահանդէս զիս մեծարէր . այլ զի՞ է
  ինձ պատմել զայս .

*Երէկ, այսօր, քեզ ձօնեցի և հոյակապ*
*դշխոյին .*
*Եւ դժնդակ է զձօն բանին առնուլ*
*պատմել վերստին »։*



# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ոդիսեւս յետ կործանմանն Տրոյիոյ՝ 'ի դառնալ իւրում 'ի հայրենիս իւր յԻթակէ, շատ ինչ Թափառեցաւ աստ և անդ բազմադէմ վշտակրութեամբք՝ իբրու պատուհասեալ 'ի Պոսիդոնէ, զի կուրացոյց զահագին վիշապն զԿիկլոպս Պողիւփեմոս զորդի Պոսիդոնի ։

2. Ընկերք Ոդիսեւսայ ուղեկիցք կորեան առ հասարակ յուղւոջ. քանզի անսաստեալք Ոդիսեւսայ՝ ընդդէմ Պատգամի դիցն ժանեցան առ քաղցուն ուտել 'ի Սիկիլիա յանդէոց անտի՝ որ նուիրեալք էին Արեգական ։

3. Եգիսթոս որդի Պելոպեայ հարեալ 'ի սէր կնոջն Ագամեմնոնի, սպան զԱգամեմնոն ապիրատ համակամութեամբ կնոջն՝ յետ դարձին նորա 'ի Տրոյիոյ ։ Իսկ ապա Որեստես մանուկ որդի Ագամեմնոնի 'ի չափ հասեալ 'ի վրէժխնդրութիւն արեան հօրն սպան զԵգիսթէս ։

4. Ոդիսեւս տարագրեալ 'ի հայրենեացն արգելեալ 'ի դիցանուշէն Կալիփսեայ 'ի կղզւոջն, անձնուկ մահուչափ բերելը հայ-

ընկեացն՝ տեւանել մինչեւ եւ զծուխն ան-
գամ արձակել ՚ի ծխահանաց տանց եր-
կրին խուրոյ:

5. Հռոմանեացն կամ տարփածուացն գատակէք յՆեմանէ՝ որդիք առաջնայ ՚ի տա-
րագիմութեանն Ոգիսեայ տարփացեալք
առնուլ ՚ի կին զՊենելոպէ զկին նորա,
հանդարտաղջրկեայ շուայտութեանք վատ-
նէին զգոյս Ոգիսեայ ՚ի տան անդ նորա:

6. Լայէրտէս ծերունին՝ որդի Արկե-
սիայ դիւցազին՝ հայր մեծին Ոգիսեայ,
հաւն Տելեմաքեայ:

7. Իկարոս որդի արքային Լակեդեմոնի,
հայր Պենելոպեայ:

8. Թէմիս. դուստր երկնի եւ երկրի, քոյր
Արամազդայ, դիցուհի Արդարութեան:
Քանզի եւ Θέμις, ՚ի յն. նշանակէ. Իրա-
ւունք, Օրէնք:

9. Այս հաշակաւոր խորագիտու-
թիւնն էր Պենելոպեայ կնոջն Ոգիսեայ,
՚ի դեգերեցուցանել զտարփածուս իւր
մինչեւ ՚ի դարձ առնուանոյն. զաշն եդեալ
ընդ նոսա՝ յետ երից ամաց ՚ի չերկել Ոգի-
սեայ ամուսնանալ ընդ այլում: Նաւա-
սպաս զամս երիս ստայն մեծ անկանել
՚ի տան, եւ քակել զնոյն ՚ի գիշերի, մին-
չեւ դարձաւ ամուսինն իւր Ոգիսեւս: Նո-
ւասպաս այս հնարիմացութիւն Պենելոպեայ
յառակս եղեւ վասն ժամանակաձգող խորա-
գիտութեանց, ասել. Պենելոպէ ՚ի պատէ. Ի
պատերի ՚ի գիշերի:

10. Զնյսոց դժոխականաց ասէ, յո-

րոց զանդիմանէ Տերտուղիանոս՝ զի մի յանի-
ծանել զինքն մերն, ըմբռնեցեն նոքա զնա։

11. Աքանչելի է Հոմերոս, զի զանց երբեք չառնէ 'ի քերթուածս իւր՝ բառ պատեհի խրացն մէջ 'ի բարոյականն հրահանգել զժողովուրդն. յաստուծոյ նախախնամութիւնն միայն տպաւորել զամենայնն։

12. Ընածին գեղեցկութեամբք և Ճարտարարուեստս պարզութեամբ և կենդանագիր նկարուք՝ հանեալ է բոլանդակ Ոդիսականն Հոմերի. 'ի վէպս զարմանալեաց՝ զբարոյական հրահանգս այլաբանելով, Ես [illegible], որպէս վկայեաց Քերթողահայրն մեր, [illegible]։ Զայս միանգամ յուշ առնելի վասն ամենայնին։

13. Տես զայսպիսի յառաջին մատեանն Հոմերի՝ յԻլիականն։

14. Երկուց եղբարց, Ագամեմնոնի մեծի արքայի, և Մենելաւոսի արքայի։

15. Զառածս Ճղնարկոս՝ ակնարկելիս քանոյ մէջ Հոմեր յեռալ 'ի քերթուածին. որ այն իմքն է կենք գիւղաքաղաքան քերթութեանց։

16. Տես վերադարձ, 'ի ծան. 3։

17. Գովէ Հոմեր զերկիրն Եգիպտացւոց, ոչ միայն իբրու բազում բժշկական արմատոց և օգտակար դեղոց բուսուցիչ, այլ և ներհուն բժշկաց վերբերիչ։

18. Յիշատակէ զհռչակաւոր զահագին զերիվարն փայտակերտ, զոր մենքե-

նայեաց Ոդիսևս 'ի խարանաց կործա_
նումն Տրովիոյ, և զոր կերպեաց Եղիա
Ճարտար ժամանակին :

19. Յայտնի է Ճանապարհորդութիւն
Հոմերի յԻլիականս, զորոյ և զհանդա_
մանս նկարագրէ աստ և 'ի յետագայս․
որպէս յուղ ապարեալ է մեր և յԻլիա_
կանին : Իսկ զոր վայր մի ասացեալ առ
Հոմերոս Ἀστερόπη, նշանակէ Ἀκτῆς․
և է մակդիր Թետեայ՝ Յաւերժահարսին
ծովու :

20. Ἑρμιόνη, որդի Մենելայոսի
և Հեղինեայ՝ ըստ առասպելին, կնքայր
Որեստեսի, 'ի Նէոպտողեմեան սա մեծի
արդարութեան ընտրեալ 'ի դա_
տաւոր Պեղոպեայ :

21. Այս այն է առասպելեալն մերոյն Քեր_
Թողաշոր Խորենի․ զոր ասեն 'ի Հոմերէ,
'ի Պաւտ ելթէ Ἀριάδνη καλλι-
πλόκαμος :

22. Λάρος. Թռչուն ծովային, յարկերտ_
սակող :

23. Ἠώς որ է Աւէ, ըստ առասպելին՝
դուստր արեգական և երկրի : Իսկ Ὠρίων,
Հայկ, ըստ առասպելին՝ որդի Ովկիանո_
սայ և երկրի :

24. Ὀρτυγίη. կղզի յԱրշիպելա_
գոսի․ այն է՝ Դելոս : Կղզի՝ ըն ըստ առասպե_
լաց․ վասն այնորիկ և կոչեցաւ այնպէս,
զի Ὀρτυξ, 'ի յն․ է Լորամարգի :

25. Տես յԻլիականն Հոմերի : Եւ
Ἀλφειός յանկարծում առէ Հոմ․ Իսր

որ 'ի շրջանին իւրում դանդաղ է 'ի մտանել։

26. Տես յԻլիականն Հոմերի։

27. Որէոսէ Դէոսէ կոչէ զՓէակեցիս, իբրու զդիւցազունս, զորս մեծարգոյնս կոչեաց Մէրէօղասօ սօփօծօց։

28. Ամփիտրիտէ, դուստր Ովկիանու՝ ըստ առասպելին. դիցուհի ծովու, և առեալ լինի առեալ փոխանակ ծովու։

29. Երէմանթ, անուն լերին և գետոյ՝ յԱրկադիա։ Անդ էր որջացեալ հռչակաւորն վարազ Երիմանթեան՝ տապալեալն 'ի Հերակլեայ։ Իսկ Տայգետ, լեառն բարձրաբերձ յոյժ և երկայնանիստ 'ի Լակոնիա։

30. Ի Հոմերի Իլիականէն և յՈդիսականէն՝ իբրև 'ի կրկին անսպառ աղբերականց զխառնս բերեալ առեալ առեալ, առին զոդցես ամենայն Քերթողք անուանիք հինք և նորք, Սոփոկլէս, Եւրիպիդէս, Արիստոփանէս, Ովիդիոս, Ովրատիոս, Ստատիոս, Պետրարք, Տանդէ, Արիոստ, Թասսոյ, այլովքն հանդերձ։ Աւրին՝ կամ գողացան բառ առ բառ, կամ հետևողութեամբ։ Իսկ առաւել քան զամենեսեան անուանին Վիրգիլիոս քերթող. որպէս բազում ուրեք նշանակեցաք և 'ի ծանօթութիւնս Ենէականին։ Արդ֊ մի 'ի հարիւրոց անուանի աւարացն Հոմերի՝ է կենդանագրութիւն այս նկարագրիր, (զոր սակայն յանդգնեալս և ոչ ըստ պատշաճի իւրացն՝ առեն քննիչք՝ առեալ Վիրգիլեայ

վասն Դիդեայ (Թագուհւոյն). Ենէա-կան. Գ. Ա. 689.

«Ա՜նգղը 'ի տաճարն եմուտ գչխոյն գեղանի,
Շուրջ բազմահոյլ պատեալ զիւրեւ մանկանի:
Իբր Արտեմիս յեզր Եւրոտայ գեղապար,
Կամ 'ի Կինթեայ ձեմի լերինն 'ի կատար,
Եւ Որեադք առաջի անդի բազմամբիւր,
Երամախմբին խուռն ընթանան ըղձեալ խուր.
Նորա կապարճն 'ի յուս, և ինքն վեհեալ
Ըղձիցուհեացն ամենեցունց է 'ի ձեմ.
Խանդաղատի անդ Լատոնէ 'ի սեւոյն
Զանխուլ 'ի սիրտ իւր խըրըխեալ ցըն-ծութիւն.
Այսպէս Դիդէ զուարթ ձեմէր անդ անդր
Ազգայութեանն 'ի կազմ, երկոյն 'ի յոր-դոր»:

31. Յիշատակէ Կիկերոն, Օրէն. Գիրք, ա. զհռչակելի զայս արմաւենի. «Զոր համբակացն, ասէ, Որփեւսէ 'ի Դելոս վկայեաց զանձնէն տեսեալ զառասպելահա-սակն զայն և զնորատունկ արմաւենին. զնոյն և մինչև ցայսօր ցուցանեն ան-դանօր»:

32. [illegible]. այս է՝ Պոսիդոնի, որ տեսերիմ հանգստեան Որփեւսեայ. գովով Աթենաս դուստր Արամազդայ՝ եղբօր Պոսիդոնի:

33. Որպէս և յնշխանականին տաճարն Հռ. մեր, եթէ՝ Զիք ինչ արտադադրն քան զխորհրդոյ մնաց մարդոյ:

34. Են երեք քերթ տատասկենեայք՝

Դուքսոյ անուանեալք որ զԹևէլ կենաց մարդկան մանեն, և ժողովեն յաղէկատոն, և ապա քան ժամուն կարեն:

35. Որպէս Կիկերոն և Տիտոս՝ քան որում մեկնէ հին ԼԾ. Հոմեր. մերձա-ւորք են միմեանց, կամ քան աղգին, կամ քան ատեղեայն, կամ քան անօրէնութեանն, նոյնպէս և մեք՝ առէ՝ մերձաւորք եմք ա-տուծոյ՝ քան արդարութեանն:

36. Նա ինքն է Հոմերոս: Ինքնին Հոմեր զանձն իւր իբրաւ ասպէս նկարագրէ 'ի Դե-մոդոկ կոյր հրաշալին երգահան, որպէս առաջ երևեկին Մաքսիմոս տիւրացի՝ ընդ-այլոց:

37. Պայքարին էր՝ բանաստեղծութեան խնամ և սաստիկ յետ մահուան Հեկտորի՝ ընդ երկուս առաջս ընդ Աքիլլէս և ընդ Ոդիսևս, եթէ ի՞ւ իւիք արդեօք 'ի վերջէ ալբեմն անկցի Տրովիա: Աքիլլէս ասէր՝ եթէ արութեամբ քաջութեամբ: Իսկ Ո-դիսևս՝ եթէ հանճարով և խորհրդով: Եւ Ագամեմնոն արքայ լուեալ խնդայր ընդ պայքարին. քանզի պատգամ առեալ էր՝ եթէ յորժամ առաջքն Յունաց պայքա-րեսցին, յայնժամ անկցին լիցի անկմանն Տրովիայ:

38. Այս առաջին նուագ է յիշատա-կելոյ հարևանցի զԿիրկէ դիցուհին. զո-րոյ զհրաշապատմութիւն 'ի յետագայս ունի ճառել Ոդիսևս յատենի արքային:

39. Քանզի Իթակէ կղզի խոնարհ և նկրկեալ է քան ընդհանուր գրիցն, բայց և

միանգամայն մեծ է և փառաւոր ըստ համ_բաւոյն. և զի նախաթոռ է յայլ եկեղե_ցեաց թուեցայ։

40. Յայտնի է առասպելն Լ....յ քաղցրաձայնակ բուսոյն, իբրու եթէ Պանդուխտն որ ուտէ 'ի նմանէ, մոռա_նայ զհայրենիս իւր։ Այլ ճշմարտու_թիւնն յառասպելին՝ 'ի բարբառականն հոմերի այն է, եթէ որ զհեշտալեացն զայ 'ի կերակս իւր, 'ի մոռացմա զարձուցանէ զպարտաս իւր։

41. Քանզի Ո.... 'ի յն, նշանակէ Ու..։

42. Mωλυ, կոչեն Յոյնք զբոյս մի, իբ_րու լինել գեղեցկի թունից. զորմէ այս_պէս Պլինիոս. Պատմ. Ի. գիրք ԻԵ. «Այմենադամեգյն, ասէ, 'ի բոյսս, զոր Մ..լէ յառաջատուս անուանեալ ասէ Հոմե_րոս, և զգիւտ բուսոյս Հերմեայ ընծայէ. և ցուցանէ զնա անդեղայ ընդդէմ թու_նից։ Նա ասանգեն զաա բուսանել այսօր 'ի առհամանս փենեայ և 'ի Կիւլլէն Արկա_դիոյ. ձեռն և կերպարանն է ըստ Հոմերի նկարագրին. արմատն է բոլորշի և սեւա. մեծութիւն՝ սոխոյ, տերեւն՝ խորոխ մխատոխի, և դժուարակորզելի է առ 'ի հողոյ»։

43. Թ...։ կոչի է Սիկիլիա։ Տես 'ի վեր 'ի ծան. 2։

44. Զ Տուռնոյ զՏ...ն, ըստ մեզ՝ զ...., զորդի Արամազդայ և Եղեկրի, Հոմեր ան_ուանականն ասէ լինել գեղեցիկ 'ի հոկայ_

ազօր և 'ի չքնաղ Դիւցազունս . ուսա_ նի և Κλυτος, Հոյակապ կոչէ զնա, Ձա_ հագրեալ 'ի խորենեան նկարագիրն, Յա_ [illegible] : Ձօր և այլուր Πέλωριος, Վիթխարի, կոչէ Հոմեր : Իսկ յիշատակութիւն սոսկալի Հսկայից 'ի Հոմերէ, անկանարկէ 'ի բան Գրոյն . Ծննդ . Զ. Էին, ասէ, 'ի վերայ երկրի Սկայք, որք յաւիտենից արք անուա_ նիք ։ Եւ Սկայից այսոցիկ ասորն ըն_ ծայեցեալ Հոմերի զերկնամարտութիւն յանդգնու_ թեանն քերթողարար՝ ըերինս 'ի վերայ բառնալով լերանց, անկանարկէ 'ի չինու_ թիւն վաղանուն երկնաբերձ աշտարա_ կին, և զառ նոյնս զաստուածամարտ ապստամբութեան :

45 . Ոսսա, լեառն է Թեսաղիոյ : Ո_ ղիմպոս, Մակեդոնիոյ :

Եւ Պելիոն, լեառն է 'ի Թեսաղիա : Մի 'ի հաղարաց՝ զոր 'ի փոխ 'ի վարժա_ պետէն էառ Վիրգիլիոս, է և այս՝ զոր երգեաց գեղեցիկն 'ի վանականն յիւրում Մշակականին այսպէս . Ա . 281 .

« Թափի երիցս եռուն զՈսսան դնել Պե_
լեայն 'ի վերայ,
Եւ յՈսսան բարդել գիզան զանտառա_
խիտն Ողիմպոս,
Շանթ երիցս և Հայրն ընկէց, հարթեաց
ըզՍարսն երկնաբերձ » ։

Նոյն Հոմերոս Ոդիսականին ոչ զՈղիմպոս ասէ, այլ զՊելիոն լեառն :

46 . Տես 'ի վեր . 'ի ծան . 3 :

47. Տե՛ս ՚ի վեր. ՚ի ծան. 18։

48. Ակնարկէ ՚ի հրաժարումն Թափիս Հրաբխեցն՝ Նանեայ և Վեստամի։

49. Ակնարկէ ՚ի Տեղատուութիւն և ՚ի Մակընթացութիւն ջուրցն ՚ի ծովու։

50. Մայր և ծնող Սկիլլեան դժուարանցանելի նեղուցին կոչէ զԿրա-թէ. քանզի Կրաթէ է գետ ՚ի Կալաբրիա։

51. Քանզի առաջնեալ էին ձկնորսք՝ ընդ մէջ կարթին և լարին յարմարել և կապել կատարեալ մի կազմեալ յեղջերէ եզին, զի անխզելի կացցէ լարն ՚ի ձկանց։

52. Լամպետիէ, ըստ դիցաբանից դուստր Արեւու և Կղիմենեայ։ Քանզի և Λαμ-πετίς. յն. է՝ Նշոյլ. Ճաճանչ։

53. Կամի ասել. ընդ երեկս աւուրն, յորում պահու՝ ատենակալք և գաւառաւորք քաղաքին յառաւօտուց նստեալք յատեանս և զբաղեալք ՚ի գործ պաշտամանցն՝ ՚ի լուր դատից և պայքարաց քաղաքայնոցն, թողեալք ապա յառնեն գնալ ՚ի տուն և հաց առնուլ զերեկին։